


#2315



891,9923

PER

1864

Մ. Վ. ՏԸ ՁԵՐԴԱԼ

DUY 16865

ԳԱՂՏՆԻՔ

Մ. Ի. Ա. ՏԱ. ՔՆՆՈՒԹԵԱՆ

ՔԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԷ

Կ. Ս. ԻԻԹԻԻՆԵԱՆ



Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

= 1864 =

800-867-1-1-1
 800-867-1-1-2
 800-867-1-1-3
 800-867-1-1-4
 800-867-1-1-5
 800-867-1-1-6
 800-867-1-1-7
 800-867-1-1-8
 800-867-1-1-9
 800-867-1-1-10

- 1204 -

THE UNIVERSITY OF CHICAGO



LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

5720 S. UNIVERSITY AVENUE

CHICAGO, ILL. 60637

TEL. 777-1000

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ի Ն

Քրիստոնէական կրօնի պատմութեան մէջ եղաւ ժամանակ մը , ուր կրօնական նախանձայնութիւնն իր պարտուպատշաճ սահմանէն դուրս ելնելով քրիստոնեայ աշխարհն արեամբ ողողեց :

Եկեղեցոյ հովիւները , փոխանակ իրենց երկնաւոր վարդապետին հոգւոյն եւ օրինակին հետեւելու , փոխանակ Անոր աւանդած սիրոյ գթութեան եւ մխիթարութեան կրօնքը բանիւ եւ օրինակաւ ուսուցանելու , սրով եւ հրով քարոզելու ելան : Այլակրօնութիւնը հերետիկոսութիւնն ու հերձուածը բառնալու , եւ մարդոց մէջ կրօնական կարծեաց եւ զգացմանց միութիւն հաստատելու համար , սրտագիտին Աստուծոյ միայն յատուկ եղող գերագոյն իշխանութիւնը գրաւելով սիրտերըն ու միտքերը քննելու հետախուզելու եւ պատժելու ձեռք զարկին բռնական ահուկ միջոցներով , սրոց բնական հետեւանքն էր Քրիստոսի եկեղեցին՝ փոխանակ հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագուներէ , սրտով եւ խղճով պաշտողներէ կազմելու , կոյր շերմե-

ռանդներով, շրթամբք միայն պաշտող մար-
դամեքենայներով, բռնի հաւատացեալներով
եւ կեղծաւորներով լցընել:

Քրիստոնէական ուղղափառութիւնն ու
հաւատոյ միութիւնը պաշտպանելու այս սխալ
դրութիւնը՝ որ հաւատա քննութիւն կամ սուրբ
պաշտօն կը կոչուէր, Ներոպիոյ մէջ անթիւ մար-
դիկ զոհեց, բայց չկրցաւ եկեղեցին օձտում-
ներէ ու պառակտումներէ պահպանել. եւ
այսօրուան օրս քրիստոնէայ Ներոպիոյ գրեթէ
կէսն արեւմտեան եկեղեցիէն բաժնուած, այլ
եւ այլ եկեղեցիներ ու ազանդներ կաղմած է:

Հաւատա քննութիւնը երեքտասաներորդ
դարուն սկիզբները սահմանուեցաւ նախ Գաղ-
ղիոյ մէջ, Ալպիժօա կամ Ալբիկեցիք ըսուած
հերետիկոսներուն դէմ, որոնք Մանիքեցւոյ
ազանդին յարեալ էին, եւ առաջին ընդհա-
նուր հաւատա քննիչ անուանեցաւ Պապէն Ս.
Գոմինիկոս, համանուն միաբանութեան հիմ-
նադիրը: Շատ չանցաւ, հաւատա քննութիւնը
Ներոպիոյ ուրիշ կողմերն ալ տարածեցաւ Գո-
մինիկեան կրօնաւորաց ձեռօք, որոց յանձ-
նուած էր հաւատա քննչի պաշտօնը:

Ասոնք իշխանութիւն ունէին այլակրօն-
րը, հերետիկոսները եւ ասոնց միտում ու
նենալու կասկածեալ անձինքը յատեան կը

չելու , քննելու , գատելու , չարչարելու ե
անգեղջ գտնուողները ողջ ողջ այրելով ստաց
ուած քնին դրաւելու . իսկ զղջացողները մըշ-
տընջենաւոր բանտարկութեամբ պատժելու :

Գաղղիոյ եւ Վերմանիոյ մէջ հաւատաքըն-
նութիւնը չկրցաւ այս չափազանց խստու-
թիւնը շարունակել . բայց Սպանիոյ , Բորթու-
կալի , ինչպէս նաեւ Ամերիկայի ու Հնդկաս-
տանի մէկ քանի կողմերը , ուր Սպանիացիք
եւ Բորթուկէզք կիշխէին , սարսափով եւ ա-
րիւնհեղութեամբ լցուց :

Օսմանեան արժանայիշատակ աշխար-
հակալներն՝ Արեւելքի քրիստոնեայ երկիր-
ներուն , Հայաստանի , Կ . Պօլսոյ եւ Յունաս-
տանի տիրած ժամանակնին , նուաճեալ քը-
րիստոնեայ եւ այլ ժողովրդոց ազատութիւն
չնորհեցին իրենց կրօնքը խաղաղութեամբ
պաշտելու : Արաբներն ալ Սպանիոյ մէկ մասին
տիրած ժամանակնին նոյնը ըրին . չստիպեցին
զքրիստոնեայս մահմէտական կրօնքն ընդու-
նելու . բայց երբոր Սպանիացիք արաբաց
յաղթելով իրենց երկիրն անոնց ձեռքէն ետ
առին , Սպանիոյ առաջին պաշտօնեայ Քսի-
մինէս կարդինալն ուղեց Արաբները բոնի քը-
րիստոնեայ ընել , եւ սկսան հալածել զԱրաբ-
ները՝ հակառակ անոնց հետ հաստատեալ դաշ-

նադրութեան : Այն աստիճան հասաւ բռնութիւնը , որ Արարաց մէկ մասը փախան Սպանիայէն , մնացեալներն ալ ալամայ եւ 'ի վերին երեսս քրիստոնէութիւն ընդունեցին :

Նոյն հալածանքը կրեցին հրեայներն ալ : Մեծ մասը փախան , մէկ մասն ալ երեսանց քրիստոնեայ եղան :

Սակայն Թովմաս Թորքուէմատա անուն Գոմինիկեան մը՝ որ Սպանիոյ առաջին մեծ հաւատաքննիչն եղած է , չվստահելով այս նորարար ճներուն անկեղծութեանը , սկսաւ խրատանալ անոնց դէմ . տասնեւչորս տարուան մէջ ութսուն հազարէն աւելի մարդ դատեց , եւ վեց հազար հողի ալ այրեց եկեղեցական մեծ հանդէսներով : Սպանիացիք սարսափեցան հաւատաքննչաց այս վայրագ անդթութիւնը տեսնելով , եւ դժգոհիլ սկսան : Ասոր վրայ հաւատաքննութիւնն սպանիացիներն ալ դատել սկսաւ իբրեւ հերձամիտ կամ հերեփկոսութեան հակամէտ , եւ աւելի ծանրացուց խրատութիւնը երբոր Ղուտերի աղանդն ալ ծաւալիլ սկսաւ Եւրոպիոյ մէջ :

Այս անողոք ատեանն այնպիսի դատաստանական ձեւ մը բռնած էր , որ անգամ մը ձեռքն իյնողը չէր կրնար երբէք ազատիլ : Ամբաստանողը ամբաստանելոյն հետ դէմ յան-

դիման չէր խօսեր, եւ ով ու ինչ տեսակ մարդ
ըլլար՝ ամբաստանութիւնը կընդունուէր: Վա-
տահամբաւ կամ եղեռնագործ մարդ մը կրնար
պատուաւոր մէկը ամբաստանել. նոյնպէս որ-
դին իւր հայրը, կինն իրայրը, եւ փոխադար-
ձաբար: Այն աստիճան հասաւ մասնութիւնը
որ մարդոց եւ մինչեւ իսկ ընտանեաց մէջ վըս-
տահութիւն չմնաց: Հայրը որդիէն, եղբայրը
եղբօրմէն, այրն իր կնոջմէն կը կասկածէր եւ
կը վախնար:

Վերջապէս 1481էն մինչեւ 1820, այն է
539 տարուան մէջ, հաւատաքննութիւնը մի-
նակ Սպանիոյ մէջ 54658 հոգի այրեց, 288,
214 հոգի ալ ցկեանս բանտարկութեան մատ-
նեց: Ասոնցմէ զատ՝ հինգ միլիոն ժողովուրդ
Սպանիոյ երկիրը թողլով օտար երկիրներ փա-
խան, որով այն երկիրը՝ որ արաբաց աշխար-
հակալութեան ժամանակ երսունեւհինգ մի-
լիոն ժողովուրդ ունէր, անմարդանալով, այս-
օրուան օրս տասներկու միլիոնէն աւելի ժողո-
վուրդ չունի: Իսկ եթէ ուրիշ այլ եւ այլ երկիր-
ներու մէջ հաւատաքննութեան ըրած զոհերն
ի հաշիւ առնուին, միլիոններու կը հասնին:


Հաւատաքննական ատեանին զօրու-
թիւնն անցեալ դարուն մէջ գիտութեան,
մտաց լուսաւորութեան եւ կրօնական ներո-

դամբատ հողւոյն յառաջադիմութեամբը տկարանալ սխաւ Յերոպիոյ շատ կողմերը , բայց Սպանիոյ մէջ կը շարունակէր մինչեւ ներկայ դարուս սկիզբները , երբ դադդիացիք 1808 ին Սպանիա մտնելով ջնջեցին զայն : 1813ին նորէն հաստատուեցաւ , բայց չկրցաւ երկար տեւել : 1820ին Սպանիոյ աւագաժողովին վրձնովը վերջնական կերպով ջնջուեցաւ :

Մեր այս թարգմանած գիրքը՝ հաւատաքրննութեան մանրամասն պատմութիւնը չէ , այլ անոր ոգւոյն , նպատակին , կազմութեանը եւ Սպանիոյ մէջ յառաջ բերած սոսկալի արդեանց նկարագիրն է՝ վիսլասանական ձեւով յօրինուած :

Այսպիսի նկարագիր մը թարգմանելնուս նպատակն ուրիշ բան չէ եւ չկրնար ըլլալ , բայց եթէ մարդկային խղճին Աստուծոյ հետ յարաբերութեանը վրայ բռնանալու եւ մարդոց հոգին ու մարմինը մէկէն չարչարելու դըրութեան որչափ սխալ , վնասակար եւ մեղապարտ ըլլալը ցուցնելով՝ խղճի եւ կրօնից ազատութեան անկշռելի օգուտն ու ազնուութիւնը զգալի ընել . եւ կը յուսանք որ այս նկատմամբ ուշիմ ընթերցողաց հաճութեանն արժանի կըլլայ մեր ձեռնարկութիւնը :

ԳԱՂՏՆԻՔ
ՀԵՒԵՏՆԻՔՆԵՐՈՒԹԵԼՆ



ԳԼՈՒԽ Ա .

ԹՐԻԱՆԱՅԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԸ*

Վ ԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ դարուն մէջերը , կարողութիւն հինգերորդի օրով , Սէվիլ՝ Սպանիոյ Անտալուզիա գաւառին այն ուրախ զուարթ մայրաքաղաքը՝ քիչ քիչ ախուր լուռ եւ թաղծալից կերպարանք մ'առած էր : Ընդունայն կը պարզէր այս մաւրիտանական քաղաքը՝ պայծառ արեւու մը առջեւ՝ իր ծառազարդ եւ ծաղկալից ընդարձակ տանիքներն ու գեղեցիկ

* Այս արուարձանն Սպանիոյ Սէվիլ քաղաքին մէկ կողմը կիյնայ կուատալքիվիր գետով զատուած , որ ամեն տեսակ ցած ու ոճրագործ մարդոց ուղ մ'էր , եւ է մինչեւ դայսօր :

պատշգամբները , ուր կանաչագեղ բաղեղ ներ-
Աիրգինիան ոսկեծաղիկ յասմիկներ եւ ուրիշ
երփներանգ ծաղկաց տունկեր ապրնաթ ել հիւս-
քերու պէս դալարագեղ կուռճանային :

Ալ չէին լսուիր իրիկունները՝ պատշգամբ-
ներուն տակ՝ տարիաւոր ասպետներուն եր-
գերը՝ Մանտօլինի ներգաշնակաւոր նուա-
գաց հետ ձայնակցեալ . եւ եթէ գիշեր-
ուան հեշտալիր ժամերուն մէջ երկշոտ օրի-
որդներ տակաւին իրենց տանիքներուն վրայ
երեւնալու եւ Նուատալքիլիւրի եզերքներէն
բուրած անուշահոտ ու զով օդը շնչելու հա-
մարձակէին , ստուերի պէս լռիկ լրջիկ կանց-
նէին , եւ իրենց անխօս շրթունքներէն խեղ-
դուկ հառաչանքներ միայն կեննէին՝ փոխա-
նակ այն մանկական թարմ ծիծաղներուն եւ
լեզուի գաշնակաւոր գեղգեղներուն , որով ըս-
պանիական լեզուն կանանց բերնին մէջ քաղ-
ցըր նուագարանի մը պէս կը հնչէ :

Ամեն կողմ սարսափն իր սեւ դրօշակը
պարզեր էր երկար ժամանակէ՛ իվեր . ընտա-
նեկան խօսակցութիւններն ու նահապետա-
կան համախմբութիւնները դադրած էին . կաս-
կածն ու երկիւղը հոգւոյն ամենէն քաղցր ըզ-
գացումներն ընդարմացուցեր էին : Հայրը
դաւկէն կը վախնար , եղբայրը եղբօրմէն , բա-

րեկամը բարեկամէն . վասն զի այն ժամանակ-
ներն ամեն մարդ երկիւղի մէջ էր որ իր ամենէն
աւելի սիրած անձը լրտես մը կամ մատնիչ մը
չըլլար: Ոչ ոք ապահով էր իր ստացուած ոցն ու
կենացը վրայ . ամեն մարդ առօրեայ կապրէր
բանի մը ձեռնամուխ ըլլալու կամ յարելու չի
համարձակելով, ամեն վեհանձնական կամ գո-
րովական զգացում իր սրտին խորերը ծածկե-
լով, եւ ոչ իսկ մխիթարութիւն եւ յոյս գըտ-
նելով մարդկային ամեն թշուառութեանց գե-
րագոյն մխիթարչին՝ Աստուծոյ վրայ, վասն
զի մարդ չէր համարձակեր ազատ խղճիւ զՍ. յն
օգնութեան կանչել, վախնալով որ իր ազո-
թից խօսքերը կամ հաւատոյ յայտարարու-
թիւնները թերեւս չէին յարմարիր գերագոյն
ատենին՝ այն է հաւատաքննութեան հաւնած
կերպին, այն սրբանուէր բռնակալին, որ զԱստ-
ուած իր ուզած կերպովը պաշտել տալ կու-
զէր, կամ մանաւանդ ինքզինք աստուածա-
ցընելով՝ անսահման իրաւունք կը վերընծայէր
իրեն, եւ աննահանջելի գերագոյն իշխանու-
թիւն մը բանեցընել կուզէր մարմնոց եւ հոգ-
ւոց վրայ . անագորուն բռնաւոր մը, որ ամեն
հնարաւոր միջոցներով կը ջանար իր միակնը-
պատակին հասնիլ, որ էր տիրապետութիւն .
Հաւատաքննութիւնն այն ժամանակ իր զօրու-

Թեան ստակալի հեռակէտն հասած էր : Իրեն
գլուխ ունէր Սէվիլի արքեպիսկոպոս Ալֆօնս
Մանրիք կարդինալը : Այս համառօտ տեսու-
թիւնն հարկաւոր էր հետագայ գլխոց մէջ
պատմութիւնները լաւ հասկըցուելու համար :

Հիմա սկսինք մեր պատմութիւնը 1534
փետրվար 15էն :

Իրիկուան ժամը երկուքը կար , Սէվիլի
երբեմն բազմամարտիս եւ լուսաւոր փողոցները
մութ եւ լռին էին , թէ եւ մեծ բարեկենդանի
օրեր էր : Միայն ժամանակ ժամանակ թա-
փառայած գնչուներ եւ կծծի երեւութով կրօ-
նաւորներ կը տեսնուէին փողոցներուն մէջ .
հաւատաքնութեան մտերիմներ , աչալուրջ
լրտեսներ , որոնք անցած ժամանակնին ի-
րար կը բարեւէին խորհրդական նշաններով
դոր գուրսէն մարդիկ չէին կրնար հասկընալ .
եւ թրիանայի արուարձանին բնակիչներն ալ
կուտաւալքիվիր գետին վրային աւակամուրջին
չըջակայ ճանբայներուն մէջ կը խոնէին :

Նոյն միջոցին կամուրջէն անցնող անձանց
մէջ բարձրահասակ մարդ մը կը տեսնուէր
քարոզիչ կրօնաւորի կնգուղով : Կայն եւ լուրջ
ճակատն՝ առաւել հանդարտ երեւոյթ մը ու-
նէր քան թէ դաժան . խոշոր սեւ աչքերը վի-
էին քաղցրութեամբ , թէ եւ սրտին խանդն

ու մտքին խոկուամբ բոցեր կը փայլեցընէին ա-
նոնց մէջ . եւ իր մունջ շրթանցը վրայ ճար-
տարխօսութեան ու բանաստեղծութեան դը-
րոշմտալարուած էր : Աւերջապէս իր պայծառ
դէմքին վրայ սուրբ Պօղոսի կորովն եւ Յիսու-
սի սիրելի աշակերտին քաղցրութիւնը կը տես-
նուէր :

Այս մարդը ծանր ծանր կը քալէր իբրեւ
բարձր մտածութիւններով զբաղած . եւ կը
թուէր թէ աշխարհային բաներու բնաւ ու-
շագրութիւն չընելով ոչ իր քովերէն անցնող
դարձողները կը տեսնէր , եւ ոչ իսկ դիմացէն
եկողները՝ որք գիշերուան կէս մութին մէջ
կրնային զարնուիլ իրեն :

Երբոր կամուրջին միւս կողմն հասաւ , հոն
վայրկեան մը կանգ առաւ , եւ վարանելով մը-
տածեց թէ դիմացը ելած երկու փողոցներուն
մը մտնէ , անը թէ ձախը : Բայց որովհետեւ
նոյն վարանման հետ ուրիշ տեսակ հոգեր ալ
կը խառնուէին , կրօնաւորն՝ անշուշտ մտածու-
թեան մը մէջ ընկղմած ըլլալուն՝ հոն անշարժ
մնաց ու կը խորհէր , այնպէս որ առաւել ժա-
մադրութեան սպասող մարդու մը կը նմանէր
քան թէ խոհուն փիլիսոփայի մը . մանաւանդ
այն ժամանակները քիչ մարդ կրնար՝ այն կը-
րօնաւորն հոն անշարժ տեսած ատենը՝ հաս-

կընալ որ մտածութեան մը համար կեցեր էր :

Նոյն միջոցին մաքուր հագուած մարդ մը դուրս ելաւ աջ կողմի փողոցէն՝ որ այն ժամանակ Քնչուներու փողոց կը կոչուէր . քանի մը վայրկեան փողոցին անկիւնը կեցաւ չորս կողմը նայելով, որպէս թէ մէկը կը փնտրուէր . յետոյ կրօնաւորը տեսնելով, ծանրաքայլ դէպ 'ի անոր մօտեցաւ :

Քանի մը քայլ մ'նալով՝ նորէն կեցաւ . կրօնաւորը դեռ չէր տեսներ զայն :

Աշխարհականը քայլ մ'ալ մօտեցաւ, եւ ցած ձայնով սա միակ խօսքն արտասանեց .

« Հէ՛նօ՛ * » :

Այս խօսքը լսելուն պէս Փրանչիսկեանը մէկէն գլուխը վեր առաւ, իրեն հետ խօսող մարդուն երեսը նայեցաւ, եւ լրջութեամբ սա բառը սրտասխանեց .

* Այս բառը կրճատեալն է Շէ՛նօ՛ (լռութիւն) բառին, եւ Ս^մ պէ՛նօ բառին որ հաւատաքըն-նութեան ատեանը ելնելու դատապարտեալ անձանց հագցունելու սովորութիւն եղած դեղին չուխայէ փորուրարը կը նշանակէ, զոր մէկ անգամ հագնողն յաւիտեան պատիւէն կիյնար եւ ամեն քաղաքական իրաւունքէ կը զրկուէր իր ապագայ սերնդոցը հետ :

« Քօրազա* :

— Աստուած** կը զրկէ զիս , ըսաւ ան-
ծանօթը :

— Աստուած ամենակարող է մարդոց վը-
րայ , պատասխանեց կրօնաւորը :

— Ձեր վերապատուութիւնը կրնայ հետա-
գալ յարեց աշխարհականը :

Կրօնաւորն հնազանդեցաւ եւ իր ուղե-
ցոյցին ընկերացաւ այնպիսի հանդարտ եւ բը-
նական դէմքով մը՝ որ կարծես թէ անակնկալ
բան մը չէր այս հանդիպումը , եւ հլու ման-
կան մը պէս ետեւէն կերթար , հաւատաքըն-
նութեան ազդած ահեղասատ Շեֆօնը երկիւ-
ղածութեամբ պահելով , որ չարաշշուկ առա-
ծի մը պէս անմոռաց մնացած է մինչեւ ցայսօր

* Քօրազա երկայն եւ սրածայր գլխարկ
մ'էր , որ հաւատաքննութեան խարոյկներուն
դատապարտեալ անձանց գլուխը կը դնէին .
եւ վրան բոցեր , սատանաներ եւ ուրիշ այ-
լանդակ հրէշներ նկարուած էին : Այս բառն
ալ հաւատաքննութեան ատենին ընտանիներ
ուն խորհրդական նշաններէն մէկն էր :

** Աստուած բառը հաւատաքննականաց
խորհրդական լեզուովը՝ հաւատաքննութեան
մեծաւորը կամ հաւաքական առմամբ հաւա-
տաքննութեան ատենը կը նշանակէր :

Սպանիոյ մէջ :

Անձանօթն ու կրօնաւորն 'ի միասին քա-
լեցին գնչուներուն երկայն , սեւ , ծուռու-
մուռ ու դարչելի փողոցին մէջ , ուր ծայրէ 'ի
ծայր գանուած բազմաթիւ գինետուներուն
կանգեղներէն զատ ուրիշ լոյս չէր տեսնը-
ւեր , եւ անախորժ ու շփոթ շշուէմ մը կը լըս-
ւէր , որ գինով մարդոց ձայներու անհեթեթ
խառնուրդ մ'էր :

Մէվրիի ցած ժողովուրդը , դողերը եւ այլն ,
նոյն միջոցին իրենց զուարճութեանցը կ'ըբա-
ղէին , եւ մանաւանջաւ ու բաժարելի կը խմէին նեղ ու
երկայն քառակուսի գաւաթներով որ դեռ այն
ժամանակները գործածական էին Անտալու-
զիոյ գինետանց մէջ :

Փողոցին միւս ծայրին մօտ հասնելնուն ,
աշխարհականը կանգ առաւ գինետան մը առ-
ջեւ որ միւսներէն աւելի լուսաւոր էր , եւ
դուռը ցոյց տալով նշանացի առաջարկեց ըն-
կերին որ ներս մտնէ :

Կրօնաւորն առանց վարանելու այն նող-
կալի տեղին սեմէն ներս մտաւ , վասն զի այն
ժամանակները գինետանց մէջ կրօնաւոր
տեսնելը կարգէ դուրս բան մը չէր . եւ յայտ-
նի է որ Սպանիոյ մէջ կրօնաւորներն ամեն ժա-
մանակ ամեն անարգ եւ կոպերելի բաներու

մէջ խառնուած են : Ասկէց յառաջ եկած է
անշուշտ այն արհամարհանքն ու ատելութիւ-
նը որով հալածուեցան եւ վերջապէս վաճառ-
ուեցան Սպանիայէն :

Արդ , քարոզիչ կրօնաւորը գինետունը
մտաւ : Յաճ , երկայն եւ մութ սրահ մ'էր սեւ
ու ծխոտեալ պատերով , որ տեղ տեղ լայն
ձեղքուածներ ունէր , որոց գոյնն աւելի բաց
ըլլալով , պատին սեւ յատակին վրայ հին Ե-
գիպտացւոց նշանագրերուն պէս մանրանկար-
ներ կը ձեւացնէին :

Թանձրաշէն ու կոտրտած նստարաններ
դրուած էին սրահին չորս բոլորը՝ երկար եւ
զազիր սեղաններու առջեւ , որոնք արմուկնե-
րու անդադար շփումէն յղկուելով տեսակ մը
փայլուն ստացեր էին :

Պատերուն վրայ , ձեղունին կէս բարձրու-
թեամբը խել մը կոշտ պատկերներ փակցուած
էին , որոնք Սպանիոյ մէջ պաշտուած Ս .
Աստուածածնի բազմատեսակ կենդանագիր-
ներ կամ հաւատաքննութեան խարոյկներու
ահուելի նկարներ էին : Այն պատկերներուն
ամեն մէկուն վրայ գրչի հաստութեամբ եր-
կերկու մանր մոմեր կամ ծխաբոյր ու ժահահոտ
իւղի կանդեղ մը կը վառէր շարունակ , եւ գի-
շերներն ալ գինետան բոլոր լոյսն աստնք էին :

Առատաղին գերաններէն վար բազմա-
ճիւղի կեռեր կամ ճանկեր գամուած էին՝ ու-
րոցմէ կախուած էին խողի ապխտեալ աղղ-
րեր, խողի չորցուցած գիրուց, թարմ միս,
գինետան յաճախորդներուն խոյրերը եւ մին-
չեւ անգամ վերարկուներ :

Հոն գտնուած գժնէագէմ անձինքը, կը-
րօնաւորներ, բաղդապատումներ, գնչուներ
եւ հաւատաքննութեան ընտանիներ, վասն
ղի այս ամենն ալ կային գինետան մէջ, այս ամ-
ենն տեսակ անձինքը, կըսեմ, երկար սեղան-
ներուն բոլորտիքը, ճրագներուն աղօտ եւ գող-
գող լոյսին եւ այն այլանդակ հանդերձարանին
ներքեւ նստած տեսնողը՝ ստորերկրեայ գամ-
բարանի մը մէջ կախաղաններու ներքեւ նըս-
տած սատանաներու ժողով կը կարծէր :

Գետինը մոխրագոյն ու խոնաւ հողով ծած-
կուած, կրօնաւորներուն հողաթափին կամ
գնչուներուն մերկ ոտքերուն տակ չէր հնչեր.
եւ կերկերեալ ձայներու շշուէնը՝ ողբական
երգոց մրմունջներու կը նմանէր : Վերջապէս
այս զազիր տեղը սոսկում եւ միանգամայն նող-
կանք կազդէր : Այսպէս էին այն ժամանակ Թը-
րիանայի արուարձանին գինետուները :

Քարոզիչ կրօնաւորը գնաց սրահին ծայ-
րը սեղանի մը մէկ կողմը նստաւ, ուր ու-

ըիչ մարդ չկար . յետոյ ընկերն ալ իր քովնըստելու հրաւիրեց :

— Հիմա կուգամ , ըսաւ անծանօթը . նախ պէտք է Շաբային* հետ խօսիմ . եւ մանկամարդ աղջիկ մը ցուցուց որ քանի մը քայլ անդին կանգնած էր դժուծ նկուղի մը դրանը մէջ , որ խոհարանի տեղ կը ծառայէր :

Շաբա՝ որ գինեպանին քոյրն էր , մանկամարդ եւ թխորակ Անտալուզիացի մ'էր , կէս գնչու , բարակ եւ կլոր սրունքներով . կարմիր Սայա կերպասէ շրջազգեստ մը հագած էր որ հազիւ մինչեւ ծունկերը կը ծածկէր : Երկար ու քիչ մ'ալ գանգուր սեւ մազեր՝ երկուհիւսքի բաժնուած՝ գլխուն երկու քովէն երկայնադեղ հասակն 'ի վար կախուած էին , եւ գլխուն ետեւի կողմն ալ նարնջագոյն ժապաւէնէ լայն վարսակալ մը կապուած էր երկայն գնտասեղներով , որոց պողպատեայ փայլուն գլուխներն աստղերու պէս կը շողշողէին :

Անծանօթն ընտանեբար քովը գնաց եւ կարճ ու կամաց ձայնով ըսաւ .

* Փայլուն ու հնչիւն մետաղ ըսել է : Սպանիոյ ռամիկներն այս անունը կուտան դեռահասակ կանանց , գեղեցիկ կամ սիրուն ըսելու մտօք :

« Ծրագրօն* եկան , Շաբա :

— Դեռ ոչ , պատասխանեց Անտալուզու-
հին , բայց չուշանար : Եղբայրս Քօքօն** ղրկե-
ցի իմաց տալու իրեն թէ օրիորդ Տօլօրէզ այս ի-
րիկուն կէս գիշերին տունէն դուրս պիտի ել-
նէ . Ծրագրօ պիտի գայ հոս ձեզ գտնէ , ինչ-
պէս նաեւ սա սուրբ ժարդը՝ զոր Աստուած***
իր վստահութեամբը պատուած է : »

Այս խօսքն ըսած ժամանակը Շաբա
հետաքրքիր նայուածք մը նետեց կրօնաւորին
դեղեցիկ եւ պատկառելի դէմքին վրայ :

« Նոյն ինքն է , բաւ անծանօթը , գե-
րապայծառ եւ վերապատուելի հայր Պետրոս
Արպուէզի մտերիմ խորհրդականը : Թրիանա-
ջի կամուրջին բերանը հանդիպեցայ իրեն ,
ինչպէս որ Նորին բարձր սրբազնութիւնն ի-
մացուցեր էր ինձ , եւ հիմա միայն Ծրագրօի
կ'սպասենք մեր խորհուրդն 'ի գործ դնելու
համար , եթէ օրիորդ Տօլօրէզ իր խօսքին
վրայ կենայ :

— Օրիորդ Տօլօրէզ պիտի դուրս ելնէ ,
տէր իմ , պատասխանեց Շաբա . ես իրեն նա-

* Ծրանչիտկոս .

** Յովակիմ :

*** Տես 11 երեսին ծանօթութիւնը :

մակ մ'ալ տարած եմ իր նշանածին կողմէն ,
զոր նորին Սրբազնութիւնը Պետրոս Սաավէտ-
րային* գրել տուաւ իբրեւ զբօսանք :

— Օրիորդն ալ իսկոյն հաճեցաւ ժամա-
դրեալ տեղն երթալու , հարցուց անձանօթը ,
զոր պատմութեանս գիւրութեանը համար
Էնրիքէզ պիտի կոչենք :

— Առաջ չհաճեցաւ , պատասխանեց Շա-
բա . բայց նամակը խիստ ստիպողական էր .
նշանածին կեանքը վտանգի մէջ պիտի իյնար .
վասն որոյ օրիորդը բոլոր ուղածսխոստացաւ :
Նշանակեալ տեղը պիտի երթայ այս իրիկուն .
ուստի կը հասկընաք որ օրիորդին այս որո-
շումը մինակ իրմէն չէր , այլ ես բոլոր կարո-
ղութեամբս օգնած եմ :

— Օրհնեալ ըլլայ Աստուած , գոչեց Էն-
րիքէզ կեղծ Չերմեռանդութեամբ մը . դուն
ճշմարիտ վհուկ մ'ես Շաբա . եւ հողոյս վրայ
կերդնում որ Նորին բարձր Սրբազնութիւնը

* Ժան Բէրէզ Պ. Սաավէտրա , հռչակաւոր
խաբերայ մ'էր , ամեն տեսակ գիրերու կեղծը
չինելու եւ նամանցընելու մասին խիստ ճար-
տար : Այս մարդն էր որ ձիգուիթի մը հետ
միաբանելով հաւատաքննութիւնն ու ձիգուի-
թաց ընկերութիւնը հաստատեց Բորթուկալի
մէջ :

ձեռնէ աւելի յարմար եւ յաջող մէկը չէր կրնար
ընտրել իր ամենասուրբ եւ անայլայլակ կա-
մացը գործիք ընելու համար : Լաւ կը հասկը-
նաս , Շաբան , որ մեր սուրբ Հաւատաքննիչն
ուրիշ նպատակ չունի , բայց միայն ադ աղջը-
կան հոգին սատանային ձեռքէն ազատել ,
թող չտալով որ ամուսնանայ Տոն Էսթէվան
Վարկասի հետ , որուն համար Մարրանօի* որ-
դի եւ մաւրիտանացիի թոռ է կըսեն :

— Օ՛ , այդ ճշմարիտ է , ըսաւ Շաբա ե-
րեսը խաչակնքելով . Մօնսինեօրը սուրբ մ'է .
ինչ որ ընէ՝ երկնից շահուն համար կընէ : Բայց
ինձի համար վհուկ է մի ըսեր , աւելցուց սար-
սափելով . այսպիսի խօսք մը պէտք չէ ելնէ
հաւատաքննութեան ընտանիի մը բերնէ .
վասն զի կրնայ զիս յառաջիկայ մեծ խարու-
կազոհին մատնել , որ պիտի կատարուի մեր
սիրելի տիրոջ Տոն Քարլօ թագաւորին յաղ-
թութիւնները տօնելու համար :

— Մի վախնար , Շաբան , անհոգ եղիր .
դուն բարի կաթողիկ մ'ես եւ սուրբ հաւա-

* Մարրանօ խող ըսել է : Այս անունը կու-
տային Սպանիոյ մէջ՝ կաթողիկութեան դար-
ձած Մաւրիտանացի արարներուն ու հրեայ-
ներուն :

տաքննութեան հաւատարիմ ծառայ : Այն ,
չատ չանցած մեծ խարուկազոհ մը պիտի ու-
նենանք , որ մեր սիրելի տէր եւ թագաւոր
Տոն Քարլօի գահակալելէն 'ի վեր առաջինը չի
պիտի ըլլայ . եւ ես քեզ Մայօրի հրապարա-
կին մեծ պատշգամին վրայ պատուական տեղ
մը կը տանիմ , ուսկից լաւ մը կը տեսնես շուն
հերետիկոսներուն խորովիլը :

— Իրան , գոչեց մանկամարդ Անտալու-
զուհին՝ ուրախութեամբ ձեռքերն իրար զար-
նելով : Պարոն Էնրիքէզ , կըսեն թէ տասնեւ-
հինգէն աւելի հերետիկոս պիտի այրին . եւ ու-
րիշ շատերու ալ Նորին բարձր Սրբազնու-
թիւնը շնորհ պիտի ընէ թէ որ հերետիկոսու-
թիւննին ուրանան եւ իբրեւ բարի քրիստոն-
եայ մեռնիլ ուղեն : Այս վերջինները՝ բոցե-
րուն մատնուելէ առաջ խեղդամահ պիտի ըլ-
լան : Ո՛հ , ինչ գեղեցիկ տեսարան մը պիտի
ըլլայ , Պարոն Էնրիքէզ , եւ ասամենը ինձի
տեսնել պիտի տաք , այնպէս չէ :

— Աերզնում , պատասխանեց հաւատա-
քըննութեան ընտանին , յանուն Հօր եւ Որդ-
ւոյ եւ Հոգւոյն սրբոյ , եւ հրամանաւ Սէվիլի
ամենասուրբ հաւատաքննչին : Սքանչելի տե-
սարան մը պիտի ըլլայ , աւելցուց Էնրիքէզ՝
բերկրութեամբ տեսնելով որ գնչուհւոյն ջեր-

մեռանդու թիւնը կը բորբոքէր հաւատաքնն-
նութեան վրայ :

Բայց թէ որ ուշադրութեամբ անոր դէմ-
քը դիտէր, պիտի տեսնէր որ կարմիր շրթունք-
ներն անզգալի կերպով ճերմկցեր, աշխոյժ ու
վառվառն աչքերը սարսափով լցուեր էին, եւ
եթէ աւելի մօտն ըլլար, սեւ թաւիչէ բաճկո-
նին ներքեւէն սրտին անկանոն եւ գահավէժ
բարախումբ կրնար լսել :

Խեղճ Անտալուզուհին չէր կրնար՝ իր սլա-
պերը միտքը բերելով՝ զուտ կաթոլիկ արիւնէ
սերեալ շրլալուն համար հաւատաքննու-
թեան բոցերէն անհող ըլլալ, ուստի երկիւ-
ղէն ինքզինք հաւատաքննութեան խոնարհ
աղախին մը ըրած էր, եւ հիմա ալ Քրիստոսի
զինուորին* սուտ բարեպաշտութենէն ու կեղ-

* Այսպէս կը կոչուէին հաւատաքննու-
թեան ընտանիները՝ այն օրէն 'ի վեր (1494) որ
Թովմաս Թօրքուէմատա՝ դժնեայ դոմինիկ-
եանն՝ անոնց երիտասարդները զինուորեց :
Թօրքուէմատա՝ այնչափ անգթութիւն ըրաւ,
լրտեսութիւնն ու մատնութիւնն այնչափ քա-
ջալերեց, որ ամեն մարդ՝ մինչեւ անգամ ազ-
նուականները՝ խոհեմութիւն դատեցին հա-
ւատաքննութեան ընտանի կամ Քրիստոսի
զինուոր ըլլալ, քան թէ դուրս մնալով կա-
նուխ կամ ուշ կասկածելի ամբաստանուիլ :

ծաւորութեանէն չկրնալով քաջալերուիլ, ինքզինք ուրախ ցուցընելու ջանաց ու ցնծագին գէմքով մը գոչեց .

« Ո՛հ, ի՞նչ գեղեցիկ բան պիտի ըլլայ, ի՞նչ գեղեցիկ : »

Նոյն միջոցին տեսաւ որ քարոզիչ կրօնաւորին սեւ ու խոշոր աչքերն իր վրայ ուղղուած էին : Կրօնաւորն անոր խօսակցութեան ոչ մէկ բառը եւ գէմքին ոչ մէկ շարժումը չէր կորսընցուցեր :

« Գինի բեր մեզի, աղջիկս » ըսաւ հաւատաքննութեան ընտանին :

Խեղճ Շաբա ուրախ ըլլալով որ կրօնաւորին սուր նայուած քէն եւ այս խօսակցութեանէն պիտի ազատէր, վասն զի ամեն վայրկեան կը գողար որ իր զգացած սարսափը կը յայտնուի, Շաբա, աչխոյժ եւ թեթեւ, վազեց հողէ ըստոման մը լեցուն գինի բերաւ ու Նորին վերապատուութեան առջեւ դրաւ :

Երբոր Էնրիքէզ աթոռակ մը յառաջ կը քչէր կրօնաւորին գէմը նստելու համար, նոր մարդ մը գինետան դռնէն ներս մտաւ, հաւատաքննութեան անձնուէրին մօտեցաւ եւ աչքովը կրօնաւորը ցուցընելով՝

« Մեր սուրբ ստիկանն մյս է, հարցուց փաղաքուչ ձայնով մը :

— Նոյն ինքն է , Պարոն Ծրագրօ » պատասխանեց Կնրիքէզ :

Արօնաւորը ստք ելաւ ու իր երկու ձեռքը խաչածեւ կուրծքին վրայ դրաւ : Նոր եկողն ալ նոյնը ըրաւ : Արօնաւորն հակադարձ խաչածեւ մը ըրաւ իր ձեռքերովը եւ յետոյ գլուխը դէպ 'ի Ծրագրօ խոնարհեցուց ողջունելու կերպով : Ծրագրօ ալ նոյն շարժումն ըրաւ , այնպէս որ երկուքին գլուխը մեղմով իրարու դպան : Այս էր հաւատաքննութեան ընտանիներուն յատուկ ողջունի ձեւը :

Բայց Ծրագրօ այս ծանօթական նշաններով գոհ չըլլալով՝ կուրծքը բացաւ եւ իր պատմութեանն ներքեւ արծաթեայ տախտակ մը ցուցուց , որուն վրայ Քրիստոսի պատկեր մը քանդակեալ էր գլխիվայր , եւ պատկերին կուրծքին վրայ ալ արեւ մը՝ 'ի նշան լուսոյ , որ ծիծաղաչարժ նշանաբանն էր հաւատաքըննութեան , այն մտորութեան ու ջնջման հրեշտակին :

Այս վերջին նշանին Ծրանչիսկեանը (կրօնաւորը) չպատասխանեց :

Այն ժամանակ Ծրագրօ կասկածաւոր աչքով մը Կնրիքէզի նայեցաւ :

Կնրիքէզ ուսերը թոթվեց անհոգ եւ վրասան դէմքով մը :

« Այս մարդը մենէ չէ , ըսաւ կամաց մը
Ֆրազքօ : »

Էնրիքէզ տարակուսական շարժում մը ը-
րաւ :

« Մենէ չէ , կըսեմ քեզ , կրկնեց Ֆրազ-
քօ . մեզի նենգութիւն եղած է , նենգութիւն ,
կը հասկընան . » եւ Էնրիքէզի ձեռքն ուժով
մը սեղմեց , վայրագ զայրոյթ մը փայլելով իր
դժնեայ դէմքին վրայ :

Այս խօսքերը ցած ձայնով կարտասան-
ուէին , այսու ամենայնիւ զինետան յաճա-
խորդները կրցան նշմարել այս շարժումը՝ որ
կռիւ կը գուշակէր : Ամենուն աչքը կրօնաւո-
րին վրայ ուղղուեցաւ , որ հանդարտ եւ անշը-
փոթ նստած , առաւել ականատես կը թուէր
քան թէ գործակից այս տարօրինակ տեսարա-
նին :

Ոմանք , Ֆրանչիսկեանը տեսնելով , որուն
վեհ դէմքը պատկառանք կազդէր , մոմռալ
սկսան , եւ այն յելուզակներուն բերնէն ըս-
պառնալիք ցայտեց Էնրիքէզի եւ Ֆրազքօի
դէմ :

Հաւատաքննութեան մտերիմները՝ թէ
եւ իրենց թշնամանք մը եղած ժամանակ վը-
րէժ առնելու վստահ էին , այսու ամենայնիւ
թրիանայի արուարձանին բնակչաց հետ կըռ-

ուելէ ալ չէին վախնար . գիտէին որ անոնք
կրօնաւոր մը պաշտպանելու համար Չարդուի-
լըն աչք կառնուին , բայց բանմը կար որ քա-
հանայներէն ու կրօնաւորներէն աւելի ազդե-
ցութիւն ունէր ժողովրդեան վրայ , այն էր հա-
ւատաքննութիւնը :

Յրազքօ՝ դժոխային խորամանկութեամբ
մը՝ խմորներուն դարձաւ , որոց նայուածքն ու
չարժումները թշնամական դիտաւորութիւն-
ներ կը յայտնէին . « Եղբարք , գոչեց , յանձն
կառնո՞ւք հաւատաքննութեան թշնամի մը
պաշտպանելու չափ գէշ կաթուղիկ ըլլալ : »

Հաւատաքննութեան ահաւոր անունը լը-
սելնուն՝ ամենն ալ գլուխնին խոնարհեցուցին ,
եւ երեսնուն գոյնը նետեց : Ար թուէր թէ կայ-
ծակ ինկաւ այն դաժան եւ կռուասէր մարդոց
մէջ , եւ մէկն ալ չհամարձակեցաւ այնուհե-
տեւ բերանը բանալու :

Այն ժամանակ , քարոզիչ կրօնաւորն՝ ա-
ռանց ուշադրութիւն ընելու ոչ Յրազքօի բար-
կութեանը եւ ոչ գինետան յելուզակներուն
ապշութեանը , ծանրութեամբ ելաւ ու գէպ'ի
դուռը շտկուեցաւ տխուր լռութեան մը մէջ :

Ի՛նչ , գոչեց Յրազքօ , պիտի թողնու՞ք որ
այս մարդը վախչի : Չենէ մէկը չպիտի՞ երթայ
սուրբ աստեանին զինուորներուն իմաց տայ :

— Ես , ես յ գոչեց Շարա սարսափով :
Միանգամայն դէպ 'ի դուռը վազեց ինքզինք
հաւատաքննութեան անձնուէր ցուցընելու եւ
վախցած հանապազօրեայ վտանգէն ազատե-
լու համար . բայց երբոր դուռը բանալու վրայ
էր , Յրանչիսկեանը երկար եւ խորազնին նայ-
ուածք մը ձգեց անոր վրայ : Շարա գերբնա-
կան ազդեցութենէ մը զարնուածի պէս շը-
ւարեցաւ մնաց , եւ ձեռքերն իրար կցելով
ծունկի վրայ եկաւ Աստուծոյ մարդուն առջեւ :

Գինետան սրիկայներն ալ մի եւ նոյն ըզ-
գացումէ դրդեալ՝ ամենն ալ ձեռքերնին կրօ-
նաւորին երկնցուցին որպէս թէ անոր օգնու-
թիւնը խնդրելով ծածուկ իշխանութեան մը
դէմ՝ որուն անսաստելու չէին համարձակեր :

Այն ժամանակ կրօնաւորը վեհ դէմքով
մը այն մունջ եւ մտադիր ժողովին դարձաւ ,
երկնային նայուածքով մը օրհնեց , եւ դռնէն
դուրս նետուելով՝ հեռացաւ աներեւոյթ ե-
ղաւ , եւ ոչ ոք , նոյն իսկ Յրազքօ անգամ չի
համարձակեցաւ զայն արգելուլ :

Մատնուեցանք , անխոհեմ , ըսաւ Յը-
րազքօ Էնրիքէզին , որ ուրիշներուն պէս ապ-
շեր մնացեր էր :

— Մի վախնար , մեր խորհրդին տեղեակ
չէ , պատասխանեց Էնրիքէզ :

— Աւրեմն հիմա գործի ձեռք վարենք ,
գոչեց Յրազքօ քաջալերուելով . ուրիշ մար-
գու պէտք չունինք : »

Եւ Քրեոսոսի երկու շնորհները գինեատունէն
դուրս ելան :

ԳԼՈՒԽ Բ .

ԿԱՐՏՈՒՆԱՅԻ ՊԱԼԱՏԸ

Թրիանայի արուարձանին ծայրը վաղեմի
չէնք մը կար արաբացի ոճով , որուն աւերակ-
ներն ապաստան մ'էին զիշերուան թռչուննե-
րուն* :

Բնակարան չունեցող մուրացկաններ , ան-
հող գնչուներ՝ շատ անգամ քարերուն մէջ

* Սպանիոյ մէջ կաթ ոլիկներն այնչափ բա-
նի տեղ չէին գներ արաբացւոյմէ մնացած գե-
ղեցիկ ու հոյակապ շէնքերը , որ բաց 'ի մէկ
քանի խիտ երեւելիներէն , որոնք կրօնաւո-
րաց ձեռքն անցած էին , մնացածները մու-
րացկաններուն գնչուներուն եւ չարագործնե-
րուն թողուած էին :

պառկած կը ննջէին այն տաք գիշերները , որ
Սնտալուզիոյ մէջ ամեն օթեւան անօգուտ կը-
նեն . ճմեռ ցերեկներն ալ պառաւ կանայք՝
արեւը նստելէ ետեւ՝ կերթային այն աւերակ-
ներուն ետեւ ինքզինքնին կը պատսպարէին
դառնաշունչ հովին խստութենէն :

Քայքայեալ պատերուն ընդարձակութե-
նէն , եւ տակաւին անադարտ մնացած ճար-
տարապետական դարդերէն կրնար դիւրաւ
հասկցուիլ որ ժամանակաւ հոյակապ պալատ
մ'էր այն . վասն զի աւերակներուն մէջ տեղը՝
արաքացի նկարներով ու քանդակներով պըճ-
նեալ կամարի մը ներքեւ՝ դեղեցիկ սիւներու
երկար շարք մը կար , ըստ երեւութին դիւ-
րեղծ , բայց դեռ անտխեղծ որմով մը շրջա-
պատեալ , եւ ամրաշէն դռնով մը գոցուած :
Այս սիւնադարձ կամարայարկը ժամանակաւ
փառաւոր սրահ մ'ըլլալու էր :

Փշատակներուն մէջ տեղ տեղ վայրի տուն-
կեր բուսած էին , շառագոյն ծաղիկներով սէ-
ղեր , անուշահոտ դեղին շահօքրամներու
տունկեր , վայրի վարդենիներու եւ սարդենի-
ներու թաւախիտ թուփեր , որ իրենց հովա-
նաւոր եւ կենդանի կանանչներովն աւերակ-
ներուն մերկութիւնը կը ծածկէին :

Այս զօրմանալի տեղը կարտունայի միա-

բանութեան* անդամոց ժողովարան եւ անոնց մեծաւորին պալատն էր :

Անոնք որ Սէրփանթէզի լուրերը կարդացած են, կը յիշեն Սէվիլի գողերուն գլուխ Մօնիբօտիօի այլանդակ եւ ծիծաղաշարժ նկարագի-

* Այս անունով գաղտնի ընկերութիւն մը կար Սպանիոյ մէջ՝ գողերէ ու աւազակներէ բաղկացեալ : Աստարելապէս կազմակերպեալ ընկերութիւն մը, որուն նպատակն էր ամեն կերպ ոճիրներու գործիք ըլլալ : Ով որ մէկէ մը վրէժ առնուլ կամ անոր գէշութիւն մը ընել ուզէր, այս ընկերութեան կը դիմէր, եւ ստակ վճարելով՝ ուզածն ընել կուտար . ծեծել, գետին մէջ խղղել, դաշոյնով վիրաւորել կամ սպաննել, ինչ որ ուզէր : Սպանութիւնը սուղ կը վճարուէր, բայց կատարումն անկասկածելի էր . վասն զի կարտունայի միաբանութիւնն իր միանգամ խոստացածն անպատճառ ճշդիւ կը կատարէր :

Այս միաբանութիւնը կամ եղբայրութիւնը կը բաղկանար մեծաւորէ մը որ Հէրմանօ Մայօր (դերագոյն եղբայր) կը կոչուէր, եւ արքունի պալատը կը բնակէր, ուր շատ անգամ բարձր պաշտօններ կը վարէր : Այս դերագոյն եղբայրը հրամաններ կը ղրկէր գաւառաց մեծաւորներուն, որ «բեթալե» կը կոչուէին, եւ զարմանալի փութով ու ճշդութեամբ իր հրամանները կը կատարէին : Իսկ կարտունայի

ըր : Այն ժամանակը , այսինքն Սէրվանթէզէն
յիսուն տարիի չափ առաջ արդէն գողերու
միաբանութիւն մը կար՝ ոստիկանութեան մէկ

անդամները՝ որ խիստ բաղմաթիւ էին , կը
բաղկանային Արթուրէ կամ Պարթուրէ՝ որ ընդ-
հանրապէս վարպետ սուսերամարտներ , աներ-
կիւղ մարդասպաններ , ծայրագոյն աւաղակ-
ներ էին , որոց քաջասրտութիւնը հարցափոր-
ծի եւ մինչեւ իսկ կախաղանի առջեւ անվը-
կանդ էր : Ընկերութեան լեզուովն այս Արթու-
րէն Քարտիանոս , հարուածատու , կը կոչուէին :
Ասոնցմէ ետքը կուգային Պարթուրները , նա-
խամարտիկները , որ պատանիներ էին , ամե-
նըն ալ ճարպիկ գողեր , մեծ մասը Սէվիլի ,
Մալակայի ու Մէլիլայի նաւարաններէն փա-
խած : Ասոնք Նորմանդիայ ալ կը կոչուէին :
Ասոնցմէ ետեւ կուգային Պարթուրները , հծծող-
ները , որոց պաշտօնն էր քաղաքացի ընտան-
եաց վրայօք գիտցածնին երթալ մեծաւորին
ականջն 'ի վար պատմել : Ասոնք վարպետ
կեղծաւորներ ըլլալով , միամիտ քաղաքաց-
եաց տուները կը մտնէին , եւ անոնց գաղտնեա-
ցը վերահասու կըլլային : Ամենն ալ բարե-
պաշա դէմքով ծերունիներ էին , որ ցերեկնե-
րը միշտ եկեղեցիներուն մէջ կը տեսնուէին ,
ձեռու ընին մէկ մէկ համրիչ կամ վարդարան ,
'ի բաց առեալ իրենց պաշտօնին ժամերը՝ որ
կարտունայի մեծաւորին կամ հաւատաքննչին

քանի անդամոց պաշտպանութեան ներքեւ :
Այս եղևոնագործ ընկերութիւնը՝ որուն ծա-
գումը տասնեւհինգերորդ դարուն սկիզբները

քով կանցունէին . վասնզի ասոնց մեծ մասը
միանգամայն կարտունայի լրտես եւ հաւատա-
քէնութեան ընտանի էին : Կարտունայի մի-
արանութիւնը նաեւ բազմաթիւ գողոնաթա-
քոյցներ ունէր , որ ^{տեղեւեւ} կը կոչուէին , եւ
չատ ալ տղայք տասնէն տասնեւհինգ տարե-
կան , որ շեւո (այծեամն) կը կոչուէին : Ա-
սոնք կարգին ընծայացունէին էին , եւ դոնէ
տարի մը ծառայութիւն պիտի ընէին միաբա-
նակից ըլլալու պատուոյն արժանանալու հա-
մար : Միաբանակից եղբայր մը՝ որ երկու
տարի անձնուիրաբար եւ արժանապէս ծա-
ռայութիւն ընէր՝ ^{կարգ} կը ըլլար , որ ընկերու-
թեան ամենէն բարձր աստիճանն էր՝ մեծաւո-
րէն ետեւ : Այս ամենէն դատ՝ Կարտունայի
ընկերութիւնը բազմաթիւ Սեւեաներ (յուշկա-
պարիկ) ունէր , որոնք մանկամարդ ու գեղե-
ցիկ կանայք էին , մեծ մասը գնչու : Ասոնք
միաբանութեան խօսքի տէր անդամներուն
հարճերն էին , եւ իրենց գլխաւոր պաշտօնն էր
Կարտունայի գործողութիւններուն ենթակայ
ըլլալիք անձինքը հրապուրելով յարմար տե-
ղեր տանիլ ու մատնել : Ասոնց ամենուն վրայ
աւելցընելով Աւեւեւներ (գատաստանական
նուիրակ կամ կալանաւոր) ամբաստանող փառ-

կէնէ, այն ժամանակ իրեն գլուխ ունէր տա-
րօրինակ մարդ մը՝ լուրջ եւ միանգամայն եր-
գիծիչ դէմքով եւ գարշելի ճոռումախօս լեզ-

տաբաններ, կրօնաւորներ, կանոնիկոսներ եւ
մինչեւ անգամ եպիսկոպոսներ ու հաւատա-
քըննիչներ, որոնք դործիք եւ պաշտպան էին
Կարտունայի ընկերութեան, որուն յաճախ
պէտք կունենային կամ ստակ կուտային, կըր-
նանք գաղափար մը ունենալ այս ընկերութեան
վրայ, որ չորս հարիւր տարիէն աւելի ժամանակ
չարչարեց ու տառապեցուց զՍպանիա :

Կարտունայի ընկերութիւնը տասնութ հինգ-
երորդ դարուն սկիզբներն հաստատուեցաւ,
եւ 1821ին ջնջուեցաւ լեռնական որսորդ դօ-
րաց ձեռօք՝ որոց հրամանատարն էր սոյն ծա-
նօթութիւնները գրող Պ. Մանուէլ Քուէնափ-
աս : Այս կարգէ դուրս ու սոսկալի ընկերու-
թեան բոլոր թուղթերը, որ իր կանոնները հը-
րամանագիրերն եւ բազմաթիւ նամակներ պա-
րունակող մեծահատոր գրքեր էին, Սէվիլի ե-
ղեռնագատ ատեանին ղիւանատունը դրուե-
ցան սոյն անձին ձեռօք 1821 սեպտեմբեր 15
ին : Ծրանսիզքօ Քօրթլինա, որ 1821ին Կար-
տունայի ընկերութեան մեծաւորը կամ գլու-
խըն էր, իր քսանի չափ համախոհներուն հետ
բռնուեցաւ, եւ 1822 նոյեմբեր 25ին Սէվիլի
հրապարակին վրայ կախուեցաւ ուրիշ տասն-
եւվեց մեղսակիցներու հետ :

ւով , որ գոնէ բնաւորութեան կողմէն հին տիպ
մ'է , որ 1821ին տակաւին կը գտնուէր Սպա-
նիոյ մէջ :

Նոյն 1554 փետրուարի իրիկունը , ուր
նախընթաց գլխոյն մէջ պատմուած իրողու-
թիւններն անցած էին , Կարտունայի մեծա-
ւորին պալատին մէջ ալ ոչինչ նուազ հետա-
քըրքբական եւ աւելի կարգէ դուրս տեսա-
րան մը կը տեսնուէր :

Ժամը տասնին (ըստ եւրոպացւոց) միջոց-
ները Կարտունայի պալատին ծանր դուռը
բացուելով , երսունի չափ անձինք ամեն սե-
ռէ ու հասակէ , լռութեամբ եւ նախապաա-
ւութեան կարգաւ ներս մտան :

Սրահը բաւական աղէկ լուսաւորուած էր
ռետինէ ջահերով՝ որոնք սխներուն վրայ դամ-
ուած մանեկածեւ բեւեռներու մէջ տնկուած
էին , եւ սրահին մէջ տեղը կարգին մեծաւորը
կանգնած էր :

Յաղթահասակ եւ կորովի մարդ մ'էր • իր
թխորակ դէմքը՝ որուն վրայ քանի մը սպիներ
կը տեսնուէին , խորամանկութեան յանդգնու-
թեան պաղարիւնութեան , եւ երբեմն ալ
երբոր կը ժպտէր՝ հեզնութեան ու երգիծա-
նութեան զարմանալի խառնուրդ մը կը ներ-
կայացընէր : Իր այրական լուրջ ձայնն աղդու

հնչիւն մ'ունէր, եւ երբոր հրաման մը կընէր, իր կամաց ուժգնութիւնն իշխանական ազգութիւն մը կուտար իր նայուածքին ու շարժմանը : Թանձր կտաւէ շապիկ մը հագած էր, թուխ պատմուճան մը թիկնոցի պէս ուսը ձգած, եւ կտաւէ վարտիք մ'իր ազդրերը գոցած էր ծունկէն վեր : Մերկ եւ ջղոտ սրունքը մաղերով ծածկուած էին, եւ լայն, տափակ ու կոնճմտած ոտքերը՝ որ ցած սերունդէ մը յառաջ եկած ըլլալուն եւ կարգէ դուրս ուժեղութեանը նշան էին, Աւբուբ ըսուած տեսակ մը կոշիկներ կը կրէին, որոնք շատ մը բարակ չուաններով ոտքին կոճերուն կապուած էին :

Այս մարդը Մանտամիէնթօ (հրամանատար) կը կոչուէր :

Սրահը մտնող զանազան անձերը մեծաւորին բոլորտիքը շրջանակ մը կազմեցին : Իր երկու քովը կանգնեցան արժանապատուութեան կարգաւ երկու կորովադէմ կոմսեր : Աջ կողմինը Մանօֆին, նրբաձեռն, կանուանէր, վասն զի անհամեմատ ճարպիկութիւն մ'ունէր անցած ժամանակ դաշոյնի հարուած տալու, այնպիսի արագութեամբ, որ զարնուողն հարուածին ուրկէ դալը չէր կրնար տեսնել . միանգամայն ամենայաջողակ սուսերամարտ

եւ ատրճանակ գործածող մ'էր :

Միւսը Քեթեօ րե Հեթո, երկաթէ մարմին, կը կոչուէր : Երեք անգամ հարցախորձի դժնդակ տանջանքներուն անկացեր էր՝ առանց իր եղեռնագործութիւնները խոստովանելու, առանց ուրիշը բերան ապու եւ առանց իր մարմնոյն վրայ տկարութիւն կամ վնաս մը զգալու :

Ստոնցմէ ետեւ կանգնած էին երկու ծերունի Պեւէլէներ, որոնք իրենց բարեպաշտ երեւութիւն օգնութեամբը լրտեսութիւն եւ առաջնորդութիւն կընէին ընկերութեան՝ երբոր աւաղակութիւն մը կար ընելիք :

Յետոյ կուգային Քեթեօ կոչուած պառաւ կանայք, որ խիստ պիտանի էին ընկերութեան : Ստոնցմէ ետեւ կուգային քանի մը Շեւոթօներ այլ եւ այլ կերպարանքով . եւ վերջապէս մէկ քանի մանկամարդ կանայք՝ որ Սեթեօ կը կոչուէին : Ստոնք ընկերութեան յառաջակայներուն զուարճութեանցը ծառայելէ դատ՝ պաշտօն ունէին նաեւ իրենց հրապուրիչ գեղովը դատաւորներուն, իրաւաբաններուն եւ ստիկանութեան գործակալներուն սիրտը ողորբելու : Շատ անգամ առոնց հրապոյրներն անգոր շեղան թուլամորթ կանոնիկոսներու եւ հեշտասէր արքայներու վրայ՝ որոնք այն ժամանակներն անաահման ազդեցութիւն ունէին

Թէ ճարմնաւորին եւ Թէ հողեւորին վրայ :

Շրջանակէն դուրս եւ քիչ մը մեկուսի կեցած էր խոնարհ դէմքով պատանի մը , որ կարապետ* կը կոչուէր , եւ ժողովն ալ անոր համար դումարուած էր :

Պարոն Մանտամիէն Թօ զօրեղ նայուածք մը պատուցուց ժողովին վրայ , ջերմեռանդութեամբ երեսը խաչակնքեց , եւ պատին վրայ փակած Ս . Աստուածածնայ պատկերի մը դառնալով աղօթք մը մումուաց :

Նոյնը ըրին եւ բոլոր ժողովականք :

Յետոյ Մանտամիէն Թօ հետեւեալ ատենարանութիւնը ըրաւ :

« Ազնիւ եւ արի ասպետք դաշոյնի , հաւատարիմ Ծուլէններ , պիտանի Քօպեմերաներ , հրապուրիչ Սեւեաներ , ճարպիկ Շէւհօններ , եւ այլ ամեն անդամքդ այս պատուական ընկերութեան , ողջոյն ձեզ : Տէրն մեր Յիսուս Քրիստոս եւ իր Սուրբ Մայրն իրենց երկնային պաշտպանութիւնը ձեզ շնորհելով աղատ պահեն ձեզ Ալկուադիլներէն , արջառաջլէ , տան-

* կարապետ . բաղմաճիւղի ճանկ : Այս անունը կուտային Սպանիացիք ստորին աստիճանի անկիրթ տղայոց եւ պատանեաց որ ընդհանրապէս գոլ կամ քսակահատ էին :

Չանարանէ , կախաղանէ , եւ փոխումէ (խոս-
տովանութենէ) , որ շատ օնգամ ձեզ մահա-
ռիթ , եւ ձեր եղբայրներուն համար ալ միշտ
վտանգաւոր են :

« Ձեզ այսօր հոս գումարելուս պատճառը
ձեր հետ խօսակցիլ է այնպիսի քանի մը վրայ
որ մեր իրաւանցը կը դպչի , եւ կրնայ ընկե-
րութիւննիս վտանգի մէջ ձգել :

« Ամենքդ ալ գիտէք , որդեակներս ,
թէ քանի որ շնորհօքն Աստուծոյ իմ հրամա-
նիս ու առաջնորդութեանս ներքեւ կաշխա-
տիք , ընդամենը տասներկուքի չափ ընկեր
ունեցանք ճօճեալ (կախուած) , քառսունի
չափ հեծեալ (էշով կիսամերկ քաղաքին փո-
ղոցներուն մէջ պտըտելու եւ առակ նշաւակի
ըլլալու դատապարտուած) , եւ մէկ քանի ալ
արքունական նաւաստի (տէրութեան նաւա-
րանին մէջ շղթայակապ աշխատութեան դա-
տապարտեալ) :

« Զիս ձեր եղբայրութեան գլուխ ընտ-
րելնէդ առաջ՝ այս թուոյն վեցպատիկը կը
կորսնցընէինք ամեն տարի , եւ ան ալ միայն
Սէվիլի մէջ : Այս տարի հաղիւ վաթսուն գող ,
որոց կէսը թխամորթ են , գայլին որկորը (քանտ)
ինկան . եւ կրնամ հաւաստել , որ այս միջո-
ցիս անոր ժանեացը մէջ գտնուող մեր երսու-

նի չափ եղբարց մէջ հազիւ երեք ճօճելի ,
հինգ կամ վեցնաւաստի եւ տասներկու քի չափ
հեծեալ պիտի ունենանք : Ար կարծեմ որ ա-
տոնցմէ զատ երկու կամ երեք ձաղկեալ պի-
տի ունենանք , եւ մեր քոյրերէն մէկ երկու քն
ալ մեղրաթուրմ * : Ատոնց առաջքը շկրցանք
առնուլ : Բայց թէ որ բաւական ստակ ունե-
նանք աւելի պատարագ ըսել տալու եւ Ալ-
կուազիլներն աւելի առատապէս վարձատրե-
լու , մեր գործերն աւելի յաջողութեամբ կը
քալեն : Ահա այս է որդեակներս , Աարտու-
նայի այսօրեայ ծաղկեալ վիճակը :

« Այս իմ գոյզն ծառայութիւններս ձեզի
ջիշեցընելով՝ յարեց Մանտամիէնթօ կեղծ հա-

* Սպանիոյ մէջ սովորութիւն կար որ խառ-
նակեաց եւ մանաւանդ տղայք գլխէ հանող
կանայքը պատժելու համար՝ կէս մէջքէն վեր
կը մերկացընէին , մարմինը մեղրով կ'օծէին ,
գլուխը ստուարաթուղթէ արածայր խոյր մը կը
կը դնէին , եւ էշու մը վրայ հեծցուցած փողոց-
ները կը պտտցընէին : Միանգամայն ետեւէն
ալ երկու մարդ կերթային ձեռքերնին մէկ մէկ
զամբիւղ հաւի փետուրներով լցուած , զորոնք
գահիճը դատապարտելոյն վրայ կը ցանէր , եւ
ասանկով այլանդակ ու ծիծաղաշարժ կերպա-
րանք մը կ'ստանար դատապարտեալը :

մետառութեամբ մը , չէ թէ իմ տկար հանճարս
ձեր աչքին փայլեցընել կուզեմ , զոր Աստ-
ուած՝ որուն ամենախոնարհ մէկ գործիքն եմ
ես՝ պարզեւած է ինձ , այլ կուզեմ հասկըցը-
նել ձեզ թէ որչափ հարկաւոր է մեզ ամենա-
սերտ միութիւն եւ կատարեալ համամտու-
թիւն մը ունենալ մէջերնիս , որպէս զի կա-
րենանք ամեն հնարաւոր յաջողութեամբ մեր
օգտաւէտ արհեստն՝ ի գործ դնել , եւ մեզ գոր-
ծածող տիկնանց եւ պարոններուն յարգանացն
ու համարմանը արժանի ըլլալ : Հիմա դանք
մեր այս գումարման նպատակին : »

Նոյն միջոցին մեծաւորն իր հետազօտ աչ-
քըն իր շուրջը պտտցընելով՝ տեսաւ կարագաթօն
որ խոնարհաբար սիւնի մը կրթնած կեցեր էր .
եւ նշանացի հրաման ըրաւ որ մօտ դայ :

Կարագաթօ փութով հնազանդեցաւ , եւ
զինքը մեծաւորէն բաժնող կենդանի շրջանա-
կը բացուելով , պատանին անցաւ յառաջ ե-
կաւ Մանտամիէնթօի քով :

Կարտունայի մեծաւորը պատանւոյն ձեռ-
քէն բռնեց , եւ ժողովին ցուցընելով իր բանա-
խօսութիւնը շարունակեց այսպէս .

« Եղբարք . Պարոն Մանօֆինա եւ Քուէր-
բօ տէ Հիէրօ այս տղան մայր եկեղեցւոյ գաւ-
թին սիւններուն տակ դտեր են , որ նախ պարո-

նի մը գրաւանէն թաշկինակ մը եւ ետքն ալ կուսանաց վանքի մը աւանդատան վերակացուին ծանրկէկ քսակը գողցեր է : Ճշմարիտը ըսելով մեծ ճարպիկութիւն բանեցուցեր է այս գործողութեան մէջ . բայց սա ալ ճշմարիտ է , որ մեր եղբայրութեան անդամ չըլլալով , մեր կարգին օրինացը հակառակ վարուեր է՝ առանց հրամանի գողութիւն ընելով եւ մաւաւանդ եկեղեցւոյ ինչքը յափշտակելով :

« Պարոն Մանօֆինա եւ Քուէրբօ տէ Հիէրօ այս տղուն լաւ տրամադրութիւնն ու կանխահաս տաղանդը դիտելով , որ Աստուծոյ եւ մեր դասերուն օգնութեամբը կարտունայի պարծանք պիտի ըլլայ , կըսեն , բռներ մեզի բերեր են՝ փոխանակ մուխին (ոստիկանութեան) յանձնելու , որ թերեւս անոր յաջող տրամադրութիւնները կը խեղդէր : Այսու ամենայնիւ այս տղան մեր կանոնաց դէմ վարուած ըլլալով՝ անգամ մը մատնուելու արժանի եղած է :

« Գուք ի՞նչ կըսէք Պարոններ , ըսաւ Մանտամիէնթօ՝ աչքը ժողովին վրայ պատցընելով :

— Մեծաւորն իրաւունք ունի , մոմոացին աւաղակները . այդ տղան անգամ մը մատնուելու արժանի է : » Մանօֆինա եւ Քուէր-

բօ տէ Հիէրօ քթերնուն տակէն մոնչել սկսան
այս առաջարկութեան դէմ :

« Անիծեալ սինլքորներ , մոմռաց Մանօ-
Ֆինա . հոս ալ վարդարանի եղբայրութեան
պէս է . միշտ «Է» կը պատասխանէ այս խաժա-
մուժը :

— Այսպիսի ընտիր ճիրան մը ձեռքէ հա-
նել , յաւելցուց Քուէրբօ տէ Հիէրօ :

— Մատնուի , մատնուի » ըսին նորէն քա-
նի մը Քօպէրթէրաներ բորենիի ծիծաղով մը ,
երկու երեք երկայն ու երեքուն սկսաներ
ցուցընելով , որոնք վարազի վրիժակներու պէս
իրենց վարի շրթունքներուն վրայ կիյնային :

Մանտամիէնթօ անխռով կեցեր էր , բայց
իր բոլորտիքն անցած անցքերն իր ուշադրու-
թեանէն չէին վրիպեր : Ուստի թողուց որ յուզ-
մունքն ինքնին հանդարտի . յետոյ վերստին
ժողովին դառնալով՝

« Ի՞նչ է ձեր կարծիքը , պարոններ » ը-
սաւ այնպիսի ձայնով մը՝ որ աւելի հրամայա-
կան էր քան թէ յարդական : Ամենն ալ լռեցին,
եւ այն ապուշ դէմքերը կրաւորական հլու
հնազանդութիւն մը ցոյց տուին , որ հասարակ
էականերուն բնական յատկութիւնն է մեծա-
հանձար մարդոց առջեւ :

Միայն երկու կուսբօններն աչքերնուն

ծայրովը դժգոհ եւ դայրագին հայեացք մը
արձակեցին իրենց մեծաւորին վրայ :

Մեծաւորը չնչմարել ձեւացուց անոնց այն
նայուածքը , եւ վերստին ժողովին դառնալով՝

« Պարոններ , ըսաւ , իմ կարծիքս այն է ,
որ այս պատանիին կանխահաս հանճարը նկա-
տելով , եւ միանգամայն 'ի շնորհս մեր գերա-
պատիւ եղբարց պարոն Մանօֆինայի եւ պա-
րոն Քուէրբօ տէ Հիէրօի՝ որ այս տղան կը
պաշտպանեն , իմ կարծիքս այն է , կըսեմ , որ
այս պատանին մեր մէջ ընդունինք իբրեւ նո-
րընծայ եղբայր , աշակերտութեան տարին ի-
րեն շնորհելով . եւ առաւել քաջալերութեան
համար՝ յառաջագէմ աշակերտներնուս յատուկ
եղած ամեն արտօնութիւններն ալ շնորհենք
ասոր . միայն թէ , մեր ուրիշ ամեն եղբայրնե-
րուն պէս՝ աս ալ եղբայրութեան տուրքերը
վճարէ , եւ Աստուծոյ լուման տայ : Մէկ խօս-
քով , այս տղան ես իմ պաշտպանութեանս
ներքեւ կառնում : Հիմա , յաւելցուց մեծաւո-
րըն իր ազգու ձայնովը , թէ որ ձենէ մէկը
գիտողութիւն մը ունի ընելիք , թող խօսի : »

Ամենն ալ լուռ կեցան : Մէրէնաներէն մէկ
քանին հաճելի նայուածք մը ձգեցին մանկա-
մարդ կարապաթօի վրայ , որ խիստ գեղեցիկ
պատանի մ'էր :

Ապուշ անասուններ , մումուացիին կուարո-
ները :

— Ըսել է որ , պարոններ , յարեց Ման-
տամիէնթօ , ձեր կամքն ալ իմինիս համաձայն
է . շնորհակալ եմ : »

Այս ըսելով՝ նորէն կարապաթօի ձեռքէն
բռնեց , եւ դատ դատ ժողովականաց ամեն մէ-
կուն ներկայացուց , որոնք եղբայրական համ-
բոյրը տուին անոր : Մեծաւորն ալ նոյն պատիւն
ըրաւ . եւ իրենց կարգին յատուկ ծանօթական
նշաններն ու ողջունի ձեւերը սովրեցուց ա-
նոր : Վերջապէս մագաղաթ մը տուաւ ձեռքը ,
որուն վրայ կարտունայի եղբարց պարտակա-
նութիւններն ու արտօնութիւնները գրուած
էին :

Արարողութիւնն այսպէս լմննալէ ետեւ ,
կարապաթօ դնաց աւազակութեան նոր ըն-
կերներուն մէջ կանգնեցաւ :

Յետոյ մեծաւորը գրպանէն անշահ թուղթ
մը հանեց՝ աղաւաղ գիրերով :

« Եղբարք , ըսաւ , ահա ձեր կատարելիք
գործողութիւնները :

« Երեք ^{ճորտ-իւն} հնար եղածին չափ թե-
թեւ . մէկը սեւ ընչացքով գեղեցիկ երիտա-

* Դաշոյնի հարուած :

սարդի մը, որ ամեն իրիկուն ժամը եօթին (ըստ
եւրոպացւոց) Թրիանայի կամուրջէն կանցնի :
Բարձրահասակ եւ վայելչադէմ պարուն մ'է ,
ծիրանեգոյն վերարկուով : Այս հրեանքը յի-
սուն ըէալի* կտրուած է . ասկէց զատ հինգ
հարիւր մարավէտիս** ալ խոստացուած է թէ որ
հրեանքը երեսին տրուի եւ վերքին նշանը մը-
նայ : Ստակը վճարողը գեղանի եւ մատաղ
տիկին մ'է : Այս գործը , Պ . Կարապաթօ ,
քեզի կը յանձնեմ , զիտնալով որ գեղեցիկ սե-
ռին հաճոյ ըլլալու փոյթ ունիք : Այս գործէն
ձեզի երսունեւեօթնուկէս ըէալ վարձք կայ ,
առանց հաշուելու հինգ հարիւր մարավէտիս
պարգեւը որ տիկինը պիտի տայ քեզ՝ եթէ
յաջողիս հրեանքը վրայ անջնջելի սպի մը
յօրինելու , որ գիւրութեամբ կրնաս ընել՝ ե-
թէ քացախի մէջ լուծուած քիչ մը ձանձա-
խարիթ քսես վերքին վրայ : »

Այս ըսելով մեծաւորը սեւ հեղուկով լի
սրուակ մը տուաւ Կարապաթօի :

« Երկրորդ հրեանքը , շարունակեց մե-

* Արծաթ դրամ Սպանիոյ գրեթէ 4/5 դու-
րուշ արժողութեամբ :

** Պղինձ դրամ Սպանիոյ գրեթէ 5 փարայ
արժողութեամբ : Այս դրամը հիմա չկայ :

ծաւորը , քառսուն ըէալի կտրուած է , եւ պիտի տրուի Փրկութեան* վանուց արքային , որ ապա շխարոզ միանձնուհի մը վերուցեր է գաւառական մեծաւորին՝ ձեռքէն : Ստակը նորին գերերջանկութիւնը պիտի վճարէ , եւ չորս տուպլոն** ալ պարգեւ կը խոստանայ եթէ արքային մէկ աչքն ալ հանելու յաջողինք . վասն զի փախուցած միանձնուհին գեղեցիկ աչքերու սիրահար է եղեր :

« Կը կարծեմ որ չորս տուպլոնը չփախցընելու համար այս հրեան Պարոն Մանօֆինայի պէտք է յանձնեմ , եւ իր սիրուն ֆրէ՛՛՛ւն ալ օժանդակ տամ իրեն , որպէս զի Փրկութեան ուխտին վերապատուելի արքան յարմար տեղ մը բերէ վարպետութեամբ , եւ պարոն Մանօֆինա ալ իւր պաշտօնը յաջողութեամբ կատարէ : Ահա ձեզի երսուն ըէալ , եւ Սուրբ Կոյսն ալ մի մոռնաք*** . Չորս տուպլոն

* Արօնաւորաց միաբանութիւն , այլազգեաց ձեռք գերի ինկող քրիստոնեայներն ազատելու համար 1225ին Սպանիոյ մէջ հաստատուած :

** Ոսկի դրամ Սպանիոյ , գրեթէ 90 դուրուշ արժողութեամբ :

*** Կարտունայի եղբայրներն իրենց կա-

լոնը Սէրէնային պիտի ըլլայ :

— Այո՛ , , այո՛ յանձն կառնում , տէր իմ , գոչեց Սէրէնան՝ զոր մեծաւորը Քուլէվրինա անուամբ նշանակած էր :

— Լուէ՛ , անտառաց վարդս , ըսաւ մեծաւորն ընչացքը գալարելով . մենք քու ճարպիկութիւնդ ու անձնութիւնդ կը ճանչենք :

« Ճշմարիտ մարգրիտ մ'է քուկինդ , որդ-

տարած գործողութեանց արդիւնքին մէկ երրորդը միայն կառնուին , որմէ ալ դարձեալ փոքր բաժին մը կը հանէին քաւարանի հողիներուն համար , եւ ստակն առած ժամանակնին ալ՝ քանի մը մարավէտիս կը ձգէին կարտունայի պալատի սրահին մէջ Ս . Սատուածածնայ պատկերի մը ներքեւ դրուած գանձանակը : Իսկ արդիւնքին մնացեալ երկու մասին մէկը եղբայրութեան անտուկը դրուելով , դատաստանական ծախքերն հողալու , այսինքն ալկուազիլներուն , դիւանագպիրներուն եւ մինչեւ իսկ դատաւորներուն ընծայ կամկաշառք տալու , եւ մեռեալ եղբարց հողւոյն հանգստեանը համար պատարագ ըսել տալու կը գործածուէր . մնացեալ միւս մասն ալ մեծաւորին կը տրուէր , որ ամենուն օգտին եւ յաջողութեանը հսկելու համար արքունի պալատը կենալու պարտաւորուած էր :

եակ , աւելցուց մեծաւորը կուարօին (Մանօ-
Ֆինայի) դառնալով . աղէկ պահէ եւ շատ մի
ծեծեր :

— Այո՛ , ուրիշներուն համար պահելիք
ճշմարիտ դանձ մ'է , մոմռաց աւաղակը՝ վայ-
րագ նախանձութեամբ մը :

« Օ՛ն , օն , պարոն ՄանօՖինա , ըսաւ մե-
ծաւորը , հասարակաց օգտին անձնուէր եղող
մը զոհողութիւններ ընելու է :

Կուարօն լռեց , բայց կասկածոտ ու բար-
կացայտնայուածք մը ձգեց Քուլէվրինայի վը-
րայ :

Քուլէվրինա անոր քովը դնաց , եւ թեւը
բռնելով՝ սկսաւ գորովանօք անոր երեսը նա-
յի իր խոշոր ու բոցաշունչ աչքերովը :

« Օ՛ն , ՄանօՖինա , ըսաւ , պիտի սրդո-
ղի՞ս . չես գիտեր որ քենէ զատ ուրիշը չեմ
սիրեր : »

ՄանօՖինա՝ Ֆիդիքական զօրաւոր բը-
նութեանց վրայ զգայութեանց ունեցած ամե-
նազօր աղդեցութենէն կախարդուելով , գէմ-
քը քաղցրացաւ :

« Այո՛ , ըսաւ ցած ձայնիւ , զիս կը սիրես ,
այնպէս չէ . բայց մեծաւորին ըսած աբբան . . .

— Աբբան ես քեզի կը բերեմ . ինչո՞ւղ
պէտք է : Անոր խոստում ընելը կատարել չէ :

Դուն քաջ զիտես որ ես քենէ զատ ուրիշի
չեմ : »

Կուարօն կէս վատահ ուրախութեամբ եւ
կէս կասկածոտ տխրութեամբ անոր երեսը
նայեցաւ : Եւ զարմանալի՛ բան . Սէրէնայի ը-
սածը սուտ չէր : Այս կինը , հազուագիւտ բա-
ցառութեամբ մը , որչափ որ ինքզինք ամեն
հնարաւոր անամօթութեանց նուիրեր , եւ իր
հրապուրիչ գեղեցկութիւնը կարտունայի որո-
գայթին մէջ զոհեր տանիլ ձգելու կը ծառայե-
ցընէր , սակայն ոչ իր սիրտը եւ ոչ ալ մարմինը
երբէք գործակից եղած չէին այս անպատ-
րաստ նենգագործութեանց , այլ հանապազ
եւ ճշգիւ հաւատարիմ կեցած էր իրեն տար-
փաւոր ընտրած վայրագ կուարօին :

Մանտամիէնթօ նորէն շարունակեց .

« Երբորդ հրո՞ւնիւն մ'ալ կայ ըլլալիք , որուն
համար վեց տուպլոն վճարուած է , եւ վճարողը
կանոնիկոս մ'է : Այս հրո՞ւնիւնը վաղ իրիկուն
կանոնիկոսին եղբայրակիցներէն մէկուն պի-
տի տրուի ժամը վեցէն առաջ , որպէս զի
հրո՞ւնը չկրնայ միաբանութեան անգամներուն
այցելութեան երթալ եւ նոր գահերէցի մը
ընտրութեան համար անոնց քուէն խնդրել :
Ասանկով իր հակառակորդն աւելի յոյս կունե-
նայ քուէից առաւելութիւն ստանալու : Եթէ

քանի մը՝ օր անցնելէ ետեւ այս հարսնիչը Բողո-
 հան փոխուի, կանոնիկոսը կրկնապատիկ պի-
 տի վճարէ : Ուստի վարպետութեամբ պէտքէ
 գործէք, որպէս զի մարդը շուտ մը շտապեցը-
 շէ* : Այս է ստակը վճարողին փափաքը . եւ
 ով որ լաւ կը վճարէ, լաւ ծառայութիւն ըս-
 պասելու իրաւունք ունի : Ասկէց զատ, եթէ
 այս կանոնիկոսը գահերէց ընտրուի, տարա-
 կոյս չկայ որ կարտունայի եղբայրութեան հա-
 ւատարիմ պաշտպան մը պիտի ըլլայ : Նորին
 վերապատուութիւնը երգմամբ խօսք տուաւ
 ինձ : Այս մկրտութիւնը քեզ կը յանձնեմ, պա-
 րոն Քուէրբօ տէ Հիէրօ : Ըսածիս պէս կատարե-
 լու համար գաշոյն գործածէ, կամ լաւ եւս՝ ե-
 ոանկիւնի սուր մը կամ սլաք մը : Ամենէն աղէ-
 կը թամբագործաց մախաթը կամ հերիւնն է,
 որուն տուած վերքը տասն կամ տասներկու
 օր կը տեւէ եւ չարիւնիր : Ահա քու ստակդ
 ալ . դնա՛ եւ նայէ որ պաշտօնդ ճշդիւ կա-
 տարես :

«Ա՛յց ալ Բողոհի** կայ տրուելիք, ըսաւ մե-
 ծաւորը, եւ այս գործն ալ վեց հասարակ ըն-

* Սպաննել :

** Գետամոյն ընել :

կերներու յանձնեց :

« Երեք ալ ^{հանքորդութիւն*} կայ ընելիք , առաջինը ժաէնի ճանքուն վրայ վաղը ժամ իննին : Թղթատարութեան կառքը նոյն ժամուն հոնկէց պիտի անցնի՝ ութսուն հազար ըէալ տանելով , որ Սէվիլի թագաւորութեան մէջ վաճառուած քահանայապետական կոնդակներուն ու ներողութիւններուն արդիւնքն է , եւ Նորին սրբազնութեան նուիրակին կը զըրկուի : Երկրորդը Սան-Ղուքարի ճանքուն վրայ պիտի կատարուի , կէս գիշերին , նոյնպէս թղթատարութեան կառքին անցած ժամանակը , որուն մէջ հարիւր քսան հազար ըէալ կայ , զոր հրեայ սեղանաւոր մը Սէվիլ կը զրկէ Մաւրիտանացի սեղանաւորի մը : Այս ստակը պէտք է առնունք Աստուծոյ թշնամիներուն ձեռքէն , որոնք՝ ինչպէս յայտնի է՝ ՚ի վնաս մեր սուրբ կրօնին կը գործածեն զայն :

« Երրորդ ճանքորդութիւնը պիտի կատարուի Արէնատայի ճանքուն Քսէրէսի ճիւղին վրայ . ուսկից երեք ազնուատոհմ պարոններ պիտի անցնին , գրպաննին ոսկւով լի , եւ հետերնին ալ նոր զգեստներու հանդերձարան մը : Գիտէք որ մեր եղբայրներէն շատին

* Գողութիւն :

զգեստներն հինցած են : »

Այս երեք ճանբորդութիւնն ալ երեք անկասկած եւ վարպետ եղբայրներու յանձնուեցաւ :

« Վերջապէս , ըսաւ Մանտամիէնթօ , եւս ⁻⁻⁻ մը պիտի կատարուի Տօն Էսթէվան Վարկասի վրայ : Այդ անձը ամեն իրիկուն կէս գիշերին Սէվիլի վսեմափայլ կառավարչին տունէն դուրս կելնէ : Արտուի թէ անոր աղջկան նշանածն է , որն որ տասնեօթն տարեկան գեղեցիկ օրիորդ մ'է , եւ որուն անշուշտ շատ արտասուք պիտի թափել տայ այս խաւարումը . բայց այս մեր հոգ ընելիք բանը չէ : Յիսուն տուպլոն կանխիկ պիտի վճարուի մեզ այս գործողութեան համար . նոյնչափ գումար մ'ալ յաջողելէն ետեւ խոստացուած է մեզ՝ հանդերձ պաշտպանութեամբ Սէվիլի ամենասուրբ հաւատաքննչին , որուն անշուշտ կամքը կայ այս գործիս մէջ . որովհետեւ իր պաշտպանութիւնն առաջարկած է մեզ , եւ այս ալ այնպիսի զրամ մ'է , զոր չչռայլեր Նորին սրբութիւնը :

— Եւ ո՞վ կերաշխաւորէ մեզ այդ գեղեցիկ խոստումները , հարցուց Մանօֆինա , որուն սիր-

* Սպանութիւն :

տը Սէրէնայի վառվռուն նայուած քներէն ու
զգուանքէն խանդաղատեր էր 'ի նպաստ Տոն
Էսթէվանի եւ անոր սիրուհւոյն :

— Խոստումներն ինձի ընող ու ստորագ-
րող անձը քաջածանօթ է ինձ , պատասխանեց
մեծաւորը . եւ եթէ ճշդիւ չկատարուին , ես
ալ այն խոստմնադիրը Սէվիլի մէջ շարաւանդի*
կըյան ձնեմ : Ար տեսնես , որդեակ , որ ես գոր-
ծըն ապահովցուցած եմ : »

Նոյն միջոցին Շիվաթօ մը , որ Կարտու-
նայի պալատին մօտերը պահպանութեան դըր-
ուած էր , ներս վազեց սարսափով .

« Տէր իմ , տէր իմ , գոչեց , Ալկուազիլ մը
դէպ 'ի հոս կուգայ : »

Կարտունեանք խռովելով՝ ձեռուրնին դա-
շոյննուն տարին : Իսկ մեծաւորն առանց ամե-
նեւին շփոթելու՝ ընկերներուն դարձաւ .

« Ծունկի վրայ եկէք , տղայք , գոչեց .
եւ Ս . Կուսին պատկերին դառնալով՝ Վարդա-
րան կարդալ սկսաւ խորին ջերմեռանդու-
թեամբ : Կարտունեանք ալ միաձայն պատաս-
խանեցին անոր :

Քանի մը վայրկեան ետքը , Ալկուազիլը
դուռը կէս մը բանալով գլուխը սրահէն ներս

* Եղեռնադատ ատեան :

երկնացուց : Մանտամիէնթօ՝ առանց աղօթքն
ընդհատելու՝ գլուխը ծանրաբար անոր դար-
ձուց , եւ Ուշն՝ +եղ Մարտիւր չլմնցուցած՝ ուրա-
խութեամբ գոչեց .

« Է՛հ , մեր հաւատարիմ Քօքօ եղբայրն
է : »

Միաբան խաչակնքութեամբ մ'աղօթքին
վերջ տրուելով , ամեն մարդ ոտքի վրայ ելաւ :
Մանտամիէնթօ իսկոյն սրահին մէկ անկիւնը
տարաւ Ալկուազիլը .

« Ի՞նչ է հոս գալուդ պատճառը , եղբայր
Քօքօ , ըսաւ : Արդեօք մեր սուրբ եղբայրու-
թեան համար վտանգ մը կայ :

— Ոչ , պատասխանեց Ալկուազիլը : Գլ-
տես որ ես լաւ պահպանութիւն կընեմ , եւ
իմ Ալկուազիլի եւ հաւատաքննութեան մը-
տերմի կրկին պաշտօնս ձեզ շատ որոգայթ-
ներէ ազատելու կարող կընէ զիս :

— Ճշմարիտ է . դուն հաւատարիմ բարե-
կամ եւ անձնուէր եղբայր մ'ես :

— Ուրեմն , ըսաւ Քօքօ , դուն ալ , մե-
ծաւոր , ինձի բարեկամութիւն մը պիտի ընես :

— Խօսէ , եղբայր , ի՞նչ կուզես :

— Նախ եւ առաջ կուզեմ , ըսաւ Ալկուա-
զիլը , որ իմ ազգականիս՝ Կարմելեանց աւան-
դատան վերակացուին քսակը՝ որ այս առտու

գողցուեցաւ, իրեն ետ տրուի :

— Այդ քսակը կը տրուի քեզի, եղբայր .
այդ մասին կրնանք քեզ գոհ ընել : Աւրիշ
ի՞նչ կայ :

— Աւրիշ աւելի ծանրակշիռ բան մը կայ,
ըսաւ Ալկուադիլը ձայնը ցածցընելով . այն է՝
հաւատաքննութեան երկու կամ երեք մտե-
րիմներ խաւարեցընել, եթէ հարկ ըլլայ :

— Եղբայր, ըսաւ Մանտամիէնթօ զար-
հուրելով, դուն գլխէդ վեր բանի ձեռք կը
դարնես . այդ ուղածդ անհնարին բան է :

— Անհնար կամ հնարաւոր, պէտք է որ
կատարուի, ըսաւ Քօքօ անվեհեր ձայնով մը :

— Բայց, եղբայր, չէս գիտեր որ Սէվիլի
Ս. հաւատաքննիչը մեր գլխաւոր ծուխն* է :

— Ինչ կըլլայ թող ըլլայ, իմ խնդիրս ան-

* Մանտամիէնթօ իրաւունք ունէր : 1824
ին Ֆրանչիսքօ Քօրթինայի բռնուած եւ կար-
տունայի ընկերութեան ջնջուած ժամանակ
ձեռք ինկած թուղթերուն մէջ տուժար մը
կար, որուն վրայ հաւատաքննութեան ան-
գամոց կողմէ կարտունայի եղբայրութեան ե-
ղած յանձնարարութիւններն արձանագրուած
էին, որոց թիւը հարիւր երեսունեօթն տար-
ուան (1550—1667) մէջ 1986ի կը հասնէր, եւ
196670 ֆրանք եկամուտ բերած էր եղբայրու-

պատճառ պիտի կատարուի . ապա թէ ոչ , այս
իրիկունէս ետեւ ձեր բարեկամը չեմ , ըսաւ
Ալկուազիլը կտրուկ կերպով :

— Ի՞նչ ընելու է ուրեմն , հարցուց մեծա-
ւորն այս սպառնալիքէն յաղթուած :

— Պէտք է հիմա երկու կամ երեք վար-
պետ կոմիտէ եւ հինգ կամ վեց ալ Շէլմիտաս
ինձի , որ ուզած տեղա տանիմ , ուզած մար-
դիկս խորհրդէն տամ . վերջապէս իմ հրաման-
ներու հնազանդին՝ ինչպէս քեզի :

— Գժուարին է պահանջածդ , ֆօքօ :

— Արտեւը կուզէ , պատասխանեց Ալ-
կուազիլը ծանր կերպով : Շուտ ըրէ , Ման-
տամիէնթօ , շուտ ըրէ , ժամանակ չունիմ կոր-
սընցընելու :

— Որովհետեւ Արտեւն է ուզողը , պէտք

Թեան : Հասարակ ժողովներուն այս յանձնարա-
րութեանց երեք մասին մէկը կանանց առ-
եւանգուլիսն էր , մէկ մասն ալ սպանութիւն .
իսկ մնացեալը հեղձումներ , դաշոյնի հար-
ուածներ , զրպարտութիւններ ու սուտ վկա-
յութիւններ էին : Այս տուեալը՝ որ Սէվիլի ե-
ղեռնադատատեանին յանձնուեցաւ , Ֆրան-
չիսքօ ֆօրթինայի եւ ընկերներուն յանցաւոր-
ութեան ամենածանր սպացոյցներէն մէկն
եղաւ :

է հնազանդինք , ըսաւ մեծաւորն հառաչելով .
անոր կամքն Աստուծոյ կամացը պէս պէտք է
կատարուի . վասն զի Մանօֆինան ողջընցուց ,
եւ Քուէրբօ տէ Հիէրօն ալ գայլին որկորէն ա-
զատեց : Ան է նաեւ որ մեր հիւանդութեանց
մէջ մեզ կը խնամէ : Ըսածիդ պէս թող ըլլայ ,
Քօքօ . առ երկուամենէն ընտիր Աուարօներս ,
եւ թող հնազանդին հրամաններուդ՝ ինչպէս
ինձի : »

Միանգամայն մեծաւորն աչք ըրաւ Քու-
էրբօ տէ Հիէրօի , քանի մը խօսք ըսաւ ա-
կանջն 'ի վար . յետոյ Մանօֆինան կանչելով
հրաման ըրաւ որ Ալկուազիլին հետ երթան :

« Պիտի մոռնայի քեզ ըսելու , յարեց մե-
ծաւորը Մանօֆինայի դառնալով , թէ Տօն Էս-
թէվան վարկաս երիտասարդին խառնուի քեզ
կը յանձնեմ . այդ գործողութիւնը քեզ հաւա-
տաքննչին աչքը մտցընելով՝ անոր պաշտպա-
նութեանը արժանի պիտի ընէ՝ եթէ մեր Քօ-
քօ եղբօր քեզ յանձնելիք պաշտօնը չյաջո-
ղի : Երթաք բարով , պարոններ , ձեզ տես-
նեմ : »

Երկու Աուարօները երեքական աշխոյժ
ու ճարպիկ Շիվաթօներ ընտրեցին :

« Գացէք , ըսաւ մեծաւորը ձեռքը շար-
ժելով , եւ Ս . կոյսը պահապան ըլլայ ձեզ : »

Ալկուազիլն առջեւնին ինկաւ , եւ փոք-
րիկ խուճբը մուժին օգնութեամբ անձայն ու
անշշունջ դուրս ելաւ կարտունայի անձաւէն :

ԳԼՈՒԽ Գ .

ՏՈԼՈՐԷՁ

Կարտունայի պալատին մէջ այս տարօրի-
նակ ու սոսկալի անցքն անցած ժամանակ ,
Սէվիլի կառավարչին պալատին մէջ ալ ուրիշ
տեսակ անցք մը կանցնէր :

Կառավարչին պալատն անտալուզեան ըն-
դարձակ եւ յարմարաշէն տուն մ'էր՝ ապակե-
ւոր դռներով եւ ծաղկազարդ մեծ բակի մը
վրայ նայող պատուհաններով լուսաւորեալ :

Այս տան վերին դասիկոնը՝ որ սովորա-
բար ձմեռուան բնակարանն էր , մեծ դահլիճի
մը քով ուր կառավարչին ընտանիքը կը դու-
մարուէր , փոքրիկ սենեակ մը կար , որ միաձ-
նուհետ մը խցիկի կը նմանէր : — Սպիտակ եւ
կարծր անկողնիկ մը կար մէջը՝ պարզ ճերմակ
կտաւէ վարագուրով մը ծածկուած , երկու
սեւ փայտէ քանդակեալ աթոռակներ , նոյն

ոճով շինուած աղօթանոց մը՝ վրան փղոսկրեայ
Քրիստոս մը դրուած , եւ վերջապէս որմին
մէջ բացուած խորշի մը մէջ ալ սպիտակ մար-
մարիոնէ Ս . Աստուածածնայ գեղեցիկ պատ-
կեր մը՝ երեւելի արձանագործէ մը շինուած ,
որուն առջեւ արծաթեայ ոսկեզօծ կանգեղ մը
միշտ կը վառէր :

Այս սենեակը կառավարչին Տոլորէզ ա-
նուն աղջկանն էր :

Օրիորդ Տոլորէզ՝ որ հազիւ տասնեւեօթն
տարու կար , Անտալուզիոյ ուրիշ կանանց չէր
նմաներ : Պարզ ու աղնիւ գեղեցկութիւն մ'եւ
անյողդողդ ու վեհ բնաւորութիւն մ'ունէր :
Իր տղայութեան տարիները չէր անցուցած այն
անգործ մտածականութեան մէջ՝ որ Սպանիացի
կանանց երեւակայութիւնն ու զգայութիւն-
ները չափազանց կը տաքցընէ :

Իրեն դաստիարակ ունեցեր էր իր մէկ մօրեղ-
բայրը , գիտուն եւ լուրջ մարդ մը , որ երկար
ժամանակ Քաղղիա եւ Քերմանիա պտըտած
ըլլալով , իր այս քեռորդւոյն կանխափայլ
խելքը մշակել զարդարել եւ փիլիսոփայու-
թեամբ զօրացընել ուզեր էր : Եւ իրօք ալ
խոսկան երկրի վրայ սերմ չէր ցանած : Տոլորէզ՝
այսօրուան օրս ալ՝ խիստ նշանաւոր կին մը
կրնար համարուիլ :

Սրտով եւ հոգւով եռանդուն , դերադանց դատման արդարախոհ մտաց եւ զօրաւոր կամաց տէր էր , եւ եկեղեցւոյ հարց մաքուր ու լուսաւոր հաւատքն ունէր : Իւր ներողամիտ մարդասիրութիւնը մոլեռանդութեան ամեն սխալներն ու ամեն անգթութիւնները կը մերժէր : Բարեպաշտ էր Իզապէլլա Քաթողիկի* պէս , այն մեծ թագուհւոյն պէս , որուն քաղցրագորով զթասրտութիւնն այնչափ երկար ժամանակ եւ այնչափ սոսկումով մաքառեցաւ հաւատաքննութեան Սպանիոյ մէջ

* Արակոնի Ֆէրտինանտ թագաւորին կիւնը , որ սաստիկ կը նողկար հաւատաքննութեան անգթութիւններէն , եւ երկար ժամանակ ընդդիմացաւ հաւատաքննութեան Քաթողիկոսի մէջ հաստատուելուն : Թօրքուէմատա՝ Ֆէրտինանտի խոստովանահայրը՝ որ խորամանկ եւ մոլեռանդ կրօնաւոր մ'էր , թագաւորին կծծի քաղաքականութիւնը պաշտպանելու պատրուակով բարեպաշտ Իզապէլի հաւանութիւնը բռնաբարեց : Օրին մէկը՝ երբոր հաւատաքննիչը նոր պահանջում մը կընէր սպառնալեօք , ազնիւ թագուհին հետեւեալ պատասխանը տուաւ անոր . « Կրօնաւոր , մի մոռնար որ հաւատաքննութիւնը թագաւորական հրամանագրով մը հաստատուած է , եւ ուրիշ հրամանագրով մ'ալ կրնայ ջնջուիլ » :

հաստատուելուն եւ անոր ըրած դժնեայ գործերուն դէմ: Մէվիլի կառավարչին աղջիկն Աւետարանի բարոյականին եւ հողւոյն հետեւող էր, որն որ խիստ վտանգաւոր բան մ'էր այն ժամանակները, ուր աներկեւան ապրելու համար՝ չէ թէ Քրիստոսի աշակերտ՝ այլ հաւատաքննութեան սան ըլլալ պէտք էր:

Սակայն, որչափ որ իր տարիքին եւ մանաւանդ այն ժամանակին նկատմամբ անյուսալի կերպով յառաջ դացած էր փիլիսոփայութեան մէջ, Տոլորէզ, Չերմեռանդ կաթողիկէներու դաւակ, եւ կրօնական արտաքին սլաշտամանց ալ միշտ հաւատարիմ ըլլալով, հաւատաքննութեան ահաւոր ատենին կասկածանաց տեղի տուած չէր երբէք:

Ընդ հակառակն, Մէվիլի մեծ հաւատաքըննիչը, Պետրոս Արպուէզ, իր հզօր բարեկամութիւնը տարածած կը թուէր կառավարչին տանը վրայ:

Ամեն ժամանակ ընդունելութիւն գտնելով այն տան մէջ իբրեւ եկեղեցական եւ իբրեւ գլուխ հաւատաքննական ատենին, Պետրոս Արպուէզ, բուն կրից հասակին մէջ, վասն զի հաղիւ քառսուն տարու կար, չէր կրցեր այս անարատ եւ սուրբ օրիորդը տեսնել՝ առանց ցանկութեան դիւազրդիւ հուրը սըր-

տին մէջ բարբոքելու . հետեւաբար չէր կրցեր
առանց դժոխային նախանձու տեսնել որ օրի-
որդին սիրաը մի միայն էսթէվան Վարկաս ե-
րիտասարդին հետ կապուած էր :

Պետրոս Արպուէզ՝ օրիորդին այս անմեղ
սիրոյն աճումը մեծ անհանգստութեամբ դի-
տելով , այնպիսի բուռն ատելութեամբ վառ-
ուէր էր , որ հաւատաքննիչ քահանայի խո-
րամանկութեամբն իսկ հազիւ կրնար ծածկել :

Հայրական եւ սուրբ բարեկամութեան մը
քողով ընդունայն աշխատեր էր իր մեղա-
պարտ կրիցը պատասխանող զգացումներ գըր-
գըռելու այն սիրուն օրիորդին սրտին մէջ . ըն-
դունայն աշխատեր էր իր նայուած քներուն եւ
ստուգիւ նշանաւոր գեղեցկութեան ազդե-
ցութեամբը զայն թովելու :

Տոլորէզ միշտ երկիւղ մը զգացեր էր սըր-
տին մէջ՝ զոր ակնածութեան տեղ դնելու կը
ջանար . հաւատաքննչին նայուած քը ախրա-
զգած շիտթութիւն մը իրեն ազդելով կը դեղ-
նէր ու կը դողար :

Այն իրիկունը Պետրոս Արպուէզ կառա-
վարչին տունը ժամանակ անցունելու գացեր
էր :

Ժամը սաանին միջոցները (կէս դիշերէն
երկու ժամ առաջ) , օրիորդը՝ մտայոյզ եւ սըր-

տատանջ՝ իր սենեակը քաշուեցաւ , իւր սովորութեանը համեմատ դուռը պարզապէս գոցեց՝ առանց ներսէն նիգ կամ աղիս դնելու , որովհետեւ վախնալու բան մը չունէր հօրը տանը մէջ . գլխուն զարդը հանեց եւ երկայն մազերը ձերմակ ուսերն 'ի վար կախուեցան . յետոյ աղօթանոցին վրայ ծունգի գալով , ջերմեռանդութեամբ աղօթեց :

Իր հոգին ճնշող յուսահատական տաղնապը քանի մը վայրկեան արտաշնչելէ ետեւ , ծոցէն փոքրիկ նամակ մը հանեց , եւ տխուր փափաքով մը կարդաց :

« Այո՛ , ան է , բուն իր գիրն է , ըսաւ : Խեղճ էսթէվան . սխալած չէի ուրեմն . հաւատաքննութիւնն իրեն թշնամի է . ուստի կը վախնայ հոս գալու , որ զիս վտանգի մէջ չի ձգէ : Ընելիք ճանապարհորդութիւնը՝ որ անհրաժեշտ է կըսէ , պարզ պատրուակ մ'է այս տեղէն հեռանալու . եւ սակայն չկրնար առանց զիս տեսնելու ապրիլ . կաղաչէ որ այս իրիկուն ժիրալտայի աշտարակին ներքեւ երթամ , ուր զիս պիտի սպասէ : Եթէ չերթամ՝ կը մեռնի . . .

« Ո՛հ , այո՛ , էսթէվան կը մեռնի՝ եթէ զիս կորսնցընէ . ես ալ կը մեռնիմ՝ եթէ զրկուում իրմէ . մեր սէրը տարակայուն թեամբ մարող տեսակներէն չէ :

Ո՛վ Աստուած իմ, յարեց օրհորդը, այս
 ի՞նչ թշուառ ժամանակի մէջ կապրինք, ուր
 բնութեան ամենաքաղցր զգացումները բըռ-
 նաբարել հարկ է: Ո՛վ աստուածային օրէնքդ
 Քրիստոսի, ի՞նչ եղար: Ո՛վ դարդ առաքելոց,
 ուր երկու քրիստոնեայ ամուսին ազատու-
 թեամբ իրար կը սիրէին, իրարու համար
 կապրէին, եւ ՚ի միասին կը մեռնէին. դ՞ո՞ւն
 արդեօք ծնար այս երկաթեայ դարս, ուր մէ-
 կը չկրնար զԱստուած իսկ սիրել իր ուղած
 կամ դիտցած կերպովը. ուր քահանաները՝
 փոխանակ մեր մխիթարիչներն ըլլալու՝ մեր
 դահիճներն եղած են. ուր կենաց ծառը մահ-
 ուան ծառ եղած եւ իր սեւ ոստերն աշխարհի
 վրայ տարածած է*:

*Միջին դարուց պատմութեան տեղեակ ե-
 դողներուն յայտնի է, թէ այս ժամանակներս
 էր որ կարուս հինգերորդ Ստորին Նահանգաց
 (Հոլանտայի) մէջ ալ հաւատաքննութիւնն հաս-
 տատեց՝ Հոգեւոր ատեան անունով: Յիշեալ
 ատեանը՝ Փիլիպպոս երկրորդի օրով հազար
 ութ հարիւր հոգիէն աւելի մարդ մեռուց ե-
 րեք տարուան մէջ: Իտալիոյ երկիրները, Ա-
 մերիկա եւ Սպանիոյ ձեռքն եղած ամեն հեռա-
 ւոր երկիրներն հաւատաքննութեան լուծին
 ներքեւ կը տառապէին:

— Ո՛վ էսթէվան , ո՛ւր փախչինք քեզի հետ , եւ ո՛ւր գտնենք բարեկամ երկիր մը՝ ուր այս բոլը դեռ մտած չըլլայ :

Եւ մտաթափ յուսահատութեամբ մը դժբաղդ աղջիկն իր ձեռքերը ոլորեց , եւ ցատկեց աղօթանոցին վրայի փղոսկրեայ Քրիստոսին փաթթուեցաւ , եւ զանի սրտին վրայ սեղմելով , հետեւեալ խօսքերը մբմնջեց բեկեալ ձայնով մը .

« Դու որ այնչափ վիշտ կրեցիր , Աստուած իմ , ինձ ալ սովրեցուր վիշտ կրել : »

Իսկոյն յանկարծական հակազդմամբ մը՝ կսկծագին հեծութիւններ բղխել սկսան իր ցամաքեալ կոկորդէն , եւ դառնահոս արտասունքով մը ողողեց Քրիստոսի պատկերը :

Նոյն միջոցին խցիկին դուռը մեղմով մը բացուեցաւ : Տոլորէզ զարհուրելով ոտքի վրայ ելաւ ու ետ ետ գնաց մինչեւ իր սենեկին պատուհանին քով : Ներս մտնողը մեծ հաւատաքննչին էր որ ծանրաքայլ Տոլորէզի կը մօտենար :

Օրիորդը գոչելու անգամ կարողութիւն չունեցաւ :

« Աղօթքիդ արգէլք կըլլամ , որդեակ , ըսաւ Պետրոս Արպուէզ փաղաքուչ ձայնով մը :

— Մօնսինեօր , ըսաւ աղջիկն հեկեկե-

լով, ի՞նչ պատճառաւ սենեակս կը մտնէք գիշեր ժամանակ . օրիորդի մը սենեակը նուիրական չէ մի :

— Մեծ հաւատաքննիչն ամեն բան ներելու իշխանութիւն ունի, պատասխանեց Գոմինիկեանը, եւ դու ալ զիս սենեակդ ընդունելով մեղք գործած չես ըլլար :

— Մօնսինեօր, պատասխանեց Տոլորէզ խրոխտ զայրութով մը կարմրած, չեմ հասկընար այդ գծուծ իմաստակութիւնները՝ որոնք խղճմտանքին անյեղլի օրէնքներն ըստ հաճոյից կը սահմանաւորեն, եւ մէկուն համար ոճիր համարուած բանը միւսին համար ներելի կընեն : Առաքինութիւնը մի է . իր օրէնքներն ալ անսխալ եւ յաւիտենական պէտք է ըլլան : Դուք ալ մարդ էք, Մօնսինեօր, եւ մարդ մը պէտք չէ որ գիշեր ժամանակ կնոջ մը սենեակը մտնէ, թէ որ անոր այրը չէ :

— Տոլորէզ, ըսաւ հաւատաքննիչը խիստ ձայնով . կը մոռնամ որ Քրիստոս իր առաքեալներուն ըսաւ . « Զոր արձակիցէք յերկրի եղիցի արձակեալ յերկինս » . եւ մեզ ամեն իշխանութիւն տուաւ հոգւոց եւ մարմնոց վերայ :

— Ա՛՛վ Մօնսինեօր, մի այլայլէք այդպէս Ս . Սահտարանին խօսքերը, անոր իմաս-

տըն անչափ սլարզ եւ բացայայտ է , որ մէկ կերպով միայն կը հասկըցուին ամեն անկեղծ մտքերէ , եւ նոյն են ամենուն համար , Մօնսիներ , ինչպէս ձեզ՝ որ Աստուծոյ կենդանւոյ պաշտօնեայ էք , այնպէս ալ մեզ՝ որ ձեր խոնարհ աշակերտներն ենք :

— Քերէ իսպանի , եւ հոգին իւր կենդանացնէ , պատասխանեց հաւատաքննիչը . եւ դուն , օրիորդ , շատ անխոհեմ ես որ իմ առջեւ այդպէս խօսելու կը համարձակիս : Սուրբ գիրքը նըւիրական օրինագիրք մ'է , երկնային սահմանադրութիւն մ'է , որուն մեկնութիւնը մեզ միայն յանձնուած է . դուք ալ կրաւորաբար կատարելու միայն պարտական էք : Վայ անոնց՝ որ առանց մեր օգնութեանն ինքնին կը մեկնեն զայն , եւ առանց մեր միջնորդութեան լոյս փնտռել կուզեն : Վայ այն անմիտներուն՝ որ առանց Քրիստոսի երեսփոխաններուն օգնութեանը քալելով՝ մոլորութեան ու հերետիկոսութեան մէջ կիյնան :

— Ս . Աւետարանին պատուիրանացը հետեւիլը հերետիկոսութիւն չէ , Մօնսիներ :

— Եթէ այդ խօսքն ուրիշ հաւատաքննիչի մը առջեւ ըսէիր , ըսաւ Պետրոս Արպուէզ ահարկու նայուածքով մը , վաղուան օրը դուն զքեզ հօրդ տունը չէիր կրնար գանել ,

եւ հաւատաքննութիւնը . . .

— Ես հաւատաքննութեան դէմ բան մը ըրած չեմ» ըսաւ օրիորդը հաւատաքննչին խօսքը կտրելով, այնպիսի ձայնիւ մը՝ զոր աներկիւղ երեւցընելու կը ջանար, բայց անյաղթելի սարսափ մը ակամայ կը դողացընէր զինքը :

Պետրոս Արպուէզ նշմարեց զայն, եւ աւելի մօտեցաւ օրիորդին՝ որ չէր կրնար աւելի ետ երթալ, եւ ոտքերը պատուհանին որմին կը դպչէին :

« Տղորէզ, ըսաւ, չես գիտեր ուրեմն որ ես քու բարեկամդ եմ :

— Ա՛յ Մօնսինեօր, դուրս ելէք ուրեմն, եւ մի ձեր իշխանութեամբը զեղծանիք այդպէս իմ սենեակս բռնաբարելով : Դուրս ելէք, Մօնսինեօր, դուրս ելէք, կաղաչեմ : »

Պետրոս Արպուէզ իր բոլոր ուշն ու խելքըն օրիորդին հրաշալի գեղեցկութիւնը նկատելու տուած ըլլալով, անոր աղաչանքը չլսել կը թուէր : Տղորէզ անոր առջեւը կանգնէր, երկայն մազերը ցրուած, սեւ շրջազգեստ մը հագած, որուն պարանոցի լայն փորոքը ժամանակին նորաձեւութեանը համեմատ գեղեցկապէս կը բաժնէր իր սպիտակափայլ եւ անարատ ուսերը, եւ իր խոշոր ու սեւ աչերուն

փաղիիւնը՝ ուր իր բոլոր կեանքն ապաստա-
նած կը թուէր, դէմքին զմայլելի գեղնութեա-
նը նոր գեղեցկութիւն մը կուտար :

« Աղջիկ , գոչեց քահանան , որչափ գե-
ղեցիկ ես , եւ որչափ երջանիկ է էսթէվան :

— Մօնսինէօր , գոչեց Տոլորէզ զարհու-
րելով դոմինիկեանին յրբեհի նայուածքէն ,
Մօնսինէօր , երանգ կը տեսնեմ արդեօք : Ա՛լ
դուք Սէվիլի մեծ հաւատաքննիչը չէք , քա-
հանայ Աստուծոյ չէք , ժողովրդին առաքի-
նութեան պահապանը չէք :

— Ո՛չ , գոչեց կրօնաւորը զինքը տոչո-
րոզ ամեհի կիրքէն յափշտակուած , հոս ո՛չ
մեծ հաւատաքննիչ կայ , ո՛չ քահանայ կայ .
այլ միայն Պետրոս Արպուէզը կայ որ քեզ կը
սիրէ . Պետրոս Արպուէզը՝ որ յուսահատու-
թենէն ու տարփանքէն կը մեռնի : »

Հեղձամղձուկ եւ անյօդ գոչիւն մը ելաւ
օրիորդին կուրծքէն , եւ բոլոր մարմինը քա-
րի պէս պաղեցաւ :

Հաւատաքննիչն անոր ծունկն ինկած էր .
գազանական կրքին բռնութիւնն իր բնական
գեղեցիկ եւ կանոնաւոր դէմքին սոսկալի ե-
րեւոյթ մը տուեր էր : Արջ Զանար աղջիկը բըռ-
նելու : Իսկ օրիորդը տազնապէն այնպէս փա-
կեր էր պատին , եւ այնպէս բարակցեր էր , որ

կարծես թէ ստուերի նման կը խուսէր դոմինիկեանին դողդոջ ձեռքերէն : Սակայն կրօնաւորն արդէն անոր շրջազգեստին եզրը բռներ էր : Տոլորէզ անկարող շարժում մ'ընելու, արձանի պէս նեղ պատուհանին փակած պինդ կեցեր էր :

Բայց հաւատաքննչին ներս մտած ժամանակ կուրծքին վրայ սեղմած փղոսկրեայ Քրիստոսը տակաւին այնպէս բռնած ըլլալով, երբոր հաւատաքննիչն անոր սարսափէն քաջալերուած թեւերը մէջքին վրայ կը ձգէր : Տոլորէզ բուռն շարժմամբ մը սուրբ պատկերն անոր երկնցուց :

« Պետրոս Արպուէզ, կոխէ անցիր այս պատուարը՝ եթէ կրնաս, գոչեց. պիտի համարձակի՞ս տիրոջդ դէմ ալ խիզախելու : »

Անպարկեշտ դոմինիկեանը վախոցաւ, գլուխը ծռեց, եւ ետ քաշուեցաւ . . . կրնար այն մոլեռանդն Աստուծոյ օրէնքն աւրել, այլափոխել, բայց ոչ պատկեր մը պղծել :

Ոտքի վրայ ելաւ, դժնեայ նայուածք մը ձգեց աղջկան վրայ, եւ դուրս ելաւ առանց ետեւը նայելու :

— Տոլորէզ ձեռքի պաշտպան պատկերը վերստին սրտին վրայ սեղմեց գոչելով. « Ո՛վ դու որ զիս փրկեցիր, փնռք քեզ : . . . »

Նոյն միջոցին Սէրէնօի* տխուր ճայնը լրացաւ որ ժամը տասնեւմէկուկէս ըլլալը կը ծանուցանէր : Տոլորէզ , թէ եւ հողնած , մագերը յարդարեց , երկայն թուխ կրկնոցի մը մէջ փաթթուեցաւ , փողոցի դուռը տանող քարէ սանդուղէն ծանր ծանր վար իջաւ եւ ժիրալտայի ճանքան բռնեց :

Տանը դռնէն դուրս ելած ժամանակ , անորոշ ստուեր մը կամարայարկի մը ներքեւէ դուրս ելաւ , քիչ քիչ մեծցաւ դիմացի պատին վրայ՝ որ լապտերի մը աղօտ լուսով լուսաւորուած էր , եւ վերարկուի մը մէջ փաթթուած մարդու մը կողմնակի պատկերը նրկարեց : Տոլորէզ սարսռեցաւ , բայց առանց կենալու շարունակեց ճանքան :

« Լաւ , ըսաւ հաւատաքննիչը , վասն զի ան էր . Տոլորէզ դուրս ելաւ . մնացեալը էնրիքէզ կը կատարէ : »

* Գիշերուան պահնորդ (պէքճի) :

ԳԼՈՒԽ Գ .

ԺԻՐԱԼՏԱ

Քօքօի առաջնորդութեամբ կարտունայի
այրէն ելնող փոքրիկ խումբը լռութեամբ իր
առժամանակեայ գլխոյն ետեւէն գնաց : Կուա-
քօներն առջեւէն կերթային Քօքօի երկու կող-
մէն , Շիվաթօներն ալ անոնց ետեւէն , ոչորա-
պըտոյտ մութ փողոցներու մէջէ տուներուն
տակէն սողոսկելով , առանց ամենեւին խօ-
սակցելու , որպէս թէ ամենն ալ 'ի ծնէ համբ
էին* :

Քուլէվրինա քանի մը քայլ հեռուէն կեր-
թար , Մանօֆինայի յանձնուած գաղտնի պաշ-
տօնին վրայ խռոված , եւ իր վայրագ սիրել-
ւայն համար սիրտն անհանգստութեան մէջ ին-
կած . թերեւս նաեւ դրդեալ այն կանացի բը-

* Սպանիացւոց բնաւորութիւնն է՝ գոր-
ծել առանց խօսելու , առանց արտաքին ցոյ-
ցեր ընելու . եւ այնպէս անշփոթ դէմք մը ու-
նին , որմէ իրենց ներքին զգացումը կամ յուզ-
մունքը գուշակել անհնար է :

նազդումէն, որ անդիմադարձ կերպով զիրենք
կը քաշէ հոն՝ ուր վիշտ մը կայ սփոփելու կամ
վտանգ մը կայ արգիլելու :

Քօքօ եւ իր խումբն այսպէս քալեցին
գացին մինչեւ Քրիանայի կամուրջը, ուրիշ
քանի մը նեղ ու մութ փողոցներէ անցան եւ
վերջապէս մայր եկեղեցւոյ մօտ Էսբլանատի հը-
րապարակը հասան, ուր շրջակայ տուներուն
ճրագներն ալ արդէն մարած ըլլալուն՝ թանձր
մութ մը կը տիրէր :

Արդարեւ կապոյտ երկինքին երեսը լու-
սացայտ աստղեր կը փայլէին, բայց մենէ խիստ
հեռու անհուն տարածութեան մէջ խաղաղ
կը թաւալէին, չուզելով իրենց բոցանշոյլ ճա-
ռագայթները մինչեւ երկրիս վրայ հասցընել,
անշուշտ մեր տխուր մոլորակին բնակիչներէն
աւելի երջանիկ արարածոց բաշխելու համար :

Երբոր մայր եկեղեցւոյն առջեւ հասան,
Քօքօ՝ երկու մեծ կամարակալ մոյթերէ ձե-
ւացած խորշի մը մէջ դարանի դրաւ երկու մեծ
կուլաբօները. յետոյ բան մը փափսաց Շիվա-
թօներուն, անոնք ալ անմիջապէս գացին հը-
րապարակին չորս անկիւնը երեսի վրայ պառ-
կեցան, ականջնին գետնին դնելով, որպէս
զի ամենաթեթեւ շշունջ մ'անգամ ըլլայնէ՝
իմանան :

Այսպէս իր զինուորները տրամադրելէ ետեւ՝ Քօքօ ինքն ալ մայր եկեղեցւոյն կամարայարկ գաւթին մէկ անկիւնը դնաց դարանեցաւ :

Քուլէվրինա վախնալով որ զինքը կը տեսնեն , հրապարակին շրջակայ տուներուն տակէն մեղմով անցաւ , եւ ծառերուն մէջէն սըպըրդելով դնաց աղբիւրին մօտ մեծնարնջենիի մը ներքեւ կեցաւ :

Քուլէվրինայի ոտնաձայնին թեթեւ շրշունջն անգամ անլսելի չըլլալով , ծղրիտի կըռիչին* նման մեղմ ձայն մը լսուեցաւ հրապարակին անկիւններուն մէկէն . բայց անմիջապէս խոր լռութիւն տիրելով , Քօքօ հասկըցաւ որ սխալ շշուկ մ'էր եւ մարդ տեղէն չի

* Շխաթօները՝ որոց գլխաւոր պաշտօնն էր կարտունեանց գործողութիւններուն ժամանակ հսկողութիւն կամ լրտեսութիւն ընել , վտանգի կամ երկիւղի ժամանակ՝ կենդանւոյ կամ թռչնոյ ձայն կը հանէին : Քիչերները ծղրիտի , բուի , գորտի , կատուի ձայն կը հանէին՝ տարւոյն եղանակին կամ իրենց տրուած հրահանգին համեմատ . ցերեկներն ալ շան եւ ուրիշ ընտանի կենդանեաց ձայն կը հանէին այնպիսի նմանողութեամբ՝ որ լսողին անհրնար էր չխաբուիլ :

շարժեցաւ :

Նոյն միջոցին պահնորդն* հրապարակէն անցաւ , եւ աղքիւրին մօտ կենալով կէս գիշեր կանչեց իր խեղդուկ ու միակերպ ձայնովը :

Քուլէ վրինա գողաց . . .

Կէս գիշեր . . . ոճրագործութեանց ժամըն էր : Թշուառն այն ժամուն մէջ քանի՛ քանի արիւնահեղ տեսարաններու վկայ կամ գործակից եղած էր :

Վախցաւ . . .

Պահնորդն անցաւ դնաց . եւ այնուհետեւ ուրիշ ձայն չլսուեցաւ բաց 'ի ծառոց տերեւներուն աննշմարելի սօսաւիւնէն , որ գիշերուան գեփիւռէն մեղմով կը շարժէին :

* Սպանիոյ քաղաքներուն մէջ ալ Տաճկաստանի պէս գիշերուան պահնորդներ կան , որ հասարակաց ապահովութեանը հսկելու եւ հրդեհ մը պատահած ժամանակ ծանուցանելու համար՝ գիշերները թաղերուն մէջ կը պլտրտին , մէկ ձեռքերնին նիզակ եւ միւս ձեռքերնին լապտեր . միանգամայն շչակ (ըսլըք) մը ունին , որ գողերու կամ չարագործներու պատահած ժամանակնին սուլելով իրար օգնութեան կը կանչեն : Այս պահնորդները Սէրէնս կը կոչուին :

Սէրէնան (Քուլէվրինա) ծունդի վրայ ե-
կաւ ու աղօթել սկսաւ :

Շատ չանցաւ երազ ու թեթեւ ոտնաձայն
մը լսուեցաւ դէպ 'ի Ժիրալտայի աշտարակը .
Շիվաթօներէն մէկը կռիչ մը հանեց առաջի-
նէն աւելի սուր , եւ անմիջապէս միւս երեքն
ալ կրկնեցին զայն :

Քօքօ , Մանօֆինա եւ Քուէրբօ տէ Հիէ-
րօ դաշոյննին մերկացան :

Քուլէվրինա ելաւ կանգնեցաւ ու գլու-
խըն երկնցընելով վտանգին սր կողմէն գալը
դիտեց :

Նոյն միջոցին Տօլորէզ հրապարակէն կանց-
նէր :

Ժիրալտայի աշտարակին ներքեւ հասնե-
լուն , չորս կողմը նայեցաւ , եւ մարդ չտեսնե-
լով , սկսաւ ցած ձայնով « Էսթէվան , Էսթէ-
վան » կոչել :

Պատասխան տուող չեղաւ :

Բայց նոյն միջոցին մանկամարդ կին մը ե-
լաւ աշտարակէն եւ սարսափով կառաւարչին
աղջկան ոտքն ինկաւ :

« Ո՞վ ես , ի՞նչ կուզես , հարցուց անոր
Տօլորէզ :

— Փախիր , փախիր , դոչեց Շաբա , վա-
սըն զի ան էր . փախիր տիկին , մատնուեցար ,

քեզ խաբեցի . . .

— Բայց ո՞ւր է Էսթէվան , հարցուց օրիորդը , ձայնէն ճանչելով որ հետը խօսողն իր նշանածին կարծեցեալ նամակը բերողն էր :

— Չեմ գիտեր , պատասխանեց Շաբադոզալով . չեմ ճանչեր զինքը :

— Չէս ճանչեր . . . , բայց դուն ըսիր ինձ թէ այս իրիկուն զիս հոս պիտի սպասէր :

— Քեզ խաբեցի , ըսաւ գնչուհին զարհուրած . ինձի +ւէ ըսին , ես ալ պարտաւորեցայ քալելու . . . վասն զի ես թշուառ գործիք մ'եմ . . . եթէ չհնազանդիմ՝ գէշ կըլլայ ինձ . . . ո՞հ . բայց երբոր քու վեհօրտազնուութիւնդ ու գեղեցկութիւնդ տեսայ , սիրտս չդիմացաւ , եւ ձեզ ազատելու երդում ըրի՝ ամեն վտանգ աչքս առնելով : Փախիր ուրեմն տիրուհի , փախիր , կաղաչեմ . . . շուտ ըրէ , ժամանակ չի կայ . . . հիմա կը հասնին . . . »

Բայց Տոլորէզ , շուարած , իր անձին վրտանգը չէր մտածեր . այլ միայն Էսթէվանի վրայ կը խորհէր , որուն ետեւէն ինկած էր հաւատաքնութիւնը . եւ Շաբայի խօսքերէն իր անստուգութիւնն աւելնալով մեծ տագնապի մէջ ինկած էր :

Յանկարծ , անիւներու թաւալման մեղմ

շշուկ մը եւ մարդոց ոտնաձայն լսուեցաւ դե-
տին կողմէն :

Շիվաթօներուն կռիչն աւելի յաճախ եւ
երկար հնչելով՝ կարտունեանց ուշադրութիւ-
նը գրաւեց :

«Ար լսե՛ս, կը լսե՛ս, գոչեց գնչուհին զար-
հուրելով, եւ Տոլորէզի ձեռքէն բռնելով այն
տեղէն քաշել հեռացընել ուղեց :

Տոլորէզ բուռն եւ արհամարհոտ շարժ-
մամբ մը դանի ետ մղեց :

« Անիծեալ ըլլաս, որ զիս խաբեցիր » ը-
սաւ :

Այս խօսքին վրայ Շաբա նորէն թիրալ-
տայի աշտարակը փախաւ • իսկ Տոլորէզ՝ յու-
սահատութենէն ու սարսափէն խելքը կոր-
սընցուցած՝ դէպ'ի հրապարակը վազել սկսաւ :

Հազիւ քանի մը քայլ առերէր, չորս կա-
լանաւոր հրապարակին չորս անկիւնէն վրան
յարձակելով գրկեցին թեւերնուն վրայ առին,
այնպէս որ օրիորդը ոչ դիմադրութիւն մը
կրցաւ ընել եւ ոչ ձայն հանել :

Կալանաւորներն իրենց որսը ձեռք ան-
ցունելէ ետեւ՝ դետին ճանքան բռնեցին, ուր
Էնրիքէզ եւ Ֆրազքօ հաւատաքննութեան
կառքին քով կեցած կ'սպասէին : Յիշեալ կառ-
քը գիշերային գործողութեանց յատկացեալ

ըլլալով , անիւնները հաստ եւ կակուղ կաշիով
պատած էին , եւ փողոցի քարայտակներուն
վրայ թաւալած ժամանակնին շոինդ չէին հա-
ներ : Քաշող ջորիներուն ալ մորթէ կոշիկներ*
հագուցած էին :

Շիվաթօներուն վերջին ազդարարութեան
վրայ , Քօքօ եւ երկու կուարթօներն իրենց դա-
րանէն դուրս ելեր , եւ մայր եկեղեցւոյն պա-
տին տակէն սողոսկելով՝ յափշտակիչներուն ե-
տեւէն ինկեր էին :

Քուլէվրինա ալ գայլի պէս անոնց ետե-
ւէն գացեր էր :

Նոյն միջոցին Շիվաթօներն ալ օծի պէս
սողալով առաջ անցեր , կառքին կողմը գա-
ցեր էին :

Էնրիքէզ եւ Ֆրազքօ՝ կառքին քով կը
հսկէին . բայց երբոր կալանաւորաց գալը լը-
սեցին , կառքին քովէն մեկնեցան ու զանոնք
գիմաւորեցին : Շիվաթօներն անոնց այս զբա-

* Քիշեր ժամանակ մարդ վերցընելու հա-
մար հաւատաքննութեան գործածած կառքին
ջորիներուն ոտքը խծուծով լցուած կաշիէ
կոշիկներ կանցունէին , որպէս զի ոտքերնուն
ձայնը չեղնէ : Այս կոշիկը Տէզա անուն հաւա-
տաքննիչն հնարած էր :

դու մէն օգուտ քաղելով, գացին գողի պէս
կառքին փոկերը կտրեցին եւ ջորիներն առին
տարին, որոնք կարծես թէ գողցուելու դիտ-
մամբ կոշկաւորուած էին :

Այս ալ կողոպուտ մ'էր :

Շիվաթօները ջորիներն առնելէ առաջ՝
դարմանալի ճարպիկութեամբ բռներ կառա-
վարը գետը նետեր էին, որպէս զի չկրնայ ի-
րենց արգելք ըլլալ :

Այս ամենը մեր պատմելուն չափ ժամա-
նակ չէր քշած :

Ահա բռներ կը բերեն, ըսաւ Էնրիքէզ
Ֆրազքօի, երբոր մօտեցան կալանաւորնե-
րուն, որոնք օրիորդը թեւերնուն վրայ վե-
րուցեր կը տանէին : Տըլորէզ մարած էր :

— Շատ աղէկ, պատասխանեց Ֆրազքօ
դեզ ձայնով մը . լռէ եւ շուտ ընենք :

Օ՛հ, ալ մեր ձեռքն է, ըսաւ Էնրիքէզ
յաղթական դէմքով մը :

— Գեռ ոչ » ըսաւ Մանօֆինա դաշոյնի
ուժգին հարուած մը տալով անոր ձախ թե-
ւին :

Այս անակնկալ հարուածէն Էնրիքէզ դան-
դաչեց, բայց ինքզինք ժողվելով

« Հասէք » գոչեց կալանաւորներուն, ո-
րոց երկուքն անմիջապէս օրիորդն իրենց ըն-

կերներուն թողլով Կնրիքէզի օգնութեան
գիմնցին :

Արդէն Ֆրազքօ ալ Մանօֆինայի վրայյար-
ձակեր էր : Կնրիքէզ ալ կատղած , եւ մութին
մէջ իր թշնամիները չկրնալով որոշել , Քուէր-
քօ տէ Հիէրօի վրայ դարձեր դազանաբար կը
կռուէր անոր հետ :

Նոյն միջոցին Քօքօ ալ Տոլորէզը տանող
երկու կալանաւորներուն ետեւէն ինկեր էր ,
որոնք կռիւը տեսնելուն պէս՝ օրիորդը տա-
րեր կառքը դրեր ու իրենք փախեր էին :

Քօքօ մէկ կողմէն քաղաքապետին աղ-
ջիկը պահելու եւ միւս կողմէ իր եղբարցն օգ-
նելու բաղձանքին մէջ տատանելով , քանի մը
վայրկեան վարանելէ ետեւ , վերջապէս չկըր-
ցաւ համբերել , եւ կռուին տեղը վազելով
խիստ յարմար ժամանակին հասաւ Քուէրքօ
տէ Հիէրօն աղատելու , որ իր ըմբշական ու-
ժովն եւ առիւծական քաջասրտութեամբն
հանդերձ մեծ դժուարութիւն կը կրէր երեք
հակառակորդաց՝ այն է երկու կալանաւորնե-
րուն եւ Կնրիքէզի դէմ դնելու : Այս վերջինը՝
թէ եւ վիրաւորուած էր , բայց յուսահատ կա-
տաղութեամբ կը կռուէր :

Քօքօի հասնիլը կռուոյն կերպարանքը
փոխեց :

Հաւատաքննութեան զինուորները մէկ կողմէ կռուած ժամանակնին՝ միանգամայն կամուրջին մօտենալ կուզէին, ուր կառքը կեցեր էր : Աարտուենեանք ալ կաշխատէին զանոնք այն կողմը քշելու . վասն զի վստահ էին որ հոն հասնելու ըլլային նէ՝ անոնց գործը դիւրաւ կը լմնցընէին : Եւ իրօք ալ կալանաւորները Թրիանայի կամուրջին վրայ հազիւ հասեր էին, Աարտուենեանք զանոնք չարաչար վիրաւորեր ու գետը ձգեր էին : Էնրիքէզ ալ արդէն նուազած քանի մը քայլ անդին ինկեր էր : Քուէրքօ տէ Հիէրօ դարձաւ անոր քով, եւ զանի մեռած կարծելով դրկեց կամուրջին վրայ տարաւ ու գետը նետեց :

Քօքօ նորէն կառքին քով դարձեր էր, աներկբայ ըլլալով որ Մանիֆինա կրնար միայնակ Ծրազքօի գործը դիւրութեամբ լմնցընել . սակայն խաբուեր էր : Ծրազքօ ինքզինք միայնակ տեսնելով Աուաքօին դէմ, եւ հասկընալով որ այն վայրագ Աարտուենեանին հետ զլուխ չպիտի կրնար ելնել, մետաքսեայ հանգուցաւոր ճոպանը* ճարպիկութեամբ անոր

* Սպանիացիները խիստ յաջողակ են այս մահառիթ զէնքին գործածութեանը մէջ : Հաւատաքննութեան զինուորները, մանա-

ճիտը նետեր էր :

Մանօֆինայի քաջութիւնն ու ճարպիկութիւնը չկրցաւ այս վերջին որոգայթին դիմանալ : Աենախուղ պարանէն խղղուելով՝ քիչ քիչ իր ուժն ու շնչառութիւնը կորսնցուց : Գաշոյնը ձեռքէն ինկաւ , կարմրած եւ ուռած աչքերը մթացան , եւ արդէն Ֆրազքօ դաշոյնը վերուցեր զանի լմնցընելու վրայ էր , յանկարծ դանակի հարուած մը առաւ սրտին եւ հոն ինկաւ մեռաւ :

Քուլէվրինա զանի զարկեր էր իր անտալուզեան փոքրիկ դաշոյնովը :

Անմիջապէս քակէց Մանօֆինայի ճիտը սեղմող ճոպանը , որուն դժնդակ ցաւին դիմանալով տակաւին ոտքի վրայ կեցեր էր :

« Ապրիս , Քուլէվրինա , ըսաւ կուարօն անոր ձեռքը սեղմելով . դուն քաջ եւ անվե-

ւանդ կալանաւորները գործողութեան չէին երթար առանց այս պարանը դրպաննուն մէջ ունենալու , եւ ով որ իրենց դէմ դնելու յանդրդնէր , անոր դէմ կը գործածէին : Բայց գըլխաւորապէս իրենց դէմ հաչող շուները խեղդելու կը գործածէին : Երբեմն ալ բռնած անձերնուն աղաղակը խափանելու կը գործածէին՝ մինչեւ որ անոնց բերանը գայլ կամ դանախաւանդ դնէին :

հեր աղջիկ մ'ես . մեծաւորը քեզ անվարձ չի
պիտի թողու :

— Մեծաւորին վարձատրութիւնը ինձ
պէտք չէ . ես իմ վարձքս քենէ միայն կու
ղեմ :

— Ինչ մի , ըսաւ կուարօն զարմանալով .
ըտէ նայիմ ի՞նչ կուղես . կերդնում որ ինչ ու
ղես կուտամ քեզ :

Մանօֆինան , ըսաւ Սէրէնան կանացի խան
դաղատ եւ սիրուն նազանքով մը անոր թե
ւին փաթթուելով , կը խնդրեմ որ Տոն Էսթէ
վանի կեանքը ինձ շնորհես :

Քուլէվրինան , ըսաւ կուարօն տխուր ձայ
նով մը , անհնար խնդիր մը կընես ինձ . . .
Եւ ի՞նչ փոյթ է քեզ այդ երիտասարդ տար
փաւորին մահը , աւելցուց կուարօն կասկա
ծոտ դէմքով :

— Պէտք չէ ~~խառնել~~ իրար օիրողները ,
պատասխանեց Սէրէնան . քաղաքապետին
աղջիկը կսկիծէն կը մեռնի եթէ իր նշանածը
ձեռքէն առնուն , ինչպէս որ ես ալ , սիրելի
Մանօֆինաս , այս գիշեր կը մեռնէի եթէ քեզ
սպաննէին :

— Չեմ կրնար խօսք տալ » պատասխա
նեց կուարօն միանգամայն խանդաղատած ու
վարանած : վասն զի չէր ուղեր իր կարծեցեալ

պարտականութեանը դրժել, ոչ ալ իր սիրելի-
ւոյն անհաճոյ ըլլալ :

Սէրէնան գլուխը ծռեց եւ լալ սկսաւ :

« Մի լար այդ պէս, սիրելիս, ըսաւ կուա-
բօն անոր փաթթ ու ելով, տեսնենք ինչ կըր-
նանք ընել : »

Նոյն միջոցին Քօքօ եւ Քուէրբօ տէ Հիէ-
րօ Տօլորէզը կառքէն հաներ էին, միշտ մա-
րած :

— Ի՞նչ պիտի ընենք այդ օրիորդը, հար-
ցուց Մանօֆինա Քօքօի մօտենալով :

— Ետեւնուս եկէք եւ հօկեցէ՛ք ջրէնէն, պա-
տասխանեց Քօքօ : Եւ ինքը առաջ իյնալով
Քուէրբօ տէ Հիէրօի հետ՝ Առաքեալին տանը
ճանքան բռնեց, որ կուատալքիվիրի միւս կող-
մըն էր :

Մանօֆինա եւ Սէրէնան ալ հեռուէն ա-
նոնց ետեւէն դացին, պատրաստ ըլլալով դա-
նոնք պաշտպանելու հաւատա քննութեաննոր
օրոգայթներուն դէմ :



ԿՐՕՆԱԻՈՐԱՑ ՄԵՎ ՃԱՇԸ

Մեծ հաւատաքննիչ Պետրոս Արպուէզի պալատը մաւրիտանեան ընդարձակ ու շքեղ շէնք մ'էր , ուր ժամանակաւ Սէվիլի թագաւորը կը բնակէր : Ընտիր եւ հազուագիւտ ծաղիկներով ու ծառերով զարդարուած գեղեցիկ պարտէզներու մէկ կողմը առանձին յարկ մը կար , որ ժամանակաւ բաղնիք էր : Հեշտասէր Արպուէզ այն յարկն ուրիշ բանի սահմաններ էր :

Այս յարկը պալատին բուն շէնքէն հեռու թաւախիտ ծառոց մէջ ծածկուած ըլլալով մեծ հաւատաքննչին եւ անոր սիրելիներուն սովորական խրախճանի տեղն էր : Յոփակեաց եպիսկոպոսներ ու կրօնաւորներ՝ հոն գիշերները շուայտելով զիրենք տոչորող գազանական կրից բոցն համարձակ կարտաշնչէին , գաւազանին ու կնգուղին ակնածութիւնը ծանրաբեռն զգեստի մը պէս մէկ դինետելով եւ ինքզինքնին սանձարձակ շուայտութեան տալով , որուն մէջ ամեն պիղծ հաճոյք , զեղծ

խօսքեր , անհաւատալի յոխորտանքներ եւ
անլուր առասպելաբանութիւններ ազատ աս-
պարէզ կը գտնէին :

Այս կրօնաւորներն իրենց գիշերուան տե-
սարաններուն կը պահէին այն բոլոր զօրու-
թիւնը՝ որ իրենց կենաց սոփորական զգուշա-
ւորութիւնը կը տպաւորէր իրենց բարոյական
կարողութեանցը վրայ : Բռնահոս հեղեղ մ էր
ճանքուն վրայ ելած ամեն խոչ եւ խութ եւ
ամեն աղտեղութիւն իր հետ քշելով ստուարա-
ցած : Հոն ալ դարձեալ իրենց երեւակայու-
թեան լափլիզող լալային ուրիշ ճարակ չգըտ-
նելով, հաւատաքննութեան անհեթեթ օրէնք-
ները կերկնէին . բարբարոսական օրէնքներ ,
որոց վրայ ամեն նոր հաւատաքննիչ քանի մը
նոր եւ աւելի դժնեայ յօդուածներ կաւելցը-
նէր . գարշատեսիլ հրէշ մը՝ պիղծ երկունքնե-
րէ ծնած , որ Անտէոսի որդւոցը պէս երկնից
գէմ կը խիզախէր :

Այս մարդիկն այնչափ պէտք ունէին դը-
ժընդակ սրտայուզութիւններու , որ միայն
արեամբ եւ խարոյկներով կրնային իրենց ըզ-
գայականութեան անյագ տենչը մեղմել : Սա-
տանան մարմնացեր էր անոնց անձին վրայ , եւ
կարծես թէ Քրիստոսի անձին վրայ Աստուծոյ
մարդեղութենէն ետեւ՝ դժոխքին բոլոր ոգի-

ներն ալ հաւատա քննչաց անձին վրայ մարդա-
ցեր էին :

Թերեւս ըսողներ ըլլան մեզ թէ հաւատա-
քըննչաց մէկ քանին անկեղծ էին իրենց մոլե-
ռանդութեանը մէջ : Թող կարդան հաւատա-
քըննութեան պատմութիւնը եւ պատասխան
տան մեզ : Այս այլանդակ հաստատութիւնը
որ Պապերուն քաղաքականութենէն ծնած ,
եւ Սպանիոյ մէջ թագաւորաց քաղաքակա-
նութենէն ներուած ու պաշտպանուած էր , իր
անմաքուր աղբիւրը սուտ չհանեց , եւ ապի-
րատ իշխանութեան մը գործակալներն ալ ի-
րեն պէս ապիրատ եղան :

Ահս գիշեր էր :

Հաւատա քննական պալատին այն առան-
ձին յարկին մէջ վայելչազարդ դահլիճի մը մէջ
տեղը շքեղ սեղան մը պատրաստուած էր :
Դահլիճին ձեղունն արաբացի բարակ քանդակ-
ներով պճնեալ էր : Պատերուն վրայ ամենտե-
սակ ծաղիկներ ու պտուղներ նկարուած էին
այնպիսի քաջ նմանողութեամբ որ կրնային
բնութիւնը նախանձեցընել , եւ դիցաբանու-
թեան ամենէն հեշտալի տեսարանները ներ-
կայացընող պատկերներ կախուած էին , որոց
մէջ նշանաւոր էին Ալիտիա՝ ծաղկէ անկողնի
մը վրայ կիսամերկ պառկած , բոցեռանդ եւ

միանգամայն մեղկ , իր տարփաշուհն աչքերն
 արեւուն դարձընելով . Արամազդ , այն անմահ
 ցովի՛ր՝ կարապի կերպարան , ով ջուրերուն մէջ
 կը խաղար Նեդայի մօտ , եւ զինքը տոչորող
 բունն հեշտասիրութիւնը կը յայտնէր յայրատ
 դիրքերով . եւ վերջապէս Աստղիկ , այն մեծ
 պոռնիկն , իր վաւաշոտ ու խառնակեաց կենաց
 ամեն դէմքերովը : Սուրբ մը ըլլալու էր այն
 լրբենի նկարներուն առջեւ անդգայ կենա-
 լու համար , որոնք պարոն հաւատաքննիչնե-
 րուն զգայական կիրքերը զրգոելու սահման-
 ուած էին : Դահլիճին գետինը մարմարեայ գե-
 ղեցիկ միւսիոնով նկարուած էր . եւ մէջ տեղը
 դրուած սեղանին վրայ ազնիւ համադամներ ու
 հազուագիւտ պտուղներ շարուած էին յախ-
 ճապակեայ եւ քիւրեղեայ մեծ մեծ սկահներով :
 Քսերէս , Թէնթարօթա , Մալակայի ա-
 նուշ գինին , Ամերիկայէն նոր եկած ադամա-
 թուզի հեղուկը , այս ամեն ոգելից եւ ուժով
 ըմպելիներն առատապէս կը շրջաբերէին կոչ-
 նականներուն մէջ՝ որոց Սէվիլի բարձրապա-
 տիւ Մօնսինեօր մեծ հաւատաքննիչը կը նա-
 խագահէր :

Յախուռն եւ քիչ մ'ալ խորհրդազգած զը-
 ուարճութիւն մ'այն տխուր ու եռանդուն դէմ-
 քերը կ'ոգեւորէր : Մանաւանդ Պետրոս Ար-

պուէզի աչքերն անսովոր կրակով մը կը փայ-
լէին . տենչանաց եւ անստուգութեան անձ-
կութիւններն իրենց կծու դառնութիւնն անոր
թեթեւ գինովութեանը հետ կը խառնէին: Քը-
լուխները տաքցեր էին . բայց դեռ խելքը կը
կառավարէր զանոնք . կարգերը դեռ աւրը-
ուած չէին . իւրաքանչիւրն իր տեղը կեցած
էր , եւ խօսքերուն ազատութիւնը դեռ կրօ-
նաւորական խոհեմութեան գունով մը քօ-
ղարկուած էին :

Ամենէն առաջ Մօնսիներօր Արպուէզ ձանձ-
րացաւ այս ակնածական զգուշաւորութենէն
եւ գինեհար ձայնով մը գոչեց .

« Գիտէ՞ք, հարք , որ երկնից դռնապանն*
անդադար նոր բանլիքներ կը դարբնէ , որպէս
գի արքայութեան ուղիներն աւելի ապահո-
վութեամբ պահպանէ եւ երկրիս ուրախու-
թիւնները մեզ համար աւելցընէ : Ահաւասիկ
հաւատաքննութիւնը Բորթուկալի մէջ հաս-
տատուեցաւ . եւ շատ շանցած՝ աշխարհի վը-
րայ տեղ մը չպիտի մնայ ուր մեր իշխանու-
թիւնը տարածուած չըլլայ :

— Շատ աղէկ , ըսաւ անդիէն Թօլէտի
արքեպիսկոպոսը . հաւատաքննութիւնն աղօ-

* Պապը :

րի մ'է, որուն մէջ փշրուած գէշ ցորեններն Սպանիոյ գեղեցիկ տուպլոններու կը փոխուին մեզ համար :

— Տուպլոններն ալ երկնային ուրախութիւններու եւ հեշտալի խնճոյքներու կը փոխուին ըսաւ անդիէն դոմինիկեանց վանահայր մը բոցափայլ աչքերով :

— Այնչափ ճշմարիտ է այդ ըսածնիդ որ, պատասխանեց արքեպիսկոպոսը, աւելի լաւ է հաւատաքննիչ ըլլալ՝ քան թէ Պապ: Արքայութեան դռնապանը՝ որ ինքզինք մեր տէրը կը կարծէ, մեր մանր մունր զուարճութեանց վերակացու մ'է միայն, եւ ոչ ուրիշ քան :

— Ատկէց զատ՝ ձեր ալ է Պապը, ըսաւ մանկամարդ կրօնաւոր մը, որ աղջկան պէս գեղեցիկ էր եւ Պետրոս Արպուէզի ալ սիրելի : Ի՞նչ օգուտ ունին աշխարհիս բարիքը երբոր մէկը կարողութիւն չունի զանոնք վայելելու :

— Աւելի լաւ է դոմինիկեանց վանքի մը մէջ նորընծայ ըլլալ, այնպէս չէ, Յովսէ, ըսաւ մեծ հաւատաքննիչն անոր գլուխը շոյելով :

— Աւելի լաւ է ձեր բարձրութեան խոնարհ ստրուկն ըլլալ, պատասխանեց երիտասարդ կրօնաւորը կեղծ խոնարհութեամբ մը :

— Պապը կը սերմանէ, եւ մեք կը հըն-

ձեռք , ըսաւ խնդալով Թողտի արքեպիսկոպոսը . եւ մինչ ան իր կարդինալներուն հետ կը յօրանջէ , մեք Աիթէրայի դաշտերուն մէջ մեր ոտքին ներքեւ գտնուած սիրոյ գեղեցիկ ծաղիկները կը քաղենք :

— Ես դանոնք քաղելու համար ծռելու աշխատութիւնն ալ չունիմ , ըսաւ Մալակայի եպիսկոպոսը . Բոպիկ Աարմելեանց վանքին մեծաւորն ինձ համար կը կատարէ այդ պաշտօնը . իր պարտէզին ամենէն գեղեցիկ ծաղկանց երախայրիքն ինձ կը նուիրէ :

— Ես ալ , ըսաւ Թողտի արքեպիսկոպոսը , հաւնած կիներս Աարտունայի ընկերութեան ձեռօք վերցընել ու ինձ բերել կուտամ :

— Խիստ օգտակար ընկերութիւն մ'է այն , ըսաւ հաւատաքննիչը , եւ պէտք է որ ամենայն զօրութեամբ պաշտպանենք , տեարք : Այն օրը որ Աարտունայի եղբայրութիւնը վերնայ Սպանիոյ մէջէն , մնաք բարով պէտք է ըսենք մեր զուարճութեանցն ու վրէժխընդրութեանցը . այն ժամանակ հարկ կըլլայ որ մեք մեր ձեռօքն ընենք , եւ հետեւաբար մեր շահերը վտանգի մէջ կիյնան :

— Ամենեւին , գոչեց ուրիշ հաւատաքննիչ մը . գիշերները մարդ եւ կին վերցընելու եւ ծածուկ սպաննութիւններ ընելու մասին

հաւատաքննութեան մտերիմ արբանեակներուն ոտքն եկող չկայ : Մահուան պէս խորհրդապահ են , եւ ամեն բան կրնան գործել անպատուհաս . վասն զի հասարակութեան քառն անոնց ամեն գործերուն երաշխաւոր է . ոչ ոք կը համարձակի տրանջելու :

— Խեղճ մարդիկ , ըսաւ Պետրոս Արարուէզ նորընծային ականջին ծռելով , որուն երեսին դեղնութիւնը շարժումներուն զուարճութեանը չէր համաձայներ . խեղճ մարդիկ , իրենց խմցուցած գինիէս աւելի՛ սնափառութեանէ արբեալ են :

— Այդ կողմանէ ալ ձեր բարձրութիւնն ամենուն տէրն է , Մօնսինեօր , ըսաւ նորընծան կամաց մը . դուք արբեցութեան մէջ ալ ձեր զգաստութիւնը չէք կորսնցըներ , եւ անոնց գինովութեան մէջ պարծենցածը կրնաք դուք պաղարիւնութեամբ կատարել :

Միւսներուն խօսակցութեան ազմուկն այս մեղմ խօսակցութիւնը ծածկեց :

« Էներիքէզ դեռ երեւան չելաւ , ըսաւ հաւատաքննիչն անհանդարտ սրտով . զանի չտեսար , Յովսէ , Թրիանայի կամուրջին վրայ :

— Ոչ , պատասխանեց երիտասարդ կրօնաւորը . առաւել խոհեմութիւն դատեցի թողուլ զան որ միակ գործէ . բայց անհոգ ե-

ղիք, Մօնսինեօր, Էնրիքէզ հաւատարիմ է :

Ի՞նչ բանի վրայ կը խօսիք, Մօնսինեօր-
ներ, հարցուց Պետրոս Արպուէզ Մալակայի եւ
Թուլէտի եպիսկոպոսներուն :

— Մօնսինեօր, ըսաւ արքեպիսկոպո-
սը, ձեր Սէվիլի քաղքին գեղուհեացը վրայ
կը խօսէինք, եւ ես կը հաստատէի Մալակայի
եպիսկոպոսին թէ անոնց ամենէն գեղեցիկը
Տուրէզ Արկողօն է, քաղաքատեան գուսա-
րը : »

Արպուէզ զարմացական շարժում մ'ըրաւ :

« Օ՛, ատիկայ անառիկ բերդ մ'է, ըսաւ
թանձրամարմին վանահայրը . ես դայն երկու
անգամ խոստովանցուցեր եմ, եւ քիչ մ'ալ
կասկած ունիմ վրան թէ հերետիկոսութեան
մէջ ինկած է . վասն զի Լուտերի աշակերտի
մը պէս կը հակաճառէ :

— Ի՞նչ գեղեցիկ հերետիկոս մ'է այրելու
համար, ըսաւ Մալակայի եպիսկոպոսը :

— Սիրոյ կրակովն ըսել կուզէք անշուշտ,
պատասխանեց Թուլէտի արքեպիսկոպոսը . այդ
բանը բարձրապատիւ Մօնսինեօր Արպուէզ
միայն կրնայ ընել :

— Ատկէց դժուարին բան մը չունի՞ք ինձ
առաջարկելու, ըսաւ Պետրոս Արպուէզ պար-
ծենկոտ ժպիտով մը :

— Նորին բարձրութիւնը կը կասի, ըսաւ գոմիւնիկեանց վանահայրը :

— Ես չեմ կասիր, պատասխանեց մեծ հաւատաքննիչը, բայց կուզէի որ ձեզ հաճոյ ըլլալու համար աւելի մեծ բան մ'ընէի :

— Մենք ատով գոհ կըլլանք » գոչեցին կոչնականները միաբերան :

Այս միջոցին դահլճին դրան մետաքսեայ վարագոյրը բացուեցաւ եւ հաւատաքննութեան մտերիմ մը մեծ հաւատաքննիչին քովն երթալով, Մօնսիներօր, ըսաւ, Էնրիքէզ ձեր բարձրութիւնը տեսնել կը խնդրէ : »

Պետրոս Արպուէզի դէմքն յաղթական ժպիտով մը զուարթացաւ :

« Մօնսիներօրներ, ըսաւ, սատանան ձեր քաղձանքը կատարեց . հիմա պիտի տեսնէք քաղաքապետին աղջիկը » : Յետոյ հաւատաքննութեան մտերմին դառնալով՝ « Էնրիքէզ կրնայ ներս մտնել » ըսաւ :

Մարդը դուրս ելաւ :

Բոլոր կոչնականաց աչքը դէպ 'ի դահլճին դուռն ուղղուեցաւ :

« Մօնսիներօր, ըսաւ Արպուէզ՝ Թօլէտի արքեպիսկոպոսին դառնալով . հարիւր օրուան ներողութիւն կը խնդրեմ ձեռնէ այս բարի Էնրիքէզին համար, որ քաղաքապետին

աղջիկը մեզի կը բերէ . այս մարդը սուրբ հա-
ւատաքննութեան ընտիր ծառայներէն մէկն
է : »

Հազիւ Արպուէզ այս խօսքը լմնցուցեր
էր , վարագոյրը նորէն բացուեցաւ , եւ բարի
Էնրիքէզ դժգոյն , արիւնլուայ , վրան գլուխը
թրջած ներս մտաւ միայնակ , եւ հազիւ կանգ-
նելու կարողութիւն ունէր : « Ի՞նչ է այդ ,
գոչեց հաւատաքննիչը զարմանալով :

— Մօնսինեօր , պատասխանեց Էնրիքէզ
նուազեալ ձայնիւ , մեր կալանաւորներն ամե-
նըն ալ սպաննուեցան , եւ քաղաքապետին
աղջիկը ձեռու ընէս առնուեցաւ . ես ալ մեծ
նեղութեամբ եւ լողալով ինքզինքս հազիւ ա-
զատեցի եւ պաշտօնիս համարը տալու եկայ
ձեր մեծութեան :

Կոչնականք Էնրիքէզի շուրջը բոլորուե-
ցան , որ տկար ձայնով այն իրիկուան անցքը
պատմեց :

Այս միջոցին մեծ հաւատաքննիչին աչ-
քէն բարկութեան կրակ կը ցայտէր :

« Ըսել է որ դուք ամենքդ ալ միապէս
վատացնէք , ըսաւ վերջապէս երգիծական զայ-
րութով :

— Ամենքս ալ կրցածնիս ըրինք ձեր մե-
ծութեան կամքը կատարելու համար , պ

տասխանեց Էնրիքէզ ակնածութեամբ :

— Տրազքօն ի՞նչ եղաւ , ըսաւ Պետրոս Արպուէզ :

— Մեռաւ , Մօնսիներօր , մեռաւ միւսներուն պէս , պատասխանեց հաւատաքննութեան ընտանին , որ առջի երկու կալանաւորաց փախչիլը չէր գիտեր :

— Թշուառական մ'ես դու , դոչեց հաւատաքննիչը զայրագին ձայնով , կորի՛ր գիմացէս եւ մէկ մ'ալ մի երեւիր առջեւս : »

Էնրիքէզ , արեան կորուստէն , թրջելէն , եւ սրտայուզութենէն տկարացած , չկրցաւ այս վերջի հարուածին դիմանալ : Ծունդերը դողդոջեցին եւ մարեցաւ ինկաւ :

Պետրոս Արպուէզ զանգակն հնչեցուց , եւ երկու ծառայներս մտան :

« Վերուցէ՛ք տարէ՛ք սա մարդը , ըսաւ անհողութեամբ :

Յետոյ կոչնականաց դառնալով

« Սեղան հրամեցէ՛ք , մօնսիներներ , եւ գիշերն սկսածնուս պէս աւարտենք : »

Կրօնաւորներն ու եպիսկոպոսները տեղերնին նստան , եւ ոգեւլից ըմպելիները նորէն շուրջ գալ սկսան :

Պետրոս Արպուէզ սրտին կատաղութիւնն անհեթեթ ուրախութեամբ եւ կծու խօսքե-

ըով դուրս կը շնչէր :

Յովսէ՛ հաւատաքննիչին սիրելին՝ անշը-
փոթ ուշադրութեամբ անոր երեսը կը նայէր :
Նորընծան սովորականէն աւելի դժգոյն էր ,
եւ իր սեւ ու բոցանշոյլ աչքերուն մէջ նուրբ
հեղնութիւն մը կը փայլէր :

« Յովսէ , ըսաւ Արպուէզ նորընծային ա-
կանջին ծռելով , այս իրիկունը շատ սուղ պի-
տի նստի Սէվիլի քաղաքապետին : »

Դառն ուրախութեամբ լի մտածութիւն
մ'անցաւ նորընծային ճակատէն , բայց հաւա-
տաքննիչը բան մը չկրցաւ հասկընալ :

Արբեցութիւնը մինչեւ լոյս շարունակեց՝

* Հեղինակին նկարագրած այս շուայտու-
թեան տեսարանը չափազանց եւ թերեւս թըշ-
նամական երեւի մեր ընթերցողներէն ոմանց .
բայց այսպիսի տեսարաններ յաճախ տեղի կու-
նենային Սպանիոյ բարձրաստիճան եկեղեցա-
կանաց բնակարաններուն մէջ : Մարիանա վի-
պագիրը կը պատմէ , թէ մինչդեռ Հենրիկոս
Գ. ի մատակարարը՝ թագաւորին ուտելիք գնե-
լու համար անոր արքայական վերարկուն գը-
րաւի դնելու պարտաւորեր էր , արքունեաց
նախարարները Թուլէտի արքեպիսկոպոսին
տունը կերուխում կընէին բազմաթիւ եպիս-
կոպոսաներու հետ :

ԳԼՈՒԽ Զ .

ՀԵՐԵՏԻԿՈՍԻՆ ՏՈՒՆԸ

Առաքելին բնակարանն առանձին տուն մը կամ մենարան մ'էր կուտաւալքիվիր գետին եզերքը գեղջուկ պարտէզի մը մէջ : Առաքելն այն քարոզիչ ու խոստովանահայր կրօնաւորներէն մէկն էր , որոնք թէ եւ իրենց կարգին ամեն կանոններուն ազատաբար կը հետեւէին , սակայն կրօնաւորական եւ ոչ մէկ միաբանութեան անդամ չէին :

Այս կրօնաւորը Շաբայի պանդոկին մէջ տեսածնիս է :

Իրեն բնակարան ընտրեր էր այս նուազ մենարանը , ուր գիշերներն իր առաքելական աշխատութիւններէն կերթար կը հանգչէր . եւ քաղաքէն հեռու եւ գետին ալ մօտ ըլլալով , շատ անգամ ապաստան եղած էր հաւատաքննութեան զոհերուն :

Նախընթաց գլուխներուն մէջ պատմըւած անցքերուն հետեւեալ օրն էր :

Տոլորէզ միայնակ էր իրեն ապաստան եւ

դած սենեկին մէջ : Արշալոյսը նոր ծագեր էր ,
եւ դեռ ամեն բան նսեմ քօղով մը ծածկուած
ըլլալով , գետը դիպակեայ լայն ժապաւէնի
մը սլէս կերեւէր :

Թէ եւ ցուրտ հով մը կը փչէր գուրսը ,
Տոլորէզ պատուհանը բացաւ , եւ երեսին վը-
րայ ինկած երկայն մազերն իր սպիտակափայլ
ձեռքովը մէկ կողմ ընելով իր մերկ եւ հրա-
ցայտ ճակատը խստաշունչ հովին ներկայա-
ցուց :

Տխուր յուսահատութեամբ կը ճմլէր հո-
գին . աչերն արտսուքէն ուռեցեր էին , եւ
սպիտակագեղ դէմքին վրայ կապոյտ երակներ
տնկուած էին :

Ղինքը տոչորող դառն կսկծին մէջ՝ ըն-
դունայն աղօթից մխիթարութեանը դիմեր էր .
մեր վշտաց ջերմեռանդ արտայայտութիւնն
Աստուծոյ ոտքին տակը տանող ներկայացընող
եւ փոխարէն մխիթարար արտսուք մեզ բե-
րող հրեշտակն ընդունայն իր թեւերը թոթվեր
էր Տոլորէզի ճակտին վրայ . հոգւոյն մահացու
վէրքը չէր կրցեր սփոփիլ :

Այն աննկուն սրտի եւ ուղիղ ու անաչառ
դատման տէր մանկամարդը՝ որուն բոլոր հա-
ւատքն Աւետարանի բարոյականին ամենա-
մաքուր սկզբանցը վրայ հիմնեալ էր , այն ան-

կեղծ ջերմեռանդը՝ որ Աստուծոյ սրբութիւնը քահանային վրայ գտնել կուզէր, քահանային՝ որ իրեն համար մարդ չէր, այլ փոխակերպեալ էակ մը, այն սիրահարը՝ որուն միտքն ամեն դաղափարական կատարելութիւններով ամբարձեր, սիրոյ եւ կրօնի մէջ բանաստեղծ մ'եղեր էր, չէր կրցեր առանց սոսկման նշմարել այն զեղխութիւնն ու կեղծաւորութիւնը՝ որուն մէջ ինքզինքնին Քրիստոսի պաշտօնեայ կոչողներն ընկղմած էին :

Երկբայութիւնը, այն մաշեցընող եւ դրբեթէ անբուժելի վէրքը, որ շատ անգամ ամեն բան աւրելէն ու ապականելէն ետեւ կը դադրի, Տոլորէզի հողին ցտեր, եւ անոր սիրտըն այտուցեր էր այն մահաբեր թունով՝ որ դպած տեղը կայրէ կ'սպառէ :

Ասնք են եղեր, կըսէր դառնութեամբ, ասնք են եղեր Փրկչին երեսփոխանները . ասնք են եղեր օրինաց աւանդապահները . Ա՛հ, եթէ Քրիստոս ժամանակաւ վաճառականները տաճարէն վռնտեց, չկրնար հիմա ալ այս հաւատաքննիչ քահանայները վռնտել . արդեօք իրենցվառած խարոյկներուն բոցն իրենց դէմ չպիտի՞ դառնայ եւ զիրենք չպիտի՞ այրէ :

Բուն բայց սուրբ բարկութիւն մը կը դո-

ուար մանկամարդ օրիորդին սրտին մէջ . տեսնելով երկինքը՝ որ երկրի վիշտերուն վրայ անխռով եւ հանդարտ կը նայէր , եւ անոր անկարողութիւնն ու հաւատաքննութեան անաւոր կարողութիւնը մտածելով , կը հարցընէր ինքնիրեն սոսկումով , թէ Աստուած իր արարածներուն վրայ հող կը տանէր արդեօք : Այս տարակոյսները մտքին մէջ ծագեր էին , որոցմէ քայլ մ'անդին անհաւատութիւն էր :

Եւ արդարեւ , պէտք է դիտել , որ այն բռնութեան ու հալածանաց դարն ամենէն անելի բեղմնաւոր եղաւ կերպ կերպ եւ այլանշակ աղանդներով : Ամեն մարդ իր խելքին յարմար հաւատք մը կուզէր հնարել . վասնզի տանջանօք եւ հրով անգթաբար իրենց վրայ դրուած բարբարոսական հաւատքէն գոհ չէին կրնար ըլլալ : Հաւատաքննութիւնը մէկ բանի մը միայն կրնար հաւտացընել ժողովուրդը , այն է դժոխքին՝ զոր ինք երկրի վրայ փոխադրեր էր :

« Յիսո՛ւս , Յիսո՛ւս , կըսէր խեղճ յուսահատեալը . դու որ սիրելէ ու օրհնելէ զատ ուրիշ բան չըրիր , այս դահիճներուն եղեոնագործութեանցն ինչո՛ւ կը համբերես :

— Բարիները մաքրելու համար , ըսաքովէն քաղցր եւ լուրջ ձայն մը :

Տոլորէզ այս ձայնն եկած կողմը գլուխը
գարձունելով նոյն իսկ Քրիստոսի երեսը նըշ-
մարել կարծեց . այնչափ քաղցրութիւն ու վը-
սեմութիւն կար այն գլխուն վրայ՝ որ իջրեւ
թէ փառաց պսակով մը կը փայլէր :

Այն դէմքն առաքեալինն էր :

« Ո՛վ հայր իմ, գոչեց օրիորդը ծունկի
վրայ գալով, հայր իմ, օգնէ ինձ որ չգլորիմ .
վասն զի հոգիս դարհուրելով չարէն զատ ու-
րիշ բանի չկրնար այլ եւս հաւատալ : Սատա-
նան աշխարհիս տէր չեղան ճշմարիտ Աստուա-
ծը հալածելու համար :

— Որդեանկ, ըսաւ առաքեալը ձեռքն օ-
րիորդին հրատապ ճակտին վրայ դնելով ինչ-
պէս որ նոյն ինքն Քրիստոս կընէր . երբէն՝ ի
վեր արդեօք զօրութիւնը կրնայ տկարութե-
նէ ընկճիլ : Ո՛չ ապաքէն չարը տկար եւ բա-
րին հզօր է :

— Ոչ, պատասխանեց օրիորդն այլայլ-
եալ ձայնով : Չարն է զօրաւոր . վասն զի չա-
րերն զբարիները կը չարչարեն :

— Քրիստոս ալ չարչարուեցաւ եւ հզօր
էր, վասն զի Աստուած էր : Արնամս ուրանալ
զՔրիստոս եւ քրիստոնեայ եմ ըսել :

— Ո՛վ հայր, ներեցէք, ըսաւ նորատի փի-
լիսոփան, ես մարտիրոսներու զօրութիւնը

չունիմ, եւ երջանկութիւնը մարդկային իրաւունք մը կը թուի ինձ :

— Երջանկութիւնը հոս է, ըսաւ առաքեալը ձեռքը սրտին վրայ դնելով :

— Ո՛չ, գոչեց օրիորդն յուսահատութեամբ. այդ ապաստանն ալ անբռնաբարելի չէ հաւատաքննչաց առջեւ :

— Կրնան ատոր բաբախումը ճնշել կամ շարժումը փութացընել, պատասխանեց առաքեալը. կրնան սիրելի պատկեր մը արտաքսել կամ հարցդ հաւատքը վանել հոտկէց : Չես զգար արդեօք քու վրադ հոգիին այն գերբնական զօրութիւնը որ կըսէ քեզ. «Քալէ, մի վախնար, սիրէ եւ հաւատան : Մարմինը կրնան ջախջախել, բայց մեր ներսը գտնուած սիրող զօրութիւնն անկորնչելի է. յաւիտենական շունչը չմեռնիր :

— Ո՛հ, շնորհակալ եմ, շնորհակալ եմ, ըսաւ Տոլորէզ քահանային ձեռքն համբուրելով՝ զոր արտսուքովը կը թրջէր. շնորհակալ եմ ձեզ որ կը մխիթարէք, ձեզ՝ որ Աստուծոյ կը նմանիք : »

Առաքեալն իր ձեռքը քաշեց ազատեց օրիորդին ձեռքերուն մէջէն. իր քաղցր խոնարհութիւնը չէր կրնար ընդունիլ այն ակնածական նշանը զոր Սպանիոյ կրօնաւորները

կընդունէին՝ չէ թէ իբրեւ յարգանք , այլ իբրեւ պարտաւորեալ հարկ մը :

« Ո՛հ , ըսաւ Տոլորէզ անոր միտքն հասկընալով , դուք խոնարհ եւ զօրաւոր էք եւ կը հաւատաք . ուրեմն ես ալ պարտիմ հաւատալ , ես՝ որ տկար եւ հալածեալ կիմ մ'եմ :

— Այո՛ , պէտք է հաւատաս , աղջիկս , հաւատաս եւ անտրտունջ համբերես , վասն զի դուն ընտրեալ հոգի մ'ես : Զօրացիր ուրեմն եւ ամուր կեցիր , որդեակ . եւ եթէ Աստուած ուրիշ փորձութիւններ ալ քեզ դրկէ , իր՝ վարդապետութեանը համար մեռնող այն մեծ Զոհին պէս՝ « Քու կամքդ թող ըլլայ եւ ոչ իմս » ըսէ :

— Ո՛հ , ո՞վ էք դուք , հարցուց օրիորդը , ո՞վ էք դուք , հայր , որ յոյս եւ զօրութիւն կուտաք սրտիս : Ըսէք ինձ ձեր անունը , որպէս զի կարենամ աղօթիցս մէջ յիշել :

— Ես Աստուծոյ խոնարհ ծառայն եմ , եւ անունս Յոհանէն է : պատասխանեց կրօնաւորը . երբոր վրադ տկարութիւն մ'զգաս , որդեակ , Քրիստոսի անունը օգնութեան կոչէ , եւ ոչ իմս , վասն զի այն միայն կրնայ զօրութիւն ու մխիթարութիւն տալ : Բայց ժամանակն ուշ է , պէտք է որ հօրդ տունը դառնաս : Եկո՛ք քեզ տանիմ : եւ եթէ երբէք վիշտ

մը կրես եւ պաշտպանութեան պէտք ունե-
նաս , յիշէ այս նուաստ յարկը , որ ամեն ժա-
մանակ բաց է վշտացելոց : »

Տոլորէզ ջերմեռանդ եւ համբերատար
նայուածք մ' ուղղեց դէպ երկինք , եւ

« Կուգամ հետդ , հայր իմ » ըսաւ :

Եւ վերջին անգամ մ' ալ նայելով այն օրհ-
նեալ յարկին վրայ որ զինքը պատսպարեր էր ,
կրկնոցին մէջ փաթթուեցաւ ու կրօնաւորին
հետ դուրս ելաւ :

Երկար ժամանակ քովէ քով քալեցին ա-
ռանց բնաւ խօսակցելու : Տարտամ նախադ-
գացութիւններ օրիորդին սիրտը կը յուզէին .
այն երբեմն հանդարտ եւ անարատ ճակատը
խորշոմեր էր փոթորիկէն ծանրութեանը ներ-
քեւ , որ անոր երջանկութեան սլօակը կապ-
տեր էր :

Սմենէն արի հոգւոյ եւ սկզբանց տէր կա-
նայք տկար կողմ մ' ունին սրտերնուն մէջ . կը-
րած վիշտերնուն զօրութեանը դէմ՝ երբեմն
խելքի եւ փիլիսոփայութեան ամեն փաստերը
կը տկարանան : Կանայք չեն կրնար արանց
պէս պատահարներու դէմ խստանալ : Իրենց
դիւրազգած եւ տենդոտ բնութիւնը՝ թէ եւ
երբեմն մեծ զօրութիւն կուտայ իրենց , սա-
կայն կը զլանայ այն անյողդօղդ արիութիւնը

որ համբերութեամբ ամեն վիշտ կը կրէ , որ կրնայ սպասել եւ հետ զհետէ եկած հարուածներն ընկրկել : Այնայք կը գրգռին, կ'զգածին եւ իրենց վշտին դառնութեանը մէջ մէկ բան մը միայն կրնայ զանոնք հանդարտեցընել , այն է արտասուքը . եւ մէկ բան մը միայն կրնայ զանոնք սփոփել , այն է սէրը :

Առաքելոյն մխիթարար խօսքերէն օրիորդին սիրտը քաղցրապէս զգածելով՝ աչքէն առատ արտասուք կը թորէր , եւ էսթէվանի վրայ ունեցած սէրն իր սրտատանջ տխրութեանը պէս ուժգին արթննալով , արագ քայլերով ճանբան կը շարունակէր , եւ անհամբերութեամբ հօրը քով հասնել կուզէր , որ թերեւս իր նշանածը տեսեր էր : Բայց հաւատաքրննութեան սարսափն ալ մէկ կողմանէ զինքը տագնապեցընելով , էսթէվանի ու իր հօրը հետ հեռաւոր երկիր մը փախչիլ կերազէր , Գերմանիա , ուր արդէն կրօնական ազատութիւնը կը տիրէր , եւ ուր աներկիւղ իր սրտին ու խղճմտանայ ազդու մ'ներուն կրնար հետեւիլ : Յետոյ վշտագին նայուածք մը կարճակէր բոլորտիքը . Սպանիոյ գեղեցիկ երկինքին վրայ կ'զմայլէր , այն քաղցր ու սլայծառ երկինքին վրայ , որմէ փախչիլ հեռանալը դող կը սլատճառէր իրեն , վասն զի ամպոտ եւ մը-

թին երկինքներէ եւ ճիւղամած երկիրներէ չէր
ախորժեր :

Առաքեալը զայն իր տխուր մտածու-
թեանցը թողուց , վասն զի ինքն ալ ծանր մը-
տածութեանց մէջ ընկղմած էր :

Քաղաքապետին տանը մօտենալնուն ,
աղջիկն ուրախութեան աղաղակ մ'արձակեց
երբոր իր տանը փողոցը տեսաւ :

Ընթացքն աւելի փութացուց . կրօնաւո-
րըն ալ ետեւէն :

«Ո՛հ, հայր իմ գոչեց , պիտի տեսնեմ զին-
քը : »

Տոլորէզ չհամարձակեցաւ էսթ էվանի ա-
նունն արտասանել :

Դրանը քով կը հասնի . . .

Բայց ինչո՞ւ համար պալատին ճակտին վը-
րայ իրիկունները շողացող լապտերը չէր վառ-
ուած : Դուռն ալ՝ որ սովորաբար բաց կըլլար,
ամուր մը գոցուած էր :

Կը բախէ . . . ձայն չկայ . . . իր ամե-
նէն սիրելի ծառայներն յանուանէ կը կոչէ . . .
պատասխանող չկայ :

Սարսափելի լռութիւն մը կը տիրէր տանը
մէջ , այն տուներուն նման՝ ուր համաճարակ
հիւանդութեամբ մը բնակիչներն հետզհետէ
մեռնելով գուռը գոց կը մնայ :

Տոլորէ՞զ շուարած եւ սարսափէն դող ե-
լած՝ բռնցի կը զարնէ ու կը զարնէ անզգայ
դրան , որուն վրայի բեւեռներն իր քնքուշ
ձեռքը կը վիրաւորեն :

« Հայր իմ , հայր իմ , կը գոչէ վշտագին
ձայնով . . .

Պատասխան չկայ . . .

Առաքեալը գուշակեց ճշմարտութիւնը .
օրիորդին մօտեցաւ որպէս զի մխիթարէ . ու
րովհետեւ զգաց որ մխիթարութեան պէտք
պիտի ունենար :

Տոլորէ՞զ փիչած բոլորտիքը կը նայի :
Հանած աղմուկէն քանի մը մօտակայ դռներ
մեղմով բացուեցան :

« Հայրս , ի՞նչ եղաւ հայրս , գոչեց դժ-
բաղդ մանուկը :

Բայց պատասխան տուող չեղաւ :

« Քաղաքապետին աղջիկն է , քաղաքա-
պետին՝ որ այս առաւօտ մեծ հաւատաքննչին
հրամանաւն արգիլուեցաւ » ըսին քանի մը ձայ-
ներ , եւ նորէն դուռներնին գոցելով հեռացան
աղջկան մօտէն՝ իբրեւ ժանտախտէ բռնուած
անձէ մը :

Բայց Տոլորէ՞զ լսեց հաւատարմիչ բառը , եւ
իսկոյն միտքը սոսկալի լուսով մը լուսաւո-
րեցաւ : Հայրը հաւատաքննութեան բանտը

ճգուներ էր . եւ որովհետեւ այն անողոք ատեանը բան մը չէր թողուր թշուառ ամբաստանելոց , քաղաքապետին տունը գոցուեր , ինչքը դրաւուներ էր . հետեւաբար հէգ օրիորդին ողորմութիւն մուրալէ զատ ուրիշ ապաւէն չէր մնար . . . ողորմութիւն՝ զոր թերեւս պիտի գլանային հերետիկոսի մ'աղջկանը :

Տուրէզ չէր լար . բերնէն տրտունջ մը չէր ելներ . աչքերը ցամքեր ու կրակի պէս տաքցեր էին , եւ տժգոյն շրթունքը դառն ժպիտով մը կծկեր էր :

Արօնաւորին մօտեցաւ , դելեալ ձեռքով մ'անոր վերարկուին թեւը բռնեց , որպէս թէ անոր կապուիլ կուզէր իբրեւ իր վերջին ապաւէնին . յետոյ կարճ եւ դողդոջ ձայնով մը՝

« Հայր իմ , ըսաւ , ահա իմ Չիթենեաց լեռնա . աղաչէ Աստուծոյ որ ողորմի ինձ . . . »

Առաքեալը չէր սպասեր այսպիսի համբերատարութեան մը : Որչափ եւ քաջածանօթ էր մարդկային սրտին , չէր հասկըցեր որ անակընկալ դժնդակ հարուած մը կրնար այն աստիճան ճնշել մարդու հոգին եւ այնպիսի տրկարութեան մը մէջ ընկղմել որ վշտին տոկալու չափ զօրութիւն չթողուր վրան : Իր ամենասիրելին հարուածեալ , ինքն իսկ հարուածեալ հաւատաքննութենէն , այն դժոխքի պէս

անագորուն խոշտանգիչէն, ճնշեալ այն զար-
հուրելի մտածութեամբ թէ ալ յոյս չէր մնա-
ցած իրեն համար, Տոլորէզ անկարող եղեր էր
հեծելու, եւ միայն Յիսուսի պէս կըսէր. «Աստ-
ուած իմ, դարձուր ինէ այս բաժակը:»

Կրօնաւորը խօսք չըրաւ անոր. վասն զի
դիտէր որ այն սարսափելի վայրկենին մէջ ա-
մեն խօսք անզօր էին: Քաղցրութեամբ ձեռ-
քը բռնեց՝ իր թեւին տակ առաւ, եւ երկչոտ
տղու մը պէս քովն՝ ի վեր տանելով՝ իր բնա-
կարանին ճանքան բռնեց:

Օրհորդն ետին անգամ չդարձաւ իր պա-
լատին վրայ վերջին նայուածք մը ձգելու.
գլուխը կուրծքին վրայ ծռեց, եւ անշունչ
իր կարեկից առաջնորդին հետ դնաց:

Հազիւ փողոցին մէջ քանի մը քայլ առեր
էին, մութին մէջ մարդու մը զարնուեցան,
որ սուրը ձեռքն ուրիշի մը հետ շարաշար կըռ-
ւելով ինքզինք կը պաշտպանէր:

Մէկանց արթննալով իր թմրութենէն՝ Տո-
լորէզ սուր ճիչ մ'արձակեց: Մարդը ճանչե-
ր:

« Էսթէվան .

— Տոլորէզ . »

Քոչեցին երկուքը մէկէն: Այնչափ անդի-
մադրելի է այս ձգողական զօրութիւնը, մեր

բոլորտիքը շրջող այն աներեւոյթ եւ մագնիսական դօրութիւնը, որ մեր սիրած բանը մեզի մօտ հասած ժամանակ՝ իր բոլորը թրթռացող օդը զայն մեզ կը ճանչեցընէ :

Տոլորէզ բռնեց մէկդի քաշեց էսթէվանը :

Կռիւր դադրեցաւ վայրկեան մը : Դեռահասակ կին մը միւս կողմողին թեւն 'ի վար կախուած՝ դաշոյնը ձեռքէն առնելու կը ճըգնէր, եւ ջերմ պաղատանօք գթութիւն կը խնդրէր, զոր մարդը չէր ուզեր շնորհել :

« Չեմ կրնար, կըսեմ քեզ, գոչեց յանկարծ մարդը դողդոջ եւ խիստ ձայնով մը. չեմ կրնար, Քուլէվրինան, խօսք տուած եմ սպաննելու, պէտք է որ մեռնի : »

Այս խօսքն ըսելով՝ կրօնաւորին մօտ հասան, որ այս տարօրինակ դէպքէն խռովելով քանի մը քայլ յառաջ գացեր էր :

Դեռահասակ կինը ճանչեց զայն : Առանց թող տալու մարդուն ձեռքը՝ զոր ամենայն դօրութեամբ բռնած էր եւ մարդն ալ զայն ազատելու կաշխատէր, կինը կրօնաւորին ոտքըն ինկաւ :

Ո՛վ հայր իմ, ըսաւ, թող մի տար Մանօֆինայի որ սա երիտասարդն սպաննէ :

Առաքեանն է, ըսաւ կուարօն ճանչելով զայն, եւ գլուխը խոնարհեցուց Աստուծոյ

պաշտօնէին առջեւ :

— Մանօֆինան , ըսաւ կրօնաւորը՝ որ այս մարդոց ամենն ալ յանուանէ կը ճանչէր , ո՞վ տուաւ քեզ մարդ մեռցընելու պաշտօնը :

— Կարտունայի ընկերութիւնը , հայր իմ , որուն հոգևով մարմնով անդամ եմ . իմ արհեստս է հրեւել եւ խաւրեցընել , ինչպէս որ ձերն ալ խոստովանցընել ու քարոզել է : Ուստի թող տուէք որ պաշտօնս կատարեմ , որպէս զի այս գործին համար ինձի արուած ստակն յանիրաւի առած կամ գողցած չըլլամ :

— Մանօֆինան , ըսաւ կրօնաւորը , կը հաւատանա Քրիստոսի :

— Կուսարօն գլուխը խոնարհեցուց այս սուրբ անուան առջեւ :

« Անշուշտ , վերապատուելի հայր , ըսաւ , ես բարի կաթ ոլիկ մ'եմ , եւ ահա ասոր համար է որ արհեստս խղճի մտօք գործել կուզեմ : Արդարութիւնն ամեն բանէ առաջ է . խօսք տուած եմ սպաննելու , պէտք է որ ըսպաննեմ :

— « Ով որ որով կը զարնէ՝ սրով կը մեռնի » ըսաւ կրօնաւորը : Ճշմարիտ կըսեմ քեզ , Մանօֆինան , այդ բռնած արհեստդ արեան արհեստ մ'է , եւ Յիսուս կը սոսկայ արիւնէն , որդեակ :

— Եթէ այս արհեստէն հրաժարիմ ,
հայր իմ , հաւատաքննութիւնը՝ որուն ալ չի
պիտի ուզեմ ծառայել , զիս այրել կուտայ իբ-
րեւ հերետիկոս , կամ Սպանիայէն դուրս ել-
նելու կը հարկադրէ այն խեղճ մաւրիտանեանց
պէս՝ որոնք հազարներով Սէվիլէն կերթան :
Այն ժամանակի՞նչ կըլլայ այս կինը որ իմս է
եւ ես կապրեցընեմ :

— Զիս մի մտածեր , գոչեց Սէրէնան՝
կրօնաւորին անուշ խօսքերէն խանդաղատեալ .
աւելի լաւ է մեռնիլը՝ քան այսպէս ապրիլը :

— Բայց մեր եղբայրութիւնը կրնամ թո-
ղուլ , ըսաւ կուարօն :

— Ոչ , ըսաւ փիլիսոփայ կրօնաւորը՝ մը-
տածելով որ այս դժնեայ մարդը մէկէն 'ի մէկ
իր բովանդակ կենաց սովորյթներէն հեռացը-
նել դժուարին էր : Ոչ , կարտունայի եղբայ-
րութիւնը մի թողուր . բայց որովհետեւ մէկ
բարեգործութիւնը քանի մը մեղք կրնայ գը-
նել , դուն ալ այսուհետեւ հաւատաքննու-
թեան զոհերն ազատելու աշխատէ :

— Բայց խաբէութիւն ըրած կըլլամ , ը-
սաւ կուարօն՝ իր կարգին սահմանադրու-
թեանցն ասպետաբար հաւատարիմ կենալու
զարմանալի սղարտականութենէն բռնադատ-
ուելով :

— Դիտաւորութիւնն ամեն բան կընէ ,
պատասխանեց կրօնաւորը , դուն բարի գոր-
ծելու դիտաւորութիւն չպիտի՞ ունենաս , եւ
իրօք ալ բարի չպիտի՞ գործես : »

Կրօնաւորը դժկամակուժեամբ կը գոր-
ծածէր այս իմաստակուժիւնը որ ետքը հըռ-
չակաւոր կարգի* մը զէնքն եղաւ , միջոց մը
որով աշխարհ տակն 'ի վերայ ըրաւ եւ կեղ-
ծաւորութեան թոյնն ամեն տեղ տարածեց :
Բայց արդար խօսելով , եթէ երբէք իմաս-
տակուժիւն մը սուրբ եւ ներելի եղաւ , այն
վայրկենին էր , ուր Աստուծոյ պաշտօնեայն՝
մէկ մարդու մը վրայ ունեցած ազդեցութեամ-
բն ամբաւ չարեաց առաջքն առնելու համար՝
իր բոլոր համոզական դօրութիւնը դումարեր
էր :

Կուարօն երկիւղածութեամբ մտիկ կը-
նէր , բայց տարակոյսը չէր փարատած :

« Եւ դու , հայր , ըսաւ վերջապէս , մեր
եղբայրութեան դէմ ըրած անհաւատարմու-
թիւններս կը ներէ՞ք : Այն ժամանակ՝ ինչ որ
ձեր սրբութիւնն ուղէ՛ կը կատարեմ . վա-
սըն զի դուք միայն պատասխանատու պիտի
ըլլաք հոգւոյս փրկութեանը , եւ աներկմիտ

* Ճիզուրիթներուն :

եմ որ հողիս ձեր ձեռքն եղած ատեն աւելի
ասպահով է :

— Քեզ պիտի օրհնեմ ամեն անգամ որ
մարդ մը ազատես հաւատաքննութեան ձեռ-
քէն , եւ չգործելիք սպանութիւններէդ ալ
քեզ կարձակեմ : Գնա խաղաղութեամբ որդե-
կանկ , եւ Աստուած առաջնորդ ըլլայ քեզ : »

Այս խօսքին վրայ Կուարթօն ալ կրօնաւո-
րին ոտքն ինկաւ Սէրէնայի քով , եւ երկու-
քին գլուխը միասին խոնարհեցան զիրենք
օրհնող երկու ձեռքերուն ներքեւ :

« Մեզ նշանեց » ըսաւ կամաց մը Սէրէ-
նան ոտք ելած ատեն :

Եւ այն ընդվայրայած գնչուհին՝ որ ան-
տառաց թռչունին պէս իր վայրենի բնազդում-
ներէն զատ ուրիշ առաջնորդ չունէր , մաքուր
եւ երկիւղած սրտայուզութեամբ մը խայտաց-
վածն զի սիրոյ մէջ երկինք նշմարեր էր , հող-
ւոյն ամենամաքուր զգացման նուիրագործ ու-
թիւնը տեսեր էր :

Ասոնցմէ քանի մը քայլ անդին քաղա-
քապետին աղջիկն ու Էսթէվան իրենց վիշտն
ու արտառքն իրար կը խառնէին . իրար գրա-
նելու ուրախութենէն՝ իրենց յուսահատու-
թիւնը գոնէ այնչափ մը ափփեր էր , որ մի
կուրծքերնին չէր տոչորեր , եւ դուրս ծաւա-

լելու կարող կըլլար : Յոյսը , տխուր վաղանցիկ եւ հեռաւոր յոյս մը , այն յոյսը՝ որ երբէք բարձի թողի չընէր սէրը , իրենց աղօտ երկընքին մէջ կը ժպտէր երեսնուն :

« Տես , ըսաւ Սէրէնան՝ որուն կանացի ազդումն ամեն բան գուշակեր էր , տես, Մանօֆինան , որչափ թշուառ պիտի ըլլայինք եթէ այս խեղճ օրիորդը՝ փոխանակ իր սիրելի նշանածը գտնելու՝ անոր դիակին հանդիպած ըլլար :

— Քուէվրինան , ըսաւ կուարօն , ինձ կը թուի որ Առաքեալին ձայնը երկրորդ կեանք մը տուաւ ինձ , եւ հիմա ես առաւօտեան մարդը չեմ : Յիսո՛ւս , թափած այնչափ արիւններս քաւելու համար որչափ մարդ պէտք է ազատեմ : Կը տեսնեմ որ կարտունայի ընկերութենէն բաժնուիլ պէտք է :

— Առաքեալն ըսաւ որ մէկ բարեգործութիւնը քանի մը չար գործ կը զնէ , պատասխանեց Սէրէնան . ուրեմն անհոգ եղիր , սիրելիս , եւ մնացածը մի մտմտար : Նորին վերապատուութիւնը քու հոգւոյդ խնամքն իր վրայ առաւ , եւ եթէ մենք կարտունայէն բաժնուինք , ամենաբարին Աստուած՝ որ անասուններն իսկ կը կերակրէ , մեզի պէս երկու խեղճ քրիստոնեայներն անօթի չթողուր : »

Կուարօն եւ ընկերը մեկնեցան :

Էսթէվան եւ Տոլորէզ միասին լալու զբաղելով ամեն բան մոռցեր էին :

« Եկէք , որդեակներս , ըսաւ կրօնաւորը . Տոլորէզիս ապաստանարան մը ընտրելու վրայ վաղը կը խորհինք :

— Հայր իմ , ըսաւ Էսթէվան , կարծեմ որ աւելի լաւ կըլլայ փախչիլ այս թշուառ Սպանիայէն՝ որ իր ամենէն անարատ զաւակներն անգամ կը լափէ :

— Փախչի՛լ երբոր հայրս բանտին մէջ կը տառապի , գոչեց Տոլորէզ : Ի՞նչպէս կրցար այդ բանը մտքէդ անցունել , Էսթէվան :

— Բայց ինքզինքդ ալ անօգուտ տեղը կը կորսնցընես , ըսաւ երիտասարդը : Դուն մինակ չուէ , Տոլորէզ . գնա եւ Սպանիայէն դուրս տեղ մը սպասէ . իսկ ես իմ վարկովս ու հարրատութեամբս հայրդ ազատելու աշխատիմ հոս :

— Ողջերն ազատել , ըսաւ կրօնաւորը մեղմով մը , երբոր հաւատաքննութիւնը մեռելոց աճիւններն ալ չյարգեր :

— Լռեցէք , հայր իմ , ըսաւ Էսթէվան որ անոր այս խօսքը լսեր էր . ամեն յոյս մի վերցընէք այս տարաբաղդ աղջկան սրտէն :

— Ես առանց հօրս չեմ մեկնիր Սպանիա-

յէն , ըսաւ Տօլորէզ անվեհեր հաստատամտութեամբ :

— Խեղճ տղայ , ըսաւ մտքէն կրօնաւորն յուզեալ սրտիւ . դուն ալ ունիս այն անձնութեան հոգին՝ որ մարդը միշտ Գողգոթա կը տանի :

— Աղջիկս , ըսաւ , ես քեզ վաղը կարմելեանց վանքը կը տանիմ :

— Էսթէվան , ըսաւ աղջիկը կամաց մը , զգոյշ կեցիր , հաւատաքննութիւնն աչքը չորս բացած է վրադ : »

Կրօնաւորին տանը առջեւ հասած էին : Նախ Տօլորէզ ներս մտաւ . Էսթէվան դռնէն ներս մտնելու չհամարձակելով դուրսը կեցաւ :

« Երկուքդ ալ եկէք , որդեակներս , ըսաւ Ֆրանչիսկեանը . գիշերը միասին կաղօթենք . եկէք , վասն զի վաղն իրարմէ պիտի բաժնուիք : »

Էսթէվան անշշունջ ներս մտաւ անոնց ետեւէն , եւ դուռը գոցուեցաւ :



ԳԼՈՒԽ Է .

ԷՍԹԷՎԱՆ ՎԱՐԿԱՍ

Այս անցքերն անցնելէն տասնեւմէկ տա-
րիի չափ առաջ՝ Սէվիլի արքեպիսկոպոս Ալ-
ֆօնս Մանրիք կարդինալը Քասթիլիայի ընդ-
հանուր հաւատաքննիչ եղած էր : Արդէն եր-
կար ժամանակէ՛ի վեր , Մանրիքինախորդնե-
րուն օրովն ալ , Սպանիացիք հաւատաքննու-
թեան դէմ ունեցած ատելութիւննին յաճախ
յայտնած էին դաւադրութիւններով , ապրս-
տամբութիւններով եւ բուն գանդատներով :
Օտար ազգերն՝ իրենց մասնաւոր շահը նկա-
տելով , եւ թագաւորաց անձնասէր տկարու-
թենէն օժանդակեալ , վատ հաճոյակատարու-
թեամբ մ'անկարեկիր կեցած էին Սպանիոյ
թշուառութեան առջեւ :

Ուստի հաւատաքննութիւնն ալ աներ-
կիւղ եւ համարձակ՝ երկիրը խարոյկներով ծած-
կեց , դաշտերը մշակներէ զրկելով ամլացուց ,
եւ այս հարուստ , արի , ազատասէր , փառա-
սէր եւ արուեստասէր երկիրն ընդարձակ դամ-
բարան մը եղաւ , ուր մեռելոց տեսիլը կեն-

դանիները սարսափեցուց, ամօթալի աստղարէզ մը՝ ուր մարդիկ առանց մարտնչելու կիյնային, ուր դահճին ձեռքն՝ ամենէն անարատ ճակատներուն վրայ վատանունու թիւն կը դըրոշմէր այն գարշատեսիլ բռնաւորին ակնարկութեամբը՝ որ բոցէ թագ մ'ու երկաթէ դաւաղան մը կը կրէր :

Սակայն մինչդեռ թագաւորաց վատ քաղաքականութիւնն այս գեղեցիկ երկրին այսպէս աւերմանը թոյլտուութիւն կընէր, բազմաթիւ ազնուական Սպանիացիներ, սիրոյ եւ ազատութեան բոցով վառեալ արի սրտեր, իրենց կենաց վտանգն աչքերնին առնելով՝ բարձրաձայն կը բողոքէին հաւատաքննութեան ատենին անօրէնութեանցը դէմ :

Մարդկութեան իրաւունքը պաշտպանող այս արի նահատակներուն մէջ կային ազնուական Քասթիլիացիներ, գիտնական եւ սրբակրօն եպիսկոպոսներ եւ մինչեւ իսկ Քասթիլիայի խորհրդարանին անդամներ : Սպանիայարատեւ ապստամբութեան վիճակի մէջ էր այն ժամանակ, բայց հաւատաքննութեան դէմ ելած այս ազնիւ խաչակրութիւնը թագաւորներէն օգնութիւն չգտնելով, եւ մանաւանդ չկրնալով զօրեղապէս պաշտպանուիլ ժողովրդէն՝ որ մոլեռանդութեան լուծին ներ-

քեւ ճնշեալ , եւ իր յետին աստիճանի տգիտութեամբն իր ճշմարիտ ուժն հասկնալու անկարող , տարակուսեալ եւ անճրկած կեցեր էր այն մարդախոշոշ վիրագին առջեւ . ուստի շատ շատ ըլլալիքը մերթ ընդ մերթ քանի մը տկար եւ պատիր խստութիւններ էին , որ մեծ դժուարութեամբ ձեռք կը բերուէին քանի մը յանդգնագոյն հաւատաքննիչներու դէմ : Ինչպէս որ քսանեւվեց տարի առաջ Փիլիպպոս Ա . թագաւորը պաշտօնէ դադրեցուցեր էր Տէգա անուն մեծ հաւատաքննիչն , եւ անոր բարեկամ Վուսէրօ՝ Քօրտուի հաւատաքննիչը , որոց անգթութիւնն այն աստիճան դժնէութեան հասեր էր , որ ձեռուրնին ինկած ամեն ամբաստանեալները՝ թէ խոստովանէին եւ թէ ոչ՝ հերետիկոսութիւննին ծածկող կը հրատարակէին , եւ հետեւաբար իբրեւ սուտ ապաշխարողներ մահուան կամ մշտնջենաւոր բանտարկութեան կը դատապարտէին :

Հաւատաքննութեան թշնամի եղող Սպանիացի ազնուականաց մէջ էսթէվան Վարկասնչանաւոր էր իր ցասման խստութեամբը : Այն հին ականաւոր արաբ գերդաստաններուն մէկէն իջած էր , որոնք Արէնատայի առնուելէն առաջ կամովին քրիստոնէութեան դարձեր էին :

Երիտասարդ , աշխոյժ ու եռանդուն ,
Էսթէվան այնպիսի այրական ու բանաստեղ-
ծական գեղ մ' ունէր , որ առաւել խելքի կորո-
վութեան քան թէ մարմնական ուժեղութեան
նշանակ էր : Դէմքը թխորակ , աչքերը սեւ ,
աղու եւ սովորաբար հանդարտ , հասակը
բարձր , ճապուկ ու վայելչագեղ , որ մաւրի-
տանացի արաբաց գեղանի ցեղերուն յատուկ
առանձնաշնորհութիւնն էր , եւ իր դեղնած
ճակտին վրայ սեւ ու փայլուն մաղերը խիտ
ստուեր մը ձգած՝ կը պսակէին այն գեղեցիկ
գլուխը՝ որ ոսկեղէն կամ մանաւանդ դափ-
նեայ պսակ մը կրելու համար ստեղծուած էր .
վասն զի Էսթէվան զմայլեցուցիչ բանաստեղ-
ծութիւն մ' եւ համոզիչ ճարտարխօսութիւն
մ' ունէր , մանաւանդ զօրաւոր փիլիսոփայու-
թիւն մը՝ որ արժանի էր իր վարդապետին :

Էսթէվան Աւետարանով սնեալ էր :

Առանց մասնաւոր աղանդի մը հետեւելու ,
առանց Լուտէրի կամ Մէլանքթոնի վարդա-
պետութիւններն ընդունելու , առանց Արք-
նակնունք կամ Լուսաւորեալ ըլլալու , որոց ա-
մենն ալ անտեղի ծայրայեղութիւններ կերե-
ւէին իրեն , Էսթէվան իր կեանքը Քրիստոսի
ամենամաքուր բարոյականին վրայ կանոնա-
ւորեր էր : Իր փիլիսոփայութիւնը սէր ու գը-

Թուժիւն էր , վարքն ալ նոյնպէս սէր ու գը-
Թուժիւն էր միշտ եւ ամեն կերպով :

Իր հոգւոյն վսեմութիւնը , համոզմանց
խորութիւնն ու խօսքին ճարտարութիւնը՝ բազմ-
մութիւնն իր ետեւէն քաշել տանելու հրա-
պուրիչ զօրութիւնը կուտային այս երիտա-
սարդ փիլիսոփային : Իր ձայնէն ժողովուրդը
գրգռելով ու կատղելով կրնար ուրք ելնել
ու ահաւոր ատեանը դողացընել : Հայրը 1502
Թուին Քասթիլիայի ժողովին անդամ ըլլալով ,
իր աներկիւղ ընդդիմութեամբը մեծապէս
նպաստեր էր այն մեծ ատեանը կամ միաբա-
նութիւնը հաստատել տալու , որուն գործը
պիտի ըլլար ծայրայեղութիւնները դապել , եւ
անօրէն Ղուսէրօին ըրած անիրաւութիւնները
դարմանել : Գժբաղդաբար , այս անագան եւ
Թերի միջոցը սլատիր զինադուլ մ'եղաւ , զոր
հաւատաքննութեան դարչատեսիլ հիղրան
վայրկեան մը շնորհեց Սպանիացւոց :

Վարկաս պատանին մեծնալով ու չափա-
հաս մարդ ըլլալով՝ նոյն զեղծումներուն եւ
Թերեւս աւելի մեծ գէշութիւններու գէմ պի-
տի մաքառէր :

Ս.յսպիսի մարդ մը սրչափ մեծ իշխանու-
թիւն ունենալու էր արդեօք Տոլորէզի պէս
հոգւոյ մը վրայ :

Մաքուր սէրը՝ կատարեալ սէրը՝ հաս-
րակ սրտերու մէջ չծնանիր, զօրաւոր էակի մը
առ միջակ կամ տկար էակ մը ունեցած սէրն ալ
ճշմարիտ սէր չէ, այլ սխալում կամ տկարու-
թիւն եղած կըլլայ: Բայց երկու այնպիսի հո-
գիներու կատարեալ միութիւնը՝ որ զանոնք
մի եւ նոյն կեանքով կապրեցընէ, մի եւ նոյն
վիշտերով կը տառապեցընէ, եւ անոնց բաղ-
ձանքն ու կամքն այնպէս կը միացընէ, որ կը
թուի թէ երկու անձի վրայ մէկ էութիւն մը
կայ, այն սէրը երկու նման հոգիներու մէջ մի-
այն կը գոյանայ, որոնք կատարեալ համակ-
րութեամբ մը կապուած են իրարու հետ:

Էութեամբ զօրաւոր, վսեմ եւ անարատ
սրտի տէր, ճշմարտութեան սիրահար, որ ա-
մեն սուտ կամ վատ սկզբունքներն եւ կեղծա-
ւոր ու խաբեբայ գործերը չարաչար կատէր,
Տոլորէզ՝ կոյր վատահութիւն մ'ունէր Էսթէ-
վանի վրայ, վատահութիւն մը՝ որ խորին զմայ-
լումէ մը կը ծնի: Իրենց հոգւոյն վսեմու-
թիւնը, իրենց նորածաղիկ կենաց անագորուն
արկածները, իրենց փիլիսոփայական բայց եր-
կիւղած ձգտումները եւ իրենց սրտին կատար-
եալ մաքրութիւնը կարծես թէ հոգեւորեր
էին իրենց սէրը:

Իրենց ծնողաց կամօքն իրարու նշանուած

էին , բայց կ'զգային որ իրենց միութիւնը մարդոց հաճութենէն կախեալ չէր . արդէն իրենց հոգիները լռին եւ անդրժելի դաշնադրութեամբ մը նշանուէր էին իրարու , եւ մահըն անգամ չէր կրնար զանոնք իրարմէ բաժնել : Ասանկով իրենց սէրն արտաքուստ խաղաղ էր : Ուրախութեամբ բայց առանց յուզման եւ անհամբերութեան կ'սպասէին այն ժամանակին որ իրենց միութիւնը կատարեալ պիտի ընէր աշխարհի առջեւ : Կ'զգային որ այն նուիրագործութիւնը կրնար իրենց երջանկութիւնն աւելցընել . բայց հանդարտ սրտով կ'սպասէին այն երջանկութեան . այնչափ հոգին նիւթոյն վրայ կը տիրէր անոնց անձին մէջ :

Տոլորէզ կրօնաւորին տունն եղած օրը պարզօրէն պատմեր էր անոր իր կեանքը , իր բարեպաշտ տղայութիւնը , իր ամբիժ ու լուսաւորեալ մանկամարդութիւնը եւ էսթէվանի վրայ ունեցած սէրը :

Կրօնաւորն ալ՝ գորովալից եւ ներողամիտ արտի մը տէր , որուն մէջթերեւս մարդոց կամ մահուան ձեռօք խորտակուած անմեղ սիրոյ մը ծածուկ յիշատակն՝ անունը միայն փոխած էր եւ հիմա գթութիւն կը կոչուէր , կրօնաւորը Տոլորէզի սրտաշարժ խոստովանութենէն խանդաղատեալ , առանց վարանելու երիտա-

աարդին ըսեր էր .

« Ներս եկո նշանածիդ հետ . մաքուր սէ-
րըն Աստուծոյ անհաճոյ չէ . անոր ամենակա-
րող զօրութեանը յարգանք մ'է : »

Եւ երբ երեքն ալ մէկ տեղ եկան այն խո-
նարհ բնակարանին մէջ՝ որուն սպիտակ որ-
մերը Գողգոթայի վրայ խաչեալին պատկերո-
վը միայն զարդարուած էին .

« Որդեակներս , ըսաւ կրօնաւորը , օրհնե-
ցէք զԱստուած որ ձեզ կը փորձէ . շարերուն
հալածանքը մէկ մէկ պսակ են հանդերձեալ
կենաց համար : Երանի անոնց որ աղօթքով
եւ հեծութեամբ կանցունեն իրենց կեանքն
աշխարհիս վրայ .

— Հայր իմ , պատասխանեց երիտասար-
դը , քու խօսքերդ սուրբ եւ մխիթարար են ,
եւ ես ալ քեզի պէս կ'օրհնեմ այն ձեռքը որ
ծանրացած է մեր վրայ . բայց մենք՝ առոյգ եւ
կորովի կենօք երիտասարդքս՝ Սպանիացի
ասպետքս՝ որոց հարքն անկեղծաբար ծառա-
յեցին միշտ քրիստոնէական կրօնին , կամ
ինքնայօժար ընդունեցին զայն հաւատով եւ
համոզմամբ , մենք՝ որ հաւատարմութեամբ
կը պահենք Քրիստոսի օրէնքը , այն սիրոյ եւ
ներողամտութեան օրէնքը , կրնանք առանց
վատութեան կրել ամբարիշտ իշխանութեան

մը լուծը , որ յանուն Աստուծոյ անպատուհաս
ոտնակոխ կընէ ամեն աստուածային եւ մարդ-
կային օրէնքները : Այսպիսի իշխանութեան
մը դէմ ապստամբիլը պարտականութիւն մը
չէ : »

Կրօնաւորը քանի մը վարկեան կեցաւ ա-
ռանց պատասխանելու . խորունկ մտածու-
թեան մէջ ինկած կերեւէր :

« Որդեակ , ըսաւ վերջապէս , կը հաւա-
տամ որ հաւատաքննական իշխանութիւնը
դեղծում մ'է որուն հետ պէտք է պայքարիլ
խօսքի սրովը , տրամաբանութեամբ , ճշմար-
տութեամբ , եւ ոչ ապստամբութեամբ , որ
բարկութեան ու ատելութեան քոյրն ըլլալով
կոյր , անկանոն , անսանձ եւ անչափ է . որ միշտ
շատ հեռուն կերթայ կամ պէտք եղածին չափ
չերթար . գաւաթ մը ջուր է մեծ հրդեհի մը
վրայ թափուած , որ փոխանակ մարելու՝ բո-
ցերուն կատաղութիւնը կը գրգռէ :

— Այո , պատասխանեց Էսթէվան ազդու
շարժմամբ մը . բայց ճարտարախօս լեզունե-
րուն գելոց կը դնեն , ճշմարտութիւնը նիգե-
րու տակ կը խեղդեն , եւ տրամաբանութիւ-
նը . . . ո՛հ հայր իմ , դուն բաւական գիտես որ-
չափ վարպետ են անոր հետ մաքառելու : Հա-
ւատաքննութեան սեւ հոգին զայն կը խեղդէ

ամեն տեսակ նուրբ իմաստակութեանց կապերով կամ անպատասխանատու բացարձակութեան կրակով . ամեն բան կը մեռցընեն « Յանուն Աստուծոյ » ըսելով , եւ տգէտ ժողովուրդն ալ գլուխը կը ծռէ , վախնալով որ եթէ մտիկ չընէ կամ դէմ կենայ՝ սրբապիղծ կըլլայ :

— Ժողովուրդն յանձնառութեամբ կը կըրէ , ըսաւ կրօնաւորը , վասն զի ամեն ժամանակ համբերատարութիւնն անոր զօրութիւնն է . բայց երբոր լուծէն չափազանց յոգնելով ոտք կելնէ եւ զայն կը թոթափէ , ի՞նչ կը շահի . տէրը միայն կը փոխէ : Իր արիւնն ու ճիւղերը մեծերուն , հզօրներուն , ապստամբութեան գլուխներուն միայն կը ծառայեն . իսկ ինք՝ միշտ գերի ու տառապեալ կը մնայ :

— Հայր իմ , ըսաւ Էսթէվան լուրջ ձայնով մը . երբոր գլուխները բարի մարդիկ են՝ ժողովուրդը երջանիկ է . դժբաղդութիւնը հնազանդութեան մէջ չէ , այլ հրամայողին դէմ եղած ատելութեան մէջ է :

— Անշուշտ , պատասխանեց կրօնաւորը . վասն զի ան որ հրամայելու արժանի է՝ կամովին ինքզինք եղբայր եւ հաւասար կընէ իր հնազանդեալներուն , եւ միայն խելքով գերագոյն կը մնայ անոնցմէ : Նաւուղիդ մ'է՛ որ

հաւատեաց փրկու թիւնն ապահովելու համար
դեկը կը վարէ :

— Հայր իմ, ըսաւ օրիորդը կրօնաւորին
խօսքն ընդմիջելով, ի՞նչ համեմատութիւն
կայ իրաւամբ կամ ընտրութեամբ կառավարող
գլխու մ'եւ այս բարբարոս իշխանութեան
մէջ՝ որ յանուն Աստուծոյ կանամարդացընէ
զՍպանիա եւ մահուան սեւ սաւանովը կը ծած-
կէ :

— Տղորէզ, ըսաւ Էսթէվան կիրքով .
եթէ կառավարողը բարի հովիւ մ'ըլլար, չէր
թողուր որ անյագ շահադէտներ իր ոչխարնե-
րուն բուրդը խուզեն եւ մկբատը մինչեւ ա-
նոնց մարմնոյն մէջ խոթեն, որպէս զի բուրդն
ու արիւնը միանգամայն քաղեն : Թագաւորին
կողմանէ հաւատաքննութեան եղած թոյլ-
տուութիւնը կծծի քաղաքականութեան մը
հաշիւ է : Ոսկիին սէրն է որ թագաւորութիւ-
նը խարոյկներով կը ծածկէ : »

Կրօնաւորն աչքը դէպ 'ի երկինք վերուց
եւ երկու կաթիլ արտսուք սահեցան իր դեղ-
նած այտերն 'ի վար :

« Որդեակ, ըսաւ, Աստուած պիտի լու-
սաւորէ թագաւորներն իրենց ճշմարիտ շա-
հուցը վրայ, եւ ապշու կարեկցութեամբ մը
պիտի շարժէ անոնց սիրտը : Աւետարանի քա-

րողչաց ձայնը վերջապէս պիտի լսուի : Արդէն
ասոնցմէ շատերը դիւցազնական քաջութեամբ
կը մաքառին մոլեռանդութեան սխալներուն
դէմ , եւ իրենց կենաց վտանգն աչք առնելով
Յիսուսի Քրիստոսի անարատ վարդապետու-
թիւնը կը քարոզեն իր սկզբնական պարզու-
թեամբը : Յուսանք անոնց վրայ , որդեակ .
համոզման ուժը զինուց ուժէն զօրաւոր է , եւ
ճշմարիտ քրիստոնէից յաղթութեան օրը թե-
րեւս հեռու չէ :

— Հայր իմ , ըսաւ Էսթէվան , մեզի համ-
բերատարութիւն ու յանձնառութիւն կը պատ-
ւիրես . եւ սակայն մեր եկեղեցեաց մէջ քարոզ
տուած ժամանակդ ճարտարախօս ձայնդ կը
բարձրացնես մեր օրուան դպիրներուն ու փա-
րիսեցիներուն դէմ . վասն զի քաջ համոզուած
եմ որ դու այն արի ըմբիշներէն ես , որոնք մին-
չեւ անգամ դահճաց սակրին ներքեւ բանիւ եւ
գործով կը մաքառին Դոմինիկոս Աիւսմանի
աշակերտներուն դէմ , այն մոլեռանդ կրօնա-
ւորին՝ զոր Հոռմի աթոռն 'ի թիւս սրբոց դա-
սած է :

— Ես Աստուծոյ ամենախոնարհ ծառան
եմ , պատասխանեց կրօնաւորը ճշմարիտ խո-
նարհութեամբ . իսկ սրբոց պսակը Աստուած
միայն կրնայ տալ , վասն զի սրտից խորերը կը

տեսնէ :

— Հայր իմ, հարցուց Էսթէվան, զու ալ կողմնակի՞ց ես այն հռչակաւոր նորոգչին՝ որ Նուտեր կը կոչուի, եւ որ այնչափ գիտուն աստուածաբաններ, իշխաններ ու եպիսկոպոսներ իր նոր վարդապետութեանը դարձուց:

— Ես քրիստոնեայ եմ, պատասխանեց կրօնաւորը . Քրիստոսի բերած ու մեզ տուած պարզ, խոնարհ եւ քաղցր օրէնքին վրայ վիճաբանելը սրբապղծութիւն կը թուի ինձ : Մոլար վարդապետութիւններ սովրեցընելով մարդ անհասկանալի խաւարի մէջ կը կորնչի . եւ հաւատքն ու սէրը որ կրօնքին հիմն են՝ կը պաղին կամ կը խանգարին . վասն զի ամեն բաժանում կամ հերձուած՝ իր հետը դառնութիւն կամ տարակոյս կը բերէ : Քրիստոնէական կրօնքը խիստ պարզ է . ի՞նչ պէտք է մարդկային կրից ծառայեցընել զայն :

— Հայր իմ, ըսաւ Էսթէվան, քու կրօնքըդ իմ եւ Տոլորէզի կրօնքն է . ասոր համար մեզ հերետիկոսի կարգ դրած են :

— Քրիստոս ալ իբրեւ ամբարիշտ եւ հայհոյիչ դատապարտուեցաւ . ինչո՞ւ կը գանգատիս, որդեակ . վարդապետութեան համար վիշտ կրելը գեղեցիկ բան է : »

Տոլորէզ զմայլելով մտիկ կընէր այս երկու

մաքրահաւատ մարդիկը , եւ հաւատաքննու-
թեան երկիւղը՝ որ զինքն այնչափ տաղնա-
պեցուցեր էր , կը փարատէր այս վսեմխորհր-
դածութիւններուն առջեւ՝ որոնք իր արիու-
թիւնը կը կազդուրէին :

Այսպէս անցուցին այն դժնդակ գիշերը՝ որ
երկու ծաղկահասակ խօսեցեալներուն բաղ-
դին մէջ այնչափ տխուր փոփոխութիւններ յա-
ռաջ բերեր էր : Արօնաւորը զանոնք կը մխի-
թարէր՝ աղօթելով հետերնին , եւ անոնց համ-
բերատարութիւն ազդելով՝ յոյսերնին աւելի
կը զօրացընէր :

Քունի պէտքն զգալի չէր եղեր : Երբ որ
մարդու հոգին բուռն կերպով գրգռի , անոր
մարմնոյն կիշխտէ , եւ այն ժամանակ մարմինն
սարկաբար կը հնազանդի անոր , եւ կը թուի
թէ Քիզիքական կարեաց վրայ հոգւոյն այս
տիրապետութիւնը՝ խելքին զօրութիւնն ու
զգաստութիւնը կաւելցընէ :

Այնպիսի վեհանձնական ջերմութիւն մը
կը պտըտէր օրիորդին երակներուն մէջ , որ
այն միջոցին մարտիրոսութիւնն ուրախու-
թեամբ կը կրէր՝ եթէ իր մահը կրնար եղբայր-
ներն ազատել , եւ անդորրութիւնն ու ազա-
տութիւնն տալ Սպանիոյ :

Առտուան դէմ աղօտ լոյս մ'արդէն իր

տարտամնչոյլները կը խառնէր սենեկին մէջ
վառող կանգեղին պայծառ լուսին հետ . փո-
ղոցին դուռը մեղմով զարնուեցաւ :

Էսթէվան եւ Տոլորէզ ակամայ դողացին :
« Մի վախնաք , ըսաւ կրօնաւորը . ան-
շուշտ մեր բարեկամներէն մէկն է . »

Նորատի կրօնաւոր մը՝ որ սեւ մազէ սքեմ
մը հագած եւ մէջքը ձերմակ շուան մը կապած
էր՝ կրօնաւորին թեւերուն մէջ ինկաւ եւ գը-
լուխը կուրծքին դնելով

« Որդիդ է , ըսաւ , որ քեզի պէտք ունի :
— Բարով եկար , ըսաւ կրօնաւորն անոր
ձակատը համբուրելով . խօսէ որդեակ , ի՞նչ
է հոս գալուդ պատճառը : »

Երիտասարդ կրօնաւորը նստաւ :

« Խօսէ , որդեակ , ըսաւ նորէն կրօնաւո-
րը երկու խօսեցեալները ցուցընելով . ասոնք
երկու եղբայր են , երկու բարեկամներ են .
խօսէ , ի՞նչ կուզես :

— Հայր իմ , ըսաւ նորատի կրօնաւորը ,
ինձի տուած դասերդ գործադրել ուզեցի .
խորհեցայ քեզի պէս թէ միայն քարոզելը բա-
ւական չէ . այլ հոգւոց խնամքներուն վրայ
մարմնոց խնամքն ալ պէտք է աւելցընել :
Քանի մը բարեպաշտ անձանց նուէրներուն
օգնութեամբ եւ քանի մ'ալ ականաւոր մար-

դոց վսեմ անձնուիրութեան շնորհիւ՝ որոց եռանդուն ու սիրավառ հոգին աշխարհիս ուրախութիւններէն համ չկրնար առնուլ, բաւական թուաւոր ընկերութիւն մը կազմեցի՝ որուն միակ բաղձանքն ու նպատակն է իր նմանեացը օգտակար ըլլալ եւ անոնց թշուառութիւնն սփոփել: Մեր խնամօքը Քատիքսի մէջ խնամատուն մը շինուեցաւ հիւանդ քրիստոնեայներու համար, զորոնք մեր ձեռօքը պիտի դարմանենք, եւ ոմանց մարմինը բժշկած ժամանակնիս՝ հոգւոյն վէրքերն ալ պատելու պիտի ջանանք:

— Այդ խորհուրդդ սուրբ է, ըսաւ կրօնաւորը. այդպիսի ազնիւ նպատակ ունեցող կեանքը գեղեցիկ է:

— Սիրելի վարդապետ, ըսաւ նորաստի կրօնաւորը, մէկ բան մը միայն զիս կը տազնապեցընէ: Մարդկային վիշտերը խիստ շատ եւ զանազան են. անոնցմէ ո՞րը փնտռենք ըսփոփելու համար:

— Որդեակ, պատասխանեց վարդապետը, Քրիստոսի վշտացեալ անդամոց մէջ կան՝ որոց ցաւերն իրենց նմանեաց գթութեանը արժանի չհամարուելէ զատ՝ ընդ հակառակն ատելութեան եւ արհամարհանաց ենթակայ կըլլան: Համօրէն ընկերութիւնը զանոնք կը

մերժէ , եւ անոնց մարմնական չարչարանքը
չտկարացընելէ եւ չսփոփելէ զատ , անոնցմէ
բազմապատիկ դժնդակ բարոյական ցաւեր ալ
կաւելցընէ անոնց վրայ : Ահա այս տեսակ վըշ-
տակրեալներն են ամենէն ողորմելին , եւ ա-
սանկները պէտք է ժողովել ու մխիթարել :

— Ո՛հայր իմ , գոչեց աշակերտը , դուն
միշտ իմաստուն ես , եւ աւետարանական սէ-
րըն ու գթութիւնը քու բերնովդ կը խօսի :
Անասուգութիւնս փարատեցիր : Այո՛ , դըժ-
բաղդներուն մէջ ամենէն աւելի վշտացեալ-
ները պէտք է ընտրենք . ամեն անոնք՝ որոց
քով մարդ չհամարձակիր մօտենալու : Այսպի-
սի թշուառները՝ որչափ աւելի լքեալ , որչափ
աւելի յուսահատեալ ըլլան՝ այնչափ առաւել
կը մխիթարուին եւ կուրախանան : Շնորհակալ
եմ , հայր սուրբ . խեղճ հիւանդներս քեզ պի-
տի օրհնեն , վասն զի անոնց հայրը դու ես : »

Յետոյ երկար խօսակցեցան իրարու հետ՝
թէ եւ գիշերն անքուն անցուցեր էին . իրենց
սրտին ջերմեռանդութիւնը մարմնական խոն-
ջութիւններն զգալի չէր ըներ իրենց : Նորա-
տի կրօնաւորն հաստատել ուզած կրօնաւո-
րական նոր կարգին կանոնադրութիւնն իր վար-
դապետին ներկայացուց , եւ մէկ տեղ քննե-
ցին անոր իմաստութիւնը , թիւը , օգտակա-

բուժիւնը : Երկու խօսեցեալներն ալ անոնց
բոլոր խօսակցութենէն սա արդար եւ ճշմա-
րիտ եզրակացութիւնը հանեցին . այսինքն թէ
քրիստոնէական կրօնին բոլոր գործնականը սա
միակ պատուիրանին մէջ կը բովանդակի .

« Սերեցե՛ք զիմեանս » :

Այսպէս հիմնեցաւ այն հռչակաւոր կար-
քը որ մինչեւ այսօր կը շարունակէ « Հիւ-
րընկալք սրբոյն Յօհաննու » անուանով . վասն
զի նորատի կրօնաւորն ուրիշ մարդ չէր՝ բայց
եթէ այն մեծ քարոզիչը՝ որ յետոյ սուրբ Յով-
հաննէս Աստուծոյ անուանով ճանչուեցաւ : Այս
անգամ գոնէ Հռոմ արդարութիւն ըրաւ՝ սրբ-
բոց պսակ շնորհելով անոր : Սպանիա արդէն
երկար ժամանակէ՛ր վեր այս պսակը նուիրած
էր անոր :

Եկեղեցւոյն զանգակն առաւօտեան ա-
ղօթքը հնչեց :

Տոլորէզ եւնչանածը երկու կրօնաւորնե-
րուն հետ աղօթքի կեցան :

Արեւը ծագելու վրայ էր :

« Որդեակներս , ըսաւ կրօնաւորը , պէտք
է որ բաժնուինք իրարմէ : Այս օրիորդը կու-
սանաց վանքը պիտի տանիմ , ուր հոն խաղա-
ղութեամբ Աստուծոյ կամացը սպասէ : Իսկ
դու , երիտասարդ , ահա սովրեցար իմ միայնա-

րանս . ինչ որ երէկն շանած իդ ըսի , նոյնը քեզ
ալ կըսեմ . « Դուռս միշտ բաց է վիշտ մը ու-
նեցողներուն : »

Տոլորէզ տխուր եւ համբերատար նայ-
ուածք մ' ուղղեց դէպ 'ի երկինք :

Էսթէվան չխօսեցաւ . հոգւոյն մէջ ծա-
գած պատերազմը երեսին դեղնութ ենէն մի-
այն կը հասկցուէր : Ուժով մը սեղմեց իր նշա-
նածին ձեռքը , միւս ձեռքն ալ կրօնաւորին
երկնցուց , եւ դուրս ելաւ դնաց սա միակ խօս-
քըն ըսելով .


« Արի ութի՛ւն : »

Կաթիլ մը արտսուք սահեցաւ օրիորդին
դժգոյն այտին վրայ : Կրօնաւորն ալ դուրս ե-
լաւ իր սիրելի աշակերտին հետ :

Քանի մը վայրկեան ետքը նորէն եկաւ
կոչիկներն հագած եւ աջ ձեռօքը փեկոնէ գա-
ւազանի մը յեցած :

Տոլորէզ Փրկչի պատկերին առջեւ ծունր
դրեր էր : Կրօնաւորը ներս մտնելուն՝ օրիորդը
դլուխն անոր դարձուց , եւ տեսնելով որ պատ-
րաստ էր երթալու , մէկէն ոտք ելաւ , եւ ցա-
ւագին հառաչք մը կուրծքին մէջ խզգելով

« Հայր իմ , ըսաւ , պատրաստ եմ հետդ
գալու : »



ԳԼՈՒԽ Ը .

ՄԱՆՕՖԻՆԱ

Քաղաքապետին աղջիկն իր առաջնորդին պահպանութեան ներքեւ մնաց : Քսինք Մանօֆինայի , զոր դարձի մը տպաւորութեան ներքեւ թողուցինք :

Կուարօն իր ընկերին հետ յամրաքայլ կարտունայի պալատին ճանքան բռնեց : Լռութեամբ կերթային . միայն՝ Մանօֆինա մերթ ընդ մերթ Սէրէնային թեւը խանդաղատանօք կը սեղմէր , եւ ասով իր ըրած առաջադրութեան մէջ հաստատուիլ կուզէր :

Այսպէս հասան այն աւերակներուն քով որ Մանտամիէնթօյի տարօրինակ բնակարանին մուտքը կը ձեւացընէին :

Աղօտ լոյս մը հազիւ կը լուսաւորէր սրահին ներսի կողմը , որ այն միջոցին գրեթէ ամայի էր : Եղբայրութեան անդամներէն ոչ մէկը գեռ ետ չէր դարձեր իր գիշերային գործողութիւններէն : Միայն մեծաւորը կար հոն , կտորած սեան մը վրայ նստած , որ ընչաքաղց աչքով մը բուռ մը տուպլոն կը համրէր : Ասդին անդին ալ քանի մը պառաւ Քօպէրթէրաներ

(գողոնաթաքոյց) իրենց ղենջակները գետինը
փռած, խորին եւ խաղաղ քուն մը կը ննջէին:

Մեծաւորը երկտասարդ ամուլին մեղմ ոտ-
նաձայնը լսելով՝ գլուխը վեր վերցուց եւ կուա-
քօն տեսնելով՝ ուրախութեամբ գոչեց:

Է՛հ, Մանօֆինան է, որ իր գործը միշտ
շուտ կը կատարէ: Տոն Էսթէվան վարկաս...

— Ձեզի ու ինձի պէս ողջ առողջ է, պա-
տասխանեց կուաքօն տխուր ձայնով մը:

— Մըրք Յակոբ, գոչեց Մանտամիէնթօ,
արդեօք վնուկները դաշոյնդ կոտորեր են, քա-
ջըդ Մանօֆինա, կամ թէ Տոն Էսթէվան պո-
ղովատիկի հարուածէն անգծելի մնալու յու-
ռո՞ւթ մը (թըլըսըմ) ստացեր է:

— Այդ երկուքն ալ չեն, տէր իմ: Ես ե-
կայ ձեզ ըսելու թէ մարդ խաւարեցընելէ
ձանձրացած եմ, եւ այսուհետեւ կարտունայի
եղբայրութեան անդամ չեմ: Ահաւասիկ, ան-
ինձի տուած ստակդ:

Եւ քսակ մը նետեց Մանտամիէնթօի ոտ-
քին տակ:

Հազար սատանայ, գոչեց մեծաւորը. դո՞ւ
ես խօսողը, Մանօֆինա, թէ սատանան է որ
քու կերպարանքդ մտեր է զիս խաբելու եւ
քեզ վնաս հասցընելու համար:

— Ես ինքն եմ մարմնով եւ ոսկերօք:

պատասխանեց կուարօն, ես՝ որ եկայ հրաժարական տալու ձեզ, եւ մինչեւ հիմա ինձ ցոյց տուած պաշտպանութենէդ շնորհակալ ըլլալու : »

Մանտամիէնթօ արտեւանուն քը կնճռեց, եւ Սէրէնային՝ որ Մանօֆինայի ետեւը կեցեր էր խոնարհ դիմօք՝

« Եւ դու Քուլէվրինա, ըսաւ մեծաւորը, դո՛ւ ալ կուզես այս արհեստին բերկրանքէն ու շահերէն հրաժարելով այդ յիմարին ետեւէն երթալ, որ այսուհետեւ կրօնաւորներուն բաշխած անշահ ապուրէն զատ ուրիշ կերակուր չպիտի կրնայ տալ քեզ :

— Կը հրաժարիմ, պատասխանեց դեռահասակ կինը՝ իւր սիրելւոյն մօտենալով :

— Խենդեր » մրմռաց մեծաւորը :

Մանօֆինա պատասխան չտուաւ :

Մանտամիէնթօ խօսիւ ռաք ելնելով՝ ըսկըսաւ մեծաքայլ երթեւեկել սրահին մէջ՝ անհասկանալի խօսքեր մրմռալով :

Այն ժամուն էր որ եղբայրութեան անանդամները սովորաբար ետ կը դառնային եւ իւրաքանչիւրն իր համարը կուտար մեծաւորին : Քիչ քիչ սրահը բազմութեամբ լցուեցաւ : Մեծաւորը՝ մտայուզութեան մէջ ընկըղմած ըլլալով, դեռ աչքը վեր չէր առած ու

մէկուն քան մը հարցուցած :

Վերջապէս սրանն ամբողջ լցուեցաւ , եւ միայն մէկ քանի ապաժաման Շիվաթօներ դուրսը մնացեր էին , որոց խօսքը չէր ըլլար : Կարգին բոլոր յառաջակայները դումարուած էին , եւ դիտելով որ Մանտամիէնթօ՝ իր տըխուր մտածութիւններուն մէջ թաղուեր՝ ամենեւին աչքը իրենց չէր դարձուներ , Քուէրբօ տէ շիէրօ իր վրայ առաւ մեծաւորին մօտենալ , եւ շապկին թեւը մեղմով մը քաշելով՝

« Տէր , ըսաւ , բոլոր մանկունքդ իրենց պաշտօնը կատարեցին :

— Ա՛չ , ամենն ալ չկատարեցին » գոչեց մեծաւորը՝ տխուր նայուածք մը ձգելով Մանօֆինայի վրայ՝ որ Սէրէնայի հետ մէկ կողմ կեցեր էր :

Ամենուն աչքն ալ ուրացող կուարօին վրայ դարձան :

Մանօֆինա աչքը չխոնարհեցուց , այլ հանդարտ դիմօք իր հին ընկերներուն նայեցաւ եւ պատասխան չտուաւ :

« Ի՞նչ կըսէք , տէր , գոչեցին ամենքը մէկէն . հնարաւոր բան է ըսածնիդ :

— Այո՛ , յարեց Մանտամիէնթօ ծիծաղելի լրջութեամբ մը . կարտունեան մը իր պաշտօնին դրժեց . ընկերութիւնն իր երկու ամե-

Նաքաջ անդամները կը կորսնցընէ , եւ այս վատ դասալքութիւնը մեծ աղէտներ կրնայ յառաջ բերել մեզ համար :

— Այո , յարեց մեծաւորը Մանօֆինան ու ընկերը ցուցընելով , որոնք անտարբեր կերեւէին , կարգերնիս իր երկու լաւագոյն անդամները կը կորսնցնէ . իր ուղղութեան համբաւը , իր մինչեւ հիմա անարատ անունը կը կորսնցընէ , զոր երկար եւ վտանգաւոր ծառայութիւններով ստացած է : Ի՞նչ պիտի ըսեն հիմա ազնուականները . ի՞նչ պիտի ըսեն գեղեցիկ տիկնայք . ի՞նչ պիտի ըսէ մանաւանդ կղերը՝ որ մեր լաւագոյն ծուխն է . ի՞նչ պիտի ըսեն դոմինիկեանք՝ որ մեր օնտուկները տուպլոնով լցուցին . Անտալուզիոյ թագաւորութեան ամեն կողմը թշուառ խաբեքայիներ պիտի համարուինք , վասն զի մարդ եւսարեցընելու համար ստակ կառնենք ու չենք խաւարեցընել : Մեզ ալկուազիլներուն պիտի նմանեցընեն՝ որոնք գողերը բռնելու համար թոշակ կառնեն ու միայն պարկեշտ մարդիկ կը բռնեն . կամ այն անհաւատ կրօնաւորներուն՝ որոնք մէկ պատարագի համար տասն հոգիէ ստակ կառնուն ու կէսը չեն կարդար :

— Կը հասկընամք , եղբարք , շարունակեց մեծաւորն հետզհետէ դրգուելով իր խօսքե-

րէն , կը հասկընամք որչափ պիտի բարկանայ մեծ հաւատաքննիչը՝ երբոր իմանայ թէ իր հրամայած խօսքն չէ կատարուած . եւ չի պիտի՞ ըսէ Գերապայծառ արքեպիսկոպոսը թէ մենք վատ գողեր ենք , եւ ասանկով մեր աստուած ապահ Տօն Քարլօ թագաւորին լապտերալոյց Տօն Բէտրօ Բէլատէրաս Քոմիլլուտօի պաշտպանութիւնը պիտի կորսնցընենք . Ո՛վ ՄանօՖինան , ՄանօՖինան . դարձի՛ր դիտաւորութենէդ եւ այդ վայրկենական տկարութիւնըդ դարմանէ : »

Ժողովն այս տարօրինակ ատենաբանութիւնը սարսափով մտիկ կընէր :

Երբոր Մանտամիէնթօ խօսքը վերջացուց , քանի մը կեղծաւոր Ծեւէնէ (հծծող) ՄանօՖինայի մօտեցան .

« Եղբայր , ըսին , անհնար է որ մեզ թողուա , այնպէս չէ :

— Լմնցած գործ է » պատասխանեց կուարօն կարճ խօսքով :

Միւս կողմանէ երկու ամենապառաւ եւ ամենազզուելի Քօլեւնէրներ Սէրէնային քով դացեր , անուշ խօսքերով եւ թունալից շողոքորթութիւններով համոզելու կը ջանային :

« Ընդունայն կաշխատիք , պատասխանեց Սէրէնան , խօսքերնիս խօսք է եւ ետ դառ-

նալիք չունինք :

— Մանօֆինա նենդաւոր է , գոչեց նորրնձայ կուարօ մը :

— Ես նենդաւոր չեմ , գոչեց Մանօֆինա . առած ստակս ետ տուի . եւ ամենուդ առջեւ յայտարարութիւն կրնեմ թէ խոստմունքս չկատարեցի , թէ այս արհեստն ինձի անհաճոյ է , եւ թէ բոլոր տիտղոսներէս ու պաշտօններէս կը հրաժարիմ :

Մանօֆինա հանդարտ ձայնով կը խօսէր . առջի օրուան կռուայոյզ եւ վտանգա որ ու սուկալի գործեր սիրող մարդը չէր . այլ կորովի ու սրտոտ մարդ մ'էր՝ կրօնաւորին խօսքերէն դարձի եկած , եւ թէպէտ կը սիրէր վտանգն ու երկիւղալի գործերը , բայց ոչ առանց նպատակի վտանգը . իր բոլոր կռուասիրութիւնը տկարաց հարստահարիչներուն եւ հաւատաքրննութեան դահիճներուն դէմ դարձած էր հիմա :

« Վարարանին (դատաստանի) մատնուի , վարարանին , գոչեց նորրնձայ կուարօն :

— Եղբարք , պատասխանեց մեծաւորը խստութեամբ , կարտունայի եղբայրութիւնը երբէք իր որդիքը Սէվկի մեծ վարարանին մատնած չէ՝ որչափ եւ յանցաւոր ալ ըլլան : Եթէ տկարութիւն մը ունենան , ծուլութիւն

կամ անողիտանութիւն ընեն , աստիճանէ կը
ձգէ եւ կը ճանթէ . եթէ դաւաճանութիւն ը-
նեն՝ իւր-իւրեքն , բայց երբէք Մ-իւօ (դահիճ)
չմատներ :

— Տէր , ըսաւ Մանօֆինա , այս եղբայրու-
թիւնը երբէք իր որդիքը չմատներ . իր որդիքն
ալ զինքը չեն դաւաճաներ . եղբայրութիւնը
երբէք գէշութիւն մը տեսնելիք չունի ինէ :

— Որդեակ , պատասխանեց մեծաւորը
խանդաղատելով , ինչո՞ւ համար մենէ բաժնը-
ւիլ կուզես . դժգոհութիւն մը ունի՞ս ինէ .
կրնաս տակաւին սխալդ դարմանել :

— Երբէք , պատասխանեց Մանօֆինա
անյողդողդ ձայնիւ :

— Գիտես որ , ըսաւ Մանտամիէնթօ , ան-
հաւատարիմ անդամները պատժոյ արժանի
կըլլան :

— Անհաւատարիմ անդամներն աստիճա-
նէ կիյնան . ձգէ ուրեմն զիս ալ աստիճանէս ,
եւ ամեն բան կը լմննայ :

— Պէտք է գիտնաս որ այնպիսի պարա-
զայներ կան՝ որոց մէջ մարդը իւր-իւրեքն ,
ըսաւ Մանտամիէնթօ խստութեամբ :

— Դաւաճանները միայն իւր-իւրեքն , եւ
ես դաւաճան չեմ :

— Բայց . . .

տատեմ որ երկիւղը միայն արգելք եղած է իր
պարտաւորութեան կատարմանը : »

Հազիւ նորընծայ կուարօն այս խօսքը
թերնէն հաներ էր, Մանօֆինայի ձեռքէն ուժ-
գին ապտակ մը ուտելով՝ թաւալգլոր գնաց
մեծաւորին ոտքին տակ բռուեցաւ :

Իսկոյն քսանի չափ դաշոյն Մանօֆինայի
դէխուն վրայ շողացին :

Բայց Մանօֆինա, առանց շփոթելու,
թիկնոցը ձախ թեւին փաթթեց, աջ ձեռքով
դաշոյնը քաշեց, եւ ըմբշական խիզախ կեց-
ուած քով մը իր վրայ յարձակողներուն սպա-
սեց :

Սէրէնան ալ դայն այսպէս տեսնելով, ան
ալ իր լօղիկը ձախ թեւին փաթթեց եւ կրնակը
Մանօֆինայի կրնակին տալով, դաշոյնը վեր
առած սպասեց անոնց որ կրնային իր տարփա-
ւորին ետեւէն վրան յարձակիլ :

Մէկը չհամարձակեցաւ շարժում մ'ընե-
լու :

« Է՛, ըսաւ Մանօֆինա, այսչնփի է :

— Յառաջ եկէք նայինք, երկչոտ հաւեր,
դոչեց Սէրէնան՝ աչքերէն վազրի պէս կրակ է
ցայտելով, յառաջ եկէք որ տեսնէք թէ հետեւը
մոռցած ենք մեք : »

Մեծաւորն անտարբեր կեցաւ :

Նորընծայ Կուսարօն՝ որ թաւալզլոր եղեր էր , ելաւ կանգնեցաւ , եւ նետով զարնուած շնագայլի մը պէս կատղած՝ Մանօֆինայի վրայ յարձակեցաւ . բայց նորէն գետնին վրայ թաւալեցաւ :

Կարտունայի միւս անդամները տեղերնէն չէին շարժած :

« Պարոններ , դուք վատ մարդիկ էք , գոչեց Մանօֆինա , կուղէք թողուլ զիս որ այս նորատի մրտալը խաւարեցընեմ . խեղճն աւելի եռանդ ունի քան թէ փորձառութիւն :

— Մանօֆինա , ըսաւ այն ժամանակ մեծաւորը . այդ նորատի մրտալը՝ ինչպէս որ կը կոչես , իրաւունք ունի հատուցում մը խնդրելու , եւ քեզի պէս քաջ մարդ մը հատուցում չզլանար :

— Ես պատրաստ եմ ամեն հնար եղած հատուցումն անոր տալու , բայց կանոնաւոր կերպով եւ միայնակ :

— Քուլէվրինա քեզ կօղնէ , ըսին միւսներն հեզնելով :

— Քուլէվրինա մեռեալի պէս անշարժ թող մնայ , պատասխանեց Կուսարօն . դուք ալ անոր պէս ըրէք , եւ թողուցէք զիս ու այս երիտասարդը՝ որ մեր գործը խաղաղութեամբ կարգադրենք :

— Հանդարտ կեցիք, մանկունք, գոչեց
մեծաւորը, եւ դաշոյնները նորէն իրենց պատ-
եանը մտնեն :

Եւ դու, պարոն՝ կարապաթիլօ, ըսաւ
դեռահասակ կարտոււնոյի մը՝ որ իր յատուկ
սպասաւորն էր, գնա հակողութիւն ըրէ եւ ջու-
րին կողմէն ամենափոքր մուխ մը (ոստիկա-
նութեան զինուոր կամ դատաստանի պաշ-
տօնեայ) տեսածիդ պէս կռնչէ : »

Երիտասարդը գնաց :

Կարտոււնայի անդամները՝ արք եւ կանայք՝
մեծ շրջանակ մը կազմեցին սրահին մէջ, եւ
նորընծայ կուարօն ու Մանօֆինա՝ իրենց յաղթ
եւ սրածայր դանակներովն իրարու դէմ ելան
նոյն շրջանակին մէջ :

Մենամարտութիւնն սկսելէ առաջ, եր-
կու հակառակորդներն իրենց սուրերը մէկ
մէկու հետ բազդատեցին, որպէս զի իրարու
յար եւ նման ըլլալնին ստուգուի :

Այս գործը զօրաւոր հերքում մ'է դա-
ւաճան անունին զոր օտարազգիք կընծայեն
Սպանեօլներուն : Ամենէն ցած եւ սինլքոր ժո-
ղովուրդը, գողերն ու աւազակներն անգամ
զարմանալի ուղղութեամբ ու ասպետական
վեհանճնութեամբ կը վարուին այս կերպ մե-
նամարտութեանց մէջ : Տեսնուած ու լսուած

չէ բնաւ որ Պարաթէրօ* մ'անգամ իր հակա-
ռակորդը զարնէ՝ երբ այս վերջինը յայտնէ թէ
ալ չկրնար կամ չուզեր կռուիլ : Եթէ երկու
մարտնչողներէն մէկը վերարկու կամ թիկնոց
չունենայ , միւսն իրենը կը հանէ անոր կու-
տայ , եւ ինք իր մերկ թեւովը ինքզինք կը
պաշտպանէ : Այս վեհանձնութիւնն առաւել
անոր համար նշանաւոր է , որ այս անձինքը
չատ անգամ չնչին պատճառներով , եւ մինչեւ
քանի մը դանկի կամ խերեւէշի համար կը մար-
տընչին իրարու հետ :

Երկու կարտուսեանց զէնքերը նայուե-
ցան որ մի եւ նոյն երկայնութիւնն եւ երկու-
քին սայրը հաւասար լայնութիւն ունէին : Այս
քննութենէն ետեւ մարտնչողներն իրենց թիկ-
նոցները ձախ թեւերնուն փաթթեցին իբրեւ
վահան , եւ քաջաբար իրարու դէմ կանգնե-
լով՝ նշանին սպասեցին :

Նոր կուարօն՝ դեռահաս աքաղաղի մը

* Տեսակ մը գողեր՝ որոնք ձեռք մը խա-
ղի թուղթ ծոցերնին դրած շուկաներն օւ-
տօնավաճառները կը պտըտին, եւ իրենց թուղ-
թը խաղամոլներուն կը վարձեն , եւ ամենա-
փոքր վէճմը որ ունենան՝ մենամարտութեամբ
կը լուծեն :

պէս՝ որ իր բիտերուն ածիլը կ'զգայ, անհամբերութեամբ դռչեց. « Օ՛ն, սկսինք » :

Անմիջապէս իրարու վրայ յարձակեցան, ծռելով, շտկուելով, օձի պէս դալարելով, ետ ետ երթալով ու նորէն իրարու վրայ յարձակելով : Այն արագ եւ անակնկալ շարժմանց մէջ որուն նպատակն իր հակառակորդը շփոթեցընել է՝ որպէս զի չկրնայ իւր հարուածն ապահովապէս ուղղել, Մանօֆինա, աւելի հանդարտ եւ աւելի վարժ ըլլալով, անժխտելի առաւելութիւն մ'ունէր :

Նորատի կուարօն իր անյաջողութեանը վրայ կատաղելով, աչքը դարձած՝ յուսահատաբար ճարպիկ Մանօֆինայի վրայ կը յարձակէր, եւ միայն զարնելու եռանդով եւ ինքզինք պաշտպանելու անփոյթ եղած՝ իր կուրծքը հակառակորդին սրոյն կը ներկայացընէր :

Քուլէվրինա բոցափայլ աչքով եւ հեւալով կը դիտէր այս անագորուն եւ հոգետագնապ կռիւը : Հանդիսականներէն ոմանք սրտերնէն կ'աղօթէին նորընծայ կուարօին համար, զոր արդէն տապաստ ինկած կերեւակայէին :

Մեծաւորը լուռ եւ անշփոթ կեցեր էր :

Նորընծայ կուարօն, արդէն յոգնած եւ շունչը հատած՝ տակաւին կը շարունակէր իր

մենամարտութեան անխոհեմ կերպը : Գրեթէ քսան անգամ Մանօֆինայի դաշոյնն անոր կուրծքը գծեր էր . բայց Մանօֆինա որ զայն սպաննել չէր ուզեր , երբ տեսաւ որ հակառակորդն իր վրայ կը յարձակէր ձեռքը հորիզոնական դիրքով վեր առած եւ դանակն իր կուրծքին ուղղած , իր ձախ թեւն յանկարծ վեր առնելով՝ այնպէս անակնկալ ուժգին հարուած մը տուաւ , որ դաշոյնը հակառակորդին ձեռքէն թռչելով գնաց մեծաւորին ոտքին տակ ինկաւ :

« Կեցցե՛ս , կեցցե՛ս , Մանօֆինա , գոչեցին բոլոր հանդիսականք . տակաւին արժանի ես մեր ընկերն ըլլալու :

— Շնորհակալ եմ եղբարք , պատասխանեց Մանօֆինա , ձեր հաւանութիւնը բաւական է ինձ :

— Ստուգիւ քաջ մարդ ես , Մանօֆինա , ըսաւ յաղթեալ կուարօն ձեռքն անոր երկընցընելով . անոխակալ ըլլանք , եղբայր :

Մանօֆինա բարեկամաբար սեղմեց անոր ձեռքը :

Յետոյ մեծաւորին մօտենալով .

« Ալ հիմա , տէր իմ , վերջացընենք արարողութիւնը եւ ազատ ըլլամ : »

Մեծաւորը տեսնելով որ կուարօին միտ-

քը փոխել տալու համար ամեն ջանք անօգուտ
են , իր դաշոյնը քաշեց , ծայրը գետնին կըր-
թընցուց եւ ուժով մը ծռելով կոտորեց , եւ բե-
կորները Մանօֆինայի տուաւ : Մանօֆինա ալ
իր դաշոյնը հանեց մեծաւորին տուաւ :

Այս փոխանակութեամբ Մանօֆինա կար-
գէն կիյնար եւ ալ այնուհետեւ արժանի չէր
կարտունայի շահատակութեանց եւ փառաց
մասնակցելու :


Յետոյ մեծաւորը Մանօֆինայի ձեռքէն
բռնելով Ս . կուսի պատկերին առջեւ տարաւ ,
եւ հոն Մանօֆինա ծունկի վրայ դալով հե-
տեւեալ աղօթքն ըսաւ .

« Մեր Տիրամօր քաշած կակիծներուն եւ
իր որդւոյն Տեառն մերոյ մեզ համար թափած
արեան վրայ կերդնում որ երբէք չդաւաճա-
նեմ կարտունայի եղբայրութիւնը եւ ոչ անոր
մէկ անդամը . երբէք մեծ շարարանին անդամ
չըլլամ 'ի վնաս կարտունեան եղբարց . անոնց
մէկունն դէմ սուր չքաշեմ՝ քայց միայն իմ ան-
ձրս պաշտպանելու համար . . . Աստուած
սոյն երդմանս համեմատ օգնական ըլլայ ինձ ,
եւ եթէ դրժեմ , պատժէ զիս :

« Ա.ժ. » զոչեցին միաձայն բոլոր ներկայ
զանուող անդամները՝ որ նոյնպէս ծունկի վը-
րայ եկած էին :

Այս արարողութիւնն աւարտելէ ետեւ ,
Մանօֆինա ընկերին թեւէն բռնեց եւ մնաք
բարովի նայուածք մը ձգելով իր հին ընկեր-
ներուն վրայ , կարտունայի անձաւէն դուրս
ելաւ՝ մէկ մ'ալ հոն չմտնելու դիտաւորու-
թեամբ :

« Եղբարք , գոչեց մեծաւորը Մանօֆի-
նայի երթալէն ետեւ , իննօրեայ աղօթք մ'ը-
նենք Եօթն խոցով Տիրամօր , որպէս զի մենէ
բաժնուող այս մոլորեալ խեղճ եղբօր արժա-
նի յաջորդ մը ղրկէ մեզ : »



ԳԼՈՒԽ Թ .

ՀԱԻԱՏԱՔՆՆՁԻՆ ՍԻՐԵԼԻՆ

Կերուխումին հետեւեալ օրն էր :

Ժամը առաւօտեան տասը կար . հաւա-
տաքննիչն անկողնէն ելեր էր : Նախընթաց
գիշերուան շուայտութիւններուն հետքը տա-
կաւին կը տեսնուէր դէմքին վրայ . վասն
զի տարածամ քունը՝ փոխանակ մարդուս ու-
ժը նորոգելու՝ առաւել կը յօգնեցընէ ու կը
մաշէ :

Պետրոս Արպուէզի երեսը գոյն չէր մնա-
ցեր :

Անբարեխառնութենէ յառաջ եկած ջղա-
յին գրգռութեան վրայ աւելցեր էին անյա-
ջող կրքի մը յուզմունքն եւ իր եղեռնու-
թեանց գործադիրներուն դէմ ներքին բար-
կութիւն մը : Մանաւանդ էնրիքէզի դէմ սաս-
տիկ բարկացած էր : Տոլորէզի վրայ ունեցած
վայրագ կիրքն՝ իր խորհուրդները տապալող
արգելքներով աւելի եւս կը բորբոքէր :

Վառարանին քով գնաց եւ մտած ձեռքե-
րը տաքցուց . իր զգացողութեանց ուժգնու-
թենէն՝ մարմնոյն բոլոր կենսական ջերմու-
թիւնն ուղեղին մէջ ամփոփուեր էր :

« Տոլորէզ , գոչեց , Տոլորէզ : »

Իր բորբոքեալ երեւակայութիւնը՝ իբրեւ
նիւթական հայելւոյ մը մէջ աչքին կը ներկա-
յացընէր քաղաքապետին աղջկան չքնաղ դե-
ղեցկութիւնը . վեր ցատկեց ասթոռին վրայ ,
եւակոսներն իրար զարնուեցան անզուստ կա-
տաղութեամբ :

« Ո՛հ , ի՛նչ գեղեցիկ էր , շարունակեց
Պետրոս Արպուէզ՝ օրիորդին պատկերը միշտ
աչքին առջեւ գալով . ի՛նչ գեղեցիկ էր իր սար-
աափին մէջ : Ո՛հ , եթէ այն կերպարանքով հոս
տանս մէջ տեսնէի . . . հոս իշխանութեանս

ներքեւ ունենայի՝ առանց իր բարկութենէն
ու ճիշերէն վախնալու . . . Այս բանս պիտի
ըլլար անշուշտ եթէ էնրիքէզ վատութիւնն չը-
նէր . . .

« Յանձ ստրուկ , որ շողոքորթել միայն
գիտէ եւ ոչ ծառայել . անիծեան սեռ , որ մեր
հողաթափներուն փոշին կը համբուրէ , բայց
մեր հաճոյքը կատարել պէտք եղած ատեն վը-
տանգին առջեւ կընկրկի :

« Բայց , ի՞նչ , շարունակեց դժնեայ հա-
ւատաքննիչը խրոխտաբար գլուխը վեր վեր-
ցընելով , ես հոս տէր չեմ . վարպետութեամբ
չկրցածս բռնութեամբ չեմ կրնար ձեռք բե-
րել :

— Ո՞վ կայ հոտ , գոչեց մետաքսեայ վա-
րագուրով գոցուած նախասենեակի մը դրան
քով երթալով , ուր իր սպասաւորները կը կե-
նային . կանչեցէք քարտուղարը . . . »

Քարտուղարը վազեց եկաւ :

Ազնիւ պատանի մ'էր աղքատ ընտանիքէ ,
որ հալածանաց թշուառութենէն ազատ մը-
նալու համար գերապայծառին քով ծառայու-
թեան մտեր էր :

« Տոն Փիլիսոյ , ըսաւ հաւատաքննիչը , Սէ-
վիլի քաղաքապետն այս գիշեր բռնուեցաւ
արդեօք , հաւատաքննութեան բանտը տար

ուեցան : »

Տոն Փիլիպ խոնարհեցաւ .

« Գերապայծառ տէր , ձեր հրամանները
կատարուած են : »

Ուրախութեան աղօտ փայլակ մը ցայտեց
հաւատաքննիչին աչքերէն :

« Ըսէ , կաղաչեմ , որ Յովսէն ինձի ղըր-
կեն » ըսաւ Արպուէզ :

Քարտուղարը դուրս ելաւ :

Հաւատաքննիչն սկսաւ մեծաքայլ երթե-
լեկել սենեակին մէջ :

« Գոնէ վրէժս պիտի առնեմ այն օրիոր-
դէն , ըսաւ ինքն իրեն . ասկէց զատ , կը յու-
սամ որ այն անիծեալ գնչուները որ կը պաշտ-
պանեմ , իմ ընտանիներէս աւելի լաւ կերպով
կը կատարեն իրենց յանձնուած պաշտօնը :
Կարտունեանք իրենց հարուածը պարապ չեն
հաներ : Այն էսթէվանը զոր կատեմ , անշուշտ
սպաննուած է . գոնէ այն հակառակորդիս ձեռ-
քէն առած կըլլամ Տոլորէզը : »

Ասոնք ըսած ժամանակ՝ Յովսէի դժգոյն
դէմքը սենեակին դրանը մէջ երեւցաւ : Զայն
տեսնելուն պէս՝ հաւատաքննիչին դէմքը զար-
մանալի կերպով քաղցրացաւ :

« Մտիր , Յովսէ , քու ներկայութիւնդ
միշտ սիրելի է ինձ : »

Իրօք ալ նորընծան աշխարհի անդործ հը-
ղօրներուն պէտք եղած այն անհրաժեշտ էակ-
ներէն մէկն էր, որոնք սիրելի կը կոչուին .
բարւոյ կամ չարի գործիքներ՝ իրենց հոգւոյն
բարութեանն ու չարութեանը համեմատ . տը-
կար էակներ՝ որոնք հաճոյակատարութեամբ
կապրին, եւ որոց դէմ կեցող բան մը շկայ .
գաղտնածածուկ ազդեցութիւններ, իշխանին
ընտանի ոգիներ, որուն ամեն բարի կամ չար
գործերը կը ներշնչեն, եւ գիտես թէ մոգական
բժժանքի մը զօրութեամբ կը գործեն . վասն
զի այն օրը որ այն բժժանքը ձեռքերնէն ելնէ,
իրենք ալ խակոյն կիյնան այն անդիմադրելի զօ-
րութենէն ընկճեալ, որ զիրենք կը խորտակէ՝
ինչպէս որ բարձրացուց :

« Ձեր Տէրութիւնն այս գիշեր քնհմտ մը-
նացեր է, հարցուց սիրելիին շողով ձայնով մը :

— Այո, չկրցայ քնանալ, Յովսէ, դժնդակ
եւ ձանձրալի գիշեր մ'անցուցի :

— Գերասպայծան տէր . ձեր սլալատին մէջ
խեղճ մարդ մ'ալ կայ, որ ձեր բարձրութեան
ծառայելու համար մարմնով եւ հոգւով վիրա-
ւորուած ըլլալուն՝ չէ կրցած ննջել : »

Պետրոս Արպուէզի աչքէն բարկութիւն
կը ցայտէ :

Յովսէ առանց շփոթելու կը շարունակէ .

Այն մարդը , գերապայծան տէր , մազ մնաց որ կեանքը պիտի կորսնցընէր ձեր Բարձրութեան ծառայելու համար , եւ երբ վիրաւորեալ ու արիւնոռչտ ձեր դէմն ելաւ , ձեր Բարձրութիւնը զայն վռնտեց պիղծ անասնոյ մը պէս , եւ ետքն ալ անոր արդարացուծը լըսել չուզեց :

— Յովսէ , գոչեց հաւատաքննիչը բարկութեամբ . գիտե՞ս որ եթէ քու տեղդ ուրիշ մէկը բարեխօսէր Էնրիքէզի համար

— Ձեր բարձրութիւնը կը հաճէր զայն ալ մտիկ ընելու ՚ինչպէս զիս , յարեց սիրելին հանդարտ ձայնով . վասն զի ձեր Բարձրութիւնն ամեն բանէ առաջ արդարասէր է , եւ անշուշտ խեղճ Էնրիքէզի ըրած անգթութիւննիդ ձեր խղճմտանքովը կը մեղադրէք :

— Դաւաճան մ'է , մրմռաց Արպուէզ :

— Ձեզ համար կեանքը տուող ծառայ մ'է , գերապայծան տէր , քաջ եւ հաւատարիմ ծառայ մը , որ ձեզի պէտք է : Ո՞վ պիտի ընէք հիմա Սէվիլի քաղաքապետ :

— Կատանկ կընէք , եղբայր Յովսէ . չեմ գիտեր թէ երկուքիս որն աւելի խենթ է . դուն՝ թեթեւամիտ տղայ՝ որ աստանկ ափեղջըփեղ խօսքեր կընես ինձ , կամ ես՝ Սէվիլի մեծ հաւատաքննիչը՝ որ քեզ մտիկ կընեմ :

— Գերապայծանո տէր , ըսաւ Յովսէ , ես հիմա կապացուցանեմ որ երկուքս ալ շատ խելացի ենք :

— Հետաքրքիր եմ տեսնելու թէ ինչպէս պիտի կրնաս ապացուցանել :

— Անկէ դիւրին բան չկայ , գերապայծանո տէր : Գուք Սէվիլի պատուական եւ յարգի կառավարիչ Մանուէլ Արկոզօ կոմսը վերուցիք , եւ հիմա այս ազնիւ քաղաքս առանց իր Մենտորին եւ ձեր Բարձրութիւնն ալ առանց օժանդակի մնաց : Այս հերետիկոսական ժամանակիս մէջ , գերապայծանո տէր , առանց օժանդակի չէք կրնար մնալ :

— Վերջապէս ինչ ըսել կուզես , ըսաւ հաւատաքննիչը , որ հաճութեամբ մտիկ ընել սկսեր էր :

— Կուզեմ ապացուցանել , գերապայծանո տէր , թէ հաւատաքննչին լաւագոյն օժանդակն է քաղաքապետը , եւ հարկ է որ ձեր Բարձրութեան դրածն ըլլայ : Արդ , ո՞ւր պիտի դանէք խեղճ Էնրիքէզէն աւելի անձնուէր մարդ մը , որ լոկ օրիորդ մը վերցընելու գործին մէջ՝ երեք հարուստ առաւ , ինչպէս կըսեն կարտունային զոված գնչուները , եւ ամենակատարեալ բան մը : »

Պետրոս Արպուէզ ժպտեցաւ , սիրելւոյն

ազդեցութիւնն անոր արիւնը տոշորող տենդը մեղմեր էր :

« Էնրիքէզը Սէվիլի քաղաքապետ ընել , գոչեց յանկարծ ծիծաղելով . բայց գիտես , Յովսէ , որ ոչինչ մարդ մ'է :

— Դուք զայն յառաջ քաշելով ձեր իշխանութիւնն աւելի մեծ կըլլայ » պատասխանեց Յովսէ առանց այլայլելու :

Բարձրաձայն բայց անհամակիր ծիծաղով մը պատասխանեց հաւատաքննիչն այս խօսքին :

Յովսէ՛ երես ելած տղու մը անփոյթ յամառութեամբ յարեց .

« Դերապայծառ տէր , պէտք չէ որ խեղճ Էնրիքէզը հոս կանչեմ , որպէս զի ինքզինք արդարացրնէ եւ ձեր առջի սէրն ու վատահութիւնը հայցէ իր վրայ :

— Ըսել է որ իր ձեռնարկութեան չյաջողելուն վրայ շատ զղջացած է :

— Յամենայն սրտէ :

— Յիրաւի , ըսաւ Արպուէզ , երեք հարստացող եւ բոլորով սրտիւ ապաշխարող մարդ մը՝ ներողութեան արժանի է . դնա , Յովսէ , բեր Էնրիքէզը : »

Նորընծան ուրախութեամբ հաւատաքննորչին ձեռքը պագաւ : Նոյն միջոցին նորըն-

ծային գլուխը Պետրոս Արպուէզի ձեռքին վը-
րայ ծռած տեսնողն՝ անոր վայրագ եւ քինա-
խընդիր դէմքէն կը գուշակեր, որ աւելի յօ-
ժար էր ակռաներովն իր տիրոջը ձեռքը պա-
տառելու՝ քան թէ կեղծաւոր համբուրիւ մը
ծածկելու :

Յովսէ գուրս ելաւ :

« Արդար խորհելով, ըսաւ ինքնիրեն հա-
ւատաքննիչը, սա տղուն խորհուրդը գէշ չէ :
Էնրիքէզ իմ ձեռօքս Սէվիլի կառավարիչ ըլ-
լալով եւ մի միայն ինէ պաշտպանութիւն գըտ-
նելով՝ իմ կամացս հլու գործիք մը կըլլայ .
դա հիճ մը, որուն զարկ ըսեմ՝ կը զարնէ : Այո,
Յովսէ իրաւունք ունի, եւ ստուգիւ խելացի
տղայ է : »

Դեռ խօսքը բերանն էր, սիրելին ներս
մտաւ, էնրիքէզ ալ ետեւէն :

Հաւատաքննութեան ընտանին դեռ գեղ-
նած էր, վիրաւոր գլուխն ու ձեռքերը երիզ-
ներով փաթթուած . իր կեղծաւոր կերպարան-
քըն առաւել հիւանդ եւ վշտակիր երեւոյթ
մը կուտար անոր վատած ու յոգնած դէմքին :

Ձինքը տեսնելուն, հաւատաքննչին ճա-
կատը նորէն տխրեցաւ :

Էնրիքէզ մէկ ծունկը գետինը դրաւ եւ
նորին Բարձրութեան աջն համբուրելու շնոր-

հը խնդրեց :

«Ներուակը շնորհեմ յանցանքիդ, Էնրիքէզ, ըսաւ մեծ հաւատաքննիչը . շնորհակալ եղիր Տոն Յովսէի, որ փաստաբանէ մ'աւելի յաջողութեամբ բարեխօսեց քեզ համար, եւ պատմէ ինձ մանրամասնաբար այն գիշերուան գործողութիւնդ՝ որուն պատճառաւ վիրաւորեցար : »

Էնրիքէզ կրկնել չտուաւ այս հրամանը . վերստին պատմեց հաւատաքննչին ինչ որ արդէն գիտենք, եւ կռուին մէջ առնուած ու տրուած բոլոր հարուածներուն պատիւն իրեն վերագրեց . բայց առածը մեռեալներուն բաժինն ըլլալուն՝ ժառանգութիւն մ'էր եւ ոչ գողութիւն :

Երբոր Էնրիքէզ լմնցուց, հաւատաքննիչը՝ որ արդէն քաղցրացեր էր անոր վրայ, սիրալիւ ձայնով մ'ըսաւ .

« Էնրիքէզ, ես քեզ հաւատարիմ կը ճանչեմ . եւ թէպէտ այս ձեռնարկութեան մէջ չի կրցար յաջողիլ, կը յուսամ որ ապագային մէջ Աստուծոյ ծառայութեան համար ընելիք ջանքերդ ասոր տեղը կը լցընեն . եւ ես ցուցընելու համար քեզ՝ որ ամենեւին ոխ չունիմ վրասդ, այլ ընդ հակառակն քեզ իմ ամենէն անձնուէր ծառաս կը ճանչեմ, պիտի գրեմ

Թագաւորին որ քեզ Սէվիւի քաղաքապետ
կարգէ :

— Արկօզօ կոմսը մեռաւ , գերապայծառ
տէր , հարցուց Էնրիքէզ զարմանօք եւ ուրա-
խութեամբ :

— Մեռած ըսել է , մրմռաց Յովսէ աղօա-
ներուն մէջէն . հաւատաքննութեան բանտե-
րուն մէջ է :

— Գերապայծառ տէր , ըսաւ ընտանի մը
դրան վարագուրին մէկ ծայրը վերցընելով ,
կարտունայի մեծաւորը՝ Պ . Մանտամիէնթօ՝
ձեր Բարձրութեան ներկայանալ կուզէ :

— Էսթէվան մեռած ըլլալու է , ըսաւ ինքն-
իրեն հաւատաքննիչը :

— Ներս թող գայ կարտունայի Դեթուրը ,
ըսաւ Արպուէզ՝ հեգնութեամբ շեշտելով վեր-
ջին բառը :

Մանտամիէնթօ ներս մտաւ եւ հաւատա-
քննիչին առջեւ կանգուն կեցաւ առանց գը-
լուխը բանալու : Այս խժարարոյ մարդն իր
պաշտօնին արտօնութեանցը վրայ մյն աստի-
ճան տարօրինակ եւ մոլեռանդ գաղափար մը
ունէր , որ գրեթէ հաւասարազօր իշխանու-
թեամբ կը վարուէր մեծ հաւատաքննիչին հետ :

Էնրիքէզ աչք ըրաւ Մանտամիէնթօի որ
գլուխը բանայ . բայց Մանտամիէնթօ աբհա-

մարհոտ նայուած քով մը պատասխանեց : Հա-
ւատա քննիչը ժպտեցաւ , եւ կարտունայի մե-
ծաւորին դառնալով .

— Է՛, այն գործը կատարուեցաւ , այն-
պէս չէ :

— կատարուած բան մը չկայ , պատաս-
խանեց Մանտամիէնթօ տխուր դէմքով :

— Ի՞նչ , էսթէվան վարկաս . . .

— Էսթէվան վարկաս լեռները կը թափա-
ռի , եւ մազ մ'անգամ ինկած չէ գլխէն : կար-
տունայի եղբայրութիւնն իր հաստատութեան
օրէն 'ի վեր այս առաջին անգամն է որ դա-
ւաճան մ'ունեցաւ իր մէջ , եւ այն ալ իր ամե-
նէն քաջ որդւոցը մէջ , յարեց Մանտամիէն-
թօ ծաղրական տրամութեամբ :

Մանօֆինայի դասաւթութեանը վրայ կը
գթար՝ ինչպէս բարի հայր մ'իւր միակ եւ սիրե-
լի որդւոյն անառակութեանցը վրայ կըցաւի :

« Չմը սատանայ , գոչեց հաւտաաքննիչը
կատաղութեամբ ոտքը գետնին զարնելով .
այս գործին մէջ ամեն մարդ զիս նենգելու
ելեր է : Ի՞նչ է այդ դաւաճանին անունը :

— Երդում ըրած եմ որ մարդ չպիտի գիտ-
նայ , գերապայծան տէր . եւ ձեզ ալ պէտք
չէ անոր անունը : Ես այն գործին համար ձեր
տուած ստակը ետ բերելու եկած եմ միայն . . .

Այս ըսելով աւագակը սեղանին վրայ դը-
րաւ Տոն Էսթէվանը սպաննելու համար առած
ոսկիները :

« Հիմա քու գնչուներուդ մէջ մէկը չկայ ,
որ այս գործը վրան առնու , հարցուց հաւատա-
քըննիչը :

— Օ՛ . քաջերն ու հաւատարիմները պա-
կաս չեն մեր մէջ , եւ կրնամ ապագային հա-
մար խօսք տալ . . . բայց հիմա Տոն Էսթէվանի
հետքը կորսնցուցած ենք , եւ ժամանակ պէտք
է տաք ինձ :

— Ատ բան մը չէ , պատասխանեց հաւա-
տաքննիչը . եթէ դու խօսք կուտաս ինձ որ
Տոն Էսթէվան անպատճառ ձեռք անցունես ,
ան առ ոսկիները , Մանտամիէնթօ . ատոնք
մեր սակարկութեան թերհաշիւ մ'են . որչափ
գործը դժուարանայ , այնչափ վարձքն ալ ա-
ւելի կըլլայ :

— Շատ աղէկ , ըսաւ աւագակը ոսկիները
վերստին առնելով . ասկէց մինչեւ ութօր
խօսք կուտամ Ձեր գերապատուութեան որ
երիտասարդը վարպետ ձեռքէ մկրտութիւն
մը կառնու :

— Ահ , ըսաւ Յովսէ , եւ անհող դէմքով
մը դուրս ելաւ :

— Գիտես արդեօք , Մանտամիէնթօ , ո՛ր

ժիախած ապաստանած է Սէվիլի քաղաքապետին աղջիկը , հարցուց Արպուէզ :

— Ձեր տէրութիւնը զիս անոր պահապան չէր դրած , պատասխանեց կարտունօն :

— Ճիշդ կայէնին Աստուծոյ տուած պատասխանն է , ըսաւ անդիէն Էնրիքէզ :

Այսպիսի խօսք մը կրնար ներուիլ Յովսէի , բայց Էնրիքէզի ոչ . Արպուէզ խոժոռեցաւ . իր մտայուզութեանը մէջ այսպիսի ծաղրաբանութիւններն անհաճոյ էին իրեն :

« Ահաւասիկ ձեռք ձգելիք բանը , յարեց հաւատաքննիչը , որուն համար սնտուկս եղած ոսկիները չեմ խնայեր . Չանան , Մանտամիէնթօ , այն աղջիկը գտնելու եւ ինձ բերելու :

— Ողջ առօղջ , հարցուց աւագակը պաղութեամբ :

— Անշուշտ , առանց մազ մ'անգամ գըլխէն իյնալու , առանց ամենափոքր երկիւղ մը իրեն տալու . կը հասկընամ , Մանտամիէնթօ : Դուք կիներ չունի՞ք այսպիսի գործերու համար : Թող փնտռեն գտնեն աղջիկը , եւ վարպետութեամբ մեր ձեռքը ձգեն : Ասանկ գործի մը մէջ կանայք աւելի լաւ կը յաջողին , եւ աղջիկն ալ չկասկածիր իր սեռէն եղողներուն վրայ : Վերջապէս դուն հարկաւ գիտես ինչ

որ պէտք է ընել :

— Ո՛հ , Սէրէնան խիստ ճարպիկ էր այս-
կերպ գործերու մէջ , ըսաւ Մանտամիէնթօ
ինքնիրեն :

— Գերապայծառ տէր , ըսաւ Էնրիքէզ
կամացուկ մը , ես կը գտնեմ զայն . Սէվիլի
կառավարիչ ըլլալու չեմ մի : »

Արպուէզ ճանքեց կարտունայի մեծաւորը :
Մանտամիէնթօ դուրս ելաւ խրոխտ եւ
վստահ դէմքով : Այս տարօրինակ մարդը մեծ
համարում ունէր իր կարեւորութեանը վրայ ,
եւ այս յիմարութիւնն իր տարակեղրոն կեն-
ցադէն եւ սպանիական գոռոզ ու բանաստեղ-
ծական ոգւոյն դարձուած քէն աւելի սաստկա-
նալով՝ այնպիսի վայրագութիւն մը կուտար
Մանտամիէնթօի գործերուն ու շարժումնե-
րուն՝ զոր անհնարին է խօսքով թարգմանել :

Երբոր դուրս ելաւ , Արպուէզ ուսերը թոթ-
վեց :

« Այս տեսակ մարդոց հետ յարաբերու-
թիւն ունենալ , մրմռաց : Եթէ Քրիստոսի զի-
նուորներն իրենց պարտքը լաւ կատարէին ,
եթէ հաւատաքննութեան ընտանիները բաւա-
կան փոյթեռանդ ըլլային , մենք այս գնչու-
ներուն պէտք կուենայինք :

— Գերապայծառ տէր , ըսաւ Էնրիքէզ :

այս գնչուները եթէ մեզ չծառայէին , մեզի
թշնամի կըլլային :

— Թերեւս այդ ալ ճշմարիտ է , պատաս-
խանեց Արպուէզ : »

Հաւատաքննութեան թշնամին նորէն շը-
նորհ գտնելով , երկար խօսակցեցաւ հաւա-
տաքննչին հետ : Ինչ խօսք ընելնին չենք գի-
տեր . բայց տարակոյս չկայ որ դժոխքն ուրախ
եղաւ այս երկու սոսկալի մարդոց մտերմական
խօսակցութենէն , շնական կամ ամբարիշտ
խօսակցութենէն . եւ եթէ Աստուած չբար-
կացաւ այն անօրէն մեքենայութեանց մէջ իր
սուրբ անուներ խառնելնուն վրայ , պատճառն
իր անհուն բարութիւնն է , որով չարերը չի-
վերցըներ աշխարհիս վրայէն . եւ այս ալ չէ
թէ բարիները մաքրելու համար , ինչպէս որ
կըսեն , այլ վասն զի հայր է , եւ հայր մ'ալ
միշտ ներող է՝ մինչեւ անգամ իր ամենաչար
որդւոց համար :

Հազիւ Մանտամիէնթօ քանի մը քայլ ա-
ռեր էր փողոցին մէջ , մէկը իր բաճկոնին թե-
ւէն քաշեց :

Ետին դարձաւ ու զարմացմամբ տեսաւ որ
գերապայծառին սիրելին էր զինքը բռնողը :

« Գերապայծառը բան մոռցաւ ըսելիք ,
հարցուց գնչուն :

— Այո՛ , մոռցաւ քեզ ըսելու թէ Տոն Էսթեփան վարկասի մեռնիլը ես՝ չեմ ուզեր , պատասխանեց Յովսէ :

— Այդ խօսքն իրեն ըսելու էիք , պատասխանեց Մանտամիէնթօ :

— Քու միայն գիտնալդ բաւական է , ըսաւ նորրնժան :

— Բայց գերապայծառն ինձի գրաւ տուաւ Տոն Էսթեփանը խաւարեցընելու համար , շարունակեց աւաղակը , եւ բան մը չեմ ճանչեր որ գերապայծառին կամքը կատարելէ զիս արդելու :

— Ի բաց առեալ իմ կամքս , ըսաւ Յովսէ իշխանաբար : Ես չեմ ուզեր որ Տոն Էսթեփան մեռնի , կը հասկընամ , Մանտամիէնթօ , եւ ես գերապայծառին գրաւը կը հատուցանեմ իրեն . այդ մասին անհոգ եղիր եւ գնա՛ բանդ :

Մանտամիէնթօ գիտէր Յովսէին ազդեցութիւնը հաւատաքննչին վրայ . ուստի անոր կտրուկ խօսուածքը զինքը վարանման մէջ ձգեց , եւ կը խորհէր թէ որո՞ւն խօսքը պէտք էր ընել , տիրո՞ջը թէ սիրելւոյն :


Վայրկեան մը խորհելէ ետեւ , դարձաւ նորատի կրօնաւորին .

« Վերապատուելի հայր , ինչ կըլլայ թող ըլլայ , ձեր կամքը պիտի կատարուի :

— Շատ աղէկ , ըսաւ Յովսէ . քեզ ալինչ որ հասնի , ես կեցեր եմ , եւ ոսկւով լեցուն քսակ մը քշեց կարտուհօի ձեռքին մէջ , եւ փողոց մը մտնելով անհետացաւ :

« Այս ոսկին պարգեւ մ'է , ըսաւ ինքնիրեն Մանտամիէնթօ : Ամենէն լաւ վաստակը մեզի տրուած պարգեւն է . ուստի կրնամ պահել զայս : »

Կարտուհայի մեծաւորն հեռացաւ՝ այն Սպանիական երգերէն մէկը մրմնջելով , զորս մինչեւ ցայսօր գնչուները կերգեն Անտալուզիոյ մէջ :



ԳԼՈՒԽ Ժ .

ՈՒԽՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Սէվիլէն քիչ հեռու կուստալքիվիր գետին եզրը բլրոյ մը վրայ դոմինիկեանց վանք մը կար , ընդարձակ եւ շքեղ շէնք մը՝ դուրսէն զուարճալի դարաստով մը շրջապատեալ , եւ ներսէն ալ ամեն գեղեցկութեամբ եւ դիւրութեամբ դարդարուած , անշուշտ Գոմինիկոս Աիւզմանի որդւոց անձնուրացութիւնն աւելի հեշտ եւ դիւրատար ընելու համար :

Այս վանքը կամ մանաւանդ պալատը որ
երբեմն Մաւրիտանացի իշխանի մը բնակա-
րանն էր, երսուհի չափ կրօնաւոր կը պարու-
նակէր, որոնք հաւատաքննութեան ատենա-
կալներ ըլլալու սահմանուած էին: Արդէն ո-
մանք երեւելի հանդիսացած էին գաւառական
հաւատաքննչի բարձր պաշտօնը վարելով, եւ
ամենն ալ նշանաւոր էին հերետիկոսութիւնն
արմատախիլ ընելու անագորուն եռանդովնին: Գե-
րասպայծառ Արպուէզ ալ չափազանց կը
սիրէր այս սուրբ ապաստանարանը, ուր մերթ-
ընդ մերթ իր տաժանելի պաշտօնէն հանգչե-
լու կերթար:

Այն օրը կարեւոր գործի մը համար գա-
ցած էր այս երանութեան կայանը: Մեծահան-
դէս արարողութիւն մը կը պատրաստուէր,
որուն աւելի շքեղութիւն պիտի տար մեծ հա-
ւատաքննչին ներկայութիւնը:

Քաղաքապետին աղջկան աներեւոյթ ըլ-
լալէն երկու ամիս ետքն էր: Պետրոս Արպու-
էզի տափանքը թէ եւ չէր մարած, այսու ա-
մենայնիւ ժամանակ ժամանակ հանգիստ կու-
տար այն բռնասէր հոգւոյն, եւ տիրապետու-
թեան գրգռիչ զուարճութիւններն անոր ան-
սանձ կրից պատրանքը երբեմն կ'եղկացընէ-
ին:

Ասկէց զատ, հաւատաքննիչին կենաց սրբոտազրաւ առարկան միայն Տուորէզ շէր : Այն օրը, իւր սիրելին Յովսէ ուխտադրութիւն պիտի ընէր Դոմինիկեանց վանքին մէջ, եւ այս իգատեսիլ պատանիին վրայ Պետրոս Արպուէզի ունեցած բարեկամութիւնը՝ բաւական ջերմ ըլլալով՝ միւս աւելի եռանդուն կիրքը երբեմն կը մոռցընէր :

Առաւօտուն կանուխ բոլոր վանքը պատրաստութեան մէջ էր : Մատուռը՝ որ ընդարձակ կլոր շէնք մ'էր, եւ որ քրիստոնէական զարդուց ներքեւ իր մաւրիտանական դէմքը շէր կորսնցուցած, երփներանգ ծաղիկներով զարդարուած էր :

Վարդարանի Աստուածածինը՝ որ Դոմինիկեանց յատուկ պաշտպանն էր, իր տօնի հանդերձներն հազած էր : Խոնարհ Մարդացելոյն խոնարհ մօրն անարատ դէմքը մետաքսով ու թաւիչով քողարկեալ էր, եւ հրեշտակաց համեստ թագուհին՝ աշխարհի թագուհիներուն պէս անդամանդներով ու մարգրիտներով պճնեալ :

Սպիտակ մարմարեայ սիւները վարդի հիւսքերով պատած էին եւ սեղանին վրայ անթիւ մոմեր կը վառէին : Աջ կողմը՝ կամարին ներքեւ՝ մեծ հաւատաքննիչն աթոռը դրուած

էր ծանր թաւիչներով ծածկուած եւ վրան
գեղեցիկ ամպհովանի մը : Անոր աջ կողմը ,
աւելի ցած աթոռի մը վրայ վանահայրը պի-
տի նստէր :

Ժամ իննին միջոցները հանդիսաւոր երգ
մը սկսաւ մատուռին կամարներուն ներքեւ՝
ուր արդէն բազմաթիւ հրաւիրեալք լցուած
էին՝ մեծ մասը տիկնայք ու ազնուականք :

Կրօնաւորները՝ խաչդրօշն առջեւնէն՝
ներս մտան երկու կարգ , ձեռուրնին վառած
մոմերով : Այս տխուր դէմքերն հազիւ կրնա-
յին վայրենի խստակրօնութեան մը ներքեւ
ծածկել իրենց աշխարհային կիրքերը . այսու
ամենայնիւ , գերեզմանի կերպարանք (սեւ ու
ճերմակ) հազած մարդոց պէս այս երկար թա-
փորը սգատեսիլ ու սոսկալի երեւոյթ մ'ու-
նէր : Վանահայրը՝ որ եպիսկոպոսական ըզ-
գեստներն հազած էր , ամենուն ետեւէն կու-
գար :

Երգերն աւարտելէ ետեւ , կրօնաւորները
երկու կարգ դէմ առ դէմ կեցան . վանահայրը
մէջերնէն անցաւ . երկու կրօնաւոր՝ որոնք
սարկաւազի պաշտօն կը կատարէին , վանա-
հայրին ետեւէն կերթային նորընծային հեա՝
որ սպանիացի ասպետներու ճոխ եւ գեղեցիկ
կերպարանք մտած էր :

Այս չորսը գացին խորանին առջեւ ծունկի վրայ նստան թաւիչէ բարձերու վրայ, որ յատկապէս իրենց համար պատրաստուած էին:

Սպանիացի աղնուական մը կնքահայրութիւն կընէր Յովսէի:

Գերապայծառ Արպուէզ ալ իրեն համար պատրաստուած ասթոռը բազմած էր:

Աւետարանէն ետեւ սովորական քարոզը տրուեցաւ, ճամարտակ եւ նրբախորհուրդ բանախօսութիւն մը վանական կենաց սրբութեանն ու երջանկութեանը վրայ, անյարիր եւ մութ խօսքեր՝ խորին եւ անհասկանալի խրատակրօնութեամբ տպաւորեալ, որ ոչ սրտի եւ ոչ երեւակայութեան հետ կը խօսէին, այլ միշտ Հոռոմի միակ նպատակին վրայ կը դառնային, այն է՝

Իշխելու համար խառքեցնել:

Ունկնդիրները շատ գոհ եղան քարոզէն, այսու ամենայնիւ քարոզչին բոլոր ճարտար-խօսութիւնը չկրցաւ արգելուլ ներկայ գրողնուող գեղանի տիկնայքը՝ որ աչքերնին շարունակ գեռահասակ նորընծային վրայ չուղէին, եւ անոր գեղեցիկ դէմքն զմայլմամբ չդիտէին:

Սակ այն Յովսէ խառ գծգոյն էր, բայց իր

սեւ աչքն անսովոր տեսիլ մ'ունէր, եւ գէմքին վրայ ալ մերթ ընդ մերթ ուրախութեան ազօտ փայլակներ կը նշմարուէին :

Պատարագէն ետեւ, վանահայրը նորընծային քով գնաց .

« Ի՞նչ բանի համար այդպէս պաճուճեաց Աստուծոյ տունն եկեր ես, հարցուց :

— Հոգւոյս փրկութիւն գտնելու համար, պատասխանեց Յովսէ :

— Աշխարհի փառքերուն ու պերճութեանց մէջ կը կարծես գտնել :

— Կը հրաժարիմ աշխարհի փառքերէն ու շուքերէն :

— Միակ այդ բաւական չէ. պէտք է նաեւ մարմինէդ ու կամքէդ ալ հրաժարիս :

— Այո՛, սրբութիւն պիտի ուխտեմ, եւ խոնարհ ու հլու պիտի ըլլամ անոր՝ որ զիս փրկութեան ճանքան առաջնորդել ուզէ :

— Քալէ ուրեմն » ըսաւ վանահայրը :

Երկու կրօնաւոր բռնեցին նորընծան ու սեղանին ետեւը յատկապէս պատրաստուած տեղ մը տարին :

Մութ տեղ մ'էր գերեզմանական կանգնողով մը լուսաւորուած, որ կամարէն վար կախուած էր : Մէջ տեղը գետնին վրայ սեւ գորգ մը փռուած էր, եւ վրան դադաղ մը

դրուած սեւ ծածկութով, որուն շուրջը չորս
ճերմակ մոմ կը վառէր :

Դագաղին կափարչին վրայ ալ մեռեալի
գլուխ մը կար երկու խաչաձեւ ոսկրներու վը-
րայ դրուած . եւ դետինը ցցուած երկու նի-
զակներու վրայ ալ՝ արծաթեայ մեծ խաչ մը եւ
մեռելոց առջեւէն տարուած դրօշակմը բարձ-
րացած էր :

Նկուղին վերի ծայրը՝ կապարեայ խաչե-
լութեան մը քով՝ սեւ ծածկութով սեղան մը
կար, որուն վրայ նորընծային հագնելիք վա-
նական նոր զգեստները դրուած էին :

Այս տեղը փրկութեան նկուղ կը կոչ-
ուէր, ուր նորընծան մինակ կը թողուին :

Հոն Յովսէ իր աշխարհական զգեստները
հանեց, դոմինիկեանց զգեստ հագաւ, ճեր-
մակ պատմուճան մ'ու սեւ փորուրար մը . տը-
խուր զգեստ մը՝ որ մահուան նշանազգեստ կը
թուի : Յետոյ փետրաղարդ փեղոյրը հանեց
գլխէն, որուն վրայ բաց 'ի գերծեալ մազերէն
ուրիշ գլխարկ չպիտի դրուէր յաւիտեան . եւ
փոխանակ ոսկեճամուկ գօտիին ալ՝ որմէ սու-
րը կախուած էր, շուան մը փաթթեց մէջքը 'ի
նշան աղքատութեան . վերջապէս իր ճոխ կո-
շիկներն հանեց եւ հողաթափ հագաւ :

Այս ամենը կէս ժամու շափ տեւեց :

Նորընծային ձեռքը ջերմէ բռնուածի պէս կը դողար . սիրտն անհաւասար եւ գահավէժ կերպով կը բարախէր , եւ պաղ քրտինք մը կը վազէր սպիտակափայլ երեսներէն : Ծունգի վրայ եկաւ խաչելութեան առջեւ եւ դառն ու լալազին ձայնով աղօթել ըսկըսաւ :

Կսկծագին հեծութիւններ դուրս կը բըրդխէին կուրծքէն . անխմանալի խօսքեր կը մըրմընջէր , եւ շրթունքն անդադար անուն մը կը յեղյեղէին՝ զոր միայն ինք կրնար հասկընալ :

Սոյն միջոցին երգեհոնն իր ահարկու ներդաշնակութեամբը եւ կրօնաւորներն ահեղաձայն եւ որոտագին երգերով մատուռը կը հնչեցընէին : Նորընծայ պատանիին ջիղերը՝ որ արդէն երկար ծոմապահութեամբ գրգռեալ էին , աւելի գրգռեցան : Այն մարդկային երգերն ու երգեհոնին ձայնը՝ որ ուրիշ աշխարհէ եկած հսկայաշունչ ձայնի մը կը նմանի , տարօրինակ ազդեցութիւն մ'ըրին անոր վրայ , եւ փոխանակ սուրբ մտածութեանց՝ դժոխային գաղափարներ գլուխը գրաւեցին . . . այն սրբազան երգերը զարհուրելի հեղնութեան փոխուեցան իրեն համար , եւ փոխանակ ծաղիկներուն , խունկերուն ու լոյսերուն՝ արիւն եւ կախաղաններ . . . տեանել սկսաւ . . . կրօ-

Նաև որաց ձայնը՝ մարդկային ազգին հոգեվար-
քին անտարբերութեամբ հանդիսատես եղող
սատանայներու սոսկալի ծիծաղ մը իրեն թը-
ւեցաւ, եւ մտքովը Ս. Աւետարանին սա տը-
խուր խօսքերը մրմռաց. « Եւ երթայցեն ա-
մենեքեան՝ ի գեհեն. անդ եղիցի լալ եւ կրճել
ատամանց : »

Այն ժամանակ նորընծային այնպէս թը-
ւեցաւ որ կրակէ ձեռք մը իր մերկ եւ պառ
ձեռքը բռնեց, եւ ծաղրածու ժանտ ու դը-
ժոխային ձայն մ'իր ականջն ՚ի վար ըսաւ .

« Եկու : . . »

Եւ իսկոյն այն աներեւոյթ առաջնորդին
կոչմանն ակամայ հնազանդելով, անդունդէ
անդունդ գլորեցաւ տաք եւ խառնաշունչ մըթ-
նոլորտի մը մէջէ եւ անհուն վիճի մը յատակը
հասաւ :

Հոն մ'նաց երկրին խորոցը մէջ : Թանձր
գիշեր մը զինքը պատեր էր ծանր ու սեւ վե-
րարկուի մը պէս. շնչառութիւնը քանի կեր-
թար կը դժուարնար, եւ կը թուէր իրեն թէ
ողջ ողջ գերեզմանի մը մէջ փակուեր էր :

Բայց նոյն վայրկենին դուռ մը բացուե-
ցաւ իր առջեւ, եւ տարօրինակ տեսարան մը
ներկայացաւ աչքին :

Անհուն, զարհուրելի եւ հրատապ տեղ մ'էր :

աւսկից ժահաբոյր բոց մը դուրս կելնէր :

Այլանդակ եւ գարշատեսիլ ճիւղներ լայնատարած թեւերով կը թռչէին այն անհուն տարածութեան մէջ՝ կրակին սեւ շողիներուն վրայ, անուշի ու վայրագ ուրախութեամբ կոռնային, եւ դիւական ծիծաղներով երեսնին կը ծռմուկէին : Յետոյ տխուր եւ անախորժ ձայնով մը միահաղոյն կը կրկնէին .

« Ահա կուգան, ահա կուգան . . . »

Յովսէ սկսաւ նայիլ :

Անթիւ կրօնաւորաց լեզէոններ այն ընդարձակ դիւարանին դռնէն ներս կը խուժէին, ետեւէ ետեւ կանցնէին, եւ քանի յառաջ կերթային՝ յաւիտենական հրդեհին կարմիր լուսովը կը տեսնէր որ իրենց առջի կերպարանքը կը փոխէին եւ այլանդակ կենդանիներու ձեւեր կառնուին :

Նորընծային գրգռեալ երեւակայութեան հնարած այս դժնդակ տեսիլը զարհուրեցաւց դինքը, եւ սուր ծիծաղ մը կոկորդէն դուրս պայտեց . Արպուէզ հաւատաքննիչը տեսեր էր վագրի կերպարանքով բայց սագի կտուցով ու թեւերով :

Այս երեւակայական տարժանելի տեսիլներուն սաստիկ տկարութիւն մը յաջորդեց : Երբոր կրօնաւորները նորընծան առնելու եւ նո-

րէն եկեղեցին տանելու եկան , հազիւ կրնար
ուտքի վրայ կանգնիլ : Քալուածքը ծանր ու
տարտամ էր . դժգոյն երեսը կուրծքին վրայ
ծռեր էր , եւ դժուարաւ շունչ կառնուր :

Բայց խորանին մօտ հասած ժամանակ
Պետրոս Արպուէզը տեսաւ եպիսկոպոսական
աթոռին վրայ . այս տեսիլը քիչ մը սթափե-
ցուց զինքը . ատելութեան փայլակ մը ցայ-
տեց իր նուաղեալ աչքէն եւ արիւնը նորէն
սիրտը դարձաւ : Վերատին կենաց խկութեան
մէջ մտեր էր :

Այն ժամանակ ծունկի վրայ եկաւ մերկ
քարայտակին վրայ առանց իր կնքահայրն
հետ ունենալու , ինչպէս որ արարողութեան
սկիզբն ունեցեր էր . ալ այնուհետեւ Աստուծ-
մէջ զատ հայր չունէր :

Անյողողող ձայնով մ'իր ուխտն արտա-
սանեց : Վանահայրը զանոնք ընդունեց , եւ
վերջին աղօթքն ըսուելէ ետեւ , երգեհոնն իր
վսեմ ներդաշնակութիւնն սկսաւ եւ կրօնա-
ւորներն ալ Ձեզ Աստուծոյ հովանեմէ երգեցին :

Այս վերջինը շնորհակալութիւն մ'էր Աս-
տուծոյ՝ սատանային ձեռքէն հոգի մը ազատ
ուելուն համար :

Երգը լիննալէն ետեւ ուխտեալը դադարի
մը մէջ տարածեցին , եւ հոգեհանգատեանն պիտի

տօն կատարել սկսան : Այս միջոցին , Յովսէ , յողնած եւ սրտայուզութենէ տկարացած խոր քուն մը ննջեց : Ար թուէր թէ իրեն համար խաղաղութիւն եւ հանգիստ գտնելու տեղ մի միայն գերեզմանն էր : Դագաղին ծածկոցը որ իր վրայ փռուած էր՝ զինքը աշխարհի կեանքէն եւ անոր յարակից վիշտերէն բաժնած էր :


Կրօնաւորները դագաղը վերուցին ստորերկրեայ դամբարանը իջեցընելու համար : Նորատի կրօնաւորն այս շարժումն ալ չիմացաւ : Երբոր այս անզգայ քունէն արթնցաւ , վանքին ստորերկրեայ նկուղներուն մէջ միայնակ էր , չորս կողմէն գերեզմաններով ոսկրոտիներով շրջապատեալ :

Ասոնք էին դոմինիկեան կրօնաւորի մը ուխտագրութեան արարողութիւնները : Այս ուխտն ընելէն ետեւ կրօնաւորը վանական կենաց անձնասէր վայելքներուն մասնակից կըլլար :

Երբոր Յովսէ արթնցաւ , խորին հառաչանք մը կուրծքէն դուրս բղխեց , եւ տխուր նայուածք մը ձգեց իր շուրջը :

«Մահը , մրմռաց . այո՛ , մահը քաղցր բան է . կը միացընէ . . . բայց ես , դեռ չեմ կրօնար մեռնիլ . . . ո՛հ , ո՛չ , գոչեց զայրագին . մեռնելէ առաջ պէտք է վրէժս անուսմ :

Տէրնանստ , յարեց Յովսէ ցած ձայնով , որ-
պէս թէ այն մահաշշուկ տեղէն հեռացած ժա-
մանակ աներեւոյթ էակի մը հետ կը խօսէր .
Տէրնանստ , սպասէ տակաւին . Հատ Հանցնիր . . . :



ԳԼՈՒԽ ԺԱ .

ՀԱՒԱՏԱՔՆՆՁԻ ՄԸ ԿԻՐՔԸ

Երկու ամսէ 'ի վեր Տուորէզ՝ գրեթէ հը-
րաշքով Պետրոս Արպուէզի հալածանքէն ա-
զատած՝ հանդիստ կապրէր առաքեալին պաշտ-
պանութեան ներքեւ , անոր ընտրած ապաս-
տանարանին մէջ . Երկու ամսէ 'ի վեր նաեւ ,
տարաբաղդ Մանուէլ Արկօզօ՝ Սէվիլի նախկին
կառավարիչը՝ կը հեծէր հաւատաքննութեան
մով թանտերուն* մէջ , որոնք ընդարձակ գե-

* Հաւատաքննութեան վրայ գրող պատ-
միչներն համաձայն կըսեն թէ մարդ մը հաւա-
տաքննութեան բանտը դրուելէն ետեւ , մին-
չեւ անգամ իր մերձագոյն ազգականացը հետ
հաղորդակցութիւն չէր կրնար ունենալ : Աս-
կէց զատ , եթէ մէկը անոր համար միջնորդե-
լու կամ զայն արդարացընելու համարձակէր ,
անմիջապէս ան ալ կը բանտարկուէր իբրեւ
համախոհ կամ մեղսակից :

րեզմաններ էին , ուսկից ողջ մարդ գուրս ել-
նելն հրաշք մ'էր :

Ոչ հաւատաքննչին ըրած խուզարկու-
թիւնները , ոչ ալ էնրիքէզի անդուլ ջանքը՝
որ Սէվիլի կառավարիչ եղած էր , չէին կրցեր
Տուրէզի ուր ըլլալը գտնել , որ կարմեկեանց
վանքին մէջ պահուած էր ուրիշ անուկով մը :
Հաւատաքննչին չար կիրքն աւելի բորբոքեր
էր . եւ չկրնալով գոհ ընել զայն , խորին դառ-
նութիւն մը , ներքին եւ անողոք կատաղու-
թիւն մ'այս պղծագործ կրօնաւորին սիրտը կը
կրծէր , այնպէս որ իր վրէժն ամեն օր իր դա-
տաստանին ներկայացած թշուառներէն կառ-
նուր :

Յովսէի թելադրութիւններէն մղեալ , եւ
իր վայրագ բնութեան ժանտ հակումներուն
մէջ աւելի եւս գրգռուելով այն նորատի կրօ-
նաւորէն՝ որ իր չար ոգին կամ սատանան կը
թուէր , Պետրոս Արպուէզ համայն Սպանիոյ
անէծքն իր գլխուն վրայ կը կուտէր . բայց
ոչ դժնեայ տանջանքներուն տեսքը , ոչ ալ
խարոյկներու , կառափնարաններու եւ կախա-
ղաններու եղերական հանդէսները չէին կըր-
նար յագեցընել անոր դազանական սրտայու-
զութեանց պէտքը , այն զգայական բոցե-
ռանդ բաղձանքը , զոր գեղանի Անտալուզու-

հւոյն (Տօլորէղի) յիշատակը կարթնցընէր միշտ Արպուէղի վատ սրտին մէջ :

Իր ցասումը քաղաքապետին վրայ ծանրացընելուն նպատակն ուրիշ բան չէր, եթէ ոչ անոր գժբաղդ աղջիկն իրեն անձնատուր ըլլալու հարկադրել : Այս բանը շատ վարպետութեամբ մտածեր էր, իբրեւ կանանց սիրտը ճանչող մարդ մը : Ի՞նչ օգուտ ունէր աղջիկը բռնել, հաւատաքննութեան բանտերուն մէջ ձգել, խոշտանգանաց եւ մահուան մատնելը . վեհսիրտ օրիորդը կրնար չարչարելի ու մեռնիլ, վասն զի կը սիրէր . . . բայց հայրը նեղել, հաւատաքննութեան տանջանքներուն մատնել, խայտառակութեան եւ խարոյկի դատապարտելն անտանելի էր օրիորդին : Տեսնել իր ծերունի եւ պատուական հայրը հաւատաքննութեան անողոք ատենին դահճացը ձեռք մատնուած, այն հայրը՝ որ զինքը գորովագին սիրեր էր, որ իր կեանքն այնչափ երջանիկ ու քաղցր ըրեր էր, որ անմայր մնացած ըլլալն զգալի չէր ըրեր իրեն . այսպիսի աղէտ մը ժայռ մ'էր՝ որուն չէր կրնար դիմանալ օրիորդին արիութիւնը : Ուստի Պետրոս Արպուէղ մէկ բանի մը վրայ կը զայրանար, այն է օրիորդը չկրնալ գտնելուն վրայ :

Ընդունայն Քրիստոսի զինուորները զայն
փնտռելու հանուած էին . ընդունայն Աարտու-
նայի խաւարային եղբայրութիւնն առատ վար-
ձուց եւ պաշտպանութեան հրապուրիչ խոս-
տումներ առած էր . նախախնամական պաշտ-
պանութիւն մը տարածուած կը թուէր օրի-
որդին վրայ , զոր սուրբ մարդ մը իր պահպա-
նութեան ներքեւ առած էր . կամ թէ երկնից
տնօրէնութեանցը մէջ հալածանաց ժամանա-
կը դեռ չէր եկած անոր համար :

Բայց մօտ էր գալը :

Պետրոս Արպուէզի ջանից 'ի դերեւ ելնե-
լըն այն աստիճան դառնացուցած էր զինքը ,
որ իր ցօփ կենաց սովորութիւններն անգամ ի-
րենց հրապոյրը կորսնցուցեր էին : Ջեղխու-
թիւնն համ չունէր իրեն համար . կիները՝ զոր
մոլութիւնը կամ երկիւղն անոր անպարկեշտ
կրիցը կը մատնէր , զինքը պաղ կամ գրգռեալ
կը թողուին այն վաղանցուկ արբեցութենէն
ետեւ , որուն հեշտ վերադարձն անտանելի
կըլար իրեն :

Տոլորէզի միայն յիշատակն արբեցուցիչ
հրապոյրներ ունէր իրեն համար : Մեծ հաճոյք
մը կ'զգար բացարձակ առանձնութեան մը
մէջ ընկղմելէ , ուր Տոլորէզին զմայլելի պատ-
կերը միայն կը ներկայանար իր աչքին : Ըսել

չէ թէ այս ապականեալ սիրտը ճշմարիտ սիրոյ մը ընդունակ էր . այլ այն ծածուկ օրինաց ենթակայ էր , որ կը պահանջէ թէ ամենէն ժանտէակը երբեմն գեղեցիկ ու անարատ էակի մը ազդեցութիւնը կրէ . եւ առանց անոր երկնային էութիւնը հասկընալու , առանց անոր բարձրութեանը հասնելու՝ զղջմամբ՝ որ մարդս կը վերանորոգէ , կամաւ եւ բերկրութեամբ ինքզինք գերի ընէ այն սիրուն էակին :

Դժբաղդաբար այս տեսակ կրից մէջ մարդուս հոգին այն աստիճան նուաճուած է զգայութիւններէն , որ ասոնք գոհ ըլլալնուն պէտ, սիրոյ կայծը՝ որ ժայռը կակղցուցեր էր , կը մարի . եւ անասնական ամեհի էակէ մը զատ ուրիշ բան չմնար հոն՝ ուր քանի մը վայրկեան առաջ մարդ մը տեսնել կը կարծուէր :

Սէվիլի հաւատաքննիչը՝ ծայրայեղ եւ ապարդիւն կրից անհաւատալի զառանցանաց մէջ ընկղմեալ , զինքը հալածող ցնորից դէմ ասպաստան մը կը փնտռէր իր պարտէզներուն մթորակ դալարեացը ներքեւ :

Ինք իր ձեռքէն փախչելու կը ջանար :

Բայց փոխանակ իր արեան յուզումը հանդարտելու, ծաղկեալ նարնջենիներուն անուշ բայց ազդու հոտը՝ որ ամենէն իմաստուն խել-

քերը շփոթելու կարող սիրագրգիռ դեղ մ'է ,
անոր ուղեղին երակները չափազանց կը ցնցէր
ու կը բորբոքէր : Աարծես թէ հեշտութեան
հեղեղներ շուրջը կը պտըտէին այն արբեցու-
ցիչ հոտերուն հետ :

Օդն արդէն գաղջ էր , ինչպէս որ ամառը
կըլլայ հիւսիսային երկիրներուն մէջ , թէ եւ
դեռ ապրիլի վերջերն էր :

Աապոյտ երկնքին ներքեւ հազարաւոր
աստղեր կը փայլէին թովիչ աշքերու պէս :

Գիշերը լուսաւոր չէր , եւ սակայն ճեր-
մակ ու թափանցիկ գոլորշիներ արագընթաց
ստուերներու պէս կը սահէին կանցնէին ա-
ռարկայներուն վրայէն :

Այս տեսարանին լռութիւնը շփոթելիք
որոշ ձայն մը չկար , բաց 'ի տերեւոց սոսափիւ-
նէն' որ ծածուկ համբոյրներու ներդաշնա-
կութեան կը նմանէր :

Շատ չանցած , Պետրոս Արպուէզ յոգ-
նած , բնութեան անդուլ կռիւներէն եւ հոգին
ու մարմինը թուլցընող աննպատակ գրգիռէն
պարտասած , պարտէզին մէջ տեղ տեղ դըր-
ուած մարմարեայ նստարաններուն մէկուն վը-
րայ ինկաւ , բոցավառ գլուխը ձեռացը վրայ
կրթնցուց , եւ կատաղութեան ու կսկծանաց
արտասուքներ վիժել սիրտն այն անագորուն

աչքերէն՝ որոց նայուածքն ամբողջ գաւառ
մը կը դողացընէր :

Եւ սաստիկ թուլութիւն մը վրան գա-
լով, քանի մը վայրկեան այնպէս մ'նաց՝ առանց
իր լայն կուրծքէն արձակած հառաչանքներով
դինքը տոչորող կակիծն յայտնելու :

Երկչոտ տղու մը պէս յաղթուած, հաւա-
տաքննութեան վազրը կը ննջէր այն ահռելի
քունով՝ որ տեսնողին սարսափի կը պատճառէ :

Յանկարծ թեթեւ ոտնաձայն մ'ելաւ ա-
ւազին վրայ . նարնջենիներուն ոստերը մեղմ
խոշիւնով մը զատուեցան, եւ գահավէժ շըն-
չառութեան մը շշուէնն հոն տիրող լռութիւնը
վրդովեց :

Պետրոս Արպուէզ իր անքնական քունին
մէջ լսեց այս շշուէնը . բայց իր առջի զգացո-
ղութեանց ուժգնութենէն այնպիսի թմրու-
թիւն մը եկած էր վրան, որ չկրցաւ ոչ աչքը
բանալ եւ ոչ ալ իմանալ թէ ո՞վ էր եկողը : Ա-
նուշ երազի մը ազդեցութեան ներքեւ էր . եւ
Տոլորէզի պատկերը՝ որ միայն իր քունին ժա-
մանակ իր հոգւոյն աչացը կը ներկայանար,
իր մօտը լսուած շշուէնին հետ խառնուելով,
հաւատաքննչին երազն այնպիսի իրականու-
թեան կերպարանք մ'առաւ, որ թուեցաւ ի-
րեն թէ իր տէնչալի Տոլորէզն իրօք կը տեսնէր :

Յիրաւի մէկը կը քալէր Պետրոս Արպու-
էզի մօտ : Հաւատաքննիչը կարծելով թէ Տո-
լորէզն էր որ իրեն կը մօտենար , թեւերն եր-
կընցուց եւ անձկագին սեղմամբ իր սիրելի
Յովսէն բռնեց , որ ինքզինք Պետրոս Արպու-
էզի բազկացը մէջ գտնելով սուր ձայն մ'ար-
ձակեց :

Պետրոս Արպուէզ աչքը բացաւ , եւ իր
առջեւ կանգնած տխուր դէմքը տեսնելուն
պէս՝ ուժով մը ետ հրեց :

Յովսէ գլորելով գնաց քանի մը քայլ ան-
դին մարդագետնին վրայ ինկաւ :

Խօլականի պէս դժգոյն էր , եւ սիրտն հա-
զիւ կը բաղխէր :

« Անիժեան ըլլայ այս երազը , դոչեց հա-
ւատաքննիչը շփոթ ձայնով մը . կարծեցի թէ
կնոջ մը փափուկ մարմինը կը գրկեմ : » :

Յովսէ չպատասխանեց . վասն զի կարո-
ղութիւն չունէր : Սարսափելի յիշատակ մը
ներկայացեր էր առջեւը . եւ երբ Պետրոս Ար-
պուէզ զինքը թեւերուն մէջ առեր էր , զար-
հուրելի սոսկմամբ մը պաղեր մնացեր էր :

Այն զարհուրանքը շատ չանցած փարա-
տեցաւ : Հաւատաքննիչը ձեռքը ձակտին վը-
րայ տարաւ գաղափարներն , հաւաքել ու-
զող մարդու մը՝ պէս . յետոյ իր սիրելւոյն նա-

յելով որ^ն անշարժ եւ սահմուկած կեցեր էր ,
բարձր ծիծաղ մ'արձակեց :

« Խեղճ տղայ , ըսաւ , քեզ կին կարծե-
ցի : »

Յուրտ քրտինք մը ծածկեց նորատի դո-
մինիկեանին ճակատը :

« Օ՛ն , ել կանգնէ , ըսաւ հաւատաքրն-
նիչը , քեզի հետ պտոյտ մ'ընենք սա ծառե-
րուն մէջ . եւ օգնէ ինձի սա չար ոգիները հա-
լածելու , որ օղին մէջ լցուած են այս դիշեր :
Ժիրալտայի այսերը* ժամադիր եղեր են տու-
նըս : Կերազեմ եւ իսկական կենօք չեմ ապ-
րիր . օ՛ն , Յովսէ , կաղաչեմ , օգնէ ինձ որ նո-
րէն իսկական կենաց մէջ մտնեմ : »

Այս դուարձախօսութեանց միջոցին Յով-
սէ ինքզինք գտեր էր , Ելաւ կանգնեցաւ , եւ
հաւատաքննիչն ողջունելով , հարցուց թէ
ի՞նչպէս էր :

« Լաւ եմ , խիստ լաւ եմ , սիրելի Յով-
սէ » ըսաւ հաւատաքննիչը դուարթ դէմքով :

Գիշերուան դժնդակ երազներուն հետքը
չէր մնացած :

* Արաբացւոցմէ մնացած աւանդութիւն
մը կար թէ Ժիրալտայի աշտարակը դեւերը
չինած եւ իրենց բնակարան ըրած էին :

Այսպէս էր Պետրոս Արպուէզ . մէկ զգածումէն միւսը կանցնէր . այս վիճակին մէջ են գրեթէ այն ամեն մարդիկ՝ որ սրտերնուն մէջ շատ բռնութիւն եւ քիչ խորութիւն ունին :

Սակայն Տոլորէզի պատկերը մտքէն անհետացած չըլլալով , շատ շանցաւ նորէն հաւատաքննչին երեւակայութեանը ներկայացաւ , այնպէս որ Պետրոս Արպուէզ Յովսէփ հետ պարտէզներուն մէջ պտըտած ժամանակ՝ խօսակցութիւնը բնապէս իր մտածութեանց միակ առարկային վրայ դարձուց :

« Յովսէ , ըսաւ , դ՞ու ալ բան մը շեռ գիտեր :

— Ոչ , գերապայծանռ տէր , բան մը չի կրցայ իմանալ : »

Այս հարց-պատասխանը խիստ մութ էր . բայց այս երկու մարդիկն իրար մէկ բառով կը հասկընային : Յովսէ հաւատաքննչին մտքին խորը գիտէր :

« Ի՞նչ կրնամ ընել , մրմռաց Արպուէզ կատաղութեամբ : Բովանդակ Քրիստոսի զինւորութիւնը ոտք հանեցի . քիչ մը ոսկիով ճանքայ հանեցի ամբողջ գնչուններուն թշուառցեղը , որոց արհեստն է լրտեսութիւնն ու ըսպանութիւնը . . . բայց բան մը չկրցայ գրտնել : Սէվիլի բոլոր վանքերն հետազօտեցի ,

գարձեալ չգտայ: Արդեօք Տոլորէզ Սպանիայէն
գո՛ւրս ելած է: Այն գորովասիրտ ու բարե-
պաշտ աղջիկն իր անձն ազատելու համար իր
հայրն իմ վրէժխնդրու թեանս թողուցած կըր-
նայ ըլլալ:

Պետրոս Արպուէզ ճշմարիտ կը խօսէր եր-
բոր կը հաւաստէր թէ Սէվիլի բոլոր վանքերն
հետազօտեր էր: Կարմելեանց վանքն ալ ա-
զատ չէր մնացած այս խուզարկութենէն,
բայց պարզ պարագայ մը Տոլորէզի ազատու-
թեանը պատճառ եղեր էր: Որովհետեւ Տոլո-
րէզ միանձնուհի ըլլալու գիտաւորութիւն չէր
յայտնած, եւ առաքեալին յատուկ յանձնա-
րարութեամբը գրուած էր վանքը, ուստի
բացարձակ ազատութիւն կը վայելէր հոն.
վանական հրահանգներէն ինչ որ աշխարհա-
կան բարի կաթողիկի մը պէտք կրնային ըլլալ
եւ յարմարիլ, զանոնք միայն կը կատարէր:
Տոլորէզ ծաղիկներու վրայ շատ սէր ունէր.
եւ մենաստանին ընդարձակ պարտէզին մէջ
առանձին տեղ մ'ընտրած էր, ուր իր խիստ
սիրած տունկերը ձեռքովը կը մշակէր: Հա-
ւատաքննչին այցելութեան ժամանակն ալ այն
տեղ գտնուեր էր:

Սակայն Պետրոս Արպուէզ հարցուցեր էր
արբասուհիին թէ իր տեսածներէն զատ նո՞

ըընծայուհիներ կամնոր ուխտադիրներ չու-
նէր : Բայց Տոլորէզ ոչ մէկն էր եւ ոչ միւսը .
եւ արբասուհին ալ զանի իբրեւ առժամանակ-
եայ ազատ հիւր մը ճանչելով , անոր խօսքը
չէր ըրեր հաւատաքննչին :

Ահա այս պատճառաւ հաւատաքննիչն
համոզուեր էր որ Տոլորէզ Սէվիլէն փախած էր :

« Գերապայծառ տէր , ըսաւ Յովսէ , եթէ
ստուգիւ այդ աղջիկը փախչելով ազատիլ ու-
ղած է հաւատաքննութեան հետամտութե-
նէն , չէք կրնար գրել Արակոնի , Քասթիլի ,
Մալակայի , Քուէնսայի եւ Սպանիոյ բոլոր
դատաստանական ատեաններուն , եւ մինչեւ
անգամ թագաւորին , որպէս զի ամեն տեղ
հաւատաքննութեան դահիճներ հանեն զայն
փնտռելու գտնելու համար :

— Ո՛չ , ո՛չ , պատասխանեց Արպուէզ , ես
անոր մեռնիլը չեմ ուզեր . այլ անձը ձեռք
ձգել կուզեմ :

— Սէվիլի կառավարիչն հաւատաքննու-
թեան բանտը չէ մի :

— Անշուշտ . եւ ասոր համար է որ աղջկան
փախչիլն անհաւատալի կը թուի ինձ : Տոլոր-
էզ արիասիրտ աղջիկ մ'է , եւ իբ ծերունի
հայրը շատ կը սիրէ :

— Ո՛հ , թող գայ , թող գայ , յարեց հա-

ւատաքննիչը զառանցելով . որչափ ուրախու-
թեամբ պիտի ըսեմ իրեն . « Հայրդ պիտի ա-
ղատի , բայց դուն ինձի եղիր : » — Եւ հայրն
աղատելու համար ինքզինք ինձի կուտայ :

— Եւ հայրն ալ չազատիր , մրմռաց Յով-
սէ՛ բորենիինայուածք մը ձգելով հաւատա-
քըննչին վրայ :

— Ի՞նչ կըսես , Յովսէ՛ , չհասկըցայ , ը-
սաւ Պետրոս Արպուէզ :

— Հաշիւ կընէի , գերապայծառ տէր ,
թէ ինչ նոր տանջանք կրնանք մտածել այդ
աղջիկը վախցընելու համար , երբոր գտնը-
ուի :

— Ո՞վ է ան , ըսաւ յանկարծ Արպուէզ
քայլ մ'ետ երթալով :

— Ձեր հաւատարիմ Էնրիքէզն է , գերա-
պայծառ տէր , պատասխանեց նոր եկողը , որ
Սէվիլի նոր կառավարիչ Էնրիքէզն էր , հաւա-
տաքննութեան հին ընտանին :

— Ինչո՞ւ այդպէս յանկարծ քովս կու-
գաս , ըսաւ Արպուէզ բարկութեամբ :

— Բարի լուրեր կը բերեմ ձեր բարձրու-
թեան , պատասխանեց Էնրիքէզ խոնարհու-
թեամբ , եւ կարծեցի թէ

— Խօսէ նայինք , ի՞նչ կայ :

— Տուորէզ Արկօզօ կարմեղեանց վանքն

է, Կուստաւքիւիւրի միւս կողմը :

— Տուրէզ . եւ երբէն 'ի վեր :

— Երկու ամսէ 'ի վեր :

— Սուտ կըսես, գոչեց հաւատաքննիչը .
ես անձամբ դացի աչքէ անցուցի այն վանքը,
եւ Տուրէզ հոն չէր :

— Հոն է, գերապայծան տէր, Ս
վրայ կերդնում՝ որ հոն է . եւ կրնամ ապա-
ցուցանել :

— Ազնի՛ւ Էնրիքէզ, գոչեց հաւատա-
քննիչն ուրախութեամբ . ազնի՛ւ Էնրիքէզ,
ի՞նչպէս կրցար գտնել :

— Գերապայծան տէր, պատասխանեց
հաւատաքննութեան հին լրտեսը կոչտ կեր-
պով մը խոնարհելով, մեղք մը գործեցի ու-
րուն թողութիւնը կը խնդրեմ Ձեր բարձրու-
թենէն : Կրօնաւորի կերպարանք մտայ, եւ
աբբասուհին խոստովանցուցի :

— Ի՞նչ կըսես, գոչեց Արպուէզ . ահա-
ւասիկ լաւ հնարք մը որ ես չկրցայ մտածել
կարգաւորութեամբս :

— Ձեր բարձրութիւնը թողութիւն կու-
տայ այս ըրածիս » յարեց Էնրիքէզ նենգաւոր
նայուածքով մը :

Հաւատաքննիչը ձեռքովը խաչնշան մը
ըրաւ օգին մէջ, եւ Սէվիլի նոր կառավարիչը

պանծանօք գլուխը վեր վերցընելով կեցաւ իր
ըրած ծառայութեան կարեւորութիւնը հաս-
կըցող մարդումը պէս :

« Շատ աղէկ , գոչեց հաւատաքննիչը
ձեռքերը շփելով , հիմա գործդ ինձ հետ է ,
խրոխտ լուկրետիա :

— Ներս երթանք , ըսաւ . Էնրիքէզ իր
կառավարութեան վրայօք տեղեկութիւններ
պիտի տայ ինձ :

— Ի՞նչ վիճակի մէջ է հերետիկոսութիւ-
նը , Էնրիքէզ , հարցուց հաւատաքննիչը ներս
գացած ժամանակ :

— Գերապայծան տէր , օր քան զօր ճա-
րակելու վրայ է զարհուրելի կերպով . վան-
քերն անգամ այդ բորէն ազատ չեն :

— Չնր սատանայ , ըսաւ հաւատաքննի-
չը . ատոր ճարը պէտք է նայինք , եւ կաթո-
ւիկութեան եռանդը տաքցընենք՝ հերետի-
կոսները չամբաստանողներն իբրեւ հերետի-
կոս խոչտանգելով :

— Ո՞վ բռնեցիք այս շաբթու :

— Տասնեւհինգ կամ քսան հոգի , գերա-
պայծան տէր :

— Ի՞նչպէս մարդիկ :

— Մեծ մասն ազնուական . երկու երեք
այ աստուածաբանութեան վարդապետներ :

որ աստուածաշնչի լատիներէնին մէջ սխալներ
գտնելու ելեր են : Քանի մ'ալ ուրիշ անձինք,
որ կաթողիկ ենք կըսեն ու Մարթին Լուտերի
կը հաւնին :

— Ատոնց մէջ ամենէն աւելի ինձ ատելի
եղողներն այն ժպիրհներն են՝ որոնք իրենց ա-
մեն գիտութիւնը, բոլոր ճարտարխօսութիւ-
նը հաւատաքննութեան իշխանութիւնը կոր-
ծանելու կը գործածեն : Յօհաննէս Ավիլա-
ցի, Լուի Կրէնատացի, ուրիշ Յօհաննէս մը՝
որ Յօհաննէս Աստուծոյ կը կոչեն, եւ այլ քա-
նի մը լուսաւորեալներ՝ որ ինքզինքնին առա-
քեալի տեղ եւ պէտք ըլլայ նէ մարտիրոսի
տեղ դրած են, ժողովրդեան սրտին մէջ ա-
պրտամբութեան ու անկախութեան արմատ-
ներ ձգելու կաշխատին . . . բայց, կերդնում
յանուն Յիսուսի, որ ապակիի պէս պիտի փրշ-
րին հաւատաքննութեան առջեւ . . . :

— Գերապայծան տէր, ըսաւ Յովսէ,
դուք կարող չէք այդ ամեն բերաններն համ-
րացընելու :

— Այո՛, գոչեց Պետրոս Արպուէզ . տաղտ-
կացած եմ այն անվախճան քարոզութիւննե-
րէն՝ որոնց ներքին նպատակը ազատութեան
բաղձանք եւ արիութիւն ազդել է ժողովրդ-
եան : Այդ անձինքը պարզ եւ խոնարհ կը ձե-

ւանան զօրաւոր ըլլալու համար . եւ ժողովուրդն ալ կը հաւատայ ատոնց , որովհետեւ ժողովրդեան խօսելու համար իրենք ալ ժողովուրդ կըլլան : Բայց , կենդանի է տէր , անոնց ամեն մէկ խօսքը տապարի հարուած մ'է Ս . Պետրոսի աթոռին . եւ եթէ Քրիստոսի փոխանորդը եկեղեցւոյ ճշմարիտ շահը կը ճանչէ , թոյլ կուտայ ինձ որ ամենայն ազատութեամբ խստանամ անոնց դէմ եւ սոսկ աշխարհականներու պէս այրեմ զանոնք , վասն զի գործով հերետիկոսներ են . եւ թէպէտ եկեղեցական կարգ ունին , բայց սրտով ու կամօք քաժնուած են Հռոմի եկեղեցիէն :

— Գերապայծան տէր , ըսաւ Յովսէ պաղութեամբ . ծառը փճացընելու համար արմատները խլել պէտք է . քանի որ մէկ հերետիկոս մը մնայ Սպանիոյ մէջ , հերետիկոսութիւնը նորէն կարտադրի այն մուլաբոյսերուն պէս՝ որոց ամենափոքր մէկ շիւղը պէտք է հողին մէջ թողուլ :

— Ատոնք կարգի կը դնենք , ըսաւ հաւատաքննիչը . զիրենք բնաջինջ ընելնէս զատ՝ մինչեւ անդամ կոխած հողերնին կը վերցընենք :

— Աստուծոյ փառացը համար ամեն բան ընելու է , ըսաւ Էնրիքէզ կեղծաւոր ձայնով

մը . ես ալ արդէն կը խորհէի այդ բանին վը-
րայ : »

Այսպէս խօսակցելով հաւատաքննչին բը-
նակարանին դուռը հասեր էին :

« Ներս չես գար , Յովսէ , ըսաւ Պետրոս
Արպուէզ :

— Ներեցէք , գերապայծառ տէր , քա-
րոզ մ'ունիմ պատրաստելիք վաղուան համար :

— Քարոզէդ ետեւ հետերնիս կարմել-
եանց վանքը եկու :

— Պատրաստ եմ Ձեր բարձրութեան հը-
րամանին » ըսաւ նորընծան ու մեկնեցաւ գը-
նաց :

Արպուէզ եւ Սէվիլի նոր կառավարիչը
ներս մտան :

Յովսէ դուրս ելաւ , եւ ոտքն հաւատա-
քըննական պալատին դռնէն դուրս դրած ժա-
մանակ՝ դէմը կին մ'ելաւ դլխէն մինչեւ ոտքը
սեւազգեստ , որ Յովսէի դոմինիկեան կերպա-
րանքէն հաւատաքննութեան անդամ ըլլալը
մակաբերելով , ձեռնամած քովը գնաց , եւ
վշտագին ձայնով մը .

« Վերապատուելի հայր , գոչեց , զիս
գերապայծառ Արպուէզի ներկայացուցէք :

— Ո՞վ էք դուք , հարցուց Յովսէ զար-
մանալով , ի՞նչ գործ ունիք հաւատաքննչին

հետ :

— Հօրս կեանքը պիտի խնդրեմ իրմէ ,
պատասխանեց կինը խռովեալ ձայնիւ . հօրս՝
որ անմեղ է եւ իբրեւ հերետիկոս կամքաս-
տանուի . հօրս՝ որ Սէվիլի կառավարիչ էր , եւ
հիմա . . .

— Տոլորէ՞ղն է , գոչեց Յովսէ անգուսպ
հետաքրքրութեամբ օրիորդին ազնիւ դէմքը
նկատելով , որ կէս մը ծածկուած էր սեւ աղ-
նենկարներու ներքեւ :

— Ուսկի՞ց գիտէ՞ք անունս , ըսաւ աղջի-
կը դողալով :

— Տոլորէ՞ղ Արկօղօ , յարեց դոմինիկեանը
քաղցր ու գորովալից ձայնիւ , մի մօտենար
այս տանս , վասն զի հոս անպատուութիւն
կամ մահ կ'սպասէ քեզ :

— Ինչէ՞ն գիտէ՞ք » հարցուց Տոլորէ՞ղ սար-
սափելով :

Դոմինիկեանն օրիորդին թեւէն բռնեց ու
մէկ կողմ քաշեց :

« Եկ՛ո՛ , խեղճ աղջիկ , ըսաւ Յովսէ , եկ՛ո՛ .
եթէ կուզես անարատ մնալ , եթէ կուզես որ
հայրդ ազատի , պահէ՛ ինքզինքդ , մանաւանդ
ջանա՛ որ Պետրոս Արպուէզը չտեսնէ քեզ : »

Տոլորէ՞ղ դոմինիկեանին գորովալից տըխ-
րութենէն վատահուժիւն առնելով « Ի՞նչ

ընեմ ուրեմն որ հայրս ազատեմ :

— Ինքզինքդ ծածկել եւ թողուլ որ ես պէտք եղած ջանքն ընեմ , պատասխանեց Յովսէ : Վստահ եղիր ինձ , օրիորդ :

— Ձեզի՞ , ըսաւ օրիորդը կասկածոտ աչօք , վասն զի միաքը բերաւ որ կրօնաւորն հաւատաքննութեան պաշտօնեայ մ'էր :

— Այո՞ , ինձի , պատասխանեց Յովսէ դառնութեամբ . ինձի , որ այս հարանշան ըզգեստին ներքեւ ջերմ ու եռանդուն սիրտ մը կը կրեմ :

— Դեռ երիտասարդ է , ըսաւ ինքնիրեն Տոլորէզ՝ կրօնաւորին ազնիւ դէմքն ու սպիտակ ձեռքերը դիտելով :

— Ո՛հ , ըսաւ , ինչո՞ւ դոմինիկեան եղեր էք :

— Քեզ ազատելու համար թերեւս , ըսաւ Յովսէ կարեկցութեամբ : Հաւատա ինձ , օրիորդ , կենացս գաղտնիքը մի փնտուեր : Ըզգեստը երբեմն սրտին վէրքերը ծածկելու դիմակ մ'է :

— Դո՞ւն ալ , գոչեց Տոլորէզ , անզսպելի համակրութեամբ մը ինքզինք նորասի կրօնաւորին ձգուած զգալով :

— Ձիս մի մտածեր , քեզ մտածենք , ըսաւ Յովսէ , ի՞նչ պիտի ըլլաս դու հիմա :

— Ինչ որ Աստուած կամի, ըսաւ :

— Ո՞ւր պիտի պահուըտիս :

— Կարմելեանց վանքը պիտի դառնամ :

— Ամենեւին, ըսաւ Յովսէ . հաւատաքրննիչն այս իրիկուն իմացաւ հոն ըլլալդ, եւ վաղը անձամբ պիտի երթայ ստուգելու :

— Ի՞նչպէս կրցաւ իմանալ, հարցուց Տոլորէզ . առաքեալն իմ անունս մէկու մ'ըսած չէր, մինչեւ անգամ արբասուհիին :

— Խեղճ տղայ, կը հարցընես թէ ի՞նչպէս հաւատաքննութիւնն ամեն խղճմտանքներու գաղտնիքը երեւան կը հանէ : Ամեն բան գիտէ, կըսեմ քեզ . անոր համար անբռնաբարելի բան չկայ, մինչեւ անգամ գերեզմանը* :

— Աստուած իմ, Աստուած իմ, գոչեց Տոլորէզ, գլուխը ձեռացը մէջ ծածկելով .
Եւ սկսաւ լալ :

« Հանդարտէ, հանդարտէ, քոյր իմ, ըսաւ Յովսէ, այս քաղցր անունը գործածելով

* 1559 ին Սպանիոյ վալատօլիտ քաղաքին մէջ եղած ընդհանուր հաւատաքննական դատաստանի մը մէջ, էլէօնօր տէ վիպէրօ անուն տիկնոջ մը ոսկրներն ու արձանը այրեցին : Յիշեալ տիկինն իբրեւ կաթ ուրիկ մեռած էր, բայց ետքը տանջանքով բռնադատուած վկայներու խոստովանութեամբ ամբաստան-

որպէս զի առաւել վատահուժիւն ազդէ անոր,
եւ մանաւանդ վշտակցութեամբ ինքզինք
դէպ անոր ձգուած զգալով :

— Ճշմարիտ է, հայր իմ, լալն անգամ
հերելի չէ :

— Ոչ, ըսաւ Յովսէ. հեծութեանց ձայնն
առաւել կը գրգռէ վագրը, եւ անոր արեան
ծարաւն աւելի կը բորբոքէ :

— Կամաց խօսէ, հայր իմ, խօսքերնիս
կրնայ լսուիլ :

— Այո՛, իրաւունք ունիս. այս շէնքին
քարերն անգամ լրտեսութեանց ու մատնու-
թեանց արձագանգներ են : Ուրեմն լռենք.
բայց ինչ բաժնուելէդ առաջ, ըսէ ինձի,
խեղճ տղայ, ի՞նչ պիտի ըլլաս :

— Մի վախնար, ըսաւ, ես ապաստան մը
ունիմ. բայց դու խօսք կուտանս ինձ հայրս
ազատելու :

— Ամենասիրելոյս հոգւոյն վրայ կերդ-

ուելով թէ իր տանը մէջ բողոքական արարո-
ղութիւններ կատարելու թոյլտուութիւն ը-
րեր է, իր յիշատակն իբրեւ հերետիկոս դա-
տապարտուեցաւ, ինչքը գրաւեցաւ, տու-
նը հիմնայայտակ քանդուեցաւ՝ մէկ մ'ալ չի
շինուելու պայմանաւ, եւ իր սերունդը վա-
տանունութեան դատապարտուեցաւ :

նում որ , ըսաւ Յովսէ , եթէ հայրդ մեռնի ,
դիտնալու ես որ ես չեմ կրցած զայն ազատել ,
եւ քեզ ալ անհնարին էր ազատել զայն թէ եւ
ինքզինքդ զոհէիր . կը հասկընաս , Տուորէ՞ղ :

— Կը հաւատամ խօսքիդ , ըսաւ օրիորդն
անոր ձեռքը սեղմելով : Բայց ուր կրնամ քեզ
տեսնել , հայր իմ :

— Մտիկ ըրէ , ըսաւ Յովսէ . Թրիանայի
արուարձանին մէջ գնչուներուն փողոցին ծայ-
րը զաղիր տեղ մը կայ , որ Պուէնա-Վէնթու-
րայի պանդոկ կը կոչուի : Անգղերու ճշմարիտ
բոյն մը , ուր գողութիւնը , սպանութիւնն ու
աւազակութիւնն ամեն իրիկուն ժամադիր
կըլլան : Չարաշշուկ ու ահռելի տեսք մ'ունի
այն տեղը : Հոն շնական ծիծաղներէ եւ սար-
սափելի հայհոյութիւններէ զատ ուրիշ բան
չլսուիր :

Հոն կը յաճախեն Սպանիոյ բոլոր չարա-
գործները , աւազակները , լկտի աղջիկները ,
գնչուներն ու կրօնաւորները , որոց բերնէն
պիղծ խօսքերէ ու հայհոյանքէ զատ ուրիշ
բան չլսուիր : Արբեցութիւնը հաւասար ապ-
շութեան մէջ կը շփոթէ միանգամայն ընկե-
րութեան դիրտերն եւ զայն վարելու իրաւուն-
քըն իրենց սեփականողները :

Հոն կը նիւթուին ամօթալի ոճիրները ,

դատաստանական սպանութիւնները , անիրաւ
հալածումները , զրպարտութիւնները , մատ-
նութիւնները , մարդ վերցընելները , գողու-
թիւնները . վասն զի այն գարշելի տեղը ամեն
ոճիրներու գործիներ կը գտնուին :

— Վերջապէս ի՞նչ ըսել կուզէք , հայր ,
ըսաւ Տոլորէզ զարհուրած :

— Ըսել կուզեմ թէ հոն պէտք է գաք
զիս գտնէք :

— Երանգ կը տեսնեմ արդեօք , գոչեց
խեղճ օրիորդը . ի՞նչ բան ունինք հոն , հայր
իմ :

— Դուն հիմա հաւատաքննչին տունը
կուգայիր , այնպէս չէ : Հաւատա ինձի , օրի-
որդ , որ Պետրոս Արպուէզի պալատը՝ նկա-
րագրած սոսկալի տեղէս հազարապատիկ ա-
ւելի վտանգաւոր է : »

Յովսէի աչքերն աղօտ հուր մը կը փայլա-
տակէին . այտերը՝ որ սովորաբար դեղնած է-
ին , կարմրեր կրակ կտրեր էին . կը թուէր թէ
ներքին տենդ մը զինքը կը տոչորէր :

Տոլորէզ զանի խենդ կարծեց . բայց յան-
կարծ Յովսէ ձայնը մեղմելով , Տոլորէզի նայե-
ցաւ խանդաղատանօք .

« Գնա , խեղճ տղայ , ըսաւ , մի վախ-
նար Յովսէի ըսած տեղն երթալու . իմ ջանքս

քեզ աղատել է՝ կեանքս իսկ վտանգի մէջ դընելով :

— Պուէնա-Վէնիթուրայի պանդոկը , յարեց կրօնաւորը , Քօքօ անունով սասիկանութեան զինուորի մ'է , որ քաջ , պարկեշտ եւ ինձի անձնուէր տղայ մ'է . քոյր մ'ալ ունի Շարա անուն , պատուական աղջիկ մը , որ այլոց ծառայութիւն ընելու համար ինքզինք դետը նետելու պատրաստ է : Այս խեղճ անձինքն աղքատ են , կրցածնուն չափ ապրուստնին կը հայթայթ են . բայց կրնաս վստահիլ անոնց : Եթէ պէտք ունենաս ինձի , բաւական է որ ըսես Քօքօին կամ քրոջը թէ « Հայր Յովսէն տեսնել կուզեմ » . եւ կը տեսնես : Բայց զգուշացիր . նայէ որ միայն գիշերը դուրս ելնես եւ ծպտեալ :

— Մի վախնար , ես քեզ բերան չեմ տար :

— Բայց , յարեց Տոլորէզ , չի՞ վախցուիր որ . . .

— Ամենեւին , ըսաւ Յովսէ . ոչ ոք մըտքէն կանցունէ թէ դուն այն տեղ կերթաս . միայն ջանա որ հասարակ ժողովրդեան աղջիկներու կերպարանքով երթաս հոն :

Այսպէս խօսելով Թրիանայի կամուրջին առջեւ հասեր էին : Երբոր կամուրջն անցան , Յովսէ Տոլորէզի դարձաւ .

« Ո՞ր կողմ պիտի երթաս , հարցուց :

— Սա կողմը , ըսաւ Տոլորէզ կուստալ-
քիվիրի ճանքան ցուցընելով :

— Ես ալ նա կողմը պիտի երթամ , ըսաւ
Յովսէ գնչուներուն փողոցը ցուցընելով : Եր-
թաս բարով , Տոլորէզ , փտահ եղիր ինձ . բայց
մի մոռնար որ իմ անունս Քօքօէն ու քրոջմէն
զատ ուրիշի առջեւ պէտք չէ որ տաս : Գնա
բարեաւ , խոհեմութեամբ վարուէ :

— Եւ դու , հայր իմ , գլխա ինձի » ըսաւ
Տոլորէզ հեռանալով :

Յովսէ դէպ 'ի գնչուներուն փողոցը գնաց :
Տոլորէզ ալ կուստալքիվիրի գետեզրին ճան-
քան բռնեց Առաքեալին տունը երթալու հա-
մար :

ԳԼՈՒԽ ԺԲ .

ՐԱՍԹՐՅԻ ՎԱՃԱՌԱՆՈՅԸ

Տոլորէզ՝ այլայլած ու շուարած՝ ճանքան
շարունակեց , եւ շուտով Առաքեալին տունը
հասաւ :

Հաւատաքննութեան անդամի մը կողմէ
իրեն ցոյց տրուած բարեկամութիւնը կարգէ

դուրս բան մը թուելով իրեն , բոլորովին քա-
ջալերուած չէր . եւ կուզէր ժամ մ'առաջ իր
սուրբ բարեկամին պաշտպանութեանը ներ-
քեւ ձգել ինքզինք . մանաւանդ որ Աարմել-
եանց վանքը երթալէն 'ի վեր մէկ անգամ մի-
այն տեսած էր զայն եւ Էսթէվանի վրայ լուր
առած :

Այն դժբաղդ երիտասարդը , որ մէկ կող-
մանէ իր ազատամիտ եւ փիլիսոփայական գա-
ղափարներուն համար կասկածելի էր հաւա-
տաքննութեան , եւ միւս կողմանէ իբրեւ սի-
րելի հակասութիոյ մ'ատելի էր Աետրոս Ար-
պուէզի , իր կենաց ազատութիւնը Յովսէփ
միջնորդութեանը պարտական էր , որ ինչպէս
արդէն յայտնի է՝ Վարտունայի մեծաւորը վաս-
տըկելով հաւատաքննչին անազօրուն հրա-
մաններն 'ի դերեւ հաներ էր :

Տոլորէզ իր սիրելւոյն վիճակէն տեղեկու-
թիւն մը չունենալով , անհնարին տազնապի
մէջ էր :

« Դեռ ազմտ է արդեօք , կը հարցընէր
ինքնիրեն . եւ այս սարսափելի անստուգու-
թիւնն իր սրտին բաբախումն ու ոտքին քայ-
լերը կերպէր :

Երբոր առաքեալին տանը առջեւ հասաւ ,
զարմանօք տեսաւ որ այն սուրբ մարդուն գի-

չերային հսկումները լուսաւորող կանգնողին
աղօտ նշոյլը չէր տեսնուէր նեղ պատուհան-
ներուն ետեւէն :

Սակայն պարտէզին դուռը՝ որ արմաւե-
նիի ոստերէ շինուած շրջանակաւոր վանդակ
մ'էր, դիւրաւ բացուեցաւ :

Տոլորէզ ներս մտաւ, գնաց տանը դուռը
զարկաւ, բայց գոց էր, եւ ներսէն ձայն տը-
ւող չեղաւ :

« Տէր Աստուած, խնամակալս հոս չէ »
ըսաւ խեղճ աղջիկը զարհուրելով :

Նորէն դուռը զարկաւ աւելի ուժով եւ
կրկնութեամբ, բայց ընդունայն . դուռը բա-
ցող չեղաւ :

Այն ժամանակ Տոլորէզ պարտէզին չորս
կողմը պտրտեցաւ, ուր զանազան պտղատու
ծառեր կային որթերով շաղապատեալ, որոց
վրայի պտուղներն ու ողկոյզները տղայք եւ
անցորդք կուտէին : Առաքեալն ինքնին թոյլ
կուտար . ապա թէ ոչ, մէկը չէր համարձա-
կէր ցանկէն ներս մտնելու եւ պտուղ քաղե-
լու . վասն զի Առաքեալին անունն ամենուն
պատկառանք կազդէր :

Տոլորէզ ընդունայն պարտէզին ամեն
խորշերն աչքէ անցուց . մարդ չկար : Յայտնի
էր որ առաքեալն հոն չէր :

Եւ որովհետեւ մօտերն ուրիշ քնակու-
թիւն չկար, ուստի ոչ ոք կրնար ուր գացած
կամ ինչ եղած ըլլալը գիտնալ կամ ըսել :

Ի՞նչ պիտի ընէր Տոլորէզ :

Կարմելեանց վանքը չէր կրնար երթալ,
վտանգը մտածելով :

Քաղաքը երթար :

Իր ծանօթներէն որը կրնար համարձակիլ
հաւատաքննութեան վրէժխնդրութիւնն աչ-
քըն առնելով իրեն ապաստան տալու :

Ասկէց զատ, հերետիկոսութեամբ ամ-
բաստանուած մարդու մ'աղջկան ով կրնար իր
դուռը բանալ :

Կը մնար Պուէնա-Վէնթուրայի պանդո-
կը . բայց Յովսէի ըրած նկարագրութիւնը յի-
շելով հոն երթալ ապաստանելու սիրտ չը-
րաւ : Ուստի լաւագոյն համարեց գիշերը պար-
տէզին մէջ անցունել :

Գարնան գեղեցիկ օրեր ըլլալուն, օդը
տակաւին զով էր . եւ գետին մօտ ըլլալէն՝
խոնաւ :

Տոլորէզ մետաքսեայ սեւ շրջագգետ մը
եւ ասղնեթել թիկնոց մը միայն հագած էր :

Ծառերը տերեւներով ու ծաղիկներով գե-
տինն ալ թաւ խոտով մը ծածկուած էին : Տո-
լորէզ մեծ աղամաթ գենիի մը քով կծկեցաւ .

իր երկայն մազերը քակեց ու վերարկուի պէս
ուսերուն վրայ ձգեց, ասղնեթել թիկնոցը
գլխուն փաթթեց, եւ աղերսաւ որ նայուած ք
մը դէպ երկինք վերցընելով կանանչ խոտին
վրայ նստաւ :

Կը յուսար որ Առաքեալը շատ չանցած
կուգար :

Քայց ժամերը կանցնէին : Տոլորէզ սրտին
անհանգստութենէն չկրնալով ննջել, գիշեր-
ւան պաղէն կը նեղէր : Մերթ ընդ մերթ ճան-
քուն վրայ ոտնաձայն լսելով, գլուխն այն
կողմը կը դարձընէր յուսալով որ իր բնառածն
էր եկողը . քայց անցորդը կը հեռանար, եւ Տո-
լորէզ նորէն իր սրտատանջ տխրութեան մէջ
կընկղմէր :

Իր մօտը կուստալքիվիր գետին խաղաղ
ալիքները կը թաւալէին միօրինակ կարկաչ-
մամբ . ճպուռն իր սուր ճռինչը կարձակէր գի-
շերուան լռութեան մէջ, եւ մերթ ընդ մերթ
գարնանային հով մը ծառերուն կատարներն
աւլելով անուշահոտ ցող մը կիջեցընէր :

Սակայն, առտուան մօտ, տխրութենէն
ու խոնջութենէն պարտասած քնացաւ : Քնա-
ցած ժամանակը մտեր էր : Շատ չանցաւ, իրեն
այնպէս թուեցաւ որ մեղմ ջերմութիւն մ'իր
թմրած անդամները կը տաքցընէր, եւ ինքն

ալ փառաւոր պալատի մը մէջ փոխադրուած էր :

Սհագին կապոյտ գմբեթի մը ներքեւ , որ այն շքեղ պալատին ձեղունը կը կազմէր , ոսկեղէն մեծ ջահ մը կար , ոգիներու ձեռքով վառուած , զոր անտեսանելի էակներ ծանր ծանր կը բարձրացընէին գմբեթին մէջ . եւ քանի որ վեր կելնէր , պայծառութիւնն ու ջերմութիւնն ալ կաւելնար , մինչեւ որ վերջապէս լուսոյ եւ բոցերու հեղեղներ ծաւալեց պալատին մէջ :

Բայց հազիւ ջահը գմբեթին դպեր էր , այն փառաւոր պալատը՝ որ հրաշագեղ թափանցիկ էակներով լի էր , մէկէն 'ի մէկ կերպարանափոխ եղաւ : Շքեղ կարասիներն ու ծաղիկներն անհետ եղան . ոգիներուն թեւերըն ինկան , դեղին փոշի եղան . գեղափայլ մարմինն տղեղցան եւ կասկարմիր կտրեցան , եւ հրաբորբոք ջերմութիւն մը պալատն հըրդեհել սպառնացաւ : Տուրէզ փախչիլ հեռանալ կուզէր այն դժօխային տեղէն . բայց ոգիները չորս կողմը պաշարելով թող չէին տար որ դուրս ելնէր . եւ մէկն ալ կիզիչ մեծ հայելի մը բարձրացուց Տուրէզի գլխուն վրայ , որուն ներքեւ օրիորդն այրիլ սկսաւ իբրեւ խարոյկի մը մէջ :

Այս երազին տազնապններէն արթննալով,
Տոլորէզ աչքը բացաւ :

Արեւը՝ պայծառ եւ ջերմ՝ բարձրացեր
էր երկինքին մէջ եւ իր ճառագայթներն ուղ-
ղակի օրիորդին երեսին զարկեր էր :

Տոլորէզ երկար քուն մը ննջեր էր , այն-
պէս որ կէս օրին երկու ժամ մնացեր էր ար-
թընցած ժամանակը :

Չարմանալով աչքը չորս դին պտտցուց
իր դադափարներն հաւքելու համար , զորոնք
քունն ընդմիջեր էր : Այն ժամանակ առջի օր-
ուան անցքերը միտքը գալով , դառն վհա-
տութեամբ մը պաշարուեցաւ :

Տոլորէզ կորովի էր սրտով եւ հոգւով .
բայց դեռ տղայ էր , դեռ վարժուած չէր բեկ-
եալ կեանքի մը անդուլ փոփոխութիւննե-
րուն . աշխարհային իրաց դեռ հմուտ չըլլա-
լով՝ չէր կրնար իւրովի խստանալ դինքն ընկ-
ճող յանկարծական վշտաց դէմ . իր արիու-
թեանը մէջ աւելի համբերատարութիւն կար՝
քան թէ կորով , եւ միայն մեծ վտանգներու
առջեւ ճշմարտապէս զօրաւոր էր : Աննաց սու-
վորական վիշտերու համար՝ առջի բերանը
արտսուքէ զատ ուրիշ բան չունէր . արիու-
թիւնը խորհրդածութեան ետեւէն կուգար :
Տոլորէզ ուղիղ եւ վսեմախոհ հոգի մ'ունէր :

եւ խորհրդածութեամբ ինքզինք կը զօրացը-
նէր :

Այսպէս են այն ամեն կանայք որ իրենց
սեռին մէջ գերագոյն կանուանին : Իրենց ա-
րիութիւնը մշտնջենաւոր պատերազմ մ'է ի-
րենց խելքին ու սրտին մէջ , 'ի բաց առեալ
այն ամեն բաները՝ որոց մէջ սիրտը մեծ գործ
ունի . այն ժամանակ ամենէն խրոխտ արանց
արիութեանը միայնակ ասպարէզ կը կարգան :
Ասկէց դուրս , կանանց զօրութիւնը՝ վշտաց
համբերելու ձիրք մ'է միայն :

Տոլորէզ քանի մը վայրկեան ընկճեալ մը-
նաց այսնոր տարաբաղդութեան ծանրութեա-
նը ներքեւ :

Աչքը դէպ 'ի տունը դարձուց . տակաւին
ամեն բան առջի իրիկուան վիճակին մէջ էր .
պատու հանները գոց էին եւ մահահանգոյն լը-
ռութիւն մը տիրած էր հոն : Առաւել աներկ-
միտ՝ ըլլալու համար , Տոլորէզ իր հագուստը
շտկեց , մազերը յարդարեց , թիկնոցը վրան
առաւ , եւ գնաց նորէն դուռը զարնելու :

Բայց ընդունայն . Առաքեալը չէր եկած :

Տոլորէզ մինակ էր եւ լքեալ , առանց ա-
պաստանի , առանց հացի : Յերէկ ժամանակ
Սէվիլի փողոցներն ելնելու չէր համարձա-
կէր , վախնալով որ զինքը կը ճանչեն ու կը

բռնեն :

Բայց վերջապէս պանդոկը երթալու որոշում ըրեր էր . իր վերջին յոյսն հոն էր . ուստի ինքզինք Նախախնամութեան յանձնեց :

Բայց հաւատաքննութեան լրտեսներէն չի ճանչուելու համար՝ որոշեց գիշերուան սպասել եւ այնպէս քաղաքը մտնել :

Առաքեալին պարտէզին մէկ քանի կողմը բարձր շաքարեղեգներ տնկուած էին : Ամերիկայի ծառեր , որոնք Անտալուզիոյ ջերմարեւուն տակ լաւ կածին ու կուռճանան , իրենց թխորակ տերեւները որթոց նորափթիթ բարունակներուն եւ գեղածաղիկ գեղձիներուն հետ շաղապատեր էին :

Տոլորէզ այն երկար օրն անցունելու համար շաքարեղեգներուն մէջ ապաստան մը ընտրեց :

Հոն սպասեց մինչեւ իրիկուն սրտատանջ , յոգնած եւ անօթի . վասն զի նախընթաց օրէն ՚ի վեր բան կերած չէր :

Շաքարեղեգի քանի մը ցօղուն կտրեց ակռաներովը եւ ափովն ալ կուտալքիվէրի յստակ ջուրէն խմելով ծարաւն անցուց . բայց ասոնք իր զօրութիւնը կազդուրելու բաւական չէին : Այսու ամենայնիւ իր չքաւոր վիճակին մէջ Նախախնամութեան այս օգնու-

Թե՛նէն շնորհակալ եղաւ :

Այն երկար եւ ոգետագնապ աւուր մէջ շատ մարդիկ անցան ճանքուն վրայէն . քանի մը տղայք ալ Առաքեալին պարտէզը մտան Թիթեոնիկ բռնելու . ասոնք միայն եղան տարաբաղդ լքեալն անհանդիստ ընող դէպքերը : Ինքզինք լաւ մը ծածկեց ծառոց ոստերուն մէջ , եւ մարդ չկասկածեց թէ պայծառագեղ Տոլորէզ Արկօզօ՝ Սպանիոյ ամենէն հարուստ ազնուականներուն մէկուն դուստրը՝ հոն ապաաստանած , եւ մուրացկանի մը պէս չոր գետնին վրայ ննջելու հարկադրուած էր անօթի եւ անապաստան :

Վերջապէս արեւն հորիզոնը իջաւ : Այն միջոցին Սպանիոյ մէջ ամեն մարդ տունը քաշուելու եւ ննջելու սովորութիւն ունին : Տոլորէզ մտածեց որ կրնար իր պահուըտած տեղէն անվտանգ դուրս ելնել :

Յովսէ պատուիրեր էր իրեն որ ծպտեալ դուրս ելնէ . ուստի հարկ էր նախ ուրիշ հագուստ մը հայթայթել :

Տոլորէզ ստակ չունէր . բայց իր մետաքսեայ շրջազգեստը ծանրագին կերպասէ շինուած էր եւ թիկնոցնալ ամենաբարակ ասղնեթեղէ : Ուստի մտածեց Բասթրօի շուկան երթալ եւ փոխանակութիւն մ'ընել . վասն զի

հոն միայն կրնար առանց ստակ վճարելու պատշաճ հագուստ մը հայթայթել :

Գուրս ելաւ պարտէզէն , երեսը քողարկեց , եւ առջի իրիկուան ճանքան բռնեց , վասն զի Տասթրօի շուկան Թրիանայի արուարձանին մէջ էր :

Գնչուներուն փողոցին ծայրն այն ժամանակներն անկանոն հրապարակ մը կար , ուր խել մը զազիր ու մուխ նեղ փողոցներ կը յանդէին , որոց մէջ էին քաղաքին սպանդանոցները : Հրապարակին մէկ կողմը , կարգաւ շինուած փայտեայ տաղաւարներու ներքեւ՝ կովու , ոչխարի , խոզի մորթեր , գլուխներ , ոտքեր , սիրտեր , թոքեր , լեարդեր , երիկամունք , աղիք եւ այլն ճանկերէ կախուած կամ խառնի խուռն դիզուած կը վաճառուէին : Այս ամեն կենդանական կողոպուտները՝ Սէվիլի հասարակ ժողովրդոց կերակուր ըլլալու սահմանուած էին :

Անհնար է երեւակայել այն զազիր հրապարակին գարշահոտութիւնը , որուն վրայ կաւելնար նաեւ մօտակայ սպանդանոցներուն հոտը :

Այն տաղաւարներուն առջեւն ալ շատ մը դժուծ կանայք , կարգաւ շարուած , եւ ամեն մէկուն առջեւ հին ու նոր զգեստներ դիզ-

ուած էին , ցնցոտիներէ սկսեալ մինչեւ աղ-
նըւականաց զգեստներ . փայտեայ կամ խե-
ցեղէն անօթներէ սկսեալ մինչեւ արծաթեայ
սպասներ , պատկերներ , զէնքեր եւ ուրիշ
ամեն տեսակ կահեր ու կարասիներ : Աերջա-
պէս Քասթրօի հրապարակն աննկարագրելի
կափառնաում մ'էր , ուր ամեն թշուառու-
թիւն ք'ի տեսիլ ժողովրդեան դրուելու կերթա-
յին , առաջին կարգի ազնուականներէն սկսեալ
մինչեւ յետին աղքատներունը , որոց քրտինքը
կրօնաւորաց անյադ ընչաքաղցութեանը ճա-
րակ կըլլար :

Եւ պէտք չէ զարմանալ այս ամեն տարա-
սեռ նիւթոց , հարստութեանց ու թշուառու-
թեանց անհեթեթ խառնուրդին վրայ : Քասթ-
րօի փերեզակուհիներն իրենց հաշուին չեն
ծախեր , այլ ամեն մարդու համար կը ծախեն :
Ուստի պարզ միջնորդներ են :

Եկեղեցին իր պատկերներն անոնց կուտայ
ծախելու , որպէս զի անոնց տեղ աւելի ըն-
տիրները դնէ : Մեծամեծ տիկնայք իրենց գո-
հարեղէնները ծախելու կուտան հոն , պարտ-
քերնին վճարելու կամ ուրիշ վատ հաճոյից
գործածելու համար : Քծնասէրներն իրենց պա-
ճուճանքը ծախել կուտան , զորոնք քանի մը
ժամ գործածելէ ետեւ կը ճանճրանան . եւ

ատորին կարգի կանայք ալ իրենց կիրակի օր-
ւան զգեստները կը ծախեն հաց ճարելու հա-
մար :

Բասթրօի միջնորդուհին ամեն բան կընէ .
ամենէն դեզ անձինքը գոհ ընելու ճանքան
գիտէ . վաճառումներ կընէ , փոխանակու-
թիւններ կընէ , եւ շատ վարպետէ առուտու-
րի մէջ . խիստ դժուարաւ կը խաբուի , եւ
միշտ շահուն մեծն իրեն կը մնայ :

Մեր պատմութեան անցած ժամանակնե-
րըն այս առուտուրն հիմակուանէն աւելի բա-
նուկ էր՝ հաւատաքննութեան դատապարտած
մարդոց բազմաթիւ կողոպուտներուն պատ-
ճառաւ՝ որ զանոնք մատնողներուն կուտար ,
եւ ասոնք ալ վաճառել կուտային :

Երբոր Տոլորէզ Բասթրօի հրապարակն
հասաւ , հոն բուրած անտանելի ժահահոտու-
թենէն զզուելով ետ քաշուեցաւ . բայց յետոյ
ինքզինք սեղմեց եւ դողալով փերեզակուհիի
մը մօտեցաւ որ բաւական դեռահասակ էր ,
եւ դէմքն ալ ուրիշներէն աւելի վստահու-
թիւն ազդեց իրեն :

Բայց այն կիներն հասկընալով որ բան դը-
նելու դիտաւորութիւն ունէր , շուրջը բոլո-
րեցան , եւ սկսան իւրաքանչիւրն իր ապրան-
քը գովել խառնաձայն աղաղակաւ եւ քիչ

չատ գրաւիչ շարժումներով, եւ այնպիսի հը-
րապուրիչ շաղակրատութիւններով որ վնուկ
մ'անգամ կրնային թուել :

Տիրուհի, կըսէր մէկը, եկո՛ւ գնէ՛ սա գե-
ղեցիկ մարդարտեայ մանեակը, որ Խզապէլլա
թագուհւոյն աղջկան՝ Յօհաննա իշխանուհի-
ինն էր, եւ մեռնելէն ետքը իր սենեկապան
տիկնանց մէկուն ձեռք ծախուեցաւ, որուն
տուած էր :

— Տես, կըսէր ուրիշ մը, սա ծանրագին
վարդարանը, որուն խաչն յակինթ է, եւ մեր
սուրբ հայրը՝ Պապն՝ օրհնած է : Այս վարդա-
րանով աղօթք ընողն՝ ամեն մէկ անգամին
հարիւր օրուան ներողութիւն կը շահի :

— Գնէ՛ սա, կըսէր երրորդ մը, Ֆլանտրի-
այի ասղնենկարներ ցուցընելով :

— Տիրուհի, սա օրհեալ մատնին վնասա-
կար կախարդանքներէ կը պահպանէ մարդը :
Այս ալ արաբացի սնապաշտութեանց մնա-
ցորդ մ'էր՝ քրիստոնէից անցած, եւ որուն
այն աստիճան հաւատք կընծայէր ժողովուր-
դը, որ վնուկներուն կախարդանքն 'ի դե-
րեւ հանելու համար բաւական կը համարէին
իրենց ձեռքը գոցել՝ բթամատնին երկու ա-
ռաջին մատներուն մէջ անցունելով : Ահա այս
պատճառաւ յատուկ զօրութիւն մը կը վերա-

գըրէին նաեւ վերոյիշեալ մատնիին :

Տոլորէզ թէ եւ վշտաբեկ , այսու ամե-
նայնիւ թեթեւ մը ծիծաղեցաւ , վասն զի հա-
ւատք չէր քնծայեր ոչ կախարդանաց եւ ոչ
ալ այսպիսի սնապաշտական բաներու :

Երջանկաբար իր ժպիտն աննշմարելի մը-
նաց . ապա թէ ոչ՝ մեծ վտանգ կրնար բերել
զլիսուն :

« Տեանենք , կըսէր առաջին փերեզակու-
հին՝ որուն մօտեցեր էր Տոլորէզ , ասոնց մէկն
ալ չես ուզեր , Տիրուհի , այնպէս չէ . ուրեմն
սա Տիրամօր գեղեցիկ պատկերը գնէ , զօրա-
ւոր պատկեր մ'է , որ սուրբ մարդ մը տուած
է ինձ . այն մարդը՝ զոր Առաքեալ կը կոչենք :
Թշուառի մ'օգնելու համար ստըկի պէտք ու-
նէր , ու ինձի ծախեց . իսկ ինքը բանի մը պէտք
չունի . ուստի ես ալ վաճառուելուն չսպասե-
լով՝ ստակն անմիջապէս տուի :

— Առաքեալը , գոչեց Տոլորէզ . կը ճան-
չես զայն , բարի կին :

— Սուրբ Մարիամ , ըսաւ փերեզակու-
հին , Սէվիլի մէջ զայն չճանչող կայ : Ան չէ որ
մեզ կը մխիթարէ եւ մեր մանր զաւակաց հաց
կուտայ :

— Գիտե՞ս , սուր է հիմա , հարցուց Տոլ-
որէզ :

— Ոչ, ըսաւ փերեզակուհին, Աստուծոյ պէս անտեսանելի է, բայց պէտք մ'ունեցած ատեննիս իսկոյն կը գտնենք : »

Տոլորէզ իր պաշտպանին ուր ըլլալը գըտնելու քաղցր յոյսէն վրիպելով խորհեցաւ հընար եղածին չափ շուտով իր ընելիք փոխանակութիւնը կատարել :

« Զեմ կրնար Տիրամօր պատկերդ գնել, ըսաւ երկչոտութեամբ, վասն զի ստակ չունիմ. բայց գործաւոր կնոջ մը ամբողջ զգեստի պէտք ունիմ, եթէ կուզես իմ հանդերձներուս հետ փոխանակել . . . : »

— Քու հագուստի՞դ հետ, ըսաւ միջնորդուհին վերէն 'ի վար չափելով զայն՝ ճշմարիտ փերեզակի մը աչքով, որ մէկ նայուածքով ըզգեստի մը արժէքը կը հասկընայ, եւ առանց ձեռքովը գննելու, անոր ամենափոքր մաշուկներն ու հինցած տեղերը կը նշմարէ :

— Թիկնոցդ ալ հետ պիտի տաս, յարեց փերեզակուհին՝ անոր նուրբ ասղնենկարը քննելով :

— Անշուշտ, ըսաւ Տոլորէզ. ասոր տեղ մետաքսէ պարզ թիկնոց մը տուր : »

Փերեզակուհին աչքին մէջ ագահութիւնը փայլիլ սկսաւ :

Զննեց օրիորդին բեհեզեայ շրջազգեստը,

եւ լաւ մ'ստուգելէ ետեւ որ մէջքն ու թեւե-
րը մաշած չէին , գնաց կապուտ բրդէ շրջագ-
գեստ մը եւ սեւ մետաքսէ թիկնոց մը բե-
րաւ , որոնք Տոլորէզի հասակին լաւ կը յար-
մարէին :

« Ահա ճիշդ ուղածիս պէս են ատոնք ,
ըսաւ օրիորդը :

— Ուրեմն , Տիրուհի , ի՞նչ պիտի տաս
վրայ : »

Տոլորէզ ապշելով փերեզակուհիին երեսը
նայեցաւ . վասն զի իր հագուստը տասնապա-
տիկ աւելի կարժէր :

« Այո , ի՞նչ պիտի տաս վրայ , կրկնեց
կինը :

— Բայց ես բան մը չեմ կրնար վրայ տալ ,
ըսաւ խեղճ Տոլորէզ . արդէն ըսի քեզ թէ ըս-
տակ չունիմ :

— Օ՛ , այդ ուրիշ բան է , ըսաւ կինը . ե-
թէ ստակ չունիս , խեղճ աղջիկ , առ , գնա .
թող պարտքդ ըլլայ ինձ : Աստուած չընէ որ
քեզի պէս առոյգ ու սիրուն օրիորդի մը նե-
ղութիւն տամ :

— Հիմա ի՞նչպէս պիտի հանուիմ :

— Եկո՛ւ , եկո՛ւ , ըսաւ փերեզակուհին ծ-
իւմ տունս հեռու չէ հոսկէց : »

Եւ յիրաւի , փերեզակուհիին վաճա-

ռատեղւոյն դիմացը փայտաշէն խանութ մը կար, ուր էրիկն անշահ միտեր կը վաճառէր. խանութին ետեւն ալ քառակուսի սենեակ մը կար, որուն մէջ անկողին մը կար գետնին վրայ, եւ սնտուկ մը՝ որուն մէջ փերեզակուհին իր քուրչերը կը պահէր: Այն էր իր բնակարանը, եւ հոն տարաւ օրիորդը:

Երբոր Տոլորէզ կը հանուէր, փերեզակուհին անոր գեղեցիկ եւ ծանր լանջանոցը կամ պարանոցի թաշկինակը տեսնելով.

« Տիրուհի, ըսաւ, որովհետեւ ստակ չունիս որ ինձի տաս, սա սնտոտի զարդը տուր ինձի եւ բաւական է:

— Ա՛ռ, ըսաւ Տոլորէզ դառնութեամբ. այս լանջանոցը նոր հագուստիս չյարմարիր. բայց գոնէ ձերմակ լաթէ լանջանոց մը տուր, որպէս զի շրջազգեստիս թանձր բուրդէն պարանոցս չնեղի:


Փերեզակուհին լանջանոց մը բերաւ որ նոր չէր, բայց բաւական ձերմակ ու մաքուր էր: Տոլորէզ գոհ եղաւ անով:

Երբոր հագուեցաւ, պատին վրայ կախւած անագէ փայլուն տախտակին մէջ նայեցաւ, որ հայլիի տեղ կը ծառայէր, եւ գոհ եղաւ իր կերպարանափոխութենէն: Հագած թանձր զգեստն իր մարմնոյն բարեձեւութիւ-

նը բաւական կը ծածկէր . Յետոյ թիկնոցին
փաթթուեցաւ ու դուրս ելաւ :

« Ուրիշ անգամ բան մը պէտք ըլլայ նէ՝
դիս մի՛ մոռնար , Տիրուհի , » ըսաւ փերեզա-
կուհին :

Բայց Տոլորէզ չլսեց , եւ արագ քայլերով
դէպ 'ի գնչուներուն փողոցը շտկուեցաւ :



ԳԼՈՒԽ ԺԳ .

ՀՐԱՇՔ ՄԸ

Ընթերցողք կը յիշեն որ Էնրիքէզ , Մօն-
սինեօր Արպուէզի շնորհիւ Սէվիլի նոր կառա-
վարիչն , իր իշխանութեան առաջին օրերը
բազմաթիւ ձերբակալութիւններով նշանա-
ւոր ըրեր էր :

Քանի մը երեւելի անձինք , գիտուն ու
բարեպաշտ աստուածաբաններ , եւ խելացի ,
սիրուն ու քաջասիրտ կանայք՝ լուտերակա-
նութեան լոկ կասկածով հաւատաքննութեան
բանտերը նետուած էին :

Հալածանաց այս խստութենէն՝ Առաք-
եալը վախնալով՝ չէ թէ իրեն համար , այլ իր
սիրելիներուն համար , Էսթէվան վարկաս կոմ-

սըն ստիպեր էր քանի մ'օր Սէվիլէն հեռանալու . ինքն ալ իր աղքատներուն այցելութիւն ընելու փափաք ունենալով , երկուքը մէկէն ճանքայ ելան եւ Սան Լուքարի կողմը դացին :

Այս պատճառաւ էր որ Տոլորէզ մարդ չէր գտեր Ֆրանչիսկեանին տունը :

Առաքեալին սովորութիւնն էր ժամանակ ժամանակ Անտալուզիոյ գեղերը պտըտիլ , ուր իր ներողամտութիւնն ամեն կրօնից ու դաւանութեանց հետ անխտրաբար վարուելով , քրիստոնեայ , հրեայ , արաբ եւ գնչու հաւասարապէս կընդունէր : Զոմանս կը մըխիթարէր , զոմանս կը խրատէր , եւ ամենուն վրայ իր գթութեան եւ սիրոյ ձիրքը կը տարածէր :

Համայն Անտալուզիոյ մէջ Առաքեալին անունը մոգական յուռութ մ'էր . բաւական էր զայն արտասանել եւ ահա ամենուն երեսը կը ժպտէր եւ աչքը դէպ 'ի երկինք կամբառնար երախտագէտ զգածմամբ :

Ուստի երբոր մէկ գեղէն մէկալը լուր կը տարածուէր թէ Առաքեալն այցելութեան ելեր է , ճանքաներուն երկու կողմը կանայք կը շարուէին՝ մանր տղայքնին գրկած , եւ սուրբ մարդուն անցնելուն կ'սպասէին , որպէս զի անոր օրհնութիւնը նախ իրենք ընդունէ-

ին : Եւ երբոր կրցեր էին անոր քղանցքին
դպչիլ , ինքզինքնին ամեն չարիքներէ ապա-
հովցած կը կարծէին :

Ընդունայն կըսէր անոնց քաղցրութեամբ .

« Ետք չէ որ ինձի յարգանք ընծայէք .
վասն զի ես ալ ձեզի պէս փոշի եմ . այլ՝ երկ-
նաւոր Աստուածն է որ իմ բերնովս կը խօսի
ձեզ : »

Ռամիկը՝ որ միշտ քիչ մը հեթանոս է
իր պաշտամանցը մէջ , աւելի պարզ կը գըտ-
նէր երկրպագել այս մարդուն առջեւ՝ որ իրեն
բարիք կընէր եւ ինքն ալ կը տեսնէր , քան
թէ Աստուծոյ՝ զոր չէր տեսներ :

« Որդեակ , կըսէր Էսթէվանին ալ՝ որ կը
զարմանար այն բիրտ մարդոց քաղցրութեա-
նըն ու հլութեանը վրայ , որոնք դառն կը
դառնային երբոր Առաքեալին խօսքը կը լը-
սէին . տէս , սրչափ դիւրին է այս մարդիկն
ուղղութեան ու աստուածպաշտութեան ա-
ռաջնորդել , եթէ՝ փոխանակ ապշեցընելու
եւ տանջանքով դառնացընելու՝ քաղցրու-
թեամբ եւ բարեսրտութեամբ տրամադրէին
հաւատալ Աստուծոյ եւ . իր նախախնամու-
թեանը՝ ինքզինքնին անոր կենդանի պատկե-
րըն ընելով : Փոխանակ այսպէս ընելու , ա-
սոնց ուղեղը սնապաշտութիւններով կը լըցը-

նեն . եւ անչափ շատ կը չարչարեն զասոնք ,
 եւ գէշութիւն կընեն , որ վերջապէս խեղճե-
 ըր սատանայէն ու դժոխքէն զատ ուրիշ բա-
 նի չեն հաւատար . վասն զի երկրի վրայ գը-
 ժոխքին նախախայրիքը ճաշակել կուտան ի-
 րենց : Երջանկութենէ , մխիթարութենէ եւ
 յոյսէ զրկուած , մոլեռանդ , տկար եւ անդութ
 կըլլան :

— Ի՞նչպէս կրնան ուրիշ կերպ ըլլալ ,
 պատասխանեց Էսթէվան . այս անձանց ձեռ-
 քը բան մը չէ մնացած . կրօնաւորներն ամեն
 բան իրենց ձեռքն անցուցած են : Միայնխըղ-
 ճի ազատութիւնը մնացած էր այս թշուառ
 ժողովրդեան քով , այն ալ հաւատաքնութիւ-
 նը կը քաշէ կառնու : Եւ սակայն շատ դիւրին
 էր այս տաքարիւն եւ բանաստեղծ ժողովուր-
 դը երջանիկ ընել :

— Ատկէց աւելի լաւ է , ըսաւ Առաքեա-
 լը . ուշիմ եւ քաջ ալ է . զուարթ , նուրբ եւ
 բնապէս տրամախոն միտք մ' ունի որով լուրջ
 խորհրդածութիւններ ընելու խիստ յարմար է :
 Վերջապէս այս ժողովուրդը կարող է կենաց
 ամենէն ընդարձակ եւ վեհ նպատակն հասկը-
 նալու , որ է տիեզերական եղբայրութիւնը :
 Արդ , այսպիսի քաջ , անկեղծ եւ սիրող մար-
 դիկները վատ ու կեղծաւոր , եւ որ առաւել

գէշն է՝ մատնիչ կրնեն : Այս , եթէ ես այս կը-
րօնաւորական վերարկուն չունենայի , չէի
կրնար ապահով պտըտիլ : Ինչ բարիք որ հիմա
կրնեմ , աշխարհական ըլլալով ալ կրնայի ընել .
նոյն բարոյականը կրնայի քարոզել իրենց ,
բայց զիս լուտերականի կամ լուսաւորեալի
տեղ կը դնէին , եւ այն ժամանակ ես ալ ճշ-
մարտութեան եւ իրենց երջանկութեան հա-
մար ունեցած փոյթս կեանքովս կը վճարէի .
սակայն կրօնաւոր եմ , եկեղեցական եմ . կրօ-
նաւոր մը կրնայ սխալիլ :

— Զգուշացիր , հայր իմ , պատասխանեց
էսթէվան դառն ժպիտով մը . Ալֆօնս Ման-
րիք եւ Պետրոս Արպուէզ Գերապայծառները
կրնան ձեր վերարկուն չյարգել , ինչպէս չա-
րայիշատակ Թորքուէմատա մեծ հաւատա-
քըննիչը Քալահօրայի եւ Սէկովի եպիսկոպոս-
ներուն արժանապատուութիւնը չյարգեց* :

* Այս երկու եպիսկոպոսներն հրեայի զա-
ւակ էին , բայց մեծ յարգ ունէին : Թորքուէ-
մատա հաւատաքըննիչն ասոնք դատաստանի
ներքեւ ձգեց , թէ եւ պապական կոնդակնե-
րու վճռին համեմատ եպիսկոպոսներն հաւա-
տաքննութեան դատաստանին ներքեւ չէին
կրնար իյնալ : Յիշեալ եպիսկոպոսներն ալ
Հռոմ գացին Պապին բողոքելու . Պապն ալ

Թորքուէմատա խիստ անգութ հողի մը
ունէր , ըսաւ Սուաքեալն հառաչելով . բայց
դոնէ իր խժական մոլեռանդութեանն ու ա-
նողոք անգթութեանը հետ ապերասան անա-
ռակութիւն* ալ չունէր : Մոլեռանդութիւնը
խենդեցուցեր էր զայն . վասն զի առանց ասոր
մարդ մը այն աստիճան անազորուն կրնար ըլ-
լալ : Երբոր անհաւատի կամ հերետիկոսի մը

ուրիշ եպիսկոպոսներու յանձնեց այս գործը ,
որոնք քննելով երկու եպիսկոպոսներն արդա-
րացուցին : Պատն ալ ասոնց կրած հալածանա-
ցը փոխարէն , մէկը Նաբօլիի եւ միւսը Վենե-
տիկի դեսպան անուանեց : Բայց Թորքուէմա-
տա չվհատեցաւ : Հնարը գտաւ նորէն դատ
վարելու անոնց հետ : Յաջողեցաւ ապացու-
ցանելու թէ այն երկու եպիսկոպոսներն հերե-
տիկոսութեան մէջ ինկած էին . հետեւ արար
զանոնք դղեակի մը մէջ բանտարկել տուաւ .
ուր իրենց ամեն գոյքէն եւ աստիճանէն զըր-
կուելով մեռան :

* Սպանիացիք ամեն ժամանակ կը գան-
դատէին հաւատաքննիչներուն եւ անոնց գոր-
ծակալացը դէմ , որպէս թէ հաւատաքննու-
թեան բանտերուն մէջ գոյուած կանայքն ի-
րենց մոլեկան կրիցը կը զոհէին : Հաւատա-
քքննութեան պաշտպաններն այս ամբաստա-
նութիւնն անիրաւ կը համարէին , բայց այն-

դատակնիքը վճռէր, խաչելութեան սրատ-
կերին առջեւ ծունկի վրայ կուգար, իր մար-
մինը չարաչար կը ձաղկէր արիւնլուայ կընէր,
որպէս զի Քասթիլիայի թագաւորութեան մէջ
գտնուած հերետիկոսութիւնները քաւէ :

— Հայր իմ, ըսաւ հսթէվան, եթէ քա-
նի մը դար ետքը մարդ կութիւնն յառաջադի-
մէ, այս սոսկայի ապիրատութիւններուն եւ
յիմարութիւններուն հաւտացող պիտի գըա-
նուի :

— Անշուշտ, որդեանկ, քայց ողբալու հա-
մար : Անցեալին սխալներն ապագային համար
խրատ մ'են : Ժամանակ պիտի գայ որ ամեն
մարդ Աւետարանը կարդալով իրաւունք պի-
տի ունենան միմեանց ըսելու :

— Մէնք ձեր եղբայրն ենք, ինչո՞ւ մեզի
հետ իրրեւ օտար կը վարուիք :

պէս չէր : Քօրտուի ապատամբութեանէն եւ Տէ-
զաւ հաւատաքննիչին փախչելէն ետեւ, Քսի-
մենէս Սիներոս՝ հաւատաքննութեան բան-
տերուն մէջ գործուած գայթակղական տնա-
ռակութեանց վերջ տալու համար վճռեց որ
հաւատաքննութեան որ եւ է պաշտօնեայ մը՝
որ այս տեսակ պղծագործութեան մէջ բրա-
նուի մահուամբ պիտի պատժուի : Այս օրէն-
քը գործադրելու առիթներ պակաս չեղան :

Երբոր ազգի մը ամեն անհասաները զիրենք
կառավարող օրինաց տեղեակ ըլլան, դժուար
բաւ կրնան վնաս հասցընել իրարու: Մանա-
ւանդ, երբոր այն օրէնքն Աւետարանն ըլլայ,
որ հոգւոյ առաջնորդն է, այն ժամանակ հո-
գին լաւ կը կառավարուի, հետեւաբար մար-
դոց գործերն ալ: Ուր տղիտութիւնը կը տի-
րէ, հոն կը տիրեն նաեւ անկարգութիւն, սը-
նապաշտութիւն, յիմարութիւն եւ այլ ամեն
չարիք՝ որովք երկիրս սատանաներէ ու մե-
ղաւորներէ բնակեալ դժօխք մը կը դառնայ:

Մինչդեռ այսպէս կը խօսակցէին. Առաք-
եալն ու ընկերը լերան մը վրայ շինուած փոք-
րիկ գիւղ մը հասան: Յաճ տուներ, կարմիր ու
կանանչ ներկուած, խեղաթիւր կարգաւ եր-
կընցած էին լերան կատարին վրայ, եւ այսպէս
անկանոն փողոց մը ձեւացուցած էին՝ որուն
ծայրը փոքրիկ եկեղեցի մը կար բարձր դան-
դակատունով մը:

Երբոր երկու ճանապարհորդներն հոն հա-
սան, խօր լռութիւն կը տիրէր. արդէն գիշեր-
ւան մութը կոխած էր. գեղացիները գաչաէն
դարձեր, իրիկուան ճաշերնին կընէին լռու-
թեամբ: Քանի մը կիսամերկ տղայք դռներուն
առջեւ կը խաղային: Տուներուն ներսէն կե-
րակուրի հոտ կուգար, եւ քանի մը հովիւներ

լերան միւս կողմէն ծանրաքայլ վեր կենէին
իրենց այժերն ախոռը տանելու համար :

Առաջնալը մէկ կամ երկու անգամ միայն
դացած էր այն դեղը . եւ մանր տղայքը՝ որ
ընդհանրապէս թեթեւ յիշողութիւն ունին ,
չճանչեցին զինքը :

Ուստի կրօնաւորն եւ էսթէփան փողոցին
մեծ մասն անոցան եւ գէմերնին ելնող մը շեղաւ :

Բայց երբոր ցած տան մը առջեւէ կանց-
նէին , որուն քայքայեալ տեսքն անհոգ աղ-
քատութիւն մը կը ծանուցանէր , եւ ներսէն
ալ հաստ ու բարակ , մեծի ու փոքրի , արանց
եւ կանանց խառնաձայն աղաղակներ կը լրա-
ւէին , կանոգ առին : Յայտնի էր որ շատ մարդ
կար այն տան մէջ եւ կարգէ դուրս անցք մը
կանցնէր հոն :

Ճանապարհորդները քանի մը վայրկեան
մտիկ ըրին , յանկարծ բարակ ձայն մը լսեցին
որ կանայցի կարեկցութեամբ կըսէր :

« Խեղճ Բապլօ , առաւօտուն քաջառողջ
էր :

— Հոս մեզի պէտք ունեցող մարդ մը
կայ , ըսաւ կրօնաւորը , եւ դուռը հրելով
ներս մտաւ , էսթէփան ալ ետեւէն : Ախաւեր
յարկի մը մէջ , ուր հազիւ լոյս կը մտնէր , եւ
որուն խորտուբորտ գեալնն ամեն տեսակ նիւ-

Թերու մնացորդներդներով ծածկուած էր ,
քսանի չափ գնչու , այր կին տղայ եւ աղջ-
կունք՝ մարդու մը բոլորտիքը շարուած էին ,
որ իր պահեստի զգեստներն հագած , աթո-
ռակի մը վրայ նստեր էր վայելուչ դիրքով մը :
Երեսը դեղնած էր , եւ գիտես թէ կը ննջէր :

Գնչուներուն ամբողջ խումբը՝ իրենց
խմբապետին հետ՝ որ գրեթէ միշտ պառաւ
կին մ'էր՝ այն մարդուն շուրջը շարուած էին :

Երբոր կրօնաւորն ու ընկերը ներս մտան ,
ակումբը տեղէն չշարժեցաւ . բայց խմբապետը
կրօնաւորն յարգելուն համար եռոտանի ա-
թոռակ մը մատոյց անոր որ նստի . էսթէվան
ոտքի վրայ մնաց :

« Ի՞նչ կը նշանակէ այս , հայր իմ , հար-
ցուց էսթէվան կրօնաւորին :

— Այս մարդը մեռեր է , յուղարկաւ-
րու թեան արարողութիւնը կը կատարեն . դի-
տէ : »

Գնչուներէն մէկը մեռելին ժտեցաւ ու
փոքրիկ քնար մը դրաւ թեւերուն մէջ . Յե-
տոյ բարձր ձայնով եւ անպատկառ խոստովա-
նեցաւ ինչ յանցանք եւ ոճիրներ որ գործեր
էր ասկէ առաջ իրենց խումբին մէջէն մեռած
եղբայրակցին մահու ընէն ՚ի վեր :

Այս արտառոց խոստովանութիւնն ընելէ

ետեւ խօսքը մեռեալին դարձուց .

« Զարկ այդ քնարը , գոչեց անոր , եւ եթէ գէշ ըրի , թող նուազարանդ զիս խլցունէ . իսկ եթէ լաւ ըրի , մի շարժիր , եւ ես ալ ինքզինքս արձակեալ կը համարիմ : »

Աւելորդ է ըսել թէ մեռեալը չշարժեցաւ ամենեւին . այն ժամանակ դնչուն ալ թեթեւցած խղճմտանքով մէկդի քաշուեցաւ՝ չարաչան վաշխառուի մը պէս՝ որ անիրաւութեամբ յափշտակած ստակները ետ տալու խոստմամբ արձակում կընդունի խոստովանահօրմէն :

« Ի՛նչ բարբարոսութիւն , ըսաւ էսթէվան կամացուկ մը :

— Համբերէ , որդեակ , ըսաւ կրօնաւորը , դեռ լմնցած չէ : »

Եւ իրօք ալ խուճիսն ամեն մէկ անդամները կարգաւ իրենց խոստովանութիւնն ըրին , եւ ամենն ալ իրենց մեղքերէն ազատեցան . վախճանեալը զանոնք արձակեր էր . հետեւաբար ամենն ալ ինքզինքնին աղաւնոյ պէս անմեղ կը կարծէին :

Սենեակը ռետինէ ջահերով լուսաւորւած էր . կրօնաւորը՝ որ բժշկութեան հմուտ էր՝ ուշադրութեամբ մեռեալին երեսը կը դիտէր :

« Այս մարդուն անդամները շատ կակուղ են, ըսաւ կամաց մը Էսթէվանին, եւ մարմնոյն գոյնն ալ այլայլած չէ. այլ միայն դեղնած է :

— Ստուգիւ այդպէս է, ըսաւ Էսթէվանինքն ալ զննելով մեռեալը : »

Նոյն միջոցին աղջիկ մը ելաւ անհամեստ կերպով կաքաւեց մեռեալին դիմացը : Քիչ քիչ խուճբին միւս անդամներն ալ հետզհետէ կաքաւել սկսան, եւ յետոյ իրարու ձեռքէ բռնելով՝ մեռեալին բոլորը շրջանակ մը կազմեցին, եւ սկսան ծանր ծանր պարել : Բայց քանի դնաց աւելի արագ խաղալ սկսան՝ դառնալով եւ իրար վերցընելով, եւ այսպէս աստիճանաբար տաքնալով՝ այնպէս արագ դառնալ սկսան, որ աներեւոյթ զօրութենէ յափըշտակուած սատանաներու խուճբ մը կը թուէին :

Յանկարծ այն կատաղի խուճբը կանգ առաւ մեծաձայն աղաղակ մ'արձակելով . պարող աղջկան մը գօտիին ծայրը մեռեալին հագուստին մետաղեայ կոճակին կռուելով՝ մեռեալն ակտոնէն կործանելը աղջկան վրայ, եւ աղջիկն ալ սոսկմամբ ետ փախչելով, մեռեալը երեսին վրայ գետինն ինկեր էր :

Կրօնաւորը վաղեց մեռեալը վեր վերցը-

նելու, եւ տեսաւ որ ճակատը թեթեւ կերպով վիրաւորուեր, արիւն կը վազէր :

« Լռեցէք, որդեակք, գոչեց . այս մարդը մեռած չէ : »

Աղաղակներն խկոյն լռեցին, եւ բոլոր գնչուներն ապշած ու սասանած մնացին իրենց տեղը : Մեռեալին բոլորափքն աներկիւղ պարողները՝ կենդանացող մարդէն կը վախնային :

Կրօնաւորն Էսթէվանի օգնու թեամբ Բապլօն ասթոսին վրայ նստուց, եւ գրպանէն սրբուակ մը հանելով հիւանդին հոտոտել տուաւ . Էսթէվան ալ անոր ձեռքը կը շփէր :

Քանի մը վայրկեան ետքը՝ մեռեալ կարծուած գնչուն աչքը բացաւ, երեսը գոյն եկաւ :

Կրօնաւորը կասթուածի նշաններ տեսնելով անոր վրայ, վէրքը խառնեց որ արիւնը լաւ մը վազէ, եւ Էսթէվանին ալ հրամայեց որ ստորին անդամներն ուժով մը շփէ :

Շատ չանցաւ հիւանդն համարձակ շնչել սկսաւ եւ ապշու-թեամբ շորս կողմը կը նայէր : Ալ բժշկուեր էր, շիւանդու-թեան պատճառը չափազանց գինովութիւնն էր, որով նուազումն եւ հետեւաբար անդգայութիւն եկեր էր վրան :

Գնչուներն երբոր իրենց մեռեալը ողջըն-
ցած տեսան , ծուռկի վրայ եկան , եւ տղայքն
ալ փողոց ելան ու լուր տարածել սկսան թէ
տուրբը հրաշք մը դործեց :

Ողջացեալ դնչուն ալ՝ որ դեռ տկար էր եւ
հազիւ կրնար ոտքի վրայ կանգնիլ , կրօնաւո-
րին ձեռքը կը պազնէր ըսելով .

« Ես մեռած էի , եւ դու զիս ետ կանչե-
ցիր դժոխքէն :

— Ես չեմ կանչողը , այլ Աստուած է :

— Հայր իմ , հարցուց Էսթէվան լատինե-
րէն , ինչո՞ւ կը թողուք այս մարդոց հաւատալ
թէ այս մարդը մեռած էր եւ յարուժիւն ա-
ռաւ :

— Որդեակ , պատասխանեց կրօնաւորը ,
այս ժողովուրդը դեռ խակ է ճշմարտութեան
համար : Եթէ այս իրողութիւնը ասոնց բա-
ցատրելու ելնենք , իսկոյն մեզ կախարդի տեղ
կը դնեն : Թող տուր ուրեմն որ այդ պարզ
հաւատքին մէջ մնան . վասն զի այդ է ասոնց
միակ մխիթարութիւնը : Հաւատա ինձ , Էս-
թէվան , ժողովրդեան մը խելքը լուսաւորել
եւ զիտութեամբ մշակելը մէկ աւուր դործ
չէ . մանաւանդ երբոր երկար ժամանակէ՛ր
վեր անոր բնազդումները թիւրած են : Սպի-
տակ կերպասի վրայ նկարելը գիւրին է . բայց

արդէն նկարուած կերպասին՝ նախ հին գոյնը պէտք է ջնջել, որպէս զի նոր գոյներով նրկարուի :

— Ուրեմն այս ժողովուրդը մշտնջենաւոր տղայութեան մէջ պէտք է մնայ :

— Այ, որդեակ, թող տուր որ ջուրը կաթիլ կաթիլ վազէ . անանկով քիչ քիչ վազած տեղը խորացընելով աւազան կը ձեւացընէ :

Սակայն հրաշին համբաւը գիւղին մէջ տարածուելով, բոլոր բնակիչները՝ մեծ ու պրզտիկ՝ տուներնէն դուրս ինկեր էին «—բէ տեսնելու համար :

Իսկ կրօնաւորը քանի մը թեթեւ նպատակներու հետեւ թաշխելէ եւ զոգութենէ ու մարդասպանութենէ ետ կենալու յորդորներ ընելէ ետեւ, յորդորանք՝ զոր միշտ ակնածութեամբ կը լսէին, բայց իրենց վայրենի բնաւորութեան, արժատացեալ ունակութեան եւ ուրիշ կերպ ապրելու դժուարութեանց պատճառաւ չուտ կը մտնային, կրօնաւորը դուռնէն դուրս ելաւ որպէս զի գիւղին մէջ գտնուած ուրիշ հիւանդներուն ու վշտակրեալներուն ալ օգնութիւն ու մխիթարութիւն տանի եւ քանի մը դրամ պարգեւէ, որ անգին բարիք մ էր այն խեղճներուն համար՝ որոնք վանքերուն սարուկներն էին, եւ հաց ու ապուր

կ'ստանային անոնցմէ , բայց ստակ՝ բնաւ եր-
բէք : Այս պատճառաւ կրօնաւորին իրենց շը-
նորհած քանի մը պղինձ դրամները մասունքի
պէս կը պահէին , եւ ծակելով իրենց թաւիչէ
բաճկոններուն կոծակ կը շինէին :

Կրօնաւորն ու ընկերը դժուարութիւն չի
քաշեցին տուները մտնելու . գեղացիները բազ-
մութեամբ ասոնց գէմն ելան , եւ երբոր կը-
րօնաւորը մօտեցաւ , բազմութիւնը ճանքուն
երկու կողմը կարգաւ շարուեցաւ : Իսկ ինքը
ամեն մէկուն առջեւ կանգնելով՝ ընտանեացը
որպիսութիւնը կը հարցընէր , կարօտութիւն
մը կամ վիշտ մը եթէ ունէր՝ կիմանար , հի-
ւանդ երեւցողներուն դեղեր ու մխիթարու-
թիւններ կուտար , հագուստը խիստ հին ու
պատռտած եղողներուն ստակ կուտար որ ըզ-
գեստ գնեն :

Միանգամայն հնազանդութիւն ու համ-
բերատարութիւն կը քարոզէր ամենուն . վա-
սըն զի , կըսէր , ձեր հոգւոյն գրգռութիւնն ու
տրտունջը բնաւ օգուտ մը չեն ըներ , ընդ հա-
կառակն աւելի կը ծանրացընեն ձեր վիշտերը :

Էսթէվան՝ իր փիլիսոփայական սկզբանցը
հակառակ՝ որ հիմնական նորոգութեան մը կը
ձկտէին , շէր կրնար չզմայլիլ կրօնաւորին ի-
մաստութեանը վրայ :

« Այսպէս պէտք է ըլլան , կըսէր ինքնի-
րեն , ժողովրդեան մը բարեկարգիչները . ըզ-
գաստ , յարատեւող եւ երկայնամիտ : Այս կեր-
պով միայն կրնայ ազգ մը վերանորոգիլ : »

Սրտաշարժ տեսարան մ'եղաւ այն հարրա-
տահարեալ եւ ջերմեռանդ ժողովրդեան մէջէն
կրօնաւորին անցնիլը . արեւու ճառագայթ մը
եղաւ այն պարզ՝ բայց բոցաւառ հոգիներուն
խաւարին վրայ արձակուած :

« Ֆրանսիզքն , կըսէր երիտասարդ մ'իւր
կնոջը , մեր զաւակը գեղեցիկ եւ ուժեղ պիտի
ըլլայ , վասն զի Առաքեալն անոր նայեցաւ եւ
ձեռքը սրագաւ : »

— Հունձքն առատ պիտի ըլլայ , կըսէր ու-
րիշ մը . վասն զի հասկերուն լցուած ժամանակ
Առաքեալը մեզ այցելութեան եկաւ :

— Երկնից կրակը մեր տանը վնաս չպիտի
ընէ , կը գոչէր երրորդ մը , վասն զի Առաք-
եալն անցած ժամանակ մեր դրան առջեւ կանգ-
նեցաւ :

— Աստուած ձեզ պիտի օրհնէ , վասն զի
բարի էք , ըսաւ անոնց կրօնաւորը , եւ երջա-
նիկ պիտի ըլլաք , վասն զի մէկու մը գէշու-
թիւն չպիտի ընէք :

— Հայր , գոչեց լալով կին մը՝ որ զոյգ մը
երկւորեակ մանկունք գրկած էր . այրս՝ որ

քրիստոնէութեան դարձած արար մ'է, հա-
ւատաքննութեան բանտը դրուեցաւ, վասն
զի այս երկու զաւակներս ծնած օրս զիս խը-
նամելու համար տունը կեցեր, եկեղեցի չէր
կրցեր երթալ: »

« Համբերէ, աղջիկս, ըսաւ խեղճ կնոջը,
այրդ կազատի. յոյսդ Աստուծոյ վրայ դիր, ան
կը մխիթարէ քեզ, եւ ես ալ հոգ կը տանիմ
քեզ: »

— Յիրաւի սուրբ մ'է այս մարդը, ըսաւ
կամաց մը պառաւ կին մը. վասն զի շվախնար
հաւատաքննութենէն:

— Կին դու, ըսաւ կրօնաւորը. անոնք որ
ճշմարտապէս կը հաւատան Աստուծոյ, բնաւ
թանկ մը չեն վախնար: »

Այսպէս անցաւ այն օրը:

Էսթէվան եւ իր առաջնորդը քիչ մը նստար
առին՝ դեղացիներէն, որոնք ինքնայօժար կը
բերէին իրենց մախաղը կը լցնէին, եւ իրենք
ալ զանազան պատճառանքով հարիւրապատիկ
վճարեցին: Յետոյ՝ օրհնութեան աղաղակներու
մէջէ ճանբայ ելան երթալու եւ օթեւանելու
համար լերանը գլուխը տեսնուած սաղար-
թապատ տաղաւարներուն մէկուն մէջ՝ զոր հո-
վիւները շինած էին ձմեռն անցունելու հա-
մար իրենց ոչխարներուն հետ:

ԳԼՈՒԽ ԺԴ .

ԴՅՐՁԵԱԼ ՏՈՎՍԷ

Գանք Տոլորէղի , զոր պանդոկին ճան-
քուն վրայ թողեր էինք :

Գնչուներուն փողոցին ծայրը հասնելուն՝
դիւրաւ ճանչեց Պուէնա Վէնթուրա պանդո-
կը՝ պատին վրայի խոշոր նշանաբանէն , թէ եւ
մութը բաւական կոխեր էր :

Պանդոկին մէջ քիչ մարդ կար . քանի մը
կրօնաւորներ դինի կը խմէին խօսակցելով ,
եւ սեղանին մէկ ծայրը գծուծ կերպարանքով
այր մ'եւ կին մը՝ կտոր մը սեւ հաց կուտէին
քանի մը հում սոխերով . առաջինն ալ անագէ
թաս մը լցուն հասարակ գինի գրուած էր :

Պատին վրայ վառող մանր մոմերն ալ աղօտ
լոյս մը կարճակէին այն մութ սրահին մէջ :

Հոն տիրող հանդարտութենէն սիրտ առաւ
Տոլորէզ . սակայն տակաւին քանի մը վայր-
կեան վարանեցաւ . վասն զի Շաբան հոն չի
տեսնելով չէր գիտեր որո՞ւ դիմէ : Քայց շատ
չանցած՝ Շաբա խոհարանին դրանը մէջ տես-
նուեցաւ : Այն ժամանակ Տոլորէզ քաջալեր-

ւելով՝ դուռը հրեց, ուղղակի Շաբային քով
գնաց, եւ իր թիկնոցին եզերքը մէկ դի ըրաւ :
Շաբա իսկոյն ճանչեց զինքը, եւ Անտալուզ-
եան արագամտութեամբ մը ձեռքէն բռնելով
երկու այտերն համբուրել ձեւացուց :

« Խեղճ Աննա, գո՛ւն ես, գոչեց ուրախ
կերպով մը . ո՞վ մտքէն կանցունէր թէ սիրելի
մօրաքեռորդիս այսօր տեսնելու բարերադդու-
թիւնը պիտի ունենայի: Ի՞նչպէս են մօրաքոյ-
րըս ու եղբայրներդ, սիրելի Աննիթա, հրչալի
ուրախ եմ քեզ տեսնելուս վրայ : »

Այսպէս ըսելով Շաբա Տոլորէզի ձեռքէն
քաշեց խոհարանը մտցուց, որով պանդոկին
մարդիկը չկրցան քաղաքապետին աղջկան ե-
րեսը տեսնել :

Իսկ Տոլորէզ՝ որ սրտայուզութենէն հա-
զիւ կրնար ոտքի վրայ կենայ, յարդէ անպի-
տան աթոռակ մը գտնելով վրան նստաւ :

« Մի վախնաք, Տիրուհի, ըսաւ Շաբա
կամաց մը՝ ծունկի վրայ գալով . մի վախնաք,
ձեզ ազատելու համար մինչեւ անգամ կեանքս
տալու պատրաստ եմ :

Եւ տեսնելով որ Տոլորէզ կը քաջալեր-
ւէր, « Ինձի հետ խօսակցիլ ձեւացուցէք ը-
սաւ, որպէս թէ իմ մօրաքեռորդիս էք, վա-
արն զի պէտք է որ լրտեսները խաբենք :

Նոյն միջոցին կրօնաւոր մը կուժ մը գինի
ուղելով, Շաբա, զուարթ եւ աշխոյժ, շուտ
մը լցուց տարաւ գինին :

« Սա խեղճ փոքրիկ մօրաքեռորդիս ին-
ձի տեսութեան դալուն վրայ նրչափ ուրախ
եմ, ըսաւ սեղանին ծայրը ճաշող կնոջը : »

Բայց նոյն կինը ճանչեր էր Տոլորէզը. վա-
սըն զի Գուլէվրինան էր : Իսկ այրը Մանօֆի-
նա չէր կրցեր ճանչել զայն : Մէկ տեսածնին
երկրորդ անգամ տեսնելնուն ճանչելը կա-
նանց յատուկ ձիրքն է :

Գուլէվրինա ժպտեցաւ, բայց ճայն չի
հանեց : Քանի մը վայրկեան ետքը Մանօֆինա
մեկնիլ ուղեց : Այն ժամանակ Գուլէվրինա
Շաբայի քովն երթալով.

« Մօրաքեռորդւոյդ լաւ հոգ տար, ըսաւ.
եւ եթէ ինձի կամ Մանօֆինայի պէտք ունե-
նայ, իսկոյն մեզ գտնել տուր : »

Շաբա զարմանալով Գուլէվրինայի երե-
սընայեցաւ :

« Ես կը ճանչեմ այդ ~~հօգտեւորդիդ~~, ըսաւ.
գնչուն կամացուկ մը :

— Կաղաչեմ, պատասխանեց Շաբա, մար-
դու մի ըսեր :

— Անհոգ եղիր, ըսաւ գնչուն ուսերը
վայելուչ կերպով մը թթվելով. ի՞նչ կը

վախնաս . առաքեալին պաշտպանեալը չէ մի .
ես ալ քեզի չափ կը սիրեմ այդ օրիորդը . . .
Քեզի ինչ որ ըսի՝ լաւ միտքդ պահէ . եթէ մե-
զի պէտք ունենայ , իսկոյն եկո՞ մեզ գտիր .
մնաս բարով : »

Կուաքօն եւ ընկերը մեկնեցան :

« Մօրաքեռորդիդ ցոյց տուր մեզի , Շա-
բան , ըսաւ մեծփոք կրօնաւոր մը , որ արդէն
ղուարթանալ սկսեր էր գինիէն , տեսնենք ան-
ալ քեզի պէս գեղեցի՞կ է :

— Ո՛հ , խեղճ աղջիկն հանդարտ թողու-
ցէք՝ պատասխանեց Շաբա . ոչխարի պէս երկ-
չոտ է :

— Բայց երկչոտութիւնը գեղեցկութեա-
նըն արգելք չկրնար ըլլալ :

— Երբոր քնանայ՝ այն ժամանակ տե-
սէք , ըսաւ Շաբա սափորները շարելով . խեղ-
ճը քանի մը ժամ ճանքայ քալած ըլլալով չա-
րաչար յողնած է :

Նոյն միջոցին խուճի մը գործաւոր պան-
դոկը մտան ճաշելու , եւ այս խօսակցութեան
վերջ տուին : Իսկ Շաբա դարմանալի եռանդով
եւ արագութեամբ ամենուն ուզածը մատա-
կարարելէ ետեւ , երբոր ամեն մարդ ուտելու
խմելու ղթաղած էին , ինքը կամացուկ մը
խօսակցիլ սկսաւ Տոլորէզի հետ :

« Շաբան , ըսաւ Տոլորէզ , հայր Յովսէն կը
ճանչես :

— Յիսնւ Մարիամ . հայր Յովսէն կը
ճանչեմ մի , պատասխանեց Շաբա . անիկա
սուրբ մ'է , տիրուհի . . . թէ եւ հաւատա-
քըննչի զգեստ կը հագնի : Երէկ եկաւ եւ ին-
ձի պատուիրեց , որ եթէ դուք դաք զինքը
հարցունէք , անմիջապէս իմաց տամ իրեն :

— Ո՛հ , ըսաւ Տոլորէզ շունչ առնելով ,
զիս չէ խաբեր ուրեմն :

— Ես ալ , ըսաւ Շաբա տխրութեամբ ,
բայց ներեցի՞ք ինձի , տիրուհի :

— Այո , պատասխանեց Տոլորէզ , կը նե-
րեմ ինձի ըրածներդ :

— Ո՛հ , չէի գիտեր ըրածս , ըսաւ Շա-
բա . միայն կը հնազանդէի : Եթէ գիտնայիք
թէ մէկ մարդ մ'իր կեանքը պահպանելու հա-
մար ինչէր ընելու է :

— Խեղճ տղայ , ըսաւ Տոլորէզ . գնա , զիս
մի հողար , յաճախորդներուդ ուղածը շուտով
տար , որպէս զի բան մը չնշմարեն : »

Շաբա սրահը դարձաւ , եւ ամենուն ու-
ղածը մատակարարեց . յետոյ նորէն դարձաւ
Տոլորէզի քով :

Քաղաքապետին աղջիկը վերջին ծայր
դժգոյն էր . այն օրը բան մը կերած չէր :

« Ինձի պատառ մը ուտելիք տուր , ըսաւ Շաբային , վասն զի անօթի կը մարիմ :

— Յիսուս , ըսաւ Շաբա , ինչո՞ւ մինչեւ հիմա չէիք ըսեր , տիրուհի . ինչ որ ունիմ հոս՝ ամենն ալ քուկդ է :

Անմիջապէս գաւաթ մը չիքօլաթ բերաւ տուաւ , զոր պատրաստ պահած էր , որպէս զի ուզող ըլլար նէ՛ իսկոյն տար :

Հազիւ Տոլորէզ այս թեթեւ նախաճաշը լմնցուցեր էր , սրահին մէջ անսովոր շշուկ մը ելաւ , եւ գլուխը քիչ մը դուրս երկնցընելով՝ տեսաւ որ ամեն մարդ ոտք ելեր էր ակնածական յարգանօք : Հաւատաքննչին սիրելին պանդոկը մտեր էր : Սուրբ Ֆրանչիսկոսի որդիքն անգամ՝ որ հոն նստած էին , չէին վախցեր հնազանդութեան ու ակնածութեան ցոյց մ'ընծայելու նորատի դոմինիկեանին :

Իսկ Յովսէ խրոխտութեամբ եւ արհամարհոտ դէմքով մ'անցաւ այն խոնարհեալ մարդոց մէջէն , ուղղակի խոհարանը մտաւ , եւ Տոլորէզը տեսնելով , որուն դեղեցիկ դէմքին վրայ տիրութիւն ու սրտատանջութիւն նկարուած էր .

« Արդէն հոս էք , ըսաւ :

— Արդէն մի , պատասխանեց Տոլորէզ քաղցրութեամբ . այդ խօսքը , հայր իմ , յան-

դիմանութեան կը նմանի : Արդեօք դուք ալ
-րէն զղջացած էք ձեր ինձի շնորհած պաշտ-
պանութեան վրայ :

— Ամենեւին , խեղճ տղայ , ըսաւ նորա-
տի կրօնաւորը . ինչ որ խոստացայ՝ բոլորով
սրտիւ պիտի կատարեմ . բայց զարմանալուս
պատճառն այն է որ դուք երէկ ըսիք թէ ա-
պաստան մ'ունիք :

— Այնպէս կը կարծէի , հայր իմ . բայց ես
անիծեալ եմ կայինի պէս . փնտռած անձս ե-
րէկ գացեր էր . թերեւս մեռած է : Գիշերը
եղեգներուն մէջ անցուցի , եւ այս իրիկուն
ալ մեծ դժուարութեամբ այս նուաստ հա-
գուստն հայթայթեցի , որպէս զի չճանչուիմ :

— Այդ ըրածդ խոհեմութիւն է , աղջի-
կըս . վասն զի ամեն ժամանակէ 'ի վեր այս
միջոցին վտանգի մէջ էք . բայց ես կը պահ-
պանեմ ձեզ . եւ կը յուսամ , յարեց դառն ժը-
պիտով մը , որ մէկը չկրնար դոմինիկեան Յով-
սէի վրայ կասկած ընել թէ հաւատաքննու-
թենէ հալածեալ կնոջ մ'ապաստան տուած է :

— Հայր իմ , ըսաւ Տոլորէզ վարանելով ,
վասն զի ժամանակէ մ'ի վեր այնպիսի կարգէ
դուրս անցքեր կուգային գլխուն , որ կասկա-
ծելը ներելի էր իրեն . հայր իմ , ո՛ւր պիտի
տանիք զիս :

— Կը կասկածի՞ս ինչ, Տոլորէզ, հարցուց Յովսէ անկեղծ եւ եռանդուն աչք մը տնկելով անոր վրայ :

— Ո՛հ, ներեցէ՛ք ինձի, ըսաւ ձեռքերը կցելով. բայց կենաց մէջ ըրած ամեն մէկ քայլափոխս վի՛ն մը կը հանէ առջեւս, եւ սակայն . . . ո՛հ, կը հաւատամ ձեզ, գոչեց: Եթէ զիս մատնել ուզէիք, այդ պէս չէիք նայիր ինձ :

— Խեղճ անմեղ տղայ. նայուած քիս անկեղծութենէն զատ ուրիշ երաշխաւոր մը չունի՞ս իմ հաւատարմութեանս վրայ: Աստան ես որ ես ալ այն մարդոցմէն չեմ՝ որոնք հըրեշտակային գէմքի մը ներքեւ վազրի սիրտ կը ծածկեն: Ուրիշ բան մը չկայ, գաղտնի նախազգացութիւն մը չկայ որ քեզի ըսէ թէ քու դատդ իմս է, եւ թէ ես քեզ պիտի պաշտպանեմ որպէս թէ իմ քոյրս ըլլայիր եւ երկուքս ալ մի եւ նոյն գրկաց վրայ մեծցած ըլլայինք :

« Ինչ որ կուզես՝ ըրէ ինձ, ըսաւ Տոլորէզ՝ այն կարգէ գուրս անձին ծունգն իյնալով :

Երկու կաթիլ դառն արտսուք Յովսէի աչքերէն գուրս ցայտելով՝ դեղնած ու քիչ մ'ալ վատած այտերն 'ի վար սահեցան :

« Կուլաք, հայր իմ, ըսաւ օրիորդը խանդաղատելով. ո՛հ, դուք ալ այս երկաթէ դարուս մէջ ծնած ըլլալու չէիք :

— Ատուած , ըսաւ Յովսէ , երբ որ ուզէ , եւ ինչ բանի համար որ ուզէ , մեզ այս աշխարհըս կը նետէ հալածելու կամ տառապելու համար , եւ երբեմն տառապեալն իր յաւիտենական վրէժխնդրութեանը գործիք կընէ : Այս պատճառաւ է թերեւս , որ դուն ու ես այս դարուս մէջ կապրինք , Տուորէդ :

— Ձեր տխրութիւնը զիս կը զարհուրեցընէ , ըսաւ օրիորդը . եւ սակայն վստահ եմ ձեր վրայ . ուր որ տանիք՝ պիտի երթամ : Ասկէց զատ , յարեց քիչ մը վարանելով , ուրիշ խնդիր մը պիտի ընեմ ձեռնէ :

— Խօսէ , ըսաւ Յովսէ գրեթէ գուշակելով :

— Ես Տոն Էսթէվան Աարկասի նշանուած էի :

— Գիտեմ , ըսաւ Յովսէ կակծագին հառաչք մը սրտին մէջ խեղդելով . անհոգ եղիր , Տոն Էսթէվան վտանդէ ազատ է :

— Զայն ալ ազատեցիք , գոչեց Տուորէդ ուրախութեամբ :

— Ոչ , ես չազատեցի , այլ յաւիտենական արդարութիւնը : Ամենակալ տէրը կը հրամայէ , ես ալ հնազանդելով կը կատարեմ :

— Ո՛վ հայր , օրհնեալ ըլլաք որ Էսթէվանս պահպանեցիք : »

Այս խօսքերը պանդոկին խոհարանին մէջ
կըլլային կէս ձայնով : Շարա կերթար , կու-
գար , իր յաճախորդներուն կերակուր , գինի ,
հաց եւ այլն կը մատակարարէր . եւ այն աս-
տիճան ակնածելի էին սուրբ հաւատաքննու-
թիւնն ու հաւատաքննիչները , որ նորատի
կրօնաւորին եւ Շարայի ճշմարտօրէն մէջ եղած
երկար խօսակցութեան վրայ ոչ ոք համար-
ձակեցաւ դիտողութիւն մ'ընելու :

Նոյն միջոցին Քօքօ պանդոկին դռնէն
ներս մտաւ :

Յովսէ մէկ կողմ առնելով չայն .

« Քօքօ' , ըսաւ , քանի որ քոյրդ զբաղած
է , առ սա մանկամարդ օրիորդը եւ ետեւէս
եկու մինչեւ քաղաքէն դուրս :

— Պատրաստ եմ ձեր սրբութեան հրա-
մանը կատարելու , պատասխանեց Քօքօ խո-
հարհելով . բայց երկուքնիդ ալ այս բազմա-
մարդ սրահին մէջէն պիտի անցնիք :

— Դուն ու ես միայնակ կանցնինք . իսկ
օրիորդն ետեւի դռնէն թող դուրս ելնէ : »

Եւ արդարեւ խոհարանին ետեւը դուռ մը
կար՝ որ անել փողոցի մը մէջ կը բացուէր :

Դոմինիկեանը պանդոկէն դուրս ելաւ՝
ազնիւ ժողովին ակնածական օղջոյններն ըն-
դունելով :


Քիչ մը ետքն ալ Քօքօ դուրս ելաւ , ու
կրօնաւորին ընկերացաւ :

Կրօնաւորն ու Քօքօ տանը շուրջը դար-
ձան եւ քովի փողոցակէն խոհարանին դուռը
գացին : Տոլորէզ պատրաստ կեցեր էր : Մնաս
բարով ըսաւ Շարայի , եւ Յովսէի ետեւէն գը-
նաց , որ իրենց առաջքն ինկած էր , վասն զի
Քօքօ ալ չէր գիտեր ուր երթալնին :

« Հիմա ալ երկիւղ ունի՞ս , ըսաւ Յովսէ
Տոլորէզի դողահար ձեռքը սեղմելով :

— Նայեցէք , ըսաւ Տոլորէզ ազնիւ վըս-
տահուլթեամբ մը անոր թեւին կրթնելով :

Երեքը մէկէն պանդոկէն դուրս ելան եւ
ոչ ոք կրցաւ բան մը նշմարել :



ԳԼՈՒԽ ԺԵ .

ԿԱՐՄԵԼԵԱՆՑ ԱԲԲԱՍՈՒՀԻՆ

Մինչդեռ Պուէնա վէնիթուրայի պանդո-
կին մէջ այս աննշան՝ բայց մեր պատմութեան
ընթացքին մէջ հարկաւոր անցքը կանցնէր ,
ուրիշ կերպ տեսարան մ'ալ կարմեւեանց վան-
քին մէջ կը տեսնուէր :

Աբբասուհին՝ որ Նէրնի դուքսերուն իշ-

խանական տոհմէն էր, եւ իր այս ազնուակա-
նութեանը պատճառաւ՝ առանց մանկամարդ
հասակին նայուելու՝ արքասուհի ընտրուեր
էր, իր մէկ քանի սիրելի միանձնուհեաց մէջ
կը գահակալէր այս միջոցին. վասն զի սուրբ
Յրանչիսկոսի այս խոնարհ դուստրը քանի մը
ոտք աստիճաններով բարձրացած թաւիշէ մեծ
աթոռի մը վրայ կը նստէր, որուն վրայ ոսկի
ծոպերով շքեղ գահաւորակ մը կար, եւ քովն
ալ գաւազան մը, որ իր արքայական աստիճա-
նին նշանն էր: Գօտիէն իր բեհեզեայ թուխ
պատմուճանին վրայ ոսկիէ ու զմրուխտէ վար-
դարան մը կախուած էր, որուն ամեն մէկ
«Հայր մեր» ները կաղինի մեծութեամբ մար-
գարիտներով բաժնուած էին. վերջապէս
կուրծ քին վրայ մեծ ոսկի խաչ մը կը փայլէր,
եւ իր սպիտակ ու փափուկ ձեռքը շարժած ժա-
մանակ՝ արքայական մատնիին խոշոր եւ անդին
անդամանդն ակնախափող ճառագայթներ կար-
ձակէր:

Արքասուհին հազիւ քսան եւ չորս տարե-
կան կար: Միջահասակ էր, բայց ուսերը վեր՝
եւ գեղեցիկ գլուխն ալ բարձր բռնելուն համար
բարձրահասակ կերեւէր: Երեսին գոյնը կար-
մրրախառն դեղնութիւն մ' ունէր, եւ բնական
սպիտակութիւնն աւելցած էր վանքին ստուե-

րին տակ . մուժ կապոյտ աչքերը մետաղի
պէս կը փայլէին սեւ ու երկայն արտեւանուն ք-
ներուն տակ : Սակայն արբասուհւոյն դէմքը
տոհմային դոռոզութենէ եւ սաստիկ զգայա-
կանութեան տրամադրութենէ զատուրիչ նը-
շանաւոր տիպ մը չունէր :

Բայց արբասուհին վրայ առաւելապէս
տիրող կիրքն ամբարհաւաճութիւնն էր . իր
աստիճանին առանձնաշնորհութիւններն ամեն
բանէ գերազանց կը համարէր, եւ որոնք որ իր
ազնուապետական սնափառութիւնն առաւել
վարպետութեամբ կրնային շողոմել, անոնք
էին իր միակ սիրելիները : Թագուհի ըլլալ կու-
ղէր՝ մինչեւ անգամ վանքին մէջ :

Իր շուրջը, աւելի ցած աթոռներու վրայ
իր սիրելի միանձնուհիները նստած՝ կը խօ-
սակցէին, եւ ամենանուրբ ասղնենկարներ կը
չինէին, որոնք կրօնաւորուհեաց ձեռքէն մի-
այն կրնան ելնել : Մէկ քանին ալ՝ առաւել խո-
նարհութեան համար՝ աթոռին վարի աստի-
ճաններուն վրայ նստած էին գրեթէ արբա-
սուհին ոտքին տակ : Այս ալ մունջ շողոքոր-
թութիւն մ'էր՝ հնար եղածին չափ յաջող :
Սուրբ հօտն իր մեծաւորին տկար կողմը լաւ
ճանչեր էր :

Այս միջոցին մեծ դէպք մ'այս սուրբ աղջ-

կանց բարեպաշտ անգործութիւնը կ'զբաղեցընէր . այն էր Տօլորէզի անհետանալը :

« Քլարա , կըսէր արբասուհին մանկամարդ միանձնուհւոյ մը՝ որ իր մօտը նստած էր . ինչո՞ւ արդեօք այդ աղջիկը ձգեց փախաւ այս վանքէն , ուր բուն իմ քրոջս պէս կը նայէի զինքը :

— Ես ալ չեմ գիտեր , մայր իմ , պատասխանեց կարմելուհին , կարելի է որ աշխարհային սէրէ մը հեռացընելու համար հոս բերեր գոցեր էին զայն , եւ հիմա նորէն իր տարվաւորին քով փախած է :

— Բայց օրինակ ըլլալու արժանի համեստութիւն մ'ունէր , ըսաւ արբասուհին . եւ որչափ որ քիչ մը խորոխտ եւ զգուշաւոր ալ էր , այսու ամենայնիւ խիստ ազնիւ բնաւորութիւն մ'ունէր : Ստուգիւ կը յուսայի թէ պիտի կըրնայի զայն մեր խոնարհ հօտին մէջ առնուլ , եւ յոյսս ալ խիստ հիմնաւոր էր , վասն զի սուրբ մարդ մը բերած էր զայն հոս :

— Ա՛րչափ ցաւալի է որ այնպիսի օրիորդ մ'աշխարհի մէջ կորսուելու երթայ , ըսաւ նորընծայ միանձնուհի մը՝ որուն բոցափայլ աչքը խիստ հեռի էր զգայութեանց եւ հոգւոյ կատարեալ հանդարտութիւն յայտնելէ . ուր կրնայ հոսկէց աւելի երջանիկ ըլլալ :

— Աղջիկս , պատասխանեց արբասու-
հին , օրհնեցէք զԱստուած , որ ձեզ այն վը-
տանգներէն ազատելով թոյլ կուտայ ձեզ կեան-
քերնիդ խաղաղութեամբ հոս անցունել : »

Մանկամարդ միանձնուհին սրտէն բըղ-
խած հառաչքը խեղդելով իր դէմքը գոհ ե-
րեւցընելու ջանաց : Անկախութիւնն ու աշ-
խարհական կենաց բերկրալի ազատութիւնը
վանքին սուրբ հեշտութիւններէն աւելի քաղ-
ցըր էին իրեն համար :

« Սա սեղանի ծածկոցը գեղեցիկ չէ , մայր
իմ , ըսաւ ճերմակ դիպակէ լայն երիզ մը ծուն-
կին վրայ պարզելով , որուն վրայ ոսկի ծաղիկ-
ներ կը բանէր զարմանալի նրբութեամբ , այս-
պիսի սեղանի ծածկոց մը Սէվիլի վանքերէն
մէկն ալ չունի :

— Ստուգիւ սքանչելի է , պատասխանեց
արբասուհին . ձեր ուխտադրութեան օրը մեր
մատուռին վայելուչ զարդ մը պիտի ըլլայ :
Բայց ի՞նչ ունիս , Աատարինէ , ըսաւ դեռահա-
սակ կրօնաւորուհիի մը դառնալով , որ իր քօ-
ղին տակ խոշորատիպ պատկերազարդ գիրք
մը կը թղթատէր :

Կրօնաւորուհին թեթեւ մը կարմրեցաւ եւ
գիրքը ծոցը խոթեց :

« Տեսնեմ ի՞նչ է այդ , ըսաւ արբասուհին

խստութեամբ :

— Տուէք տա գիրքը . քոյր իմ , ըսին միւսներն ալ՝ հետաքրքրութիւննին շարժելով :

Կատարինէ սիրուն բնաւորութիւն մ'ունենալուն , եւ մանաւանդ մեծահարուստ ու ազնուական տոհմէ ըլլալուն պատճառաւ երես առած էր արքայատէրէն : Կատարինէ խոժոռելով գիրքը երկնցուց եւ ընկերները տեսան որ վրան «—բէ բէբ+ գրուած էր խոշոր տառերով :

« Աստուածաշտութեան գիրք մ'է , ըսաւ Քլարա . քոյր Կատարինէի պահելուն չափկար :

— Այո՛ , բայց Վուտերական աստուածաշունչ մ'է ըսաւ արքայատէրին , միւսներէն աւելի լաւ ճանչելով զայն . վասն զի բողոքականներու սուրբ գիրք մ'էր Սպանեօլերէնի թարգմանուած եւ Հոլանտա տպուած : Ուսկի՞ց ձեռքդ անցաւ այդ գիրքը , Կատարինէ :

— Մօրեղբայրներէս մէկը բերած է Ֆրանսարիայէն , ուր զօրաց հրամանատարութիւն կընէր : Երբոր մայրս զիս հոս գնել ուզեց , մօրեղբայրս՝ որ բողոքականութեան կողմնակից էր , այս գիրքն ինձի տուաւ ըսելով . « Քեռորդի , հոգ մի՛ ըներ , յաւիտեան չես մնար վանքին մէջ . երբոր Վուտերի վերանորոգու-

Թիւնն Սպանիա մտնէ , կրօնաւորուհիներն ազատ թող կը տրուին , եւ այն ժամանակ կըրնան ամուսնանալ , ինչպէս Գերմանիոյ մէջ ըրին : »

— Ո՛հ , մայր իմ , ի՞նչ սրբապղծու թիւն , գոչեցին միաձնուհիները միաբերան :

— Լո՛ւ , կատարինէ՛ , այդ պիտի անխոհեմ խօսքեր մի ըներ :

— Արդեօք շատ հեռու է Գերմանիա , հարցուց միամիտ Քլարա :

— Մ՛հ , անշուշտ , պատասխանեց կատարինէ . եւ մինչեւ որ Լուտեր հոս հասնի , մենք մեռած կըլլանք :

Լո՛ւ , լո՛ւ , գոչեց կիրքով Ֆրանսուազ* տէ Լէրմ , որուն սիրտն ուժգին կը բարախէր երբոր ազատութիւն բառը կը լսէր . այնչափ աշխոյժ ու եռանդուն էր այս կինը , որ վանական անձնուրացութեան ու անգործութեան բնաւ յարմարութիւն չունէր , այլ արբայական բացարձակ իշխանութեան մէջ ճաշակ փնտուեր էր իր անհաւատալի ազդուութիւնը գոհ ընելու :

— Ո՛հ , ըսաւ ինքնիրեն , մեզ համար ալ ազատութիւն . . . բայց ան հոս չհասած մենք մեռած կըլլանք , մռմռաց կամաց մը կատարի-

* Արբասուհիին անունն է :

նէի խօսքերը կրկնելով :

— Մեր մայրը խոր մտածութեան մէջ ինկաւ » ըսաւ Քլարա ցած ձայնիւ :

Նոյն միջոցին դրան զանգակն ուժգնապէս զարնուեցաւ :

« Քլարա ըսաւ, արքասուհին արթննալով, նայեցէք ո՛վ է . այս ժամուս այցելութիւնն չեմ սպասեր :

— Ի՞նչ կրնայ ըլլալ, մումաացին միանձնուհիները, որոց համար ամենաթեթեւ դէպքերը ծանր դբադմունք մ'էին :

Քլարա ելաւ կանգնեցաւ . բայց իր ծանր քայլերովը սրահին դուռը չհասած, աշխատաւոր քոյրերէն մէկը՝ մետաքսեայ վարագոյրը բանալով ներս մտաւ, երկու ձեռքովն արծաթեայ սկուտեղ մը բռնած բերելով, որուն վրայ նամակ մը կար :

Քլարա սկուտեղն առաւ քոյրին ձեռքէն, եւ արքասուհիին աթոռին աստիճաններէն վեր ելնելով՝ ծունկի վրայ եկաւ եւ սկուտեղն աւոր ներկայացուց :

Արքասուհին նամակն առաւ, կանաւնչ մոմէ կնիքը խզեց եւ առաջին տողերը կարդալուն պէս ելաւ կանգնեցաւ աթոռէն :

« Քոյրեր, ըսաւ, քայեցէք, երթանք զիմաւորենք Սէվիլի մեծ հաւատաքննիչ Մօն-

սինեօր Արպուէզ , որ իր այցելութեամբը մեզ
պատուել ուզեր է : »

Այս ըսելով Ֆրանչէսքա տէ Ղէրմ գաւա-
զանը ձեռքն առաւ ու աթոռէն վար իջաւ , եւ
իր միանձնուհեաց առաջքն իյնալով մինչեւ
վանքին դուրսի դուռը գնաց Գերապայծառն
ընդունելու :

Մօնսինեօր Արպուէզ կառքէն վար իջաւ :
Հետը ծառայներէն դատ ուրիշ մարդ չկար :
Յովսէ հիւանդութիւն կեղծելով հետը չէր ե-
կեր : Ընթերցողը դիտէ ուր գացեր էր :

Երբոր հաւատա քննիչը վանքին դռնէն ներս
մտաւ , արբասուհին եւ բոլոր միանձնուհիներ
ընդունկի վրայ եկան անոր օրհնութիւնն ըն-
դունելու համար : Յետոյ արբասուհին հաւա-
տա քննիչին առջեւն իյնալով վանքին մեծ դահ-
լիճը տարաւ եւ երկու ոսկեճամուկ աթոռներ
յառաջ քշելով մէկուն վրայ Մօնսինեօր Ար-
պուէզը նստուց , միւսին վրայ ալ ինք նստաւ
անոր դիմացը : Արբասուհին սովորութիւնն
էր դո՛նէ հաւասար աստիճան պահել մեծ հա-
ւատա քննիչին հետ : Պետրոս Արպուէզ՝ որ պատ-
ւասիրական արարողութեանց մասին մանրա-
նրկատ եւ խստապահանջ էր , ոչ միայն արբա-
սուհիին այս նուրբ մեծամտութեանը վրայ
ծիծաղելով աչք կը գոցէր , այլ եւ իր իրա-

ւունքն ու արտօնութիւնները գոհելու ալ կը հանդուրժէր . եւ ժամանակ եղած էր որ կարմելեանց գեղեցիկ արքասուհին աթոռին ամենէն ստորին աստիճանին վրայ ալ կամաւ կը նստէր :

Բայց ան օրը , Պետրոս Արպուէզ տխուր եւ խիստ էր , եւ գոռոզ նայուած ք մ'ունէր . դժգոհ աչքով մը վերէն վար չափեց այն իգական ժողովը : Արքասուհին հասկըցաւ որ կարգէ դուրս բան մը կար :

« Քոյր իմ , ըսաւ վերջապէս հաւատաքրննիչը , ձեզի հետ առանձին խօսք մ'ունիմ . կաղաչեմ որ ներկայ գտնուող քոյրերը դուրս հանէք : »

Արքասուհին աչք ըրաւ եւ քողաւոր խումբը մէկէն դուրս ելան գահլիճէն :

Պետրոս Արպուէզ անձամբ ելաւ նայեցաւ թէ գոռը լաւ գոցուած էր . յետոյ դարձաւ արքասուհին քով նստաւ :

« Տիկին , ըսաւ պաղ կերպով մը , վերջին անգամ այս վանքն այցելութեան եկած ժամանակս հարցուցի ձեզ թէ հոս նոր կրօնաւորուհի կամ նոր ընծայ մը կանոն որ ես տեսած չէի . դուք ալ կարծեմ պատասխանեցիք թէ չկար :

— Ճշմարիտ է , Մօնսիներօր , ձեզի ան-

ծանօթ միանձնուհի բնաւ չկար հոս :

— Ոչ , ըսաւ Արպուէզ , հոս կին մը կար որ ինէ պահեցիք :

— Չպահեցի Մօնսինեօր , պատասխանեց Ֆրանչէսքա տէ Ղէրմ . ձեր մեզի այցելութեան եկած ժամանակը հոս չէր : Եւ որովհետեւ ոչ միանձնուհի էր այն կինը եւ ոչ նորընծայ , այն պատճառաւ հարկ չսեպեցի անոր խօսքն ընել ձեր բարձրութեան :

— Իմ փնտռածս ալ ճիշդ այն կինն էր :

— Ամենեւին չէի կրնար գիտնալ որ դուք այն կինը կը փնտռէք եղեր , ըսաւ աբբասուհին հեզնական կերպով մը :

— Հեզնութիւն չուզեր , տիկին , ըսաւ հաւատաքննիչը խստութեամբ . կրիցն ուժգնութենէն չկրցաւ ինքզինքը բռնել եւ վարպետութեամբ իր նպատակին հասնիլ : Այն կինը հոս է եւ կուզեմ անպատճառ տեսնել :

— Այդ բանն առաջ ըսելու էիք ինձ , Մօնսինեօր . այն կինը կամ մանաւանդ օրիորդը հոսկէց գնաց , եւ ես ալ չկրցայ հասկընալ երթալուն պատճառը . վասն զի մեծ խնամք կը ցուցընէի իրեն :

— Գնաց մի , գոչեց հաւատաքննիչն ապշելով . զիս կը խաբէք , տիկին , Տուրէզ Արկօզօ հոս է , եւ հիմա ցոյց պիտի տաք ինձի .

կը լսէք :

— Տոլորէ՞ք Արկօղօ՞ մի, յարեց արբասուհին . այդ անունով աղջիկ չկար հոս , Մօնսինեօր . այն գացող աղջկան անունը պարզապէս Մարիամ էր : Որք մ'էր , որ ինձի յանձնուած էր սուրբ քարոզիչէ մը , Յօհաննէս տ'Ավիլայէն , որ Անտալուզիոյ առաքեալ կը կոչուի :

— Յօհաննէս տ'Ավիլա՞ , ըսաւ հաւատաքըննիչը դառնութեամբ . ալ չեմ գարմանար այս դարձուած քներուն վրայ : Յօհաննէս տ'Ավիլա բոպիկ կարմեղեանց կարգէն է , եւ սուրբ Յրանչիսկոսի այդ մուրացկան աշակերտներուն ամենն ալ մեզի թշնամի են :

— Ի՞նչ ըրաւ ձեզ Յօհաննէս տ'Ավիլա , Մօնսինեօր , ըսաւ արբասուհին , որ կանացի կամակորութեամբ հաւատաքըննիչը գրգռել կուզէր :

— Ինչ ըրաւ ինձի . . . կուզէք իմանալ , տիկին , թէ ի՞նչ կընեն ինձի այդ ամեն քարոզիչ կրօնաւորները , որոնք Աւետարանը մենէ աղէկ սովրեցընել ու գործագրել կը ձեւանան 'ի վնաս Հռոմայ : Այդ խոնարհ փառասէրներն ընդարձակ կրօնք մը կը սովրեցընեն ժողովրդեան , եւ իրենց աչքին ամենասուրբ հաւատաքըննութիւնը բռնաւորութիւն եւ մեր նախանձայուղութիւնն ալ անդթութիւն կը թուի :

— Է՛ն , ի՞նչ հող կընէք , Մօնսինեօր ,
ըսաւ արբասուհին , խօսքն անոնցն է , բայց իշ-
խանութիւնը ձերն է : Մնոնք անապատի մէջ
կը քարոզեն . հաւատացէք ինձ , եւ մի այդ-
չափ վախնաք անոնց վարդապետութեան տա-
րածումէն :

— Բայց այն կիներ , այն օրիորդը բերել
տուէք , տիկին , ըսաւ նորէն վայրագ դամի-
նիկեանը . կըսեմ քեզ թէ հոս է եւ կուղեմ
տեսնել :

— Մօնսինեօր , պատասխանեց արբասու-
հին սրտմտելով , ըսի ձեր բարձրութեան թէ
այն աղջիկն անհետ եղաւ հոսկէց : Ձեր բարձ-
րութիւնը խօսքիս հաւատալու պատիւ չընէր
ինձ :

— Յրանչէսքան , գոչեց հաւատաքննիչը
բարկացայտ աչք մը տնկելով արբասուհին
վրայ :

— Պետրոս Արպուէզ , յարեց իսկոյն ար-
բասուհին , զայրագին նախանձով . դիս քու
սիրուհիներուդ պահապանը կարծեցիր . այն
աղջիկը գնաց , ինձի ի՞նչ հող . փնտուել տուր
դահիճներուդ եւ ընտանիներուդ . Սէվիլի մէջ
լրտնս կը պակսի քեզ ձեռքէդ փախչող կին
մը գտնելու համար :

— Տուորէզ հոս է եւ պիտի տեսնեմ , գո-

չեց Պետրոս Արպուէղ որոտաղին :

— Տոլորէղ Արկօղօ հոս չէ , պատասխանեց արքասուհին պաղ եւ սուր ձայնով մը , եւ եթէ հոս ըլլար՝ ձեր ձեռքը չէի յանձներ , Մօնսիհնօր , կիմանամ :

— Կերդնում յանուն Քրիստոսի , տիկին , որ հաւատաքննութեան հետ այդ պէս խաղալըդ չափազանց յանդգնութիւն մ'է : Գիտես արդեօք ինչ եմ ես եւ ինչ կրնամ ընել :

— Գիտեմ որ գարշելի կրօնաւոր մ'ես , գոչեց Յրանչէսքա զայրագին , անամօթ կրօնաւոր մը՝ որ իր գազանական կիրքը որ եւ է միջոցաւ յագեցընելու կաշխատի :

— Ո՛վ Յրանչէսքա , Կարմելեանց սուրբ արքասուհի , գիտես արդեօք ինչ պիտի ըսէր Սպանիա քեզ համար եթէ քու անառակութիւններդ գիտնար :

— Ո՛հ , ճշմարիտ է , գոչեց արքասուհին զարհուրելով . ճշմարիտ է . թշուառ կին մ'եմ ես , որ սուրբ զգեստի մըներքեւ մոլութիւն կը ծածկեմ , եւ այս վանքին պատերուն մէջ աներկիւղ կը յագեցընեմ այն բոցեռանդ կիրքը զոր Աստուած տուեր է ինձ . . . Բայց ո՛վ ապականեց իմ հոգիս . երբ որ դողալով եւ խոնարհութեամբ ոտքդ ինկած՝ մարմնոյս անդրսպութիւնը կը խոստովանէի . ո՛վ ըսաւ ին-

ձի թէ Աստուծոյ իշխանի որ զԳայուսի տնայորդի տեղի Գործ
ընէ, Բայց տեղի է որ է՛ յեւոստն ընէ: Ո՞վ ըսաւ ինձի
այս խօսքը Պետրոս Արպուէզ . ո՞վ իմ խղճիս
խայթը հարթել ուզեց այս մեղապարտ եւ պա-
տիր բարոյականով՝ ինչպէս որ մանգաղը դաշ-
տերուն խոտերը կը հարթէ: Ո՞վ բորբոքեց
սրտիս մէջ այն բունն կիրքը՝ որ անմեղութեա-
նըս ժամանակը փայլակի պէս երեւան կելնէր
եւ իսկոյն կը զսպուէր խղճմտանքէս: Դու,
Պետրոս Արպուէզ, դու, որ քու անսանձ կիր-
քովդ իմս ալ բորբոքեցիր, եւ ես ալ քեզ սի-
րելու տկարութիւնն ունեցայ . . . : »

Կարմելեանց արբասուհիին այս դառն
գանգատանաց միջոցին, հաւատաքննիչը տես-
նելով այն բողոքական աստուածաշունչը որ
քոյր Կատարինէ աթոռի մը վրայ մոռցեր էր,
չարաշշուկ փայլակ մը ցայտեց աչքէն, եւ
դժոխային նպատակաւ մը գիրքն առաւ վե-
րարկուին ներքեւ պահեց: Յետոյ Տրանչէս-
քայի դառնալով, որ իր սրտին յուզմունքէն
ու զայրուցէն չէր կրցեր այս գողութիւնը ըն-
մարել, սկսաւ յարատ աչօք եւ զմայլմամբ նը-
կատել այն եռանդուն ու սրտազգած կինը զոր
բարկութիւնն առաւել գեղեցկացուցեր էր:
Երեսին ձերմակ ու անարատ գոյնը գեղեցիկ
կարմրութեամբ մը կենդանացեր, աչքերը

լուսոյ բոցեր կը ցայտէին :

Հաւատաքննչին բարկութիւնը վայրկեան մը իջաւ այն զմայլելի տեսարանէն , Նրբէք Ֆրանչէսքա տէ Լէրմայնպէս գեղեցիկ երեւցած չէր իրեն : Տոլորէզի անժպիտ դէմքը՝ որ իր ողջախոհ եւ խիստ արտայայտութեամբն աւելի կը հեռացընէր տարփական ցանկութիւնները՝ քան թէ կը գրգռէր , չէր կրնար այն միջոցին մրցիլ Կարմելեանց արբասուհիին անհամեմատ գեղեցկութեանը հետ : Զգայասէր մարդու մը համար բաղդատութիւնը Ֆրանչէսքայի նսլաստաւոր էր : Ասկէց զատ , Տոլորէզ հեռու էր :

Զգայութեամբ ասլրող մարդիկը հոգւոյ աչք չունին . բոլորովին ներկայն կիշխէ անոնց . եւ ով որ անոնց նիւթական էութեան երակները կը ցնցէ , այն միայն կը տիրէ անոնց վրայ :

Ո՛հ , ի՞նչ գեղեցիկ ես Ֆրանչէսքա , գոչեց Պետրոս Արպուէզ , որ քանի մը վայրկեանէ՛ ի վեր համր զմայլմամբ մը զայն կը դիտէր : Այն հերարձակ կիրքն առաւել կը յարմարէր անոր վայրագ բնութեանը , եւ դէմքին վրայ նշմարուած այն խղճի խառնուրդն առաւել ազդու հրապոյր մ'էր :

« Գեղեցի՛կ մեղաւորուհի , ըսաւ արբա-

առհիին սպիտակ ձեռքը բռնելով , որ բարկութենէն մարմարիոնի պէս պաղած էր :

— Պետրոս , դոչեց միանձնուհին ծուռգի վրայ իյնալով , Պետրոս , կը վախնամ . . . կը վախնամ դժոխքէն :

— Խէնդ , ըսաւ հաւատաքննիչը . երկինքըն եղողը դժոխքէն կը վախնայ : »

Յանկարծ ամպ մ'անցաւ շուարեալ արքասուհիին աչքին վրայէն :

Պետրոս Արպուէզ Տոլորէզը մոռցեր էր :

ԳԼՈՒԽ ԺԶ .

ՄԵԼՈՒՄ .

Առաքեալն Էսթէվանի հետ Սէվիլի շքեղակայ աղքատ գիւղերուն այց ելնելէ ետեւ որոչեց վերջ տալ այն ուղեւորութեան : Սիրտըն անհանգիստ էր Տոլո Էզի վրայ . միւս կողմանէ Հոգեգալստեան տօնն ալ մօտ ըլլալով , որ հաւատաքննութեան հանդէսներուն սովորական ժամանակն էր , կը խորհէր որ ժամանակն էր Սէվիլի դժբաղդ կառավարիչն ազատելու փորձ մը փորձելու , եւ եթէ չյաջողէր՝ գոնէ անոր խեղճ աղջիկը մխիթարելու :

Էսթէվան ալ Առաքելոյն կասկածանացը մասնակից էր . բայց Սէվիլի մէջ սպասուած վտանգներն այս երկու արիասիրտ անձանց աչքին չէին երեւնար . վասն զի իրենց ազատութիւնը պահել ուղեւնուն միակ շարժառիթն այլոց փրկութեանն օգտակար ըլլալու դիտումն էր :

Ուստի հին Հրէաստանի մարդարէներուն պէս՝ քալելով Սէվիլ կը դառնային , ճանքուն երկայնութիւնն եւ իրենց սրտին անհանգստութիւնը բարեպաշտական լուրջ խօսակցութեամբք բարեխառնելով , եւ մանաւանդ զիրար քաջալերելով որ աշխարհի վրայ իրենց ուխտագնացութիւնն արիութեամբ կատարեն : Էսթէվանի բունն եռանդը Յօհաննէս տ' Ալիլայի քաղցր ազդեցութեամբը կը մեղմանար : Երիտասարդն երկայնատութեամբ եւ համբերատարութեամբ մրցիլ կը սովորէր անկէ :

Ժամը իրիկուան վեցը* կար :

Փողոցները խուռն բազմութեամբ լեցուն էին : Այն ժամանակն էր որ Սէվիլի անթիւ վանքերը Մէլորիա կը բաժնէին քաղաքին մուրացկաններուն ու դատարկաշրջիկներուն : Կրօնաւորները թշուառ ժողովրդեան ամեն

* Հատ եւրոպացւոց :

ունեցածը կապտելէ ետեւ , այս անպիտան կե-
րակուրը կը բաշխէին անոնց* :

Էսթէվան եւ Առաքեալն Ողորմութեան**
կրօնաւորներուն վանքին առջեւ հասած էին :

Անթիւ բազմութիւն հաւաքուած էր փո-
ղոցին մէջ . վասն զի Սէվիլի մէջ հազարաւոր
մուրացկան կար . եւ ամենն ալ ժամ առաջ
Մելոքիա ստանալու համար առաջ անցնելու

* Երեքտասաներորդ դարուն մէջ Սպա-
նիա երսուն միլիոն ժողովուրդ ունէր , որուն
հարիւրերորդ մասը կրօնաւոր էին : Կառավա-
րութեան գործակալներուն ու զօրաց թիւն ալ
մէկ միլիոնի կը հասնէր : Երկու միլիոնի չափ ալ
մեծ ու պզտիկ կալուածատէր կար : Մնացեալ
բոլոր ժողովուրդն աղքատ ու մուրացկան էր :
Վասն զի միայն կրօնաւորներն ու կղերը Սպա-
նիոյ երրորդ մասին տէր եղած էին , եւ իրենց
մուկտանդ աններողութեամբն ու անյագուրդ
ազահութեամբը ժողովրդեան թիւը երսուն
միլիոնէն տասնեւմէկ միլիոնի իջուցին :

** Ողորմութեան կրօնաւորները դոմինիկ-
եանց պէս Օգոստինոսի կանոնին կը հետեւէին :
Այս կարգը նոր հաստատուած ժամանակը
խիստ օգտակար եղաւ : Անդամները կամ եղ-
բայրները համայն քրիստոնեայ ազգաց երկիր-
ները պտըտելով ողորմութիւն կը հաւաքէին
Ափրիկէի արաբաց ձեռքը դերի ինկած քրիս-

աշխատելով՝ փողոցին մէջ անցնելու ճանքայ
չէին թողուցեր :

« Կենանք հոս քիչ մը , ըսաւ Յօհաննէս
տ'Ալիլա . սպասենք որ սա խեղճ անօթիները
կերակրին , յետոյ ճանքանիս շարունակենք : »

Ետ գացին քանի մը քայլ եւ պատին կըր-
թընեցան , ուսկից ամեն բան կրնային տեսնել՝
առանց մէկումը նեղութիւն պատճառելու :

Քիչ քիչ ամբօխն աւելի խոնեցաւ , որոց
խառնածայն շշուէն ու ազաղակը նկարագրել
դժուարին էր : Ամենէն աւելի տիրող ձայներն
անհամբեր բարկութեան յայտարարութիւն-
ներ էին :

Յանկարծ այն դառն տրտունջն ուրախու-

տոնեայներն ազատելու համար : Անանկներ ե-
ղան որ գերի ազատելու համար ձէզայիր եր-
թալով եւ ստակնին չբաւելով , այն գերինե-
րուն տեղիրենք կեցան հոն : Մինչեւ անգամ
մարտիրոսութիւն յանձն առնողներ ալ եղած
են : Բայց այս վսեմ անձնութիւնը երկար
չտեւեց : Ութ եւ տասներորդ դարուն մէջ Ռ-
դորմութեան կրօնաւորները դարձեալ մեծա-
դումար ստակ կը հաւաքէին . բայց չէ թէ
գերի ազատելու կը գործածէին , այլ ուրիշ կը-
քօնաւորաց պէս իրենց զօրութիւնը մեծցընե-
լու եւ իշխանութիւննին ընդարձակելու :

Թեան աղաղակներու փոխուեցաւ : Այն խիտ
ամբոխը գիտես թէ մէկ մարմին մ'էր հաղա-
րաւոր գլուխներով , ամենն ալ միակամ եւ
միահաղոյն մէկ կողմ դարձած :

Վանքին դուռը բացուեր էր :

Երկու աշխատաւոր եղբարք՝ առոյգ եւ
կորովի՝ հաստ փայտի մը անցուցած պղնձի
մեծ կատսա մը կը բերէին , որուն մէջ տակա-
ւին կ'եռար երջանիկ Մելոբիան :

Հազարաւոր ձեռքեր մէկ մէկ փայտէ պը-
նակ վեր բարձրացուցած՝ օդին մէջ կը տատա-
նէին :

Կերկերածայն աղաղակներ եւ վայրագ
կաղկանձներ արձակուեցան այն ցանկալի կե-
րակուրն երեւցած ժամանակ . կարծես թէ
թշուառներն ամենը մէկէն վրան թափելով
պիտի լափէին զայն : Բայց նոյն վայրկենին եր-
րորդ աշխատաւոր եղբայր մը երեւան ելաւ
ձեռքը շերեփով մը , եւ այնպիսի ձենձոտ
սքեմ մը հագած , որուն կերպասն ու գոյնը
զանազանել անհնար էր :

« Կարգաւ շարուեցէք » պոռաց որոտա-
գին ձայնով մը : Իսկոյն ամեն մարդ շարուե-
ցան գամբուի պէս մոնչելով :

« Լուեցէք , ամենուդ ալ պիտի տրուի »
գոչեց նորէն բաշխիչ եղբայրը :

Այս խոստման վրայ մոնչիւնը դադրեցաւ եւ բաշխումն սկսաւ :

Եւ որովհետեւ ամենուն ալ ամանը մի եւ նոյն մեծութեամբ էր , ուստի ոչ ոք կրնար տրանջել . ստուգիւ եղբայրն ալ կատարեալ անկողմնասիրութեամբ կը բաշխէր Մելորիան , որ Մեչլօֆե (խառնուրդ) բառին աղաւաղեալն էր : Եւ իրօք ալ կրօնաւորաց սեղանէն աւելցած հացի եւ կերակրոց մնացորդներուն դազիր մէկ խառնուրդն էր ջրով հիփած ու մէջըն ալ քիչ մը ձէթ կամ ճարպ խառնած : Շուն կամ գնչու ըլլալու էր դայն ուտելու համար :

Բայց անօթութիւնը , ո՛հ անօթութիւնը . եւ այն թշուառներն ալ ստուգիւ անօթիէին :

Արդարեւ բերկրալի էր տեսնել որ իւրաքանչիւրն իր բաժինը փափաքով կուտէր առանց բնաւ դանելու , ինչպէս որ մենք չենք դանիր մաքուր ու համեղ կերակուր մը կերած ժամանակնիս . բայց՝ միանգամայն գործին խորը դիտցողները չէին կրնար անկարեկիր աչօք դիտել Սպանիոյ խեղճ ժողովրդեան այս անարդ թշուառութիւնը :

« Ի՛նչ այլանդակ կերակուր է այս , գոչեց յանկարծ Էսթէվան , որ ընդունայն կը ջանար այն գոյնզգոյն եւ տձեւ խառնուրդին

բաղադրութիւնը գուշակել, որուն հոտընող-
կանք կը պատճառէր :

— Այո՛, ստուգիւ այլանդակ է, պատաս-
խանեց Յօհաննէս տ'Ավիլա տխրութեամբ . ե-
թէ գիտնայիր ինչէ՞ բաղադրեալ ըլլալը :

— Ինչէ՞ բաղադրեալ է, հայր իմ, գիտես :

— Երբոր կրօնաւորները ճաշեն, աւել-
ցուկ ոսկրներն այս խեղճ ժողովրդեան կը թո-
ղուն : Աշխատաւոր եղբայրներն այն կրծած
ոսկորները, ձկան դլուխները, հաւեղինաց
թաթերը, ծայրը ծծուած ծնեբեկները, վեր-
ջապէս բոլոր անոնց կերակուրներուն փշրան-
քըն ու թափթրփուքն այս մեծ կատսան կը
նետեն, մէջը հաց կը ջարդեն, վրան ջուր եւ
քիչ մ'ալ ձէթ կը լցընեն, եւ այս ամենը քա-
ռորդի մը չափ եփուելէ ետեւ Մելոքիա կը
կոչուի : Սպանիոյ ժողովրդեան մէկ քառորդն
ասով կապրի :

— Ի՛նչ անօրէնութիւն, գոչեց էսթէ-
վան :

— Միայն այս չէ, յարեց Յօհաննէս տ'Ա-
վիլա : կրօնաւորներն աղքատաց թշուառու-
թիւնը մշակելով գոհ չեն ըլլար, վասն զի աղ-
քատները բան մը չունին իրենց տալու . այս
զազիր կերակուրը՝ որ ամեն օր ժողովրդեան
առջեւ կը ձգեն, կերպ մը փոխարինութիւնը

անոնցմէ յափշտակած ինչ քերուուն : Հիմա ա-
ւելի շահաւէտ կերպով հարուստները կը մշա-
կեն , եւ անոնց համար ալ ներքին Մելորիան
հնարած են :

— Ատ որն է , հարցուց Էսթէվան :

— Որդեակ , երբոր հարուստ մը հիւան-
դանայ , բժիշկն եւ շատ անգամ իր խոստովա-
նահայրը կը կանչէ :

— Խոստովանահայրը կը յորդորէ զայն
որ ողորմութեամբ ապրելու ուխտ ընէ որոշ-
եալ ժամանակի մը համար : Արդ , Սպանիոյ ա-
մեն վանքերուն մէջ ընտիր եւ առողջարար
կերակուրներու սեղան մը կայ , որմէ կերթան
ճեղք կը կերակրին ուխտ ընող հարուստ-
ները : Այն կանոնաւոր եւ ողջ պահական կեն-
ցադավարութեամբ հիւանդին վիճակը սովո-
րաբար կը բարւոքի , եւ իր ուխտը լրացընե-
լէ ետեւ մեծագումար ստակ կուտայ վանքին :
Ահա այսպէս այս վարիսեցիներն Աստուծոյ
շնորհքը կը վաճառեն , որն որ աղօթիւք ,
սրտի մաքրութեամբ եւ արտասուեազին զըղջ-
մամբ միայն կրնայ ստացուիլ :

Առաքեալն այս խօսքերն ըրած ժամա-
նակ մուրացկան մը հասաւ , որ մեծ պնակ մը
ձեռքը կուգար իր Մելորիայի քաժինն առնե-
լու :

« Ալ չկայ , հատաւ , գոչեց անդիէն պատանի մը՝ որ անյագ փափաքով իր բաժինը հուտէր :

— Չկայ նէ՛ թող չըլլայ , պատասխանեց խրոխտաբար մուրացիկը՝ գոռոզ արհամարհանօք ժողովին նայելով :

Եւ սկսաւ երգել որպէս թէ լաւ ճաշ մը ըրեր էր :

« Խեղճ մարդ , ըսաւ Էսթէվան , այս իրիկուն անօթի պիտի մնայ . արդարեւ այս ժողովուրդը վերջին ծայր թշուառ է :

— Կարծածիդ չափ թշուառ չէ , պատասխանեց Առաքեալը : Անտալուզները բընասպէս բանաստեղծ են , բայց ծոյլ , դանդաղ եւ խոկուն են՝ ինչպէս այն ամեն էակները որ զօրաւոր երեւակայութեան տէր են : Անոնց համար մարմնական կարիքը ոչինչ բան մ'է . նիւթականը մտաւորին ենթարկեալ է . ուստի իր մտաւոր կարողութեանցը ճարակ չգըտնելով՝ կամ ծուլութեան մէջ կընկղմի , կամ անդուր դատարկութեան : Եւ իր այս վիճակին մէջ ալ սաստիկ գոռոզ է , վասն զի իր արժանիքը քաջ կը ճանչէ : Հարստահարութիւնը զայն չկրնար նուաճել , այլ միայն անոր նիւթակա-նը կը ճնշէ : Այս մարդիկը մտքի թագաւորութեան կ'սպասեն , այն միայն կրնայ ասոնց

բարի տրամադրութիւնները զարգացընել :

— Ո՛րչափ ցաւալի է , ըսաւ Էսթէվան , բթացընել այդ գեղեցիկ երեւակայութիւնները , այդ եռանգուն հոգիները , որոնք գէպ 'ի բարին ուղղուելով կրնային ազնուանալ :

— Անշուշտ , որդեակ , եւ ասիկա աստուածընդգէմ ոճիր մ'է , վասն զի Աստուծոյ պատկերակից էակներուն վրայ անոր մեծութիւնը չճանչել է : Ժողովուրդը կեղեքել ու տխմարցընելը՝ ազգի մը հիմը փորել է . ական մը պատրաստել է որ վերջապէս օր մը ապրատամբութեամբ կամ քաղաքական պատերազմով կը բռնկի :

— Հայր իմ , ըսաւ յանկարծ Էսթէվան Առաքեալին գեղեցիկ գէմքը գիտելով՝ որ տխրութեամբ , սուրբ բարկութեամբ եւ մարդասիրութեամբ կը փայլէր . հայր իմ , ինչո՞ւ ուրեմն կրօնաւոր եղաք :

— Մաքառելու համար , պատասխանեց Յօհաննէս տ'Ավիլա . Սպանիան մաշեցընող գաղտնի վէրքը լաւ ճանչելու եւ մոլեռանդութեան ու հալածանաց աւերակներուն վրայ օր մը կանգնելիք նոր շէնքին քար մը դնելու համար :

Բայց ժամանակը դեռ եկած չէ , գոչեց տխրագին . դեռ թանձր ամպեր պատած են

ազատութեան արեգակը եւ չեն թողուր որ Սպանիան լուսաւորէ . բայց հոգ չէ . ազգի մը վերանորոգումը երկար դարերու գործ է . մարդ մը չկրնար միշտ իր տնկած ծառէն պըտուղ քաղել : Անյ անոր որ իրեն համար միայն կը սերմանէ եւ իր վարձքն այս երկրիս վրայ միայն կը վնասուէ :

— Հայր իմ , ըսաւ երիտասարդը , դուք ամենեւին չէք նմանիր այն բարեկարգ իջներուն կամ վերանորոգ իջներուն որ սովորաբար իրենց անձին եւ իրենց վառացը համար կաշխատին՝ առանց վերանորոգած ժողովուրդներուն ստոյգ երջանկութիւնը խորհելու :

— Արդեակ , բարեկարգ իջ կամ վերանորոգ իջ ըսուելու արժանին ան է որ ինքզինք բացը կը հանէ եւ բուն իր երջանկութիւնը եւ մինչեւ անգամ կեանքը զոհելով մարդոց երջանկութիւն կը բերէ : Ես մէկ ճշմարիտ վերանորոգ իջ մը կը ճանչեմ . այն է Յիսուս Քրիստոս : Մենք ամենքս՝ որ անոր փրկարար վարդապետութիւնը տարածելու կամ վերահաստատելու կաշխատինք՝ անոր հրամանակատարներն ենք : »

Ժողովուրդն իր ճաշը կերած ըլլալով , փողոցը պարպուեր էր : Ուստի Յօհաննէս տ'Ավիլա ճանքան շարունակել սկսաւ Էսթէֆանի

հետ :

Երբ որ խուճաք մը մուրացկաններու մօտէն հանցնէին , որոնք փորերնին կշտացուցած ըլլալով՝ յանպատրաստից երգեր կ'երգէին , Յօհաննէս տ'Ավիլա զգաց որ մէկը փերարկուին թեւէն կը քաշէր . ետեւը դառնալով՝ տեսաւ որ Քուլէվրինան էր :

« Թողու թիւն շնորհեցէ ք ինձ , հայր սուրբ , ըսաւ կինը , տուն գացի ու մարդ չգտայ հոն :

— Է՛ , ի՞նչ կայ , հարցուց էսթէվան հասկընալով որ Տոլորէզի վրայ էր խօսքը :

— Գիտցած եղիք , հայր սուրբ , յարեց Քուլէվրինա՝ խօսքը միշտ Առաքեալին ուղղելով , այն մանկամարդ օրհորդը որ ձեր պաշտպանութեան ներքեւ առած էիք , ասկէց քանի մ'օր առաջ Շաբայի պանդոկը եկաւ :

— Ի՞նչ կըսէք , Տոլորէզ Աարմեկեանց վանքէն մտկներ է :

— Չեմ գիտեր , պատասխանեց կինը , սա միայն գիտեմ որ անցեալ օր պանդոկը մտնելն ասքովս տեսայ :

— Աներկբայ ես այդ ըսածիդ , հարցուց էսթէվան տագնապով :

— Ինչպէս որ աներկբայ եմ մեռնելուս , տէր իմ . խիստ աղէկ ճանչեցի զինքը թէ եւ հասարակ կնոջ մը կերպարանք հազած էր ,

եւ դէմքն ալ խիստ դեղնած էր :

— Ո՛հ, Աստուած իմ, արդեօք նոր դըժ-
բաղդու թի՞ւն մ'եկեր է գլխուն : Վաղենք,
հայր իմ, գոչեց էս թէ վան :

— Անխոհեմ, ըսաւ Առաքեալը, չես գի-
տեր որ այն պանդոկը հաւատաքրննութեան
ընտանիներուն տեսակցութեան տեղն է : Ես
մինակ կերթամ, կամ մանաւանդ նախ այս կի-
նը դրկենք հոն :


— Քուլէ վրինա՛, ըսաւ կնոջը, գնա՛ շի-
տակ Քօքօին եւ հարցուր թէ Տոլորէզ ի՞նչ ե-
ղաւ :

— Չեղ ո՛ւր գտնեմ, հայր սուրբ :

— Իմ տունս, պատասխանեց Յօհաննէս
տ' Ավիլա . գնա՛, աղջիկս, եւ Աստուած առաջ-
նորդ ըլլայ քեզ : »

Քուլէ վրինա նետի պէս գնաց :

Էս թէ վան եւ կրօնաւորն ալ քայլերնին
փութացուցին շուտով տուն հասնելու համար :



ԳԼՈՒԽ ԺԷ .

ՀԵՄԵԼԱՀԱՆԴԵՍ

Սէվիլի մեծ հրապարակին մօտ , մայր եկեղեցւոյն մէկ քովէն երկնցած փողոցի մը մէջ փոքրիկ ցած տուն մը կար , որուն կարմիր աղիւսէ պատերէն ու ճարտարապետական քանի մը զարդերէն կը հասկցուէր որ արարաց օրէն մնացած եւ Ալհամայրայի պալատին շինութեանը ժամանակակից էր :

Այս տունը կամարակապ ցած ու նեղ դուռ մ'ունէր . իսկ փողոցին վրայ նայող յայտնի պատուհան ամենեւին չունէր: Սակայն դռնէն քանի մը ոտնաչափ վեր քառակուսի ծակ մը կար գլուխ մը սղմելու չափ , որ ներսէն ծակին մեծութեամբ աղիւսեայ զանգուած ածուլով մը կը գոցուէր , այն կերպով որ գոց եղած ժամանակը մարդ չէր կրնար նշմարել այն ծակը :

Տունը միայարկ էր , եւ տանիք մ'ունէր ուր երբէք մարդ չէր տեսնուեր . ետեւն ալ փոքրիկ պարտէզ մը կար՝ այնպիսի բարձր որմով մը շրջապատեալ , որ մօտակայ տուները չէին կրնար մէջը տեսնել : Այս իզարտէզը կամ

մանաւանդ գուրը լի էր կանաչներով ու ծաղիկներով, որոնք առանց արեգակ տեսնելու կաճէին. այնչափ օդը ջերմ եւ երկիրն ալ արգաւանդ է Անտալուզիոյ մէջ :

Կրտսէր թէ այս տունը արաբաց ժամանակ Շէյխի կամ Տէրվիշի առանձնարան մ'էր. իսկ մեր պատմած անցքերուն ժամանակ՝ բարեպաշտ եկեղեցասէր պառաւ կին մը կը բռնակէր հոն : Այս կինը բնաւ մարդ չէր ընդուներ իր տունը՝ բաց 'ի նորատի դոմինիկեան քահանայէ մը՝ որ իր խոստովանահայրը կը կարծուէր :

Առջի բերան ամեն մարդ կը դարմանար այն կնոջ առանձնասիրութեան վրայ. բայց հաւատաքննութեան կանոններուն ճշդիւ հետեւող ըլլալուն համար՝ իր մարդատեցութիւնը չափազանց ջերմեռանդութեան կուտային, եւ մարդ չէր կրնար մեղադրել զինքը :

Ուրկէց եկած ըլլալը յայտնի չէր. քանի մը տարիէ 'ի վեր այն տունը կը բնակէր : Սակայն կերպարանքէն ու վարքէն կերեւէր որ Սպանիացի էր :

Կէս օր էր :

Ցած սրահի մը մէջ՝ որ պարտէզին վրայ կը նայէր, երկու կանայք ասղնեգործութեան ղբաղելով կը խօսակցէին :

Մէկը յիսուն տարին անցած էր եւ քաղ-
ցըր ու լուրջ դէմք մ'ունէր, որուն վրայ տըխ-
րութիւն տպաւորուած էր : Գեղնած ճակտին
վրայ՝ որ ճերմակ մազերով ծածկուած էր, դը-
ժընդակ եւ կսկծագին գաղտնիք մը ծանրցած
կը թուէր : Երկար եւ ծանրահոգ մտատանջու-
թիւններ անոր ժամանակաւ գեղեցիկ կրեւք
թռամեցուցեր եւ հասակն ալ թեթեւ մը կորա-
ցուցեր էին : Այս կնոջն անունը Ժուանա էր .
եւ տանը տէրն էր : Միւսը ծաղկահասակ օրի-
որդ մ'էր՝ միւսին պէս տխուր եւ վշտարեկ .
այն ալ Տոլորէզն էր :

Այս էր ապաստանարանը՝ որուն մէջ Յով-
սէ պահեր էր դայն :

Ժուանա Յովսէի դայեակն էր :

« Երէկ որդիս չտեսայ, ըսաւ Ժուանա,
մի գուցէ հիւանդացած ըլլայ խեղճ Յովսէս :

— Այսօր կուգայ անշուշտ, ըսաւ Տոլո-
րէզ . Առաքեալէն լուր բերելու խօսք չտուաւ
ինձի :

— Այո՛, եւ իր խօսքը կը կատարէ, ան-
հոգ եղիր, ըսաւ Ժուանա . Յովսէս հրեշտակի
տիրտ ունի . եւ միշտ բարիք ըրած է : »

Այս խօսքն ըսելով Ժուանա խամրած այ-
տերն 'ի վար սահած երկու կաթիլ արտառք
որբեց :

« Քալէ , աղջիկս ըսաւ ձեռքի կարը ծալ-
լելով ու աթոռին վրայ դնելով , ճաշի ժամա-
նակ է , վար դիր կարդ եւ սեղան նստինք :

— Անօթի չեմ , ըսաւ Տոլորէզ տիրու-
թեամբ :

— Բայց պէտք է ուտէք ապրելու համար ,
ապրելու զօրութիւն ունենալու համար , ըսաւ
պառաւրդառնութեամբ :

Միանգամայն նեղ սեղանի մը վրայ պարզ
բայց առատ ուտելիք պատրաստեց . բրնձէ ա-
պուր , խորոված միս եւ պտուղներ :

Տոլորէզ ծանրութեամբ ելաւ սեղանին
առջեւ նստաւ՝ հնազանդելու քան թէ ուտե-
լու համար :

Օդը տաք էր , տանը բոլորտիքը խոր լը-
ռութիւն տիրած էր , այնպէս որ այն ամրա-
փակ յառանձնարանին մէջ մարդ ինքզինք
քաղաքէն հեռու կը կարծէր :

Յանկարծ հեռուէն փողերու եւ թմբուկ-
ներու ձայն մը լսուեցաւ :

Տոլորէզ վեր ցատկեց աթոռակին վրայէն ,
եւ առջեւի կերակուրները ետ քշեց :

« Ի՞նչ եղար , հարցուց Ժուանա զարմանա-
լով , ի՞նչ ունիս , դաւակա :

— Մտիկ ըրէ , ըսաւ Տոլորէզ զարհուրած
եւ իր տարտամու ահաբեկ աչքերը Ժուանայի

վրայ տնկելով . մտիկ ըրէ , մայր իմ , չէս լը-
տեր . . . »

Թմբուկն աւելի որոտածայն հնչել սկսաւ ,
վասն զի քանի կերթար կը մօտենար , եւ հե-
տըն ալ ձիերու արոփիւն կը լսուէր :

« Է՛ , ի՞նչ կըլլայ քեզ այդ ձայնէն , ըսաւ
Ժուանա անգիտութիւն կեղծելով :

— Այդ ձայնը հաւատաքննութեան յաղ-
թական ընթացքը կը ծանուցանէ , չէս հաս-
կընար : Դահիճներու խոհանար^{*} փողոցները կը պը-
տրախի ծանուցանելով քաղաքացւոյ թէ իր
ձեռքը պարապ կեցած չէ , եւ յառաջիկայ
մարդախանձ հանդէսին համար հունձք պատ-
րաստած է . չէս լսեր , մայր իմ . . .

— Կարծեմ կը սխալիս , ըսաւ Ժուանա
դողալով :

— Ո՛հ , ոչ , չեմ սխալիր , լաւ ականջ դիր
ըսաւ : Հեծելախումբն արդէն մեծ հրապարա-
կըն հասեր էր , եւ փողերուն ու թմբուկնե-
րուն ձայնն աւելի յստակ կերպով կը լսուէր :

— Եկո՛ւ , եկո՛ւ , գոչեց Տոլորէզ պառաւին
ձեռքէն քաշելով եւ տանն առաջին յարկը ել-
նելու ստիպելով . եկու որ տեսնես , մայր իմ :

* Սպանիացիք այսպէս կը կոչէին ընդ-
հանուր հաւատաքննիչը :

ՅԷ փողոցին վրայ նայող սենեակը ելնելով
ուսկից մեծ հրապարակին մէկ կողմը կրնար
տեսնուիլ, Տոլորէզ պատին մէջի ծակը գոցող
քարը քաշեց հանեց :

« Ի՞նչ կընես, աղջիկս, գոչեց պառաւը
դող ելնելով :

— Մի վախճար, մայր իմ, մարդ չտես-
ներ զիս, ամենն ալ հաւատաքննիչին ուղեկ-
ցութիւնը նկատելու զբաղած են :

Այն ժամանակ Ժուանայի ալ հետաքրք-
րութիւնը շարժելով սկսաւ ան ալ ծակէն
դուրս նայիլ :

Հրապարակը բազմութեամբ գոցուած էր :

Մեծ հաւատաքննիչը, Պետրոս Արպուէզ,
կապոյտ պատմուճան մը հագած եւ սպիտակ
նժոյգի մը վրայ նստած կուգար բազմաթիւ
ուղեկիցներով :

Հաւատաքննիչին գեղեցիկ՝ բայց սէզ,
խրոխտ եւ կրքոտ դէմքը, եւ բարձր հասակը
որ խոնարհիլ չէր սիրեր, պատկառանք եւ եր-
կիւղ կազդէր ժողովրդեան :

Պետրոս Արպուէզ իր խրոխտ եւ յանդու-
ղըն բնաւորութեամբը յայտնապէս բռնաւոր
մ'էր, վասն զի չկար աշխարհի մէջ անկէց ա-
ւելի նենգաւոր եւ անագորուն հոգի մը՝ եր-
բոր իր կրից շահը կը պահանջէր : Բայց սովո-

րական կենաց մէջ՝ ուրիշ մարդիկը՝ չափազանց արհամարհելով եւ ինքզինք անոնց տէր կարծելով՝ կեղծաւորութեան չէր խոնարհեր :

Պետրոս Արպուէզի ետեւէն կուգային միւս հաւատաքննիչները , ձիով , բայց սեւեր հագած :

Խուժք մը զինեալ պահապաններ՝ որ հաւատաքննութեան ընտանիներ էին՝ հեծեալներուն երկու քովէն ու ետեւէն կուգային :

Ժողովուրդը կը խոնարհէր ու ծունր կը դնէր սուրբ հանդիսին անցած ժամանակ . դէմքերը կը դեղնէին եւ մահուան լռութիւն մը կը տիրէր ծունդի վրայ իջած բազմութեան մէջ :

Հրասպարակին մէջ տեղը հասած ժամանակ , մեծ հաւատաքննիչը կանգ առաւ : Յետոյ բարձր եւ ահարկու ձայնով մը՝

« Եղբարք , ըսաւ , ասկէց ամիս մը ետքը , ամենասուրբ հաւատաքննութիւնը Տեառն մերոյ սուրբ կրօնքն անպատուող հերետիկոսները պիտի դատէ :

« Հաւատաքննական մեծ հանդէս մը պիտի կատարուի մեր Աարոլոս հինգերորդ մեծ թագաւորին Ֆլանտրիոյ մէջ ձեռք բերած յաջողութիւնները եւ հերետիկոսութեան դէմ ունեցած նախանձայուղութիւնը տօնելու հա-

մար : Աղօթեցէք , եղբարք , որպէս զի Աստուած յայտնէ մեզ ամեն հերետիկոսները , մինչեւ անգամ անոնք որ սրտով եւ ծածուկ հերետիկոս են . դուք ալ ձեր գտած ու կասկածածները յայտնեցէք՝ եթէ կուզէք սրբազան Պապին խոստացած ներողութիւններուն արժանի ըլլալ :

— Ո՛հ , Աստուած իմ , գոչեց Տոլորէզ , ի՞նչ պիտի ըլլայ հայրս : »

Ժողովուրդը հաւատաքննչին այս յայտարարութեանցը խաչակնքելով միայն պատասխանեց :

Թմբուկները նորէն հնչեցին :

« Հայրի՛կ , գոչեց նորէն կառավարչին աղջիկը խենթի պէս տատանելով սենեկին մէջ :

— Հանդարտէ , ըսաւ Ժուանա , Յովսէն հիմա պիտի գայ , մի վախնար , բան չկայ : »

Տոլորէզ նորէն պատուհանը գնաց . հանդէսը հրապարակէն ելեր տանը կողմը կուգար :

« Ներս եկու հոտկէց , ըսաւ Ժուանա օարսափելով . հոտկէց պիտի անցնին , քեզ կը տեսնեն . Տոլորէզ , Տոլորէզ , մտիկ ըրէ զիս : »

Բայց Տոլորէզ ականջ չէր կախեր :

Աչքերը հաւատաքննչին վրայ տնկած կը

Թուէր թէ հօրն ու իր բաղդը կու գէր կարդալ
անոր դէմքին վրայ :

Հանդէսը գրեթէ բոլորովին տանն առջեւ
հասեր էր :

Տոլորէզ երեսը միշտ դէպ 'ի փողոցը դար-
ցուցեր էր : Սենեակն ալ խիստ մութ էր . բայց
այն թերաստուերին մէջ օրիորդին պատկերը
տարտամ կերպով կը տեսնուէր պատին վրայ :
Պետրոս Արպուէզ տանն առջեւէն անցած ժա-
մանակ՝ գլուխը վեր վերցուց , բայց նոյն միջո-
ցին ժուանա Տոլորէզի մէջքէն բռնելով պա-
տուհանին առջեւէն մէկ դի քաշեց :

Հաւատաքննիչը վեր ցատկեց ձիուն վը-
րայ . նորէն աչքը պատուհանին վրայ դար-
ցուց՝ ուր այն տարտամ նմանութիւնն աչքին
դպեր էր , բայց ժուանա կայծակի արագու-
թեամբ նորէն քարը տեղը գրեր էր : Պետրոս
Արպուէզ աչքը շլացընող երեւոյթին տեղ՝
միակերպ պատ մը , առանց պատուհանի տուն
մը միայն տեսաւ :

Ուստի ցնորք կամ երազ համարեց առջի
երեւոյթը , եւ ուղեկիցներուն մէկուն դառնա-
լով՝

« Այս տունը որո՞ւնն է , ըսաւ :

Հաւատաքննութեան ընտանիներն ամեն
բան գիտէին :

« Բարձրապատիւ տէր , խեղճ այրի մը կը բնակի հոս , որուն ձեր ողորմաբաշխ Հ. Յովսէօս ողորմութիւն կուտայ :

— Խենթ եմ ինչ եմ , ըսաւ ինքնիրեն հաւատաքննիչը . ամեն տեղ այդ կի՛նն աչքիս կերեւնայ :

Հանդէսն ընթացքը շարունակեց : Թըմբուկներուն ու փողերուն ձայնը հեռացաւ : Տոլորէզ զգայազիրկ ինկեր մնացեր էր :

Ժուանա՝ Տոլորէզի առջեւ ծունգի վրայ եկած՝ անդադար ձեռքերը կը շփէր , եւ պաղ ջրով երեսը կը թրջէր :

Ինքը միայնակ , եւ ուրիշ մարդ օգնութեան կանչելու չհամարձակելով , սկսեր էր տազնապի մէջ իյնալ : Մէկ մ'ալ յանկարծ տանը դուրսի դուռը մեղմով բացուեցաւ եւ մէկը սանդուղքէն վեր ելաւ :

« Օրհնեալ է Աստուած , գոչեց Ժուանա , անշուշտ Յովսէն է եկողը : »

Եւ արդարեւ ան էր : Երբոր սենեակէն ներս կը մտնէր , Տոլորէզ աչքը բացաւ երկար հառաչք մ'արձակելով :

« Ի՞նչ է այդ , դայեակ , հարցուց Յովսէ :

— Հայր , հայր , գոչեց Տոլորէզ նորատի դոմինիկեան ը տեսնելով . հայր Յովսէ , կը տեսնէ՞ք որ հայրս մեռցընել կուզեն :

— Մի վախնար , Տոլորէզ , ըսաւ Յովսէ քաղցրութեամբ : Ո՞վ ըսաւ քեզ թէ հայրդ մեռցընել կուզեն :

— Դեռ հիմա լսեցի մահուան սպառնալիքը . մօտ օրերս հաւատաքննական մարդազոհ մը չպիտի՞ ըլլայ :

— Ի՞նչ կը հասկցուի ատկէց , սլատասխանեց դոմինիկեանը . եթէ քու հայրդ ալ այն մարդազոհին մասնակից ըլլալու սահմանուած ըլլար , ես հոս չեմ , կը կարծես թէ անհոգ կը կենամ :

— Ո՛հ , զիս կը խաբէք , հայր , ձեր անագորուն գթութիւնը ձեզ կը հարկադրէ ճշմարտութիւնն ինէ ծածկելու , ես չեմ գիտեր որ հաւատաքննիչն հօրս արեանը ծարաւի է , եւ անպատճառ պիտի սպաննէ զայն :

— Հանդարտէ եւ մտիկ ըրէ զիս , ըսաւ Յովսէ օրիորդին մօտենալով :

— Ոչ , չեմ հաւատար խօսքիդ , գոչեց Տոլորէզ լսելայեղեալ . ո՞չ ասպաքէն դու ալ հաւատաքննութեան պաշտօնեայ ես : Թո՛ղ զիս . հայրս ազատելու համար քեզ պէտք չունիմ : Ես անձամբ կերթամ Մօնսինետր Արպուէզի տաքը կիյնամ , ծունդին կը փաթթուիմ , եւ այնչափ կաղաչեմ , կը պաղատիմ , որ եթէ տիրան ասպառաժ չէ , 'ի գութ կը շարժի եւ

հայրս ինձ կը շնորհէ :

— Խեղճ անմիտ , ըսաւ Յովսէ դառն ճայնիւ՝ տեսնելով Ժուանան որ կուլար . միթէ հաւատաքննիչները սիրտ ունի՞ն . միթէ գիտեն ինչ է հայր մը , մայր մը , սիրելի մը կամ քոյր մը : Անոնց ապառաժէ աղիքը երբէք ցնցուած է զգացմամբ մը . կը ճանչեն ուրիշ զգացում բաց 'ի յայրատ , կատաղի եւ անգուժիղձերէ , սանձարձակ ցոփուժեան անհեթեթ դառանցանքէ , արեան ծարաւէ , մահատաղնապ տեսարանէ :

— Կերթամ , կերթամ , կըսէր Տոլորէզ աւելի բորբոքելով այն սոսկալի բայց ճշմարտատիպ նկարագրէն :

Միանգամայն ելաւ կանգնեցաւ , եւ մէկ գի հրեց Ժուանան , որ մեղմով անոր փաթթուեր՝ հանդարտեցընել կը ջանար :

« Թո՛ղ զիս ըսաւ , դուք ամենքդ ալ միաբանած էք զիս խաբելու համար . զիս հոս գոցեր էք իբրեւ բանտի մը մէջ , որպէս զի կատարուելիք գործերը չկրնան իմ ականջս հասնիլ . բայց Աստուած ձեր խորհուրդը ցրեց , եւ իմացայ որ զիս ծածկել կուզէք : Թողէ՛ք ուրեմն զիս . ազատ թողէ՛ք զիս . ի՞նչ իրաւամբ զիս հոս բանտարկեր էք գոչեց խրոխտ ու քարկացայտ աչք մը նետելով դոմինիկեա-

նին վրայ :

Յովսէ լռեց . սիրտը շարժած եւ գոյնը նետած էր : Ժուանա անոր երեսը նայեցաւ՝ ըսել ուղեւոր թէ խեղճ աղջկան խելքին կուգար :

— Ինչ աւելի երջանիկ է » պատասխանեց Յովսէ կամաց մը :

Այն ժամանակ Ժուանա Տոլորէզը թող տուաւ եւ գնաց սենեակին միւս ծայրը նստաւ :

Իսկ օրիորդն ինքզինք Ժուանային թեւերուն մէջէն ազատած տեսնելով, կանգ առաւ եւ սկսաւ Յովսէի նայիլ, որուն դալկահար եւ գեղեցիկ դէմքը գուժէն կը դողար :

Ժուանա ալ կուլար, այնպէս որ այն երկու վշտակիր էակներն աւելի նահատակներու կը նմանէին՝ քան թէ դահիճներու : Յանկարծ Տոլորէզի աչքն իր բոցանշոյլ փայլումը կորսընցուց, եւ նորէն աթոռին վրայ ինկաւ : Բարկութիւնն իջեր էր :

Այն ժամանակ Յովսէ մօտը գնաց :

« Ներեցէք ինձ, ըսաւ Տոլորէզ ձեռքն անոր երկնցընելով . անիրաւու թիւն ըրի ձեզի դէմ . կսկիծը մարդուն խելքը կառնու . ներեցէք ինձ, հայր Յովսէ . բայց հիմա հանդարտ մտօք կըսեմ ձեզ թէ որոշու՞մա անդ ըրդուելի է . պիտի երթամ մեծ հաւատաքննիչին

ոտքը իյնամ . պէտք է որ ամեն փորձ փորձեմ
հայրս ազատելու համար . չեմ ուզեր որ ինձի
համար ըսուի թէ վատութիւն ըրաւ :

— Այդ բանը չպիտի ընես , Տոլորէզ , գոչեց նորատի դոմինիկեանը :

— Ո՛հ , ըսաւ Ժուանա , խնայէ ինքզինքիդ :

— Ես բանէ մը չեմ վախնար , պատասխանեց օրիորդն ազնուութեամբ . միթէ ես կը վախնամ մեռնելէ :

— Բայց անպատուութենէ կը վախնաս , գոչեց Յովսէ ազգուութեամբ . չէս գիտեր Սէվիլի հաւատաքննչին ինչպէս մարդ ըլլալը :

— Ո՛հ , ճշմարիտ է , ըսաւ օրիորդը սուկալով , այդ բանը միտքս չէր եկեր :

— Ուրեմն , յարեց Յովսէ , իմ խրատներուս հետեւէ . ապա թէ ոչ հողւոյս վրայ կերդնում որ գէշ կըլլայ քեզ : Թո՛ղ որ բարեկամներդ աշխատին . մէկ զոհը բաւական է . դուն քեզ անօգուտ տեղը կը կորսընցընես , եւ այդ զոհն ամենեւին օգուտ մը չունենար ազատել ուղած անձիդ :

— Ո՛հ , գոնէ գիտնայի Էսթէվանին ուր ըլլալը , ըսաւ Տոլորէզ անպատմելի յուսահատութեամբ մը :

— Ես կ'իմանամ , անտարակոյս եղիւր , Ը-

սաւ Յովսէ . Էսթ էվան ալ ինձի պէս քեզ մի-
այն կը հոգայ . հանդարտէ եւ վատահ եղիր մեր
վրայ : Գուն հոս վախնալու բան մը չունիս .
նայէ որ դուրս չելնես . Սէվիլի մէջ միմիայն
այս տունը կայ ուր հաւատաքննութիւնը քեզ
փնտռելիք չունի : »

Յովսէի այս քաջալերական խօսքերուն
հակառակ , Տոլորէզ խորին թաղծութեան մէջ
մնաց :

« Ես շուտով կը դառնամ կուզամ » ըսաւ
դոմինիկեանն անկէ մեկնելով :

Ժուանա ընկերացաւ անոր՝ մինչեւ դուրսի
դուռը :

« Բարի Ժուանաս , ըսաւ Յովսէ , լաւ
հսկէ այդ օրիորդին վրայ . նայէ որ բնաւ
դուրս չելնէ . . . ալ բաւական են այդպիսի
դոհերը , յարեց դառնութեամբ :


Ազնի՛ւ որդեակս , ըսաւ դայեակն անոր
փաթթուելով , Աստուած օրհնէ քու արիու-
թիւնդ :

— Կը կարծես որ տկարացայ » ըսաւ Յով-
սէ տաքութեամբ :

Ժուանա սլատասխան չտուաւ , եւ արտ-
սուքը ծածկելու համար գլուխն անդին դար-
ցուց :

« Մի վախնար ամենեւին դոչեց Յովսէ

ուժով մ'անոր ձեռքը սեղմելով . մի վախճանար ,
Ժուանան , կը հասնիմ նպատակիս . . . :



ԳԼՈՒԽ ԺԸ .

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՅԱՍՈՒՄԸ

Գիշեր եղեր էր :

Յովսէ Տուորէզի քովէն մեկնելէն ետեւ
դէպ 'ի հաւատաքննութեան պալատը դնաց :
Հոն հասնելու համար Սէվիլի կառավարչին
պալատին փողոցէն անցնելու էր : Այն փողո-
ցին մօտեցած ժամանակ , տեսաւ զարմա-
նալով որ ժողովրդեան խուռն բազմութիւն մը
պալատին բոլոր անցքերը պաշարեր էր :

Անէծքներու եւ սպառնալեաց տարտամ
մռուռնչ մը՝ կերկերեալ , խուլ եւ ահեղ շշընչ-
մամբ՝ մրրկալից հովի նման կը պտըտէր այն
զրգռեալ ամբօխին մէջ : Չկար այն սուր եւ
խառնաձայն աղաղակները որ Գաղղիոյ մէջ կը
լսուին խռովութեանց ժամանակ , եւ ժողո-
վրդեան բարկութիւնն իսկոյն դուրս ցայտել
կուտան , որ վառօղի մուխի պէս շուտով կը
ցնդի :

Սպանիոյ հարստահարեալ՝ բայց համբերող եւ հանդարտ ժողովուրդն՝ աւելի սաստիկ ճնշման մը տակ՝ կոտորել ուղուած դիմացկուն ոստի մը խուլ ճարձատիւնը կարճակէր, եւ այն ալ չէ թէ իրեն համար էր որ մարդկութեան եւ արդարութեան իրաւունք կը պահանջէր այն միջոցին, վասն զի վարժուած էր անտրտունջ չարչարուելու եւ մեռնելու. այլ հաւատաքննութեան մէկ անօրէն գործին դէմ կը բողոքէր: Արդարին եւ անիրաւին զգացումըն ունէր սրտին մէջ, եւ եթէ այնչափ երկար ժամանակ բռնութեան լուծը կրեց, պատճառը սա էր որ զինքը հալածող մարդկային իշխանութենէն վեր աւելի մեծ զօրութիւն մը ցոյց կը տրուէր իրեն, այն է Աստուծոյ զօրութիւնը. եւ իր միամիտ հաւատքին մէջ, այս ժողովուրդը՝ որ Աստուծոյ վրայ այնչափ միայն տեղեկութիւն ունէր՝ որչափ որ իր հարստահարիչներն իրեն սովրեցուցեր էին, կը պաշտէր այն գերազօր Էակը ինչպէս որ իրեն նկարագրեր էին, եւ անտրտունջ կը հնազանդէր անոնց՝ զորս Աստուծոյ պաշտօնեայները կը համարէր:

Սպանիացիք անմիտ չէին, այլ միայն լոյս կը պակսէր իրենց, եւ այն լոյսն ալ չէին թողուր որ իրենց հասնէր: Ահա ասոր համար էր

որ Սպանիա այնչափ երկար ժամանակ տա-
ռապեցաւ տգիտութեան եւ նախապաշարմանց
անլուծանելի կապանաց մէջ :

Սակայն , հակառակ այնչափ հալածանաց ,
հետազօտութեան ոգին՝ որ անդադար դէպ 'ի
ճշմարտութիւն կը ձգտի , միշտ կը յուզուէր
Սպանիացւոց ուշիմ եւ ուղղասէր մտացը մէջ ,
եւ մինչեւ իսկ հաւատաքննութեան ու բռնու-
թեան շարչարան քներուն մէջ՝ մերթ ընդ մերթ
պայծառ նշոյլներ արձակեց , որոնք հեռուէն
աղօտ ապագայի մը վաղանցուկ փայլակներով
Սպանիան լուսաւորեցին . երկնային ճառա-
գայթներ , մասն այն մեծ բոլորին՝ որ կը յայտ-
նուէին աշխարհի մարդկային կերպարանքով
եւ անուամբ , իբրեւ արթուն պահապաններ՝
աշխարհի ամենակալ կառավարչին ձեռօք
ազգերուն կենացը մէջ շարուած , որպէս զի
ազգերն հետախաղաղ չկորնչին տգիտութեան
խաւարին մէջ :

Գրգռեալ արանց եւ կանանց ամբօխ մը
դէպ 'ի Սէվիլի կառավարչին պալատը կը դի-
մէին , որ միակ կանգեղով մը լուսաւորուած
էր :

Աղջամղջին գիշեր մ'էր :

Կենդանի շեղջակոյտը ծանր յառաջ կեր-
թար . յետոյ յանկարծ կը նահանջէր՝ դիմացի

կողմէն ուրիշ ամբոխ մը դէմն ելնելով : Կար-
ծես թէ ահագին ալիք մը կը տատանէր :

Սէվիլի ժողովուրդն Էնրիքէզի անօրէն
կառավարութենէն ձանձրացած՝ վրէժ առնուլ
մտաբերեր էր : Ժողովրդեան լռին եւ սահմա-
նափակ՝ բայց յարատեւ ու անողոք ցասումն
ահաւոր տեսիլ մ'ունէր :

Ազմուկն անչափ յանկարծակի եւ անչափ
լռութեամբ ծագեր էր , որ կառավարութիւնը
ժամանակ չէր ունեցեր զինուորական զօրու-
թիւն հանելու անոր դէմ : Ամբոխը դէպ 'ի կա-
ռավարչին պալատը կը դիմէր այն աներեւոյթ
թաթառներուն պէս՝ որ մտքի արագութեամբ
երկրի վրայ կիջնան :

Սակայն քանի մը ալկուազիլներ քաղա-
քին այլ եւ այլ կողմը կը դիմէին , եւ տեղ տեղ
ալ տխրատեսիլ կարտունեանք ազմուկը կը դի-
տէին առանց խառնուելու , այլ պատրաստ կըս-
պասէին իրենց օգնութիւնն առաւել վարձք
տուողին նուիրելու :

« Ի՞նչ է այս ամբոխին պատճառը , հար-
ցուց Յովսէ հաւատաքննութեան ընտանիի մը՝
որ խուճապաւ կը վաղէր , եւ Մօնսինեօր Ար-
պուէզի կողմէն զրկուեր էր եղելութիւնն ի-
մանալու :

— Բան մը չէ , վերասպատուելի հայր , պա-

ուաւ հրէութի մը բռնուեր է , անոր համար է :

— Վերապատուելի հայր , գոչեց անդիէն արիասիրտ կին մը՝ որ ընտանիին պատասխանը լսեր էր , հրէ-հէ ըսածը ձեզի պէս ինձի պէս բարի կաթուղիկ մ'էր , բայց անհաւատարիմ ծառայ մ'ունէր՝ քովէն վռնտեց , ան ալ գնաց իւր տիրուհին հաւատաքննութեան մատնեց իրեւ մովսիսականութեան յարեալ հերետիկոս մը :

— Ի՞նչ է այդ տիկնոջ անունը , հարցուց Յովսէ :

— Մարիամ Պուրկոնիացի է , վերապատուելի հայր . տարիքն ութսունը անցած է , եւ սուրբ կին մ'է որ իր բոլոր հարստութիւնը աղքատաց կը բաշխէր : Մենք զայն մայր կը կոչէինք . ուստի երբոր իմացուեցաւ որ հաւատաքննութեան բանտը դրուեր է , ժողովուրդը ոտք ելաւ ու կառավարչին պալատը դիմեց , վասն զի ան բռնել տուեր է սուրբ կինը : »

Հաւատաքննութեան ընտանին այս խօսքերն ըսող կինը բռնել տալու կը պատրաստուէր . բայց Յովսէ աչք ըրաւ անոր որ ետ քաշուի , վասն զի բռնութիւն գործածելու ժամանակ չէր :

Հաւատաքննութեան ընտանին ուրիշ

կողմ գնաց ամբոխը ճեղքել անցնելու փորձ
փորձելով, որ անանցանելի թուամբ մը կազմեր
էր. բայց միտքը՝ դրաւ որ այն յանդուզն խօս-
քերն ըսող անխոհեմ կիներ չմոռնայ :

« Խորհուրդ կուտամ քեզ, ըսաւ Յովսէ
կամաց մ'այն անտալուզուհւոյն, որ շուտով
հեռանաս Սէվիլէն. վասն զի քիչ մ'առաջ ը-
րած խօսքերդ քեզ շատ սուղ կրնան նստիլ :

— Կը հաւատամ, ըսաւ կիներ դոմինիկեա-
նին երեսը նայելով ու կծու կերպով մը ծիծա-
ղելով, դճւք ալ հաւատաքննիչ էք :

— Ես ներողամիտ եմ, եւ այս տառապ-
եալ ժողովուրդը կը սիրեմ, ըսաւ Յովսէ. գը-
նա, խեղճ կին, մի վախնար ինէ :

Ամբոխն աւելի կատաղութեամբ կը խրո-
նէր կառավարչին պալատին առջեւ : Ոմանք
երկաթէ լծակներ բերած՝ կ'աշխատէին պա-
լատին երկաթապատ մեծ դուռը խախտելու
որ ամուր կերպով գոցուած էր, մինչդեռ ու-
րիշներն ալ իրենց ահաւոր դաշոյնները վեր
վերուցած՝ մուկգին կռուոյ մը կը պատրաստը-
ւէին. նորատի աղջկունք անգամ՝ աջ ճեռ-
քով իրենց սուր դաշոյնը բռնած՝ աննկարագ-
րելի ցասմամբ մը յառաջ կը նետուէին :

Քեղեցիկ եւ միանգամայն ահեղ տեսա-
րան մ'էր տեսնել այն թխորակ դէմքերը, ո-

րոց աչերէն զիտես թէ կրակ կը ցայտէր, եւ
դայրագին բերաննին բացած ժամանակ՝ վագ-
րի ատամանց պէս ճերմակ ու վայլուն աստա-
մունքնին կը անանուէր :

Ափրիկեցի բնաւորութիւնը երեւան ելեր
էր :

Անաստատին Պէրէպէրներուն եռանդուն
արիւնը՝ ութ դար անցնելէ ետեւ տակաւին
չէր մարեր Անտալուզներուն երակացը մէջ եւ
լաւայի պէս կեռար այս միջոցին : Խորին, դա-
ռն եւ անողոք ատելութիւն մը գանոնք ա-
պրստամբութեան կը մղէր: «Ալ բաւական է»
ըսեր էին վերջապէս, եւ յուսահատ կատաղու-
թեամբ կը խուժէին այն անօրէն կառավարչին
դէմ, որ մեծ հաւատաքննչին կամահաճու-
թեամբը քաղաքին վրայ դրուեր էր, եւ ժո-
ղովրդեան ստորին դասէն ելած մարդը կը հա-
րստահարէր ու կը ճնշէր ժողովուրդը :

Էնրիքէզ իր պալատին խորը քաշուած՝
չէր համարձակեր դուրս ելնելու : Յաջողու-
թեան մէջ որչափ անգութ էր, այնչափ ալ
վտանգի ժամանակ վատ էր, եւ դողալով օղ-
նութեան կ'սպասէր որ չէր հասներ :

Լծակի ամեն մէկ հարուածները՝ որ պա-
լատին դուռը կը սարսեցընէին, մահուան
դանդակի հարուածներուն պէս կը հնչէին այն

Թշուառականին սրտին մէջ :

Իր սենեակին մէջ ծուներ դրեր Աստուածամօր պատկերին առջեւ , այն դեղեցիկ արձանին առջեւ որ Տոլորէզի կուսական աղօթանոցին զարդն էր , հաւատաքննութեան վաղեմի ընտանին՝ Պետրոս Արպուէզի հաճոյակատարը՝ անխմանալի խօսքեր կը մոմօար դողալով , կանոնական խօսքեր , որ զԱստուած շրթամբք միայն պաշտողներուն սովորական աղօթքի ձեւն են :

Էնրիքէզ կուրծքը կը ծեծէր՝ տղայական մեղքեր խոստովանելով , առանց այն տաղնասպազին վայրկենին մէջ իր եղեռնագործութեանց թողութիւնը Աստուծմէ խնդրելու :

Հին ժամանակի հեթանոսաց սլէս , Էնրիքէզ , մահուան երկիւղէն ազդեալ ջերմեռանդութեամբ՝ տարին հարիւր դոհ աւելի հաւատաքրննութեան բոցերուն նուիրել կը խոստանար : Այս եղաւ իրզղջման միակ յայտարարութիւնը :

Պալատին ծանր եւ ամուր դուռը՝ հաղարաւոր ուժեղ եւ կատաղի բազկաց անդուհարուածներուն շկրնալով 'ի սպառ դիմանալ , իյնալու վրայ էր . եւ որովհետեւ հաւատաքրննականք ժամանակ չէին ունեցեր գուժատու զանդակը զարնելու եւ կառավարութեան դօր-

քերն օգնութեան կանչելու, այս պատճառաւ ընդամենը յիսունի չափ Ալկուադիլ եւ հաւատաքննութեան զինուոր կամ ընտանի դումարուած էին հոն՝ վեց հարիւրէն աւելի սըրտոտ եւ խիզախ ամբոխի մը դէմ:

Շատ չանցաւ, դրան դէմ ուղղուած բուռն եւ անդուլ հարուածներուն փայտի եւ երկաթի ճարձատիւն մը յաջորդեց. դուռը ծըղխնիներէն ելնելով քարայտակին վրայ ինկաւ ահագին շառաչմամբ:

Այս միջոցին տխուր լռութիւն մը յաջորդեց ժողովրդեան յաղթական աղաղակին: Այն կատղած մարդիկն անշարժ կեցան խորտակեալ դրան առջեւ, եւ մէկը չկրցաւ համարձակիլ ոտքը պալատին սեմէն ներս դնելու:

Ի՞նչ էր այս հրաշքին պատճառը:

Վասն զի յանկարծ փողոցին ծայրը Յօհաննէս տ'Ավիլա երեւան ելնելով՝

« Ի՞նչ կընէք, գոչեր էր իր լուրջ եւ աղդու ձայնովը, ուր կերթաք անխոհեմներ, կեցիք:

Այս խօսքը բերնէ բերան ընթացեր, եւ Առաքեալին անունը լսուելուն պէս՝ ժողովրդեան մոլեգին ցասումը՝ Յաւիտենականին ձայնէն դադրած մրրկաբեր հովի պէս հանդարտելով, երկիւղած լռութեան փոխուեր էր:

Ժողովուրդն խակոյն յիշեր էր որ Յօհաննէս Թ' Ա. վիլա համբերութիւն պատուիրեր եւ փոխարէն երկնից արքայութիւնը խոստացեր էր իրենց :

Արդարեւ, Սպանիոյ քաջ եւ ազնուախոհ Ժողովուրդը չէր ապստամբեր խոստացուածութեամբ, անհանդարտ բաղձանքով կամ ունայն խրոխտութեամբ, ոչ. այլ հանդարտ եւ լուրջ էր. երկայնմտութիւն ու հեղութիւն կը տիրէր այն արի սրտերուն մէջ : Ժողովուրդը չարչարեալ առիւծի մը զայրոյթ ունեցեր էր վայրկեան մը, եւ զինքն անդադար չարչարող ձեռքին դէմ ելեր էր մոնչելով, բայց մէկ քաղցրամոք խօսք մը բաւական եղեր էր զայն իր ազնիւ եւ վեհ հնազանդութեանը դարձունելու, այն հնազանդութեան՝ որ իր պարտականութիւնը ճանչող հզօր էակներուն յատկութիւնն է : Սպանիոյ ժողովուրդն անկեղծ քրիստոնէայ եղած է միշտ. եւ եթէ խրատութիւնն ու հալածանքը զայն մոլեռանդ չընէին, թերեւս Աւետարանի սուրբ հոգին կատարեալ երկիւղածութեամբ պահպանող ազգաց առաջինը կըլլար աշխարհի վրայ :

Սպանիացւոց այս բնաւորութիւնը՝ թեթեւ քննութեամբ մը կրնայ հասկցուիլ: Իրենց բնաւորութեան հիմը վեհ պարզութիւն մ'է :

Արդ , Աւետարանէն աւելի պարզ եւ միանգամայն վեհ ի՞նչ կայ :

Յօհաննէս ա' Ավիլա դիւրու թեամբ յառաջ գնաց այն անթափանցելի ամբօխին մէջ . ամեն մարդ մէկ կողմ քաշուեցաւ անոր անցած ժամանակը :

« Որդեակներս , ըսաւ անոնց , ինչո՞ւ կապրտամբիք . ի՞նչ բարիք կրնաք յուսալ ապրտամբութենէ :

— Հայր , ըսաւ մէկը , մեր մանկունքը խնամող Մարիամ Պուրկոնիացին բռնեցին :

— Աստուած դայն նորէն ձեզի կը դարձունէ , պատասխանեց սուրբը . միթէ ապրտամբութեամբ կը յուսաք ազատել դայն :

Նոյն միջոցին մարդ մը կրօնաւորին ներկայացաւ , երկաթեայ մեծ լծակ մը ձեռքը , եւ ապտամբութեան գլուխներէն մէկը կը թըւէր : Կրօնաւորն իսկոյն ձանչեց որ Մանօֆինան էր :

« Ի՞նչ կրնես հոս , հարցուց սուրբը քաղցրութեամբ :

— Անմեղի մը վրէժն առնուլ կուղէի , պատասխանեց Մանօֆինա առանց խռովելու : Կուղէինք սպաննել թշուառական Էնրիքէզը զոր կառավարիչ գրեթե մեր վրայ :

— Պէտք չէ մարդ մեռցընել , ըսաւ Յօ-

հաննէս տ'Ալիլա :

— Էնրի քէզի պէս սրիկայ մը մեռցընելը զէն չունի , ըսաւ . Մանօֆինա . բայց որովհետեւ ձեր սրբութիւնը չուղեր . . .

— Աստուած է չուզողը , որդեակներս . օ'ն , ետ քաշուեցէք եւ ձեր վրէժն Աստուծոյ յանձնեցէք : »

Քիչ մ'առաջ կատաղի գազան կտրած մարդիկը հեզ գառներու պէս հնազանդեցան : Եւ երբոր կը հեռանային այն տեղէն , հաւատաքննութեան զինուորներն ետեւնուն իյնալով անոնց մէկ քանին բռնել ուղեցին :

« Ի՞նչ կընէք , գոչեց սուրբը . առիւծը վեհանձնութիւն ընելուն համար պատժել կուզէք : Ետ քաշուեցէք , զէնքի պէտք չունիք . ամեն մարդ հանդարտ է , չէք տեսներ , »

Զինուորները վայրկեան մը վարանելէ ետեւ ակամայ տեղի տուին այս կարգէ դուրս անձին ազդեցութեանը :

Նոյն միջոցին Յովսէ ամբօխին մէջէն դուրս ելնելով աչք ըրաւ Ալկուազիլներուն , եւ ամենն ալ ստուերի պէս հեռացան :

Յօհաննէս տ'Ալիլա՝ թէ եւ վերջին ծայր մարդասէր էր՝ դժգոհ եւ կասկածոտ աչք մը ձգեց մեծ հաւատաքննչին սիրելւոյն վրայ :

Այն ժամանակները դեռ Դոմինիկեաննե-

որն ու Տրանչիսկեաններն իրարու հետ հաշ-
տուած չէին* . այլ սաստիկ թշնամի էին մէկ
մէկու . Յօհաննէս տ'Ավիլա ալ՝ իր սրբութեա-
նը հակառակ՝ չկրցաւ ինքզինք արգելուլ ա-

* Այս երկու կրօնաւորական կարգերը
կամ միաբանութիւնները վէճ ունէին իրարու
հետ Ս . Աստուածածնի անարատ յղութեան
վարդապետութեան վրայօք : Դոմինիկեանք
կը պնդէին եւ տակաւին մինչեւ ցայսօր կը
պնդեն թէ Ս . Աստուածածնի յղութիւնն ըս-
կըզբնական մեղքէն աղատ չէր . Տրանչիսկե-
անք ալ հակառակը կը հաստատէին : Այս
պատճառաւ Դոմինիկեանք սաստիկ թշնամի
էին Տրանչիսկեանց , եւ եթէ ձեռքերնէն գար՝
ղանոնք ամենքը հաւատաքննութեան բոցե-
րուն կը մատնէին իբրեւ հերետիկոս . բայց
պապական կղերին կամ մանաւանդ աստուա-
ծաբաններուն մէկ մասը Տրանչիսկեանց կող-
մըն էին : Այս ծանր վէճը Տրիդենտոնի ժողո-
վին մէջ ալ երկար յուզուեցաւ եւ չկրցաւ
լուծուիլ . բայց վերջին ժամանակներս դոմի-
նիկեանց կամ մանաւանդ հաւատաքննակա-
նաց զօրութիւնը կոտրած ըլլալով՝ Տրանչիսկե-
անք դատը վաստրկեցան , եւ ներկայ Պիոս
Թ . Պապը Ս . Աստուածածնի անարատ յղու-
թեան վարդապետութիւնը ընդունելով ու վա-
ւերացընելով այս մասին համաձայնեցաւ Ա-
րեւելեան եկեղեցւոյ հետ :

կամայ խորշումէ մը՝ զոր զգաց նորատի դոմի-
նիկեանը տեսնելով :

Բայց Յովսէ հանդարտ եւ վստահ դէմքով
անոր մօտեցաւ :

« Հայր , ըսաւ , ձեր փնտուածն ապահով
վիճակի մէջ է : »

Յօհաննէս տ'Ավիլա դողաց : Ար կարծէր
որ Տօլորէզ հաւատաքննութեան ձեռքն ին-
կեր էր :

« Հայր , կրկնեց Յովսէ քաղցրութեամբ
անոր երեսը նայելով . չէք տեսներ երեսիս վը-
րայ որ ճշմարիտը կըսեմ ձեզ :

— Ուրեմն՝ ինձի յանձնեցէք այդ խեղճ
աղջիկը , ըսաւ Յօհաննէս տ'Ավիլա . բաւական
լացինք ատոր վրայ , ես ու Էսթէվան : »

Շաբա չէր կրցեր լուր մը տալ իրենց , վա-
սըն զի չէր ուզեր Տօլորէզի ուր ըլլալը յայտ-
նել :

« Վաղը , կէս գիշերին , ըսաւ Յովսէ ,
Էսթէվանատի հրապարակը աղբիւրին քով ձեզ
կ'սպասեմ . եկէք հոն զիս գտէք , ձեզ Տօլո-
րէզի քով տանիմ :


— Բաւական է , ըսաւ առաքեալը տես-
նելով որ Էսթէվան կը մօտենար . վաղ գիշեր
աղբիւրին քով ձեզ կը գտնեմ : »

Յովսէ մեկնեցաւ գնաց . բայց քանի մը

քայլ անդին ետեւը դարձաւ. ու էսթէվանի
գեղեցիկ հասակը դիտելով՝ խոր հառաչք մը
արձակեց եւ երկու կաթիլ ջերմ արտաուք
ցայտեցին աչերէն :

Յօհաննէս տ'Ավիլա այս հանդիպման վը-
րայ խօսք մը չըրաւ էսթէվանին , եւ կուզէր
միայնակ երթալ ժամագրեալ տեղը , ուր թե-
րեւս որոգայթ մը կը կասկածէր :

Այն գիշերն ալ դարձեալ էնրիքէզ հան-
գիտ ննջեց :



ԳԼՈՒԽ ԺԹ .

ՄԵԾ ՀԱՒԱՏԱՔՆՆՁԻՆ ԲԺԺԱՆՔԸ

Հաւատաքննութեան պալատը մտնելուն՝
Յովսէ մեծ հաւատաքննիչին քով գնաց :

Պետրոս Արպուէզ մինակ էր իր սենեկին
մէջ . բայց դուրսը պահապանները կրկնա-
պատկեալ էին . վասն զի աղմուկին շշուկը՝ որ
հազիւ հոն հասեր էր , այն աստիճան զարհու-
րեցուցեր էր զայն , որ ամեն վայրկեան կը կար-
ծէր թէ մարդասպաններ եկեր իր բնակարա-
նին դուռը կը բռնաբարէին : Պետրոս Արպուէ-

էղ վատ էր բորենիի պէս , որ ցերեկին լոյսէն
կը փախչի եւ շաղղակերութեամբ կապրի :

Սատափով դրուագեալ երեսուսէ փոքր սե-
ղանի մ'առջեւ նստած , որ արուեստից վերա-
ծընութեան ժամանակին ընտիր մէկ գործն
էր , Պետրոս Արպուէղ , գլուխը երկու ձեռ-
քերուն վրայ դրած՝ խոկուն ու շաղրութեամբ
տարօրինակ զարդանիւթ մը կը դիտէր :

Այն էր միեղջերուի ժանիք կամ վրիժակ
մը ոսկի պատեանի մէջ առնուած , որ Սպանիոյ
հաւատաքննութեան հիմնադիր Թովմաս Թոր-
քուէմատային էր , այն վայրագ կրօնաւորին՝
որուն անգթութիւնն այն աստիճան չափն ան-
ցուց որ նոյն իսկ Աղէքսանդր Պօրկիա պապը
սարսափեցաւ : Այս հարցը՝ որ չգիտցուիր ինչ-
պէս Պետրոս Արպուէղի ձեռքն անցեր էր , ա-
մեն տեսակ թոյներն յայտնելու եւ անոնց ազ-
դեցութիւնը կոտրելու դօրութիւն ունէր կը-
սէին :

Պետրոս Արպուէղ այն չափնամաներ էր Թոր-
քուէմատայի խժդ ժութեանը , որ անոր սնա-
պաշտ խոհեմութեանն ալ նմանող եղեր էր :
Այն միեղջերուի վրիժակն իւր սենեակէն դուրս
չէր ելներ երբէք :

Երբոր Յովսէ ներս մտաւ , հաւատաքննի-
չը գլուխը վեր առաւ :

« Է՛, ի՞նչ լուր ունիս, Յովսէ :

— Խաղաղութիւն, Մօնսի՛նեօր, ձեր լըրտեսս զինուորներն սքանչելի կերպով գործ տեսան, եւ անպիտան խաժամուժն իսկոյն ցիրուցան եղաւ :

— Օրհնեալ է Աստուած, գոչեց հաւատաքննիչը : Մեր խեղճ Էնրիքէզին բան մը եղաւ :

— Ոչինչ, Մօնսի՛նեօր. միայն իր պալատին գուռը կոտրեցին. բայց հիմա Էնրիքէզ կատարեալ ապահովութեան մէջ է՝ ինչպէս ձեր բարձրութիւնը :

— Ուրեմն հաւատաքննական պալատին վրայ գալու միտք չունէին :

— Ամենեւին, Մօնսի՛նեօր. ո՞վ կրնայ համարձակիլ Սէվիլի մեծ հաւատաքննչին դէմ ելնելու :

— Ըսել է որ վտանգէ բնաւ երկիւղ չունիմ, այնպէս չէ, Յովսէ. այնպիսի յանդգնութիւն մը չեն կրնար ընել : Թերեւս լաւ չեղաւ Էնրիքէզը Սէվիլի կառավարիչ ընելս. այդ մարդը զօրեղ ու կտրուկ չէ, Յովսէ :

— Ձեր կարծածին չափ չէ, Մօնսի՛նեօր :

— Բայց ոչինչ մարդ մ'է, տգէտ եւ բիրտ :

— Ի՞նչ վնաս ունի, Մօնսի՛նեօր, ձեզի հաւատարիմ եւ անձնուէր է. հաւատացէք

ինձ , որ քաղաքապետի պատմութեանն անկէց
աւելի չպիտի յարմարէր ուրիշի մ'ալ :

— Ժողովուրդը Մանուէլ Արկօզօէն դոհ
էր , ըսաւ Պետրոս Արպուէզ : Այն մարդը մե-
ղապարտ ներողամտութիւն մ'ունէր հերետի-
կոսաց եւ դաղջ քրիստոնէից վրայ . այս պատ-
ճառաւ ամենն ալ զինքը կը սիրէին :

— Ահա ատոր համար ոտք կեննեն Կնրի-
քէզի դէմ , Մօնսինեօր : Այս բանիս առաջքն
առնելու մէկ հատիկ միջոց մը կայ , այն է
խստութիւնն աւելցնել :

— Այո՛ , պէտք է որ այդ ապստամբու-
թիւնները վերջանան . պէտք է որ Սպանիոյ
հաւատաքնութիւնն իր իշխանութիւնը բո-
լոր աշխարհի վրայ տարածէ , եւ մինչեւ իսկ
պապերուն իշխանութենէն վեր բարձրանայ :
Պէտք է որ հերետիկոսութեան բոլոր բնաջինջ
ըլլայ երկրագունտիս երեսէն :

— Եւ բոլոր երկրագունտն հաւատաքըն-
նութեան ձեռքն անցնի , յաւելցուց Յովսէ .
կէս մը լրջութեամբ , կէս մ'ալ հեղնելով :

— Պէտք է որ , շարունակեց հաւատա-
քըննիչը , հերետիկոսաց մօխիրն երկիրը պա-
րարտացնէ եւ հեշտալի ընէ մեզ համար . վա-
սըն զի թէ՛ այս աշխարհի եւ թէ՛ երկնից բա-
րիքն ու երջանկութիւններն իրաւամբ ճշմա-

րիտ կաթ ոլիկներուն կը վերաբերին . անոնք միայն արժանի են վայելելու . Ասոր համար յարատեւ ջանք եւ փրկաւէտ խստութիւններ պէտք են :

-- Մօնսիներօր , հաւատաքննութիւնը որչափ առաւել հերետիկոսներ ու գէշ կաթ ոլիկներ խողխողէ , այնչափ առաւել կը մեծնայ ու կը դօրանայ :

— Անշուշտ , ըսաւ հաւատաքննիչը գաղանական ժպիտով մը . ուստի ես ալ պէտք եղածն հոգացեր եմ , Յովսէ . յառաջիկայ խարուկահանդէսին համար հարիւր տասնեւութի չափ դոհ պիտի ունենանք :

— Ըսել է վերջին անգամինէն յիսուն աւելի , Մօնսիներօր :

— Սէվիլի նախորդ կառավարին ի՞նչ պիտի ընէք , յարեց Յովսէ անհոգ կերպով մը :

— Իբրեւ լուտերական հերետիկոս պիտի դատեմ , գոչեց հաւատաքննիչը՝ Տոլորէզի համար ըրած ապարդիւն փորձերուն յիշատակէն զրգռեալ :

Ինչպէս որ կը տեսնուի , Յովսէ ճարտարութեամբ Պետրոս Արպուէզի կիրքը կը շողմէր : Կը տեսնուի նաեւ որ հաւատաքննութեան շարժառիթը մի միայն կրօնական մոլեռանդութիւնը չէր , ինչպէս որ ըսողներ ե-

դան : Իր ծայրայեղ եւ ճակատագրի պէս անը-
ւէր անգթութիւնը՝ կաթօլիկութեան փառա-
ցը համար չափազանց եւ կոյր նախանձայու-
զութեան մ'արդասիք չէր . այլ ուրիշ շարժա-
ռիթ մ'ունէր անշուշտ : Կրօնի շահը երկրոր-
դական էր , կամ մանաւանդ կրօնքը դիմակ
կամ պատրուակ մ'էր հաւատաքննիչներուն
անսանձ փառամոլութեանն ու ընչաքաղցու-
թեանը :

Բացարձակ մոլեռանդութիւնը , կոյր հա-
ւատքը , տխմարներու կամ ապուշ միտքերու
քով դանուելուն ներելի է հաւատալ . բայց
հաւատաքննիչները ոչ յիմար էին եւ ոչ ա-
պուշ , այլ միայն տիրապետել կամ թագաւո-
րել կուզէին . եւ իրենց խորամանկ քաղաքա-
գիտութեամբը հասկըցեր էին որ միակ ան-
խորտակելի թագը՝ Աստուածամարդոյն փշե-
ղէն թագն էր . ահա ասոր համար իրենց բըռ-
նաւորական թագաւորութիւնն անով պատըս-
պարեր էին . ահա ասոր համար Քրիստոսի
սուրբ անունը վահան մ'ընելով՝ իրենց անօրէ-
նութեանցն ալ երաշխաւոր ըրեր էին :

« Ժամանակ է , շարունակեց Պետրոս
Արպուէզ , մեր սուրբ հիմնադրին թովմաս
Թորքուէմատայի մեզ աւանդած ժառանգու-
թիւնը ձեռք բերելու : »

Այս միջոցին հաւատաքննիչը տեսաւ որ
Յովսէ տղու մը պէս կը խաղար սեղանին վրայ
դրուած միեղջերուի վրիժակին հետ :

« Մի դպչիր ատոր , որդեակ , ըսաւ Պետ-
րոս Արպուէզ կամաց մը ձեռքէն քաշելով
զայն . այդ վրիժակն անդին մասունք մ'է որ
գերերջանիկ Թորքուէմատայի կեանքը միշտ
պահպանեց , եւ հիմա ալ իմս կը պահպանէ :

— Ի՞նչպէս ձեր ձեռքն անցեր է այդ
չքնադագիւտ մասունքը , Մօնսինեօր :

— Ժառանգութեամբ , վասն զի ես մօրս
կողմէն անուղղակի գծիւ նոյն առաջին մեծ
հաւատաքննչին ազգատոհմէն սերեալ եմ . »

Յովսէ լռեց եւ իսկոյն վրիժակն իր տեղը
դրաւ : Նորատի կրօնաւորը թէպէտ դիւրա-
հաւան չէր այնպիսի բաներու , բայց թեթեւ
նանրահաւատութենէ մ'ալ ազատ չէր բոլորո-
վին : Արաքացի եռանդուն երեւակայութեան
մնացորդ մը կար վրան՝ որ բժժանքի մը զօ-
րութեանը հաւատք ընծայելու կը թելադրէր
զինքը :

« Յովսէ , ըսաւ հաւատաքննիչը , որով-
հետեւ հիմա Սէվիլի մէջ ամեն բան խաղաղ է ,
թեթեւ ճաշ մ'ընենք քեզի հետ եւ Նաքրիմա
Քրիսթիի սլատուական գինի մը խմենք , զ՞ո՞ւ
Պապին նուիրակը դրկած է ինձ :

— Նօթի չեմ, ըսաւ Յովսէ անհոգու-
թեամբ :

— Հոգ չէ, որդեակ, այն ազնիւ գինին
ախորժակդ կը բանայ : Զարկ զանգակը եւ ըսէ
որ մեզի ուտելիք եւ գինի բերեն : »

Յովսէ ժամանակ չունեցաւ հաւատա-
քըննչին հրամանը կատարելու . վասն զի յան-
կարծ ընտանի մը ներս մտնելով նամակ մը տը-
ուաւ Նորին բարձրութեան :

— Ուսկի՞ց է այս, հարցուց Պետրոս Ար-
պուէզ :

— Մէվիլի կառավարիչը կը զրկէ, պա-
տասխանեց ընտանին :

Պետրոս Արպուէզ նամակին կնիքը խզեց
եւ շուտով կարգաց :

« Մօնսինեօր, կըսէր Էնրիքէզ, կարմեւ-
եանց արբասուհին ծանր հիւանդ ըլլալով
գինքը խոստովանցընելու համար Ֆրանչիսկե-
ան կրօնաւոր մ'ուզեր է : Այս բանը պարտք
համարեցայ ձեր բարձրութեան ծանուցանել :
Ֆրանչիսկեանն այս իրիկուն կարմեւեանց վան-
քը պիտի երթայ, վասն զի կերեւի որ հարկն
ստիպողական է : Առ այժմ այսչափ մը կրցայ
խմանալ : Նամակս երկու ժամէ 'ի վեր գրուած
է, բայց չկրցայ շուտով Ձեր բարձրութեան
զրկել՝ քաղաքիս մէջ ծագած աղմուկին պատ-

ճառաւ՝ որ կենացս վտանգ կ'սպառնար :

— Խեղճ էնրիքէզ , գոչեց հաւատաքըն-
նիչը , որուն դէմքը՝ նամակը կարդացած ժա-
մանակ սաստիկ զայրոյթ յայտներ էր , որչափ
փոյթեռանդ է ինձ ծառայելու համար :

— Ահա կը տեսնէք , Մօնսինեօր , ըսաւ
Յովսէ առանց խնդիրը գիտնալու :

— Քրիստոս վկայ , ըսաւ Արպուէզ , այդ
կինը խիստ յանդուգն է : Թշուառ Ֆրանչիսկ-
եան մը կանչել տալ , երբոր ես եմ իր խոստո-
վանահայրը . պէտք էր որ ինչ դատ ուրիշի
դիմէր : Այո՛ , կը հասկընամ , ըսաւ ցած ձայ-
նով , մեռնելէ կը վախնայ , եւ թերեւս . . .
բայց դեռ ժամանակ կայ . . . : Այդ յիմար
կինը կրնայ զիս բերան տալ , պէտք է որ հի-
մա երթամ զինքը տեսնեմ :

— Է՛ , ո՛վ կայ հոտ , գոչեց իր ընտանինե-
րուն , դեսպակս շուտով սլատրաստեցէք ,
դուրս պիտի ելնեմ : »

Յետոյ , դարձաւ Յովսէի՝ որ ընդունայն
կը ջանար Պետրոս Արպուէզի սրտին մէջ ան-
ցածը գուշակել :

« Յովսէ , ըսաւ , կարեւոր գործ մը զիս
կը կոչէ : Կարմեղեանց արբասուհին մահա-
մերձ վիճակի մէջ է եւ կրօնից օգնութիւննե-
րը կը խնդրէ ինչ : Քեզ հոս կը թողու՞մ : »

Պետրոս Արպուէզ՝ շուտով սենեակէն դուրս ելաւ , պալատին մարմարեայ սանդուղքէն վար իջաւ , դեսպակը նստաւ դնաց :

Վանքին դրանը մօտ հասած ժամանակ տեսաւ որ Ֆրանչիսկեան մը դռնէն դուրս ելաւ ու գէպ իր կողմը կուգար :

Երբոր իրարու մօտ հասան , Պետրոս Արպուէզ հետաքրքիր աչօք Ֆրանչիսկեանին դէմքը դիտեց , եւ որչափ որ մութ ալ էր՝ երկուքն ալ կրցին զիրար ճանչել :

« Ի՞նչ գործ ունիք հոս , հարցուց խըստութեամբ Պետրոս Արպուէզ :

— Հոգի փրկելու եկայ » պատասխանեց Ֆրանչիսկեանը , որ Յօհաննէս տ'Ալիլա էր :

Հաւատաքննիչը դժնեայ նայուածք մը ձգեց անոր վրայ եւ վանքին դռնէն ներս մըտաւ :

Երբոր արբասուհիին մահճին քով հասաւ , Ֆրանչէսքա տէ Լէրմ՝ Առաքեալին քաղցըր խօսքերէն քաջալերուած՝ վայրկեան մը հանդարտութիւն վայելել կը թուէր : Թէպէտ ծանր հիւանդ չէր , բայց այն զգայակիր եւ կորովի կիներ յանկարծ հիւանդանալով եւ ուժէ իյնալով՝ մեռնելէ երկիւղ եւ իր ապականեալ կեանքէն սոսկում զգացեր էր :

Չկրնալով ինքզինք իր յանցանաց համա-

խոհին հաւատալ՝ որուն բռնութենէն կը վախ-
նար, Յօհաննէս տ'Ալիլիան բերել տուեր էր,
որուն սրբութիւնն անսահման վստահութիւն
կազդէր իրեն. եւ անկեղծ խոստովանութեան
մը մէջ՝ թշուառ կիսն իր հոգին շարշարող
խղճի խայթերը ճշմարտութեան առաքեալին
սրտին մէջ թափեր էր :

Ո՛հ, նրչափ դառն արտասուք թափեց արդ-
եօք այն սրբակրօն քահանայն Քրիստոսի եւ
կեղեցւոյն մէջ գործուած ամբարիշտ պղծու-
թեանց վրայ, լսելով տագնապահար եւ կըս-
կըծակէզ հոգւոյ մը խոստովանութիւնները՝ որ
կարմեւեանց գոռոզ արբասուհիին շրթունք-
ներէն դուրս կը հոսէին :

Հիւանդութիւնն ընկճեր էր այն ամեհի
բնաւորութիւնը, եւ խղճի խայթը՝ որ շատ
մեղք գործողներուն վերջին առաքինութիւնն
է, զղջումի բերեր էր զայն : Հակառակ այն
նենգաժէտ թելադրութեանց եւ ստութեանց՝
զորս Պետրոս Արպուէզ գործածեր էր համո-
զելու համար թէ ըրածը մեղք չէր, Տրանչէս-
քա երբէք չէր համոզուած, ուստի եւ գիտու-
թեամբ մեղանշած էր :

« Տիկին, ըսաւ հաւատաքննիչը երբոր
մինակ մնաց հիւանդին հետ, ինչո՞ւ համար ինչ
ուրիշ խոստովանահայր ուղեցիք :

Ֆրանչէսքա՝ Պետրոս Արպուէզի ձայնը
լսելուն պէս՝ անոր դարձաւ եւ երկար նայ-
ւած քով մը վերէն՝ ի վար դայն չափելէ ետեւ՝
արհամարհանաց եւ հեղնութեան նշան մ'ըրաւ
չրթունքովը :

« Չէի՞ք գիտեր , քոյր իմ , թէ ես իշխա-
նութիւն ունիմ ձեզ քաւելու , յարեց Պետրոս
Արպուէզ քաղցրիկ ձայնով մը :

— Ուրիշներն արձակելէ առաջ , պատաս-
խանեց Ֆրանչէսքա տէ Նէրմ , գլուխնիդ մոխ-
րով ծածկեցէք Մօնսիւնեօր , գոռոզութիւն-
նիդ փոշիին մէջ իջուցէք , եւ չոր գետնի վը-
րայ ծունր դրած աղօթեցէք , որպէս զի Աստ-
ուած ներէ ձեր եղեռնագործութեանցը : Ի՞նչ
իրաւամբ ուրիշները քաւելու խօսք կընէք ,
դուք որ այնչափ մեղք գործած էք :

— Խեղճ մոլորեալ հոգի , ըսաւ հաւատա-
քըննիչը . միթէ մեր հոգեւոր իրաւունքն ու
իշխանութիւնները սահման կրնան ունենալ :
Ո՞չ ապաքէն օծեալ Տեառն ենք . եւ կանչ աշ-
խարհի մէջ բան մը որ մեր այս սուրբ յատկու-
թիւնն աւրէ . մեր հոգեւոր իշխանութիւնն
այնչափ ընդարձակ է , որ ապաշխարողի մը ինչ
որ ալ հրամայենք , մեզի հնազանդելովը մե-
ղանչած չըլլար : Միթէ իշխանութիւն չունի՞մ
հոգիները մեղաց կապերէն արձակելու : Քա-

հանայ մը՝ սրչափ եւ շար ըլլայ , յարեց կեղծ խոնարհութեամբ մը , տակաւին Քրիստոսի երեսփոխանն է . եւ դուք եկեղեցւոյ շահուցը դէմ գործեցիք Պրանչիսկեանց կարգէն կրօնաւորի մը խոստովանելով , որոնք մեր ոխերիմ թշնամին են :

— Այն կրօնաւորը սուրբ մ'է , Մօնսինեօր . ան զիս մխիթարեց եւ Աստուծոյ հետ հաշտեցուց : Թողէք զիս որ խաղաղութեամբ մեռնիմ , եւ հոգ մի՛ ընէք հոգւոյս համար , »

Յետոյ անդին դառնալով Պրանչէսքա տէ Ղէրմ վերմակը գլուխը քաշեց :

Պետրոս Արպուէղ տեսաւ որ արբասուհին հոգին անկեղծութեամբ առ Աստուած դարձեր , եւ իր անոր վրայ իշխանութիւնը վերջացեր էր : Բայց իբրեւ ճարտար հաւատախոյզ՝ իր բարկութիւնը քաղցրութեան ու խոնարհութեան վերարկուով մ'սքօղելով , առանց դառնութեան եւ առանց դժգոհութիւն յայտնելու՝ դուրս ելաւ . եւ որովհետեւ հասկըցաւ որ Պրանչէսքայի հիւանդութիւնը մահաբեր չէր , միտքը դրաւ որ Յօհաննէս տ'Ավիլայի հետ միւսանգամ տեսնուիլն արգելու :

Պրանչէսքա տէ Ղէրմի՛ դարձն անողորմի՛ դատակնիք մ'եղեր էր իրեն համար :

ԳԼՈՒԽ Ի .

ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Յովսէի ու Յօհաննէս տ'Ավիլայի մէջ եղած ժամադրութեան ժամանակը կը մօտենար :

Էսթէվան իրիկուան ճաշն ըրեր էր Առաքեալին հետ . եւ այս վերջինը՝ թէ եւ յոչ կամաց՝ չէր կրցեր իր մտատանջութիւնը ծածկել , որ իր զուարթ՝ թէ եւ սովորաբար խոկուն գէմքին անընտել էր :

Էսթէվան՝ արդէն իր սիրելւոյն վիճակին վրայ անհանգիստ , կը վախնար որ Յօհաննէս տ'Ավիլա ցաւադին գաղտնիք մը կը պահէր իրմէ : Սակայն չէր համարձակեր հարցնելու , գուցէ այն մարդկային տկարութեամբ՝ որ դժբաղդութիւն մը իմանալու մեզ հետաքրքիր եւ միանգամայն երկիւղած կընէ :

Յօհաննէս տ'Ավիլա անսուլոր լռութիւն մը կը պահէր :

Էսթէվան սրտատանջ աչքով մ'անոր գէմքին ամենափոքր շարժումները կը դիտէր :

« Հայր իմ , ըսաւ վերջապէս , բան մը չիմացմք արդեօք Սէվիլի դժբաղդ կառավարչին վրայ . դատաստանը դեռ չսկսաւ , եւ մենք

բան մը չսլիտի՞ կրնանք ընել զայն ազատելու համար :

— Աչ , ըսաւ Յօհաննէս ա'Ալիլա . Մա-
նուէլ Արկօզօի դատաստանը գեռ սկսած չէ .
եւ երբոր ժամանակը գայ , չէք գիտեր որ ձեզ
կխնայրնեմ : Մինչեւ այն ժամանակը դուք
ձեզ ծածուկ եւ քաշուած պահեցէք : Չէք
գիտեր որ հաւատաքնուած թեան դէմ խիղախե-
լը հրչափ վատնուաւոր է ձեզ :

— Պիտի խիղախեմ՞ երբոր պէտք ըլլայ ,
պատասխանեց Էսթէվան հանդարտ ձայնով
մը :

— Աւրեմն բոլոր ուժգ կռուի օրին պա-
հէ . պէտք կըլլայ քեզ :

Միանգամայն Յօհաննէս ա'Ալիլա տեսնե-
լով որ սեղանին վրայի ջրային ժամացոյցին ա-
ւազը գրեթէ բոլորովին սպառեր էր , անշը-
շունջ դուրս ելաւ , ինչպէս որ շատ անգամ
սովորութիւն ունէր :

Բայց Էսթէվան , թէ եւ այն օրը կարգէ
դուրս բան մը չէր պատահած , կասկածի եւ
սրտատանջութեան մէջ ըլլալով , Առաքեալը
քանի մը քայլ հեռանալուն պէս , ինքն ալ
դուրս ելաւ , տանը դուռը գոցեց , եւ մութին
օգնութեամբը Յօհաննէս ա'Ալիլայի ետեւէն
գնաց հեռուէն՝ առանց տեսնուելու :

Երբոր մայր եկեղեցւոյ դէմի աղբիւրին
քով հասան , Յօհաննէս տ'Ալլիլա կանգ առաւ :
Յովսէ հոն կ'սպասէր :

Աղբիւրին եզրը նստած , գլուխն իր սպի-
տակ եւ նիհար ձեռքերուն մէկուն կրթնցու-
ցած , նորասի դոմինիկեանն աննկարագրելի
չնորհք մ'ունէր այն տխուր դիրքին մէջ :

Թաւախիտ նարնջենիներով հովանաւոր-
եալ այն ընդարձակ հրապարակին մէջ միայ-
նակնստած , ուր մարմարեայ մեծ աւաղանի մը
մէջ վազող ջուրին կարկաչէն զատ ուրիշ ձայն
չէր լսուեր , Յովսէ խորունկ եւ գաղանի խօկ-
ման մը անձնատուր եղեր էր վայրկեան մը : Ան-
շուշտ այն վայրկեաններէն մէկն էր , ուր մեր
կենաց անցքերը՝ որոնք արդէն անցելոյն վե-
րաթերեալ սին երազներ են , խուամբ խուամբ մեր
առջեւ կը կանգնին իբրեւ կենդանի իսկու-
թիւններ , կամ՝ տարտամ եւ շփոթ՝ հետ զհե-
տէ կը պարզին ու մեր աչաց առջեւէն կանց-
նին՝ իբրեւ զուարթ կամահեղ երեւոյթներ ,
որոցմէ զզուելով՝ աչքերնիս անդին կը դար-
ձունենք . վասն զի ունայնութիւն միայն կը
ներկայացընեն մարդուս անյագ հոգւոյն : Այն
ժամանակ որ մարդընոյն փորձերով իր կեան-
քը վերստին սկսիլ կուզէ :

Յօհաննէս տ'Ալլիլա աղբիւրին մօտեցած

Ժամանակ՝ ձայն չէր հաներ . սակայն Յովսէ
խմացաւ , եւ քարին վրայէն ելնելով դիմաւո-
րեց դայն :

Անոնցմէ քանի մը քայլ անդին՝ Էսթէ-
վան՝ նարնջենիներուն մէջ պահուըտելով կա-
մաց կամաց մօտերնին դայեր էր՝ առանց խ-
մացուելու :

Մեծ եղաւ դարմանքը երբոր տեսաւ որ
Առաքեալը դոմինիկեանի մը հետ կը խօսակ-
ցէր : Ուստի ուշադրութեամբ ականջ դրաւ :

« Հայր , ըսաւ Յովսէ խոնարհելով Առաք-
եալին առջեւ , չէի ուզեր այս աշխատութիւ-
նը սալ ձեզ , բայց ձեր բնակարանն ալ չէի
կրնար դալ առանց կասկածելի ըլլալու . . .
հաւատաքննութեան . եւ այն ժամանակ չէի
կրնար ծառայել ձեզ :

Յովսէ այնչափ անկեղծ կերպով կը խօ-
սէր , այնչափ ազնուութիւն կար իր ձայնին
եւ մարմարիտնի պէս փայլող գեղեցիկ բայց դեղ-
նած ճակտին վրայ , որ Յօհաննէս տ'Ավիլա դո-
մինիկեանի վերարկուէն զգացած կասկածը
գրեթէ բոլորովին կորսնցուց :

Այն երկու ընտիր հոգիներուն մէջ մագ-
նիտական կայծը բորբոքեր էր :

« Տոլորէ՞ք մեր է , հարցուց Առաքեալն
անհամբեր սրտով :

Տոլորէզի անուէնը արուելուն վրայ թեթեւ
խորշիւն մը լսուեցաւ նարնջենեաց տերեւնե-
րուն մէջ :

« Ար համարձակի՞ք հետս դալու, հար-
ցուց նորասի դամբնիկեանը քաղցր ձայնով
մը :

— Ննչո՞ւ չպիտի համարձակիմ, պատաս-
խանեց Յօհաննէս տ'Ավիլա, որուն վեհ սիրան
անմատոյց էր երկիւղի . կուզամ ետեւէդ, ը-
սաւ աներկեւան ձայնով մը, առաջնորդ է ինձ
եղբայր :

— Ա՛չ, հայր իմ, եղբայր մի՛ կոչէք զիս,
այլ որդի, ըսաւ Յովսէ շնորհալի կերպով մը
ձեռքերն իրար կցելով Առաքեալին առջեւ,
ձեր որդին՝ որ ձեր աղօթիցը կարօտ է . . . » :

Յօհաննէս տ'Ավիլայի սիրտը շարժեցաւ .
Յովսէ աննկարողբելի զգացում մը կազդէր
անոր . այն անմընդդիմակ թովչութիւնը, որ
դեղեցիկ, ազնիւ եւ խանդակաթ էակները
կազդեն :

« Հետս եկէ՛ք, հայր իմ, ըսաւ նորասի
դամբնիկեանը ճանբայ ելնելով, երթալու տե-
ղերնիս հետու չէ՛ » :

Արգարեւ քանի մը վայրկեան քալելով
Ժուանայի բնակիւծ արաբացի տան առջեւ հա-
սան :

Յովսէ գրողանէն բանայի մը հանեց , դու-
որ բացաւ ու նայա ինք ներս մտաւ . բայց երբ
Յոհաննէս տ'Ալիլիա աչներս մանելու վրայ էր ,
Էսթէվան՝ դոր շէր տեսեր՝ վազեց քովը գնաց
եւ աղերսական ձայնիւ մ'ըսաւ .

« Հայր իմ , եթէ հոս վտանգի բան մը
կայ , թողէք որ ես ալ մտնակից ըլլամ , եւ
թողէք որ ես ալ տեսնեմ զո՞նք , որովհետեւ կը
հաւատամ որ հոս պիտի գտնենք :

— Գոնէ կը յուսամ , պատասխանեց Յո-
հաննէս տ'Ալիլիա . եւ կը վախնայի որ սուտ
կեղնէ եւ դու ալ ինձի պէս խաբուած կըլլաս .
բայց որովհետեւ ամեն բան իմացեր ես , դու
ալ հետ եկու :

Միանգամայն Յովսէի դատնալով՝ որ ներ-
սը կ'սպասէր եւ գլուխը դուրս երկնցուցեր
էր տեսնելու համար թէ ինչ պատճառաւ ներս
չէր մտներ .

— Առանց Էսթէվան սրգւոյս ներս Հայիտի
գամ , ըսաւ. Առաքեալը :

— Էսթէվան , միմեաց Յովսէ . այն , թող
գայ , հայր , եւ տեսնէ զո՞նք : »

Երբոր ներս մտան , Յովսէ խնամով դուռը
դոցեց :

Տոլորէզ եւ Յուանա վարի սրահը կ'սպա-
սէին :

Տուրէզ յառաջուց Յովսէէն խնայած ըլ-
լալով, իր աղատարարին գէմ վաղեց . բայց
երբ Էսթէվան ալ տեսաւ, զոր չէր սպասեր,
երեսին գոյնը նեանց եւ մարեցաւ ինկաւ :

« Տուրէզ, ըսաւ Յօհաննէս տ'Ավիլա օ-
րիորդին քով երթալով, պէտք է զօրաւոր ըլ-
լալ թէ ուրախութեան եւ թէ տրտմութեան
մէջ : Այսպիսի գէշ ժամանակները՝ ով որ ա-
մեն հակառակ հովերէ կը ծռի, շուտով կը
կոտորի ու կը տապալի : »

Առաքեալին քաղցր ձայնէն Տուրէզ ինք
դինքին եկաւ, եւ Յովսէի նայելով՝ աչքովը
չնորհակալ եղաւ :

Յովսէ զլուխն անդին դարձուց, որպէս
զի աչքէն ահամայց դայտած արտօսրին կաթի-
լը չտեսնուէր :

Հոգւոյ ամենաբուռն զգայման շնորհ-
ուած այս առաջին յուզմունքէն ետեւ, Տուր-
էզ ամաչեց որ ուրիշ ամեն ժամանակի պէս
իր առաջին մտածութիւնը դժբաղդ հօրը վը-
րայ չէր ուղղեր . ուստի սրտատանջութեամբ
Յովսէի նայելով .

— Հայր Յովսէ, ըսաւ, հօրս դատաստա-
նը երբ պիտի տեսնուի :

— Վաղուան հետեւնալ օրը, պտտաս-
խանեց Յովսէ . վասն զի չէր ուղեր խարել

օրիորդը :

— Քաջ գիտէք , հարցուց Յօհաննէս
տ'Ավիլա . ես կը կարծէի թէ տակաւին քանի
մ'օր կայ :

— Վաղուան միւս օրը պիտի ըլլայ , պա-
տասխանեց Յովսէ . մեծ հաւատաքննիչէն ի-
մացած եմ , որ ինչ բան չպահեր :

— Ուրեմն , դուչեց Տօլորէզ անձկու-
թեամբ , ի՞նչ ընել պէտք է հիմա հայրս ազա-
տելու համար : Գեռ բան մը չկնք ըրած :

— Որովհետեւ ընելիք չկար , պատասխա-
նեց Գոմիսիկեանը :

— Հիմա ալ , հարցուց օրիորդը :

— Հիմա , վկայներ դանելու պիտի աշխա-
տինք . վասն զի ասկէ դատ հնարք չկայ զայն
ազատելու : »

Տօլորէզ պատասխան չտուաւ , բայց վայր-
կեան մը ինքնիրեն խորհելով որոշում մ'ընել
թուեցաւ . յետոյ Յօհաննէս տ'Ավիլայի դառ-
նալով .

« Հայր իմ , դուք վկայութիւն կ'ընէք ա-
նոր համար , այնպէս չէ :

— Մնչուչտ , պատասխանեց Յօհաննէս
տ'Ավիլա . դուն մի հող ըներ այդ բանին հա-
մար , այլ կ'ըցած իդ չափ հանդարտ եղիր , վա-
սըն զի իւրաքանչիւրս ալ արիութեան պէտք

ունինք : թող ուրեմն որ բարեկամներդ ազատութեամբ աշխատին , եւ մի տրամեցրներ զանոնք քու վշտակրութեամբդ : »

Նոյն միջոցին , երբ որ Տուրէզ իր բոլոր ուշադրութիւնն Առաքեալին խօսքերուն դարձուցած էր , Յովսէ պարաէզը մտաւ որպէս թէ ծաղիկներ գիտելու համար , եւ աչք ըրաւ Էսթէվանին , որ ետեւէն գնաց :

Երբոր խօսակցութիւնն շտուկու չափ հեռացան .

« Տոն Էսթէվան , ըսաւ Յովսէ , Սէվիլ նախորդ կառավարիչը չպիտի կրնանք երբէք վկայութեամբ ազատել , ուրեմն ուրիշ աւելի գորաւոր միջոց մը փնտռենք :

— Էսթէվան իր բուն միտքն իրեն լաւ ծանօթ չեղող անձի մը յայտնելը խօսեմութիւն չհամարելով « ես ուրիշ միջոց չեմ ճանչեր » ըսաւ լրջութեամբ :

— Սակայն եթէ այս միջոցն 'ի դերեւ ելնէ՝ ի՞նչ ընենք , հարցուց Յովսէ տատամտութեամբ :

— Աստուծոյ արդարութեանը վրայ կը դնեմ յոյսս » պատասխանեց Էսթէվան :

Յովսէ ժպտեցաւ , եւ երիտասարդին ձեռքը բռնելով սեղմեց :

« Տոն Էսթէվան , ըսաւ , կը տեսնեմ որ

վատահուժիւն չունիք վրաս. այդ անվատահու-
ժեան արժանի ըլլալիք ի՞նչ ըրած եմ : Օր մը
ճանքան ձեր նշանածին պատահեցայ , որ շը-
ւարած հաւատաքննիչին պալաար կը դիմէր
հօրն ազատուժիւնը հայցելու համար : Ղինքն
յայտնի մահուանէ , եւ որ աւելին է՝ թերեւս
նախատինքէ ազատեցի . բերի տունս պահեցի
պատասպարեցի եւ պաշտպանեցի քրոջ մը պէս :
Հիմա կուզեմ իր հայրը ազատել : Ասկէց աւել-
ի ի՞նչ կրնամ ընել ձեր վատահուժիւնը դրա-
ւելու համար : Ինչո՞ւ կը կասկածիք ինչ :

— Դոմինիկեան էք , պատասխանեց Էս-
թէվան անկեղծ ու թեամբ :

— Զգեատը կը կրեմ , պատասխանեց Յով-
սէ :

— Կընդունիմ , ըսաւ Էսթէվան , որ ձեր
ամեն բանը վատահուժիւն կաղղէ . ձեր դէմ-
քըն անկեղծ ու թիւն՝ կը շնչէ եւ խօսքերնիդ ալ
ճշմարտութեան տիպ մ'ունին . բայց յանցանքն
ի՞մա է եթէ այսօրուան օրս Սպանիոյ մէջ մէկ
մարդ մ'իր ամենասիրելի բարեկամէն անգամ
պէտք է կասկածի :

— Յօհաննէս տ'Ավիլա վատահուժիւն ու-
նի վրաս , պատասխանեց Յովսէ պարզապէս :

— Ես ալ ունիմ , ըսաւ Էսթէվան ձեռքն
անոր երկնցընելով :

— Ուրեմն ցոյց տուէք ինձի ձեր վատա-
հուծիւնը, Տոն Էսթէվան . անկեղծութեամբ
սլատասխան տուէք ինձ . եթէ Սէվիլի կառա-
վարիչը չկրնանք վկայութեամբ ազատել, ի՞նչ
միջոց գործածել կուզէք :

— Չեմ գիտեր » սլատասխանեց Էսթէ-
վան վարանելով :

Յովսէ հասկըցաւ որ մտքին մէջ գիտաւո-
րութիւն մը կար, զոր չէր համարձակեր յայտ-
նելու :

« Ժողովուրդը ոտք հանել, կառավարիչը
յափշտակել խարուկաղոհին ժամանակ . . .
եւ մեծ հաւատաքննիչն սպաննել, ըսաւ Յով-
սէ կիրքով :

Էսթէվան կասկածոտ աչքով մ'անոր ե-
րեսը նայեցաւ :

Յովսէ հասկըցաւ որ ուղիղ զարկեր էր Էս-
թէվանի ծածուկ գիտաւորութեանը :

« Այդ միջոցն յուսահատական կէտի մը
մէջ միայն կրնայ 'ի գործ դրուիլ » սլատասխա-
նեց Էսթէվան, բայց իր դէմքին այլայլութիւ-
նը կերպով մը սուտ կը հանէր իր խօսքերուն
խոհեմութիւնը :

Յովսէ հասկըցեր էր անոր միտքը . ուստի
առանց այլ եւս պնդելու՝ խօսքը կարճ կա-
պեց, եւ առաւ ներս տարաւ դայն՝ մեղմ եւ

անկեղծ ձայնով մ'ըսելով .

« Տոն էսթէվան , ինչ որ ալ պատահի՝
պատրաստ եմ մինչեւ ցմահ քեզ օգնելու :

— Շնորհակալ եմ , հայր Յովսէ , պատաս-
խանեց էսթէվան , բայց բարեկամները փոր-
ձութեան մէջ կը հասկցուին :

— Փորձութիւնը պիտի գայ , ըսաւ Յով-
սէ տխրութեամբ : Ո՛ր էսթէվան , ինչ աւելի
հաւատարիմ բարեկամ չունիս . եւ այս կռուին
մէջ թերեւս ես կեանքս պիտի տամ . . . այն
ժամանակ պիտի հաւատաս » յարեց քաղցրու-
թեամբ :

Այս խօսքին վրայ էսթէվան յուզեցաւ ,
սարսեցաւ . թերեւս իր մտքին խորհուրդը
պիտի յայտնէր եւ ինքզինք հաւատար այն
տարօրինակ մարդուն՝ որ զինքը կը զարմացը-
նէր ու կը թովէր . բայց նոյն միջոցին փողո-
ցին դուռը զարնուեցաւ :

« Մատնուեցանք » ըսաւ մտքէն էսթէ-
վան :

Յօհաննէս տ'Ալիլա Յովսէի նայեցաւ՝ դէմ-
քէն բան մը գուշակելու համար . բայց ոչ
Յովսէ եւ ոչ Տոլորէզ ամենեւին չխոսովեցան :

Ժուանա գնաց դուռը բացաւ :

Քօքօն էր , որ ամեն գիշեր նոյն ժամուն
կուգար Յովսէի հրամաններն առնելու եւ առ-

Ջի իրիկուան հրամաններուն ալ հաշիւը տա-
լու :

Ջայն տեսնելնուն պէս՝ սիրտերն հանդար-
տեցան :

« Նոր ի՞նչ կայ , քան զ Քօքօ , հարցուց
նորաստի դոմինիկեանը :

— Վերապատուելի հայր , պատասխա-
նեց ալիկուազիլը վարանելով , Սէվիլի կառա-
վարիչը . . .

— Երկու օրէն հաւատաքննութեան՝ ատ-
եանին առջեւ պիտի ելնէ , ըսաւ Յովսէ , գի-
տեմ . ուրիշ ի՞նչ կայ :

— Անոր բանտին դուռը պահապան պի-
տի ըլլամ , ըսաւ Քօքօ :

— Ուրեմն գոչեց Տոլորէզ , կրնաք . . .

— Մինակ չպիտի ըլլամ , պատասխանեց
Քօքօ հասկնալով անոր միտքը :

— Ուրեմն ըսաւ ինքնիրեն Տոլորէզ , քա-
նի որ ուրիշները չպիտի կրնան բան մ'ընել ,
ինծի միայն կիյնայ զայն ազատել : »

Յօհաննէս տ'Ավիլա ոտք ելաւ երթալու
համար :

« Տոլորէզ , ըսաւ Էսթէվան կամացուկ մը ,
կամ կը մեռնիմ կամ հայրդ կազատեմ :

— Օրհնեալ ըլլաս , Էսթէվան , պատաս-
խանեց Տոլորէզ :

— Աղջիկս , ըսաւ Յօհաննէս տ'Ալիլա ,
խոհեմութեամբ վարուէ , վստահ եղիր բարե-
կամներուդ վրայ , եւ բնաւ դուրս մի՛ ենլեր
որ եւ է պատճառաւ : »

Տոլորէդ առջեւը նայեցաւ առանց պա-
տասխանելու . վասն զի չէր ուզեր ոչ խօսք
տալ՝ եւ ոչ սուտ խօսիլ : Աչքը էսթէվանին
աչքէն չզատուեցաւ մինչեւ որ տանը դուռը
դոցուեցաւ :

Էսթէվան Յովսէ եւ Առաքեալն 'ի միասին
հեռացան :

Յովսէ անոնց հետ գնաց մինչեւ Թրիա-
նայի կամուրջը . հոն բաժնուեցաւ :

Քօքօ ալ անոնց ետեւէն գացեր էր հե-
ռուէն :


Յովսէ ետ դարձաւ ու ալկաւազիլին քով
երթալով .

« Քօքօ՛ , ըսաւ , խնամով դիտէ Տոն Էս-
թէվան Վարկասի ամեն գործերը , եւ ինչ որ
ընէ , ո՛ւր որ երթայ , եւ որո՛ւ հետ որ տես-
նուի , իսկոյն եկուր իմացուր ինձ :

— Վերապատուելի հայր . . . պատաս-
խանեց Քօքօ վարանելով . անշուշտ իր օգտին
համար է որ այդպէս կուզէք . վասն զի Ա-
ռաքեալն սիրելի բարեկամն ու պաշտպան-
եալն է :

— Անհող եղիր , Քօքօ' , ես մէկումը գէ-
շութիւն ըրած ունի՞մ երբէք , ըսէ :

— Օ՛ , հրեշտակի սիրտ ունիք , վերա-
պատուելի հայր , ըսաւ ալկուաղիլը . ինչ որ
ինձ հրամայէք , պատրաստ եմ հաւատարմու-
թեամբ կատարելու :



ԳԼՈՒԽ ԻԱ .

ՏԷՍԲԷՆԱԲԷՐՈՍԻ ԳԱԳԱԹԸ

Արեւը նոր ծագեր էր , իր առաջին կար-
մըրաշէկ ճառագայթներն երփներանգ ցոլաց-
մամբ կը շողշողեցընէին Սիէրա-Մօրէնա լե-
րան կատարները ծածկող թեթեւ մշուշը .
կարծես թէ ճերմակ շղարշէ քօղի մը վրայ
անհամար ոսկի զանակներ (փուլ) ցանուած
էին :

Երկու ճանապարհորդ ծանր ծանր կեր-
թային լերանց կողերուն վրայ բացուած նեղ
ճանրէ մը , ուր հազիւ ուղտ մը կրնար քա-
լել , եւ մէկ կողմն ալ յաճախ ահազին վիհեր
կային՝ որոց խորութիւնը գլխու պտոյտ կը
պատճառէր : Տեղ տեղ վտիտ ու խեղաթիւր

եղեւիններ իրենց տխուր կանաչութիւնը ապառաժներուն կրանիթեան գոյներուն հետ կը խառնէին, կամ՝ տարօրինակ հակադիպութեամբ՝ վայրի վարդենի մ'իր ծաղկալից օստերը կը տարածէր այն անդնդախոր գահավէժներուն ափափայ դառ 'ի վայրին վրայ : Երկու ճանապարհորդները սոյն միջոցին Սիէրա-Մօրէնա լեռան ամենէն բարձր գագաթներուն մէկուն վրայ հասեր էին :

Երեսնին դէպ արեւելք դարձուցած ըլլալով, արեւն ուղղակի ճակատնուն զարկած էր :

Աւելի հասակաւորը երեսուն տարեկանէն աւելի չկար . բայց ճակատն այնչափ լուրջ էր, այնպիսի քաղցր խստակրօնութեամբ մը տըպաւորեալ էր, որ տեսնողը քառասունն անցած կը կարծէր : Բայց երբոր ուշադրութեամբ նայուէր իրեն, կը տեսնուէր, որ տքնութիւնները, աշխարհութեանը եւ մտածողութեան սովորութիւնը խորութեան ու իմաստութեան յատուկ կնքով մը դրոշմեր էին այն մարդուն դէմքը, որ Ֆրանչիսկեանի խոնարհ զգեստն հագած էր :

Միւս ճանապարհորդն աւելի երիտասարդ էր . հազիւ քսան տարու կար . եւ իր ընկերին հետ որչափ նշանաւոր հակասատկեր մը կը

ներկայացընէր , այնչափ կը մերձենային իրա-
րու այն միակ մասամբ՝ որ միշտ մարդիկն իրա-
րու կը յարէ , թէ եւ խիստ տարակարծիք եւ
տարախոհ ըլլան . այսինքն երկուքն ալ միա-
պէս անկեղծ եւ ուղիղ էին : Ասկէց զատ , եր-
կուքն ալ մի եւ նոյն կարծեաց տէր էին . եւ
եթէ մէկուն միտումները երբեմն միւսին միտ-
մանց հակառակ կողմը հակէին , գոնէ երկու-
քըն ալ մի եւ նոյն նպատակի կը ծառայէին :

Երբոր Տէսթէնարէրոսի կատարը՝ հասան , որ
Քասթիլիան ու Անտալուզիան իրարմէ բաժ-
նող Քօրտիլիէր լերան ամենէն բարձր եւ ան-
մատոյց գագաթն է , հոն երկուքն ալ նստան ,
որպէս զի յոգնութիւննին անցունեն եւ ապա
այն տաժանելի ուղեւորութիւնը շարունակեն :

Քանի մը վայրկեան հանգչելէ ետեւ , ըս-
կըսան իրենց շուրջը դիտել փիլիսոփայական
այն հետախոյզ աչօք , որ արարչագործութեան
աքանչելեաց մէջ՝ պատճառը արդեանց մէջ կը
կը փնտռէ միշտ , եւ Աստուծոյ գործերուն
վրայ զմայլած ժամանակ՝ նոյն ինքն զԱստուած
կը տեսնէ . այնչափ մեր հոգւոյն ըմբռնում-
ները՝ որով միայն կրնանք հաղորդակցիլ մեր
մտաց հետ՝ զօրաւոր եւ պայծառ կըլլան :

Իրենց ետեւը , բուն Սիէրա-Մօրէնա լեռն
իր խրոխտ եւ ձիւնապատ գագաթը տնկեր էր :

Առջեւնին տարածուած էին Մանչի խոսպան
դաշտերը . իսկ ձախ կողմէն՝ գեղատեսիլ Ան-
տալուզիա իր ձիթեհեաց դաշտերը կանան-
չագեղ այգիներն եւ ծաղկաւէտ նարնջենինե-
րը կը պարզէր :

Աւելի հեռուն , աջ կողմը , Սիէրա-Նե-
վատա , Սիէրա-Էլվիրա եւ Ալբիւքսարաս լեռ-
ները կը շարունակէին այն անմատոյց դօտին՝
որ ահագին կրանիթեայ պարսպի մը պէս եր-
կու Քասթիլիաները պատած են :

Այս բարձր տեղէն երկու ճանապարհորդ-
ները բոլոր Սպանիոյ վրայ կը նայէին . . . եւ
այն հարուստ ու գեղեցիկ երկիրը նկատած
ժամանակնին՝ դառն խորհուրդ մը կը խառնը-
ուէր իրենց զմայլմանը հետ . . . վասն զի այն
գեղեցիկ ու բարեբեր դաշտերուն մէջ՝ անօ-
րէն ու վայրագ իշխանութիւն մը կը յափշտա-
կէր մարդոցմէ երկրի բարութեանց եւ իրենց
իսկ անձին ազատ վայելքը . այն երջանկու-
թիւնը՝ որ կենաց իրաւունքն է :

« Ահա մեր ուղեւորութեան նպատակը ,
ըսաւ յանկարծ կրօնաւորն իր ձեռքը հորիզո-
նին այն կողմը երկնցընելով՝ ուր մարդկային
միտքը միայն կրնար հասնիլ , վասն զի անեզր
տարածութիւն մ'էր :

— Տէր Աստուած , գոչեց տրամուլթեամբ

նորատի աշխարհականը , բաւական շուտ պիտի կրնանք հասնիլ . . . եւ մանաւանդ պիտի կրնանք թագաւորին սիրտը շարժել :

— Մներկեւան եղիք , պատասխանեց կրօնաւորը . ինչո՞ւ կը տագնապիք անատոյգ բանի մը համար . յախուռն շտապը կը վնասէ միշտ ձեռնարկութեանց յաջողութեանը . իսկ հանդարտութեամբ ամեն բանի կրնայ հասնիլ : Աննաց մեծ գաղանիքն է սպասել գիտնալ , եւ անատոյգ ապագայով ներկայն չվրդովել : Հողին կը յոգնի եւ կը թուլնայ յարածամ երկիւղներով ու կանխազգած սրտատանջութիւններով : Արի մարդն անյողդողդ սրտով կսպասէ ապագայ դէպքերուն . եւ շատ անգամ իր քաջասրտութիւնն անզգայութիւն կը կարծուի :

— Ա՛, հայր իմ , ըսաւ երիտասարդը դառնութեամբ , քաջ կը տեսնեմ որ բնաւ հող մը ձեզ չվրդովեր . դուք երկրաւոր ուրախութիւններէ հրաժարելով՝ մարդկային թշուառութիւններէն ալ հրաժարած էք . դուք ձեր կրօնաւորական կարգին մէջ իբրեւ անապատի մը մէջ առանձնացած էք , եւ հասարակաց կենօք չապրելնուդ համար , անոնց վիշտերն ալ չէք կրնար հասկընալ :

— Որդեակ , ըսաւ Ֆրանչիսկեանը քաղց-

րութեամբ , կը կարծես որ առաքելութիւնը
եսութեան ու անդգայութեան պաշտօն մ'ըլ-
լայ : Ո՛չ ապաքէն մտքովնիս մարդկային թըշ-
ւառութեանց խորը թափանցելու համար կա-
մաւոր թշուառութիւն յանձն առած ենք :
Վի՛սյ անոր՝ որ քահանային պաշտօնն ուրիշ
կերպ կը ճանչէ . վի՛սյ անոր՝ որ աւետարանա-
կան իշխանութիւնը աշխարհային իշխանու-
թեան կը դարձունէ եւ իր բուն կրկն շահուն
կը գործածէ՝ փոխանակ ամենուն բարեկեցու-
թեանն ու միսիթարութեանը գործածելու :
Առաքելութիւնը բնաւ ուրիշ նպատակ չու-
նի : Ով որ ուրիշ կերպով դայն կը գործածէ ,
իր պաշտօնին պարտականութիւնները չճան-
չեր : Ի՞նչպէս պէտք է ըլլայ վերջապէս մեր
կեանքը : Միշտ պատրաստ ըլլալ մեր եղբարց
համար արիւննիս թափելու , անոնց օգնելու ,
ձախորդութեանց մէջ զանոնք միսիթարելու ,
եւ լաւագոյն կեանք մը յուսացընելով ներ-
կայն ամոքելու : Ար կարծես , որդեակ , որ
մարդկային մեծ գերդաստանին երջանկու-
թեանը զինքնուիրելու համար մասնաւոր գեր-
դաստանի մը քաղցրութիւններէն հրաժարող
մարդն անձնասէր կամ վատ ըլլայ : Ոչ , ոչ ,
մտքէդ մի անցուներ . անձնուիրութիւնն այն-
պիսի առաքինութիւն մ'է որ Աստուծմէ կու-

դայ . Աստուած միայն կուտայ անձնութիւնը .
թեան զօրութիւնը :

— Ո՛ր, հայր իմ, յարեց երիտասարդը . ներեցէք ինձ, ես ապաշնորհ եւ անիրաւ եմ . ամեն բան ձեզ կը պարտիմ եւ սակայն կը նախատեմ ձեզ . վիշտը կը մոլորեցընէ խելքս : Դուք վըսեմ բացառութիւն մ'էք : Բայց, ըսէք ինձ, ո՞ւր են առաքելոց յաջորդները : Ընդունայն փնտռեցի շորս կողմս : Համայն Սպանիոյ մէջ՝ որ կրօնաւորներով լի է, ուրիշ բան չեմ տեսներ, եթէ ոչ սարսկ մուրացիկաններ եւ վատ կեղեքիչներ :

— Որդեակ, պատասխանեց Պրանչիսկեանը խիստ ձայնով մը . դուն դեռ մանուկ ես . այդպէս բացարձակ կերպով դատելու համար դեռ բաւական փորձառութիւն չունիս : Արձանչեմ ես ալ քեզ հետ Սպանիոյ եկեղեցւոյն ղեղծումները . ամեն օր կողքամ անոնց աղետաբեր արդեանցը վրայ, բոլոր ուժովս կը մաքառիմ անոնց դէմ . բայց երբոր ես իմ խորս մտնելով Յաւիտենականին ոտից առջեւ կը խոնարհիմ, եւ իմ կռիւներս աղօթքներս ուողբերս Անոր կը նուիրեմ, շատ անգամ տխուր բայց համբերատար ոգւով կըսեմ . « Թերեւս Աստուծոյ կամքն այսպէս է : »

— Ոչ, ոչ, այդ չկրնար ըլլալ, գոչեց եւ

րիտասարդք կրքով . Աստուած բարերար եւ
առատասիրտ է . Աստուած՝ որուն էութիւնը
սէր է , կրնայ թողուլ որ իր անունով հարստա-
հարին մարդիկ , որոց իւր էութեան մէկ կայ-
ծը՝ այն է անմահ հոգի տուած է :

— Արդեանկ , ըսաւ կրօնաւորը բաւական
չփոթելով այս հարցումէն , բայց իր անյողդողդ
հաւատքը չէր ներեր իրեն քննել այնպիսի
խորին խորհուրդ մը՝ որ իր խելքին հասողու-
թենէն վեր էր . որդեանկ իմ , Աստուած մարդս
երջանկութեան համար ստեղծեց , եւ երջան-
կութիւնն ալ կատարելութեան մէջ է : Մենք
անդադար այս միակ նպատակին կը ձկտինք .
Թերեւս վշտակրութեամբ միայն կրնանք հաս-
նիլ անոր . թերեւս յետագայ սերունդներն
իրենց հայրերուն արեանն ու արտասուացը
պէտք ունին՝ ինչպէս որ մենք Յիսուսի Քր-
րիստոսի արեանը պէտք ունեցանք . թերեւս
նաեւ Աստուած՝ որ յաւիտենական արդարու-
թեան ազրիւրն է՝ տառապելոց համար անխ-
մանալի հատուցումներ պահած է մինչեւ ան-
դամներկայ կենաց մէջ :

« Հալածանաց ժամանակներ , մարդիկ՝ մար-
տիրոսութիւնը աչքի առջեւ ունենալով միշտ ,
առօրեայ կեանք մը կը վարեն . երկրի բարու-
թիւններուն քիչ կը յարին . մտօք ապրելու

կը վարժուին . եւ ժողովրդոց այն մեծ մաս-
ծու թեւնէն երբեմն այն մեծամեծ հրահանգ-
ները կեղնեն՝ որոցմով ազգերը կը վերանորո-
գին :

«Ուրեմն դադրինք տրտնջելէ . մաքառինք
անասանն արիութեամբ . ամենազօր եւ ամե-
նաբարի էակի մը անօրէնութեանցը կամաւո-
րապէս հնազանդիլը գերազանց մխիթարու-
թիւններ կը բերէ իր հետ . քանզի ոչ թէ կոյր
ճակատագրի մը կը հնազանդինք, այլ ամենի-
մաստ եւ սիրող էի մը՝ որ բարին միշտ չարին
քով կը գնէ, շատ անգամ ալ նոյն իսկ չարին
մէջ կը գնէ՝ գերազօյն եւ երբեմն մեր սահ-
մանաւոր խելքէն վեր յարմարակցութիւննե-
րով, որոնք միշտ իր յաւիտենական կամօքը
նշանակուած նպատակի մը կառաջնորդ են : »

Նորասի աշխարհականը պատասխանն չի
տուաւ . այլ ուշադրութեամբ կը դիտէր այն
գեղադէմ առոյգ եւ լուրջ անձը, որ մտաց
եւ բազդի ամենէն հազուադիւտ ձիրքերն ու-
նեցած ժամանակ՝ աշխարհիս ունայն փառքե-
րէն ու պատիւներէն հրաժարեր էր, մի միայն
մաքի կենօք ապրելու եւ իր ամենայն կարո-
ղութեամբն ընկերական երջանկութեան շէն-
քին աշխատելու համար . չէ թէ այն խախուտ
ու վաղանցիկ երջանկութեան՝ որ ցնորական

պատիր մտածութեանց վրայ հիմնեալ է , այլ
այն ստոյգ յաւիտենական եւ անսխալ եր-
ջանկութեան , որ հակառակ ամեն ձախողու-
թեանց վշտաց եւ մահու՝ կը ծնանի այն մար-
դոց սրտին մէջ՝ որ մխիթարար հաւատոյ մը կը
յարին եռանդով , եւ այս աշխարհիս մէջ իսկ
անդր քան զգերեզման կեանք մը կը վարեն :

Թէ եւ երիտասարդը խիստ մաքուր եւ բա-
րեպաշտ զգացումներով սնեալ էր , սպանիա-
կան եւ երիտասարդական արիւնին բնական
եռանդն եւ այն ժամանակի ազնուականաց աս-
պետական կեանքը զինուորական բուռն ձեւ
մը տուած էին անոր կարծեաց ու դազափար-
ներուն յայտարարութեանը , թէ եւ բնական
ախորժ մ'ունէր փիլիսոփայական մտածու-
թեանց : Արօնական եւ մարդասիրական բար-
ձրը խորհրդածութիւններն ըմբռնելու տրա-
մադրութիւն ունէր , բայց տակաւին զուրկ էր
այն համբերութենէն որ գիտէ հանդուրժել ,
եւ գիպաց բնական կարգէն առաջ չնետուիր
երբէք : Իբրեւ ազնուական կտրիճ , բարոյա-
կան կարգին մէջ խիզախ եւ անվեհեր մարտիկ
մ'էր , որ իր ուժին վրայ աներկեւան՝ իր ամեն
թշնամիներուն վրայ մէկէն կը յարձակի , եւ
փոխանակ անոնց հետ մի առ մի կռուելու եւ
երկար մաքառամամբ յաղթութիւնն ապահո-

վերջու , շատ անդամ յաղթուելու վտանգի մէջ
կիյնայ իր յախուռն յարձակմամբը :

Ասով թերեւս կրնայ մեկնուիլ փիլիսոփայ
եւ աղատամիտ Սպանիոյ դարերէ 'ի վեր անդը-
լեռնեայ Սպանիոյ դէմ վարած կռիւներուն մէջ
հանապաղ յաղթուելը :

Քաջութիւն եւ յարատեւութիւն չպակ-
սեցան խղճի ազատութեան պաշտպաններուն ,
այլ ոգիսական խոհեմութիւն , մարդոց եւ դի-
պաց վրայ կասկած եւ խորագիտութիւն պակ-
սեցան : Աննենդ ասպետներու քաջութիւնն
ունէին . յայտնի եւ մերկալանջ կը կռուէին
խաւարած ածուկ թշնամեաց դէմ , որոնք ժո-
ղովրդեան տգիտութեանն ու մոլեռանդու-
թեան ետին ամրացած էին . այնպիսի թշնամ-
եաց դէմ , որք կռուի ժամանակ իրենք զի-
րենք չէին պաշտպաներ , այլ վատաբար ի-
րենց հակառակորդը ետեւէն կը զարնէին՝ եր-
բոր ընդունայն կռուելով յոգնած ըլլար :

Այս եղած է երկար ժամանակէ 'ի վեր Հը-
ռոմի սովորութիւնը . երբէք գունդ առ գունդ
եւ ճակատ առ ճակատ չպատերազմիր . այլ
նախաշաւիղ մրցումներ միայն կը ներկա-
յացընէ միշտ իր թշնամւոյն , եւ կը թողու
զայն որ իր զօրութիւնն սպառէ անհամար եւ
անտեսանելի հակառակորդներու ետեւէ իյնա-

լով , որք կը թուի թէ կը փախչին եւ կը շատ-
նան իր ոտքին ներքեւ . եւ երբ զայն յոգնած
ուտկարացած կը տեսնէ , միահաղոյն ոտք
կեւնէ մէկ մարդու պէս եւ յաղթուածեան ա-
հաւոր աղաղակը կարձակէ , որ մինչեւ աշ-
խարհի ծայրերը կը հնչէ :

« Ահա այս հինգ օր է որ Սէվիլէն ելանք ,
ըսաւ երիտասարդը , եւ դեռ ճրչափ ճանբայ
ունինք մինչեւ Մատրիտ :

— Գոնէ ութ աւուր ճանբայ , պատաս-
խանեց Ֆրանչիսկեանը :

— Եւ այսչափ ժամանակի մէջ հաւատա-
քըննական անգղն իր որսը կը պատանէ , եւ
թերեւս մեր ետ դառնալուն ամեն բան լմըն-
ցած կըլլայ :

— Անհոգ եղիր , ըսաւ կրօնաւորը , հա-
ւատաքննութիւնն այնչափ արագ չքալեր . իր
զոհերը դահճին մատնելէ առաջ՝ անոնց ար-
եան յետին կաթիլը կը ծծէ . . . օ՛ն , քալէ »
ըսաւ տեսնելով որ իրենց ուղեցոյցները կը մօ-
տենային ջորիները բերելով , զորս ետ թողու-
ցեր էին՝ լեռնէն վեր ոտքով ելնելու համար :

Երկու ճանապարհորդները ոտք ելան , եւ
լերան հիւսիսային դառիվայրին նեղ ճանբայ-
ներէն վար իջնելով՝ ուղեցոյցներուն քով հա-
սան , որոնք մեծ դժուարութեամբ Քասթիլիոյ

առապար ճանբէն վեր կելնէին , որ այն ժա-
մանակը ճանապարհորդաց հետքովը գծուած
շաւիղ մ'էր ապառաժներուն մէջ , բայց հիմա
արքունական գեղեցիկ պողոտայ մ'է , որ ոլոր-
տածեւ դառնալով մինչեւ լերանկատարը կել-
նէ , եւ այսպիսի պտոյտներով ու շրջաններով
Քասթիլիայէն Անտալուզիա եւ Անտալուզի-
այէն Քասթիլիա կը տանի :

Այս պատմութեան անցած ժամանակը
վերոյիշեալ ճանբան խիստ դժուակ էր , բայց
մեր ճանապարհորդները քաջ էին :

Ուստի՝ նորէն ճանբայ ելան , եւ մերթ ջո-
րիով , մերթ ոտքով լեռնէն վար իջան Քարո-
լինէ երթալու համար , ուր նոյն իրիկունը հա-
սան :

Մեր ընթերցողներն անշուշտ ճանչեցին
այս երկու ճանապարհորդները . էսթէվան
Վարկաս եւ Յօհաննէս տ'Ալիլա :

ԳԼՈՒԽ ԻԲ .

ՀԱՒԱՏԱՔՆՆԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ

Հաւատաքննութեան ատեանին օրը տը-
խուր եւ սգատեսիլ օր մ'էր : Ատեանին մեծ
սրահը բացուեր էր :

Այս սրահն ընդարձակ եւ երկար քառա-
կուսի մ'էր սեւով սլատած :

Վերի ծայրը՝ մէկ կողմէն միւսը կիսաբո-
լորակ սեղան մը երկնցած էր : Այն սեղանին ե-
տեւը սեւ թաւիչէ աթոռ մը կար դահաւորա-
կով , ուր նախագահը կամ մեծ հաւատաքըն-
նիչը կը նստէր :

Գահաւորակին վրայ փղոսկրեայ մեծ խա-
չելութիւն մը կար պատին վրայ կախուած :
Ուրիշ երկու սեւ աթոռներ ալ կային նախա-
գահին աթոռին երկու քովը . ասոնք ալ խոր-
հըրդական հաւատախօյզներուն էին , որոցմով
ատեանը կը կազմուէր :

Սեղանին վրայ , աջ կողմը փոքրիկ դան-
դակ մը կար . ձախ կողմը մեծ աւետարան մը .
մէջ տեղն ալ՝ նախագահին առջեւ քառակու-
սի թերթ մը դրուած էր , որուն վրայ իր մաս-

նաւոր ծանօթութիւնները կը գրէր :

Խաչելութեան պատկերին դիմացը սեղանէն դուրս նստարան մը կամ մանաւանդ եռանկիւնի փայտ մը դրուած էր չորս ոտքի վերայ . այս ալ ամբաստանելոց ակթոնն էր :

Աերջապէս նախագահին աջ կողմը նոյնպէս սեղանէն դուրս կալանաւորներն եւ չորս ալ դիմակաւոր մարդիկ կը կենային , որոնք սեւ մազէ երկայն պատմութեան մը հագած եւ գլուխնին ալ նոյնպէս սեւ մազէ կնգուղ մը անցուցած էին , որոց աչքին քթին ու բերնին կողմերը ծակեր կային : Չախ կողմն ալ փոքրիկ սեղանի մ'առջեւ երկու նստար նստած էին , որոնք նախագահին խօսքերը , կամ անոր հրամանաւ՝ վկայներուն ըսածները կը գրէին :

Պետրոս Արպուէզ , իր կրօնաւորական ըզգեստն հագած , ճերմակ խաչ մը կուրծքը կախած եւ նախագահի ակթոնին վրայ նստած , չարագուշակ աչք մը կը պտտցընէր իր շուրջը :

Իր երկու խորհրդականներն՝ այս վայրագ մարդուն սրտին մէջ որոտացող փոթորիկներուն անփոյթ , բայց նոյն տիրապետական ոգւով վառուած , ամբաստանելոյն դալստեանը կ'ապաստէին կեղծաւոր եւ խոկուն լռութեամբ :

Իրենց սղնձի դէմքին վրայ ներքին յուղման նշան մը չէր տեսնուեր . բոլորովին անծանօթ էր իրենց՝ այն մտային պայքարն ու անատու գուժիւնը՝ որով դատաւորի մը սիրտը կը տատանի յանցաւոր մը պատժելու պարտականութեան եւ անմեղ մը դարնելու երկիւղին մէջ :

Իրենց տալիք վճիռն յառաջուց պատուիրուած էր իրենց . զարնել , անդադար զարնել . այս էր իրենց նշանաբանը . միայն անպարտ արձակելէ կը վախնային , եւ երբէք կամովին չէին արձակեր :

Սրահին վարի ծայրը զանազան կարգէ կըրօնաւորներ կանգնած էին , որք այսպիսի հանդէսներու սովորական վկայներն էին , եւ քանի մը հաւատաքննութեան անձնուէր աղնըւականներ , զորս Պետրոս Սրպուէզ խորամանկութեամբ հրաւիրեր էր . վասն զի գաւելիք ամբաստանեալն հասարակ մարդ մը չէր , այլ մեծ եւ հզօր ազնուական մը , բարի կաթոլիկ մը՝ իբրեւ հերետիկոս ամբաստանեալ , որուն թերեւս դատապարտուիլը պիտի տեսնէին յիշեալ ազնուականք՝ առանց ի նպաստանոր խօսք մ'ըսելու համար ձակութեան :

Մարսալիահար լռութիւն մը կը տիրէր այս տխուր ժողովին մէջ , այնպէս որ տեսնողը կը կարծէր թէ մեռեալ մը վերջընելու դայած

սղագէմ յուղարկաւորներու ակումբ մ'էր .
այն աստիճան միակերպ թաղծութեան եւ մա-
հու նկարագիր մը դրոշմեալ էր այն զանազան
դէմքերուն վրայ :

Բայց շատ չանցաւ անդդալի շարժում մը
ելաւ ժողովին մէջ , եւ աչքերը դէպ 'ի դուն
ուղղուեցան : Ամբաստանեալը երկու կալա-
նաւորներով ներս կը բերուէր :

Յաղթահասակ եւ դեղնած մարդ մ'էր՝ յի-
սուն տարեկանի մօտ : Մազերը սեւ էին, բայց
կէսէն աւելին ճերմկցած : Նայն ճակատ մ'ու-
նէր , որուն մէջ առաւել ուղղութիւն բնակած
կերեւէր՝ քան թէ հանճար : Համարձակ եւ բաց
աչքերուն մէջ ճշմարիտ Քասթիլիացւոյ մը սա-
պետական անկեղծութիւն եւ բարեպաշտ քրի-
տոնէի մը համբերատարութիւն վայլելով՝ իր
վշտահար դէմքին դառնութիւնը կը մեղմէր :
Մարմինը՝ երկու ամսէն աւելի հաւատաքրն-
նութեան մութ բանտերուն մէջ փակուած մը-
նալուն պատճառաւ՝ վատած ու տկարացած էր :

Ծանրաքայլ յառաջ եկաւ իր սլահադան-
ներուն մէջէն , եւ նախագահին դիմացը հաս-
նելով՝ շուրջը նայեցաւ ամու մը դանելու եւ
նստելու համար . բայց վերոյիշեալ եռանկիւնի
փայտը միայն տեսնելով , որուն վրայ կը նըս-
տեցընէր ատեանն իր զոհերը , թեթեւ երգի-

ծական ժպիտ մ'արձակեց իր խամբած շըրթոունքներէն, եւ կրցածին չափ նստաւ կ... հեծաւ այն հաւատաքննական տարօրինակ աթոռակին վրայ : Յետոյ ազնուական ծանրութեամբ մը գլուխը վեր վերցընելով՝ Պետրոս Արպուէզի երեսը նայեցաւ այնպիսի սուր նայւածքով մը, որուն դիմանալու եւ աչքը չխոնարհեցընելու համար՝ հաւատաքննիչ ըլլալու էր :

Պետրոս Արպուէզ՝ առանց ամենեւին այլայլելու՝ անոր երեսը նայեցաւ եւ բերանը բանալով .

« Ամբաստանեալ, ըսաւ, ոտքի վրայ ել եւ Աւետարանին վրայ երդուիր որ ճշմարիտը պիտի խօսիս . »

Ամբաստանեալը ելաւ կանգնեցաւ, սեղանին քով դնաց, եւ ձեռքը Ս. Աւետարանին վրայ դնելով՝ ամուր եւ անյողդողդ ձայնով մ'ըսաւ .

« Կերզնում յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ անոր Ս. Աւետարանին վրայ, որ ճշմարտութենէ զատ ուրիշ բան չպիտի ըսեմ :

— Անուննիդ, յարեց հաւատաքննիչը :

— Պօղոս — Յովակիմ — Մանուէլ Արկօզօ, կոմս Սէվալոսի, երկրորդ կարգի աւագ

Սպանիոյ , եւ մեր ամենասիրելի Տոն Քարլօ
հինգերորդ թագաւորին կամօքը Սէլլիլի կա-
ռավարիչ :

— Տիտղոսներդ անցիր , անոնք քուկդ
չեն այսուհետեւ* :

Մանուէլ Արկօզօ պատասխան չտուաւ ,
բայց իր ստորին շուրթն արհամարհօտ կերպով
մը ձկտեցաւ : Քասթիլիացի արիւնը տաքցեր
էր :

« Տարիքնիդ , հարցուց նախագահը :

— Յիսուն , պատասխանեց ամբաստան-
եալը :

— Մանուէլ Արկօզօ , ըսաւ Պետրոս
Արպուէզ ծանր , հնչուն եւ դժնեայ ձայնով
մը . Մանուէլ Արկօզօ , դուն ամբաստանուած
ես՝ տունդ հերետիկոս զարմէ երիտասարդ մը
ընդունած ըլլալուդ համար . երիտասարդ մը՝
որ կաթոլիկ սուրբ եկեղեցւոյ վարդապետու-
թեանց հակառակ զգացումներ կը յայտնէ :

— Չեմ գիտեր ինչ ըսել կուզէք , մօնսին .

* Հաւատաքննութեան ատենին հրամա-
նաւը բռնուած որ եւ է անձինք իրենց ամեն
տիտղոսներն ու աստիճանները կը կորսնցընէ-
ին . ուստի հաւատաքննական հալածանաց ա-
ռաջին արդիւնքն ընտանեաց կործանումն ու
վատահամբաւութիւնն էր :

եօ՛ր , պատասխանեց ծանրութեամբ Մանուէլ Արկօզօ :

— Հերետիկոսութիւնը չամբաստանելը՝ դայն քաջալերել է , ըսաւ հաւատաքննիչը : Դուն չգիտցած չես կրնար ըլլալ որ էսթէվան Աարկաս արաք ազգատոհմէ սերեալ է , եւ առարատ կաթոլիկ մը չէ . դուն ոչ միայն տունըդ ընդունեցիր դայն , այլ եւ մէկհատիկ աղջիկդ ալ անոր նշանեցիր : »

Այս խօսքին վրայ ցաւազին հառաչք մը անցաւ դժբաղդ կառավարչին կուրծքէն , եւ իր դժգոյն այտերն ՚ի վար արտօսը մը սահեցաւ . բայց իսկոյն ինքզինք ամփոփելով .

« Մօնսինեօ՛ր , պատասխանեց , էսթէվան Աարկաս պատանին այն արաքացի ազնուական ասպետներէն սերեալ է , որք կամաւ Յիսուսի Քրիստոսի կրօնքն ընդունեցին եւ Արակոնի Յէրտինանտոս թագաւորին եւ Իզապէլլա մեծ եւփառաւոր թագուհւոյն հպատակեցան : Այն ասպետները մեր թագաւորներէն մի եւ նոյն արտօնութիւններն ստացան զորս կը վայելեն բուն Քասթիլիացի ազնուականք : Ինչո՞ւ համար պիտի ժխտենք հիմա անոնց իրաւունքը որ անցեալ դարէն ՚ի վեր օրինաւորապէս ժառանգած են :

— Այն որ իրաւունք մը կ'ստանայ , պար-

տակաճուժիւն մ'ալ կառնու իր վրայ , ըսաւ հաւատաքննիչը , եւ երբոր այն պարտականութեան զանցառութիւն կընէ , իրաւունքն ալ կոչնչանայ : Տոն էսթէվան Վարկաս եկեղեցւոյ սուրբ կանոնաց հակառակ վարդապետութիւններ ընդունելով՝ բարի կաթողիկոսութեան երաշխաւորութիւնը կը կորսնցընէ , եւ հերետիկոսութեամբ վարակեալ է . ուստի ով որ այսոր հետ խնամութիւն կընէ՝ նոյնպէս հերետիկոս կը համարուի , եւ այս յանցանաց համար ռահմանեալ պատժոց ենթակայ կըլլայ :

— Մօնսինեօ'ր , ըսաւ Արկօղօ ծանրութեամբ , պատուոյս վրայ կերդնում որ Տոն էսթէվան Վարկաս իմ առջեւ խօսք մը հանած չէ բերնէն՝ որ բարեպաշտ քրիստոնէի եւ անկեղծ ասպետի մը վայելուչ չըլլայ . ի՞նչպէս ուրեմն մեղսակից կըլլամ ես այնպիսի յանցանքի մը որ գոյութիւն չունի :

— Աուրանայ , ըսաւ հաւատաքննիչը կարեկից դէմքով մը եւ դէպ իր խորհրդականներուն դառնալով , որպէս թէ անոնց ալ կարծիքն հարցընելու մտօք :

Խորհրդականներն ալ սոսկման երեւոյթ մը ցուցըցին , կեղծաւոր դէմքով մը աչքերնին դէպ երկինք ամբառնալով :

Այս մնջկատակն ընտանի էր անոնց . ու-

դիզ դատման եւ խօսքի տրամախոհութեան
տեղ կը բռնէր, որոնցմէ զուրկ էին ամեննալ :

Ատենադպիրները կը գրէին այս հարցապատասխանին :

Պետրոս Արպուէզ մտածութեան մէջ ինկած կը թուէր :

Երկար լռութիւն մը տիրեց, մինչդեռ այն յախուռն եւ տարփազգած հոգին՝ ինքզինք ամփոփելով՝ կը ջանար գտնելու այն կեղծ հեղութիւնը, այն փարիսեցական երկիւղած եւ գորովալիր նայուածքը, այն աւետարանական քաղցրութեամբ ողոքեալ խօսքերը՝ որ հաւատաքննիչներուն սովորական ոճն էր, եւ որմէ երբէք չէին խոտորիր : Այս կեղծ քաղցրութիւնը կամ իրենց կանոններէն մէկն էր, կամ անգթական նրբութիւն մ'էր . վասն զի մարդ չկրնար հաւատալ որ հաւատաքննիչք այս չարութիւններն անկեղծ համոզմամբ գործէին, եւ թէ այն արուեստակեալ հեղութիւնն ու քաղցրութիւնը՝ որ այն աստիճան բարբարոսութեան հետ միացեալ էր, կրօնական ջերմ նախանձայուզութեան արդիւնք եւ միանգամայն անկեղծ գթութեան եւ կարեկցութեան զգացում մ'ըլլար իրենց զոհերուն նկատմամբ, զորս այնպէս չարչարելու ստիպուած կը համարէին զիրենք :

Իրենց ցոփ եւ զեղխ բարձր յաղթող պատասխան մ'է այս մասին յառաջ բերուած ամեն ջատագովութեանց . վասն զի սրտի մը բարութեան միակ երաշխաւորն իր մաքրութիւնն է :

Վերջապէս Պետրոս Արպուէզ ապաշաւող դէմքով մը Սէվիլի կառավարչին նայելով .

« Որդեակ իմ , ըսաւ , կը տեսնես որ խորին ցաւ կը պատճառէ ինձ այդ յամառութիւնը զոր բարւոյն թշնամին դրեր է քու սրտիդ մէջ : Ես քեզ սիրած եմ ըստ հոգւոյ . ուստի մէկ կողմանէ եկեղեցւոյ սուրբ օղտին համար ունեցած նախանձաւորութիւնս եւ միւս կողմանէ քու անձիդ վրայ ունեցած անկեղծ սէրս՝ պարտք դրած են վրաս աղաչել զԱստուած , որ զղջման եւ ապաշխարութեան հոգին զրկէ քեզ , որպէս զի սխալներդ ճանչելով , հրապարակաւ հրաժարիս , եւ նորէն մտնես այն ուղիդ ճանքան որ երկինք կը տանի :

— Հայր իմ , պատասխանեց Մանուէլ Արկօղօ հանդարտ դէմքով . Աստուած վկայէ ինձ որ իր սուրբ Աւետարանին օրինաց հակառակ խորհուրդ մը մտքէս անցած չէ երբէք , այլ միշտ սիրով եւ վստահութեամբ պահած եմ նոյն օրէնքները :

— Բայց արաբի մը հետ յարաբերութիւն ունենալդ կը խոստովանիս , յարեց հաւատա-

Քրննիչը նենդ ութեամբ :

— Տոն Էսթէվան Աարկասարաբ չէ, պատասխանեց կառավարիչը, ձեզի պէս ինձի պէս լաւ կաթուղիկ է, Մօնսինեօր :

— Աստուած երկնաւոր, գոչեց հաւատաքննիչը, չար հոգին այնքան կուրացուցեր է գինքը որ մեր սուրբ կրօնքը կը նախատէ :

— Մօնսինեօր, ըսաւ կամաց մը խորհրդականներէն մէկը, Տոն Էսթէվան Աարկասի հետ յարաբերութիւն ունենալը կը խոստովանի : »

Պետրոս Արպուէզ գլխովը շարժում մ'ըրաւ, որ ըսել կուզէր թէ ինքն ալ նոյն կէտն ամուր պիտի բռնէր :

« Եղբայր իմ, ըսաւ հաւատաքննիչը, կրնամ ուրանալ նաեւ որ աղջիկդ կաթուղիկ կրօնին ճշմարիտ հոգւոյն հակառակ զգացմանց մէջ մեծցուցած ես, եւ հիւսիսէն եկած ու իմաստասիրութիւն կոչուած կորստական ուսումներուն պարապած է :

— Կուրանամ, պատասխանեց կառավարիչը :

— Կրնամք ապացուցանել, հարցուց հաւատաքննիչը :

Մանուէլ Արկօզօ սրահին վարի կողմը գլխաւորուած ակումբին դարձաւ, եւ ըսաւ մա-

Թի — ազնուականներ տեսնելով , որ իր իշխա-
նութեան ժամանակ իր տունը կը յաճախէին .

«Տեսրք իմ, գոչեց , մէկը չկայ ձեր մէջ որ
ճշմարտութեան վկայութիւն տայ եւ հաստա-
տէ թէ ոչ Մանուէլ Արկօղօ եւ ոչ իմ սիրելի
աղջիկս Ս . Աւետարանի օրինաց եւ վարդա-
պետութեանց հակառակ գործ մ'ըրած չենք
երբէք : Գուք ամենդ դիտէք այս , տեսրք
իմ , վասն զի իմ սիրտս ալ տանա պէս բաց էր
ձեզ : »

Կառավարիչն ընդունայն սպասեց պա-
տասխանի . ամենն ալ պապանձեալ առաջնին
նայեցան , եւ կը վախնային ամենափոքր կա-
րեկցութեան ու գթութեան ցոյց մը յայտնե-
լու :

Մանուէլ Արկօղօ յուսահատ կերպով մ'իր
երկու թեւերը վար ձգեց . յետոյ յանկարծա-
կան ներշնչութեամբ մը լուսաւորուածի պէս՝
գլուխը վերցընելով հաւատաքննչին դար-
ձաւ .

« Մօնսինեօր , գոչեց . ձեր խղճին վկա-
յութեանը կը դիմեմ . դուք ամեն օր տունս
կուգայիք , եւ իբրեւ պաշտօնեայ Աստուծոյ
եւ բարեկամ՝ ամենէն աւելի պէտք է ձանչած
ըլլաք իմ եւ մանաւանդ աղջկանս ճշմարիտ
զգացումները :

— Կս աղջկանդ խոստովանահայրը չէի .
պատասխանեց դոմինիկեանը ցուրտ ձայնով
մը :

— Ո՛վ Մօնսիներօր , գոչեց Մանուէլ Ար-
կօղօ այնպիսի խեղճուկ կերպով մը որ ժայռե-
րն անգամ կրնար 'ի դուժ շարժել , Մօնսիե-
նօր , արդեօք Տոլորէ՞ղս ալ իբրեւ հերեօթիկոս
ամբաստանեալ է , արդեօք ան ալ ինձի պէս
բանտարկեալ է :

— Խնդիրն հիմա աղջկանդ վրայ չէ , պա-
տասխանեց հաւատաքննիչը՝ դժբաղդ հօրն
անատուդուժիւնն երկարելու դիտմամբ . ամ-
բաստանեալը դու ես հիմա , Մանուէլ Արկօ-
ղօ , խոստովանէ յանցանքդ եթէ կուզես Աս-
տուծոյ եւ Ս . Եկեղեցւոյ թողուժեանը ար-
ժանանալ : »

Կառավարիչը պատասխան չտուաւ . հե-
տաքնին եւ խռովեալ աչօք հաւատաքննչին
աչքին մէջ կը նայէր , որպէս զի իր աղջկան
գլխուն եկածը կամ գալիքը անոր դէմքէն
դուշակելու կարող ըլլար . բայց ընդունայն .
հաւատաքննչին դէմքն ուրիշ բան չէր յայտ-
ներ՝ բայց եթէ կեղծաւոր քաղցրութեան պա-
տրրուակաւ ապառուժ եւ անողոք սիրտ մը :

« Աղջիկս , ո՛հ , ի՞նչ ըրիք աղջիկս , գո-
չեց կառավարիչն աղերասաւոր ձեռքերն իրար

կցելով. սլատասխան տուէք ինձ, Մօնսիհն-
եօր, կաղաչեմ, ըսէք ինձ թէ աղջկանս վը-
տանդ մը չկայ, ես ամեն բան կը կրեմ:

— Մանուէլ Արկօզօ, ըսաւ հաւատաքըն-
նիչը ծանր բայց աղու ձայնիւ. հիմա ժամա-
նակը չէ երկրաւոր գորովանաց զբաղելու.
Աստուծոյ եւ փրկութեանդ վրայ խորհէ, եւ
սիրելեացդ հոգը Նախախնամութեան յանձ-
նէ: »

Այս խօսքերուն կեղծ քաղցրութեանը
հակառակ՝ հաւատաքննչին դէմքն անողոք
կամք մը ցոյց կուտար: Տոլորէզի հայրն հաւ-
կըցաւ որ այն պղնձի սրտէն յոյս չկար: ուստի
գլուխը կուրծքին վրայ ծռեց, եւ նախնի մար-
տիրոսաց արժանի դիւցաղնական համբերու-
թեամբ.

« Աստուծոյ կամքը կատարուի » ըսաւ
եւ լռեց:

— Եղբայր իմ, ըսաւ հաւատաքննչին ա-
նուշիկ ձայնով մը. գոնէ խոստովանէ որ չար
հոգին քեզ փորձեց: Մեք տկար արարածներ
ըլլալով՝ չենք կրնար ամեն ժամանակ անոր ո-
րոգայթներէն ազատ մնալ՝ որչափ եւ գիտա-
ւորութիւննիս բարի ըլլայ: Ուրեմն, եղբայր
իմ, առանց ամենեւին վարանելու՝ ըսէ մեզ
թէ անոր չար դօրութիւնը քեզ նուաճեց.

ըսէ մեզ թէ առաւել կոյր եղած ես քան թէ մեղապարտ, որպէս զի երկրաւոր պատիժները մեղմացընելով, միանգամայն հոգիդ ալ կորուստէ ազատելու ջանանք : »

Կառավարիչը չպատասխանեց :

« Գոնէ խոստովանէ թէ հաճու թեամբ մըտիկ ըրած ես փիլիսոփայական եւ հակաքրիստոնէական սկզբունքները զոր լուտերականութիւնը կը ծաւալէ Ներոպիոյ մէջ :

— Ես լուտերականութեան ինչ ըլլալը չեմ գիտեր, պատասխանեց կառավարիչը, եւ ոչ զբաղած եմ երբէք անով . . . Այդ լուտերը ըսածնիդ ի՞նչ մեծ մարդ է եղեր որ այդպէս աշխարհս տակն 'ի վերայ կընէ :

Այս համարձակ պատասխանին վրայ հաւատաքննչին աչքէն շարաշշուկ փայլակ մը ցայտեց, որ բոլոր ժողովականները սարսափեցուց. վասն զի ասկէց շատ աւելի թեթեւ խօսք մ'ալ բաւական էր մարդ մը դատապարտել տալու :

« Թշուառականը, կը հայհոյէ . . . գոչեց Պետրոս Արպուէզ, եւ ինքզինիք կը մատնէ, աւելցուց ինքնիրեն կամաց մը . . . »

Միւս երկու հաւատաքննիչներն ալ իրարու երեսնայեցան :

« Ուրեմն ճշմարիտ է, յարեց Արպուէզ,

որ քեզ իրաւամբ կամբաստանեն իբրեւ դադտ-
նապէս հետեւող Աստուծոյ թշնամւոյն սկզբ-
բանցը եւ Նուտերի հաւնող :

— Ի՞նչպէս կրնամ հաւնիլ այնպիսի մար-
դումը՝ զոր չեմ ճանչեր բնաւ, եւ հետեւիլ
անոր սկզբանցը, պատասխանեց կառավարի-
չը . միթէ անոր սկզբունքն իմիններէս լաւա-
գոյն են. անոր կրօնքն իմինէս լաւագոյն է .
ո՞վ է զիս՝ ամբաստանողը, անունը տուէք որ
զինքը խայտառակեմ :

— Քրիստոնէական եղբայրսիրութիւնը
չներեր յայտնել*, պատասխանեց նախագահը :
Խոստովանէ, որդեակ, խոստովանէ եւ զղջա,
աղկէ ուրիշ միջոց չմնար քեզ հանդերձեալ
կենաց մէջ փրկուելու :

— Ես ուրիշ ըսելիք՝ բան չունիմ, պա-
տասխանեց կառավարիչը, այլ միայն կը մը-
նայ ինձ աղաչել զԱստուած, որ իմ անմե-
ղութիւնս յայտնելով դատաւորներս համոզէ :
Թշնամիս ով որ ըլլայ, կերդնում առաջի Աս-
տուծոյ թէ վատ զրպարտիչ մ'է . յայտարաւ
րութիւն կընեմ որ աղջիկս անմեղութեան հը-
րեշտակ մ'է : Անիծեալ ըլլայ ով որ անոր ա-

* Հաւատաքննութիւնը երբէք չէր յայտ-
ներ ամբաստանողները, եւ այս միջոցով քը-
սութիւնը կը քաջալերէր :

նարատ կեանքը զրպարտելու կը ժպրհի :

Հիմա , յարեց , Աստուծոյ կամքը կատարուի թէ անոր եւ թէ իմ վրայ . ես յոյսս Անոր վրայ դրած եմ որ անմեղներուն պաշտպանն է : »

Այնուհետեւ պարապ տեղ հաւատաքըննիչը շարունակեց իր նենգաւոր հարցումները : Մանուէլ Արկօզօ բնաւ չբացաւ բերանը , եւ անհնար եղաւ զինքը խօսեցընել :

« Թշուառը , կուզէ » ըսաւ Պետրոս Արպուէզ կեղծաւոր կարեկցութեամբ մը :

Եւ դառնալով դիմակաւոր մարդերուն՝ որոնք ուրուականներու պէս անշարժ կանգնած էին ատեանին աջ կողմը , ձեռքը երկընցուց եւ մատովն ամբաստանեալը ցուցուց :


Ցուրտ սարսուռ մ'ինկաւ ժողովականաց վրայ եւ սարսափահար լռութիւն մը տիրեց : Շնչառութեան սոսափիւնն անգամ դադրեցաւ : Կարծես թէ բոլոր հոն գտնուող կենդանի էակները մարմարեայ արձան կտրեր էին :

Միայն չորս դիմակաւոր մարդիկն ստուերի պէս շարժեցան կեցած տեղերնէն , եւ անշըշունջ ամբաստանելոյն մօտենալով՝ բռնեցին , եւ գրեթէ թեւերնուն վրայ վերուցած՝ կողմնական դռնէ մը ներս անյայտ եղան :

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ

THE HISTORY OF THE

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 20 horizontal lines.



1912
J. W. [Signature]



